Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ 146

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 165

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 169

Պաշտոնական դրամաշնորհներ 202

Այլ եկամուտներ 204

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 208

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 209

Ընթացիկ ծախսեր 209

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 211

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 212

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 212

Պաշտպանություն 241

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 243

Տնտեսական հարաբերություններ 255

Շրջակա միջավայրի պաշտպանություն 311

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 321

Առողջապահություն 328

Հանգիստ, մշակույթ և կրոն 347

Կրթություն 370

Սոցիալական պաշտպանություն 396

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 420

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 421

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 429

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....430

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ).....431

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ).....437

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 440

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....443

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....2124

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ.....2227

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ).....4365

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին տեղի ունեցած աննախադեպ քաղաքական փոփոխություններից հետո ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) գործունեության առանցքային նպատակն է եղել Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության արժեքների ամրագրումը և համաժողովրդական շարժման հիմքում ընկած արդարության և ազատության սկզբունքների կյանքի կոչումը:

2018 թվականի ապրիլ-մայիսյան իրադարձություններից հետո Կառավարությանը հաջողվել է ապահովել պետական բոլոր կառույցների բնականոն և անխափան գործունեությունը պաշտպանության, ներքին անվտանգության, մարդու իրավունքների պաշտպանության, ֆինանսական, ֆիսկալ, սոցիալական և մյուս ոլորտներում: Տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները չհանգեցրին տնտեսական աճի որևէ էական դանդաղման կամ մակրոտնտեսական անկայունության: Արդյունքում հնարավոր դարձավ ապահովել մակրոտնտեսական կայունություն և գրանցել 5.2% տնտեսական աճ, որը, չնայած դանդաղել է նախորդ տարվա համեմատ, սակայն տարածաշրջանում ամենաբարձրերից է եղել: Հաշվետու տարում էականորեն նվազել է ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի պակասուրդը՝ 2017 թվականի 3.2%-ից (առանց «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի) իջնելով մինչև 1% (2017 թվականի հետ համադրելի ցուցանիշ): Միևնույն ժամանակ, նվազել է նաև ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը՝ 2017 թվականի 53.7%-ից իջնելով մինչև 51.4%:

Կառավարությունը, սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ որպես գործունեության առաջնահերթություն հռչակելով կոռուպցիայի ու մենաշնորհների դեմ պայքարը, ներառական տնտեսական աճի ապահովումը և հանրային բարեկեցության բարձրացումը, ստեղծել է անհրաժեշտ հիմքեր տնտեսական հեղափոխության իրագործման և թռիչքաձև աճ ապահովելու համար:

Կառավարության հետևողական գործունեության արդյունքում երկրում վերացվել է համակարգային կոռուպցիան: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում իրավասու

[1] Հաշվետվությունում պահպանվել են 2018 թվականի պետական բյուջեի ծրագրերը կատարող մարմինների՝ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գերատեսչական դասակարգմամբ սահմանված անվանումները, քանի որ 2018 թվականը հանդիսացել է անցումային ժամանակահատված՝ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետական մարմինների վերակազմակերպման գործընթացի առումով: Բացի այդ, 2019 թվականին ծրագրային բյուջետավորման ներդրման արդյունքում կատարվել է պատասխանատվության վերաբաշխում պետական մարմինների միջև, մասնավորապես՝ նախկինում պետական բյուջեի ծրագրերի կատարման համար պատասխանատու հանդիսացած որոշ մարմիններ ներկայումս չեն գործում որպես առանձին մարմիններ:

մարմինների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով հայտնաբերվել է 1.345 իրավախախտում, ինչը գրեթե երեք անգամ գերազանցում է 2017 թվականի արդյունքը: Միևնույն ժամանակ՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի առթիվ քննված քրեական գործերի թիվն աճել է 691-ով կամ 127.4 տոկոսով:

Բացառելով Հայաստանի տնտեսությունում եղած արհեստական մենաշնորհների գերակայությունը և բիզնես-իշխանություն սերտաճումը, Կառավարությանը հաջողվել է ապահովել անհրաժեշտ տնտեսական ազատություններ և մրցակցության հավասար պայմաններ: Խոշոր բիզնեսի ներկայացուցիչները զրկվել են Կառավարության գործառույթների վրա ազդելու լծակներից, իսկ Կառավարությունում և Ազգային ժողովում գործարար պաշտոնյաների և պատգամավորների թիվը վերջին 20 տարվա համար հասել է նվազագույնի:

Կարևորելով տնտեսական աճի սոցիալական ազդեցությունը՝ Կառավարությունը նշանակալի քայլեր է ձեռնարկել ներառական տնտեսական մոդելի ներդրման, գործարար նախաձեռնողականության խթանման, աշխատանքի խրախուսման, ինչպես նաև հասարակության առանձին խմբերի սոցիալական բարեկեցության բարելավման ուղղությամբ:

Մի կողմից Կառավարության հետևողական գործունեությունը, մյուս կողմից՝ տնտեսվարողների և քաղաքացիների պատրաստակամ մասնակցությունը տնտեսական հեղափոխությանը, հիմք են հանդիսացել տնտեսության մեջ ստվերի մասնաբաժնի շոշափելի կրճատման համար, ինչի մասին, մասնավորապես, վկայում է գրանցված աշխատողների (շուրջ 50 հազարով), տպված ՀԴՄ կտրոնների (մայիսից հետո՝ 65 մլն հատով) թվի նշանակալի ավելացումը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն բարելավվել է: 2018 թվականին համադրելի ցուցանիշներով հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են ՀՆԱ-ի 21.8%-ը, ինչը 2017 թվականի համեմատ բարելավվել է 1.3 տոկոսային կետով:

Արտահանում և արտաքին տնտեսական քաղաքականություն

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում մի շարք երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման ուղղությամբ աշխատանքներ:

ԵԱՏՄ-Հնդկաստան: Համաձայնագրի նախնական տեքստը, 2018 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ, համաձայնեցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների միջև և ուղարկվել հնդկական կողմին: Հնդկական կողմն առաջարկել է բանակցային փուլը կազմակերպել 2019 թվականին:

ԵԱՏՄ-Իսրայել: 2018 թվականի ապրիլի 23-24-ը՝ Մոսկվայում, իսկ հոկտեմբերի 8-11-ը՝ Իսրայելի Հանրապետությունում տեղի են ունեցել համաձայնագրի կնքման բանակցությունների 2-րդ

և 3-րդ փուլերը: ԵԱՏՄ շրջանակում նախնական համաձայնեցվել են արտահանման հետաքրքրություն ներկայացնող ապրանքային ցանկերը, սակագնային պարտավորությունները և դրանցից հանումները՝ իսրայելական կողմի հետ պարտավորությունների փոխանակում իրականացնելու նպատակով: Հերթական բանակցային 4-րդ փուլը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 12-15-ը Մինսկում:

ԵԱՏՄ-Սինգապուր: 2018 թվականի հունիսի 4-8-ը Ղազախստանի Հանրապետությունում տեղի է ունեցել համաձայնագրի բանակցությունների 4-րդ փուլը: Սեպտեմբերի 2-7-ը Սինգապուրում անցկացվել է համաձայնագրի շուրջ բանակցային 5-րդ փուլը: Դեկտեմբերի 3-6-ը ք. Մոսկվայում տեղի է ունեցել բանակցությունների հերթական՝ 6-րդ փուլը: Համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցվել է ԵԱՏՄ փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ: 2019 թվականի մարտի 17-ից 20-ը Սինգապուրում տեղի է ունեցել բանակցությունների ավարտական 7-րդ փուլը: Համաձայնագիրը նախատեսվում է ներկայացնել երկրների համաձայնեցմանը 2019 թվականի հունիսին:

ԵԱՏՄ-Եգիպտոս: Եգիպտական կողմի նախապատրաստած ազատ առևտրի մասին համաձայնագրի նախագիծը ներկայացվել է ԵՏՀ և ուղարկվել է ԵԱՏՄ անդամ պետություններ՝ նախագծի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու նպատակով: Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացվել են ՀՀ-ի համար Եգիպտոս արտահանման հետաքրքրություն ներկայացնող նախնական ապրանքային ցանկերը՝ համաձայնագրի մեջ ներառելու նպատակով: Բանակցությունների առաջին փուլը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 15-17-ը ք. Կահիրեում: Բանակցությունների երկրորդ փուլը նախատեսվում է անցկացնել 2019 թվականի ապրիլի 22-24-ը:

ԵԱՏՄ-Սերբիա: 2018 թվականի հոկտեմբերի 2-3-ը ԵԱՏՄ և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի շուրջ կայացած բանակցային 2-րդ փուլից հետո սերբական կողմն ակնկալում է լրացուցիչ սակագնային արտոնությունների ստացում պանրի որոշակի տեսակների, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի մասով: 2019 թվականի հունվարի 10-11-ը Սերբիայում տեղի է ունեցել համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների վերջին՝ 3-րդ փուլը: Ներկայումս իրականացվում է համաձայնագրի տեխնիկական և իրավական շտկման գործընթացը: Համաձայնագիրը նախատեսվում է ստորագրել 2019 թվականի երրորդ եռամսյակում:

ԵԱՏՄ-ի շրջանակներում բանակցային գործընթացներին (ԵԱՏՄ-Իրան և ԵԱՏՄ-Չինաստան մասով) մասնակցություն՝ ըստ նախորդ փուլերի արդյունքների:

2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրվել են.

● «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» ժամանակավոր համաձայնագիրը, որը 2019 թվականի մարտի 27-ին վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

● «ԵԱՏՄ անդամ պետությունների և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով՝ վավերացման նպատակով:

Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերի իրականացում:

2018 թվականի սեպտեմբերի 25-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետություն -Եվրոպական Միություն Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի առաջին նիստը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդմանը և ընդլայնմանն առնչվող, ինչպես նաև «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող դիտանցմանը, ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման նոր հնարավորություններին, երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի՝ առևտրի և առևտրին առնչվող մասով մշակման աշխատանքներին մասնակցություն:

Մշակվել և ՀՀ շահագրգիռ նախարարությունների և մարմինների հետ քննարկվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առևտրի և առևտրին առնչվող հարցերի մասի՝ 12 ուղղությունների կիրարկման ճանապարհային քարտեզը: 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի առաջին նիստը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդմանը և ընդլայնմանն առնչվող, ինչպես նաև «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող դիտանցմանը, ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման նոր հնարավորություններին, երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

Գործող արտոնությունների համակարգերի կիրառման շարունակականության ապահովում (GSP, GSP+ և այլն):

«GSP+» առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող 2018 թվականի մոնիտորինգի փուլի շրջանակներում պատրաստվել, ամփոփվել և եվրոպական կողմին է տրամադրվել ՀՀ զեկույցը՝ 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացումը գնահատելու նպատակով:

GSP+ արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգը» (REX) ներդրվել է 2018 թվականի հունվարից: Արտադրողները և արտահանողները տեղական ծագման ապրանքները ԵՄ շուկա արտահանելու նպատակով կարող են գրանցվել REX էլեկտրոնային համակարգում, որը հնարավորություն է տալիս «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ արտահանումներն իրականացնել առանց ծագման երկրի Ա ձևի հավաստագրի՝ յուրաքանչյուր արտահանման դեպքում ներկայացնելով միայն ծագման հավաստման հայտարարություն: «Գրանցված արտահանողների համակարգը» (REX) նպաստում է ԵՄ արտահանման գործընթացի դյուրացմանը և հնարավորություն է տալիս արտահանողին կրճատելու ծախսերը և խնայելու ժամանակը: 2018 թվականի ընթացքում կատարվել են 35 (2019թ. ապրիլի 11-ի դրությամբ՝ 44) հայկական կազմակերպությունների խորհրդատվության տրամադրում և գրանցում «REX» համակարգում:

Գործարար միջավայր և ՓՄՁ զարգացում

ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագիրը, որի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքներն ամփոփվել ու ներկայացվել են ՀՀ վարչապետի և ՀՀ նախագահի աշխատակազմեր՝ ամսական պարբերականությամբ:

2018 թվականի ընթացքում ապրանքային մի շարք կարևոր շուկաներում զգալիորեն ավելացել է տնտեսավարողների թիվը: Դրա շնորհիվ նվազել է «մենաշնորհային» համարվող ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը: Մասնավորապես՝ 2018 թվականի տարեվերջին շաքարավազի շուկայի մասնակիցների թիվը կազմել է 75 տնտեսավարող, բանանի շուկայինը՝ 28, բենզինինը՝ 6, ցորենինը՝ 84, ալյուրինը՝ 171 և այլն: Ընդ որում, այս ամենի շնորհիվ նվազել են այդ շուկաներում խոշոր տնտեսավարողների տեսակարար կշիռները: 2018թ. վերջին շաքարավազ ներմուծող ամենախոշոր ընկերության տեսակարար կշիռը կազմել է 78%, նախկին 95%-ի փոխարեն, բանան ներմուծող ամենախոշոր ընկերության տեսակարար կշիռը՝ 30%, նախկին 57%-ի փոխարեն,

բենզին ներմուծող ամենախոշոր ընկերության տեսակարար կշիռը՝ 29%, նախկին 43%-ի փոխարեն, իսկ դիզվառելիքի մասով՝ 29%, նախկին 51%-ի փոխարեն:

Օրենսդրական փոփոխությունների փաթեթներ են մշակվել առևտրի ոլորտում տնտեսական գործունեության առավել հստակ կանոնակարգման նպատակով: Մասնավորապես, դրանք ուղղված են առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման և շրջիկ առևտրի իրականացման գործընթացների կանոնակարգմանը: 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 5 տոնավաճառներում մինչև 20%-ով նվազեցվել են տաղավարների վարձակալության արժեքները:

Մի շարք օրենքներում, ինչպես նաև համապատասխան օրենսգրքերում փոփոխությունների և լրացումների փաթեթներ են նախապատրաստվել, որոնցով առաջարկվում է՝

- ամբողջությամբ ապաքրեականացնել նվազ հանրային վտանգավորություն ունեցող տնտեսական մի շարք հանցագործություններ, այդ թվում՝ ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով չդրոշմավորված կամ դրոշմավորման կանոնների խախտմամբ ապրանքների իրացման դեպքերը,
- լիզինգի գործնական կիրառման խոչընդոտների վերացմանն ուղղված իրավական կարգավորումների նոր համախումբ,
- տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցների հստակեցում, միատեսակ կիրառման ապահովում և պատասխանատվություն կիրառող մարմնի հայեցողական լիազորությունների սահմանափակում:

Մշակվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2019 թվականի ծրագրի նախագիծը, որը հատկապես հասցեագրում է քաղաքաշինական թույլտվությունների ստացման, սնանկացման գործընթացի դյուրինացման խնդիրները:

2018 թվականի ընթացում «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8979 աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝ 313,
- ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ՝ 314,
- տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 8010,
- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում՝ 64,
- ոլորտային աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում՝ 49,
- ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ (Ձեռնարկությունների եվրոպական ցանց) գործունեության շրջանակներում՝ 229:

Փոքր և միջին բիզնեսը ներկայացնող բազմաթիվ կազմակերպությունների համար հնարավորություն է ստեղծվել ներկայանալու սննդի, գինու, հագուստի, կաշվե իրերի միջազգային խոշոր ցուցահանդեսներում (Ֆրանսիա, Ճապոնիա, Ռուսաստան), գտնել իրենց պոտենցիալ գործընկերներին և զարգացնել արտահանման շուկաներում առաջխաղացման հնարավորությունները:

Ֆորմալ ոչ պետական աշխատատեղերի քանակն ավելացել է շուրջ 37 հազարով, որը համարժեք է 12 տոկոս աճին: Ֆորմալ աշխատավարձի ֆոնդն աճել է 110 մլրդ դրամով, ընդ որում, նախնական գնահատականներով, մոտ 80 մլրդ դրամը՝ լրացուցիչ աշխատողների հաշվին, իսկ մոտ 30 մլրդ դրամը՝ աշխատավարձի աճի հաշվին:

Ներդրումներ

ՀՀ կառավարության 06.09.2018թ. N1012-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը: Օրենսդրական կարգավորումները նպատակ ունեն բարձրացնել ՊՄԳ ոլորտում գործընթացների թափանցիկության և պետության հնարավոր ռիսկերի կանխատեսելիության աստիճանը, ինչպես նաև որոշակիացնել ռիսկերի բաշխման մեխանիզմները՝ նախադրյալներ ստեղծելով ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների բացահայտման համար:

Ընդունվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը, որը միտված է օրենքի դրույթները ԵԱՏՄ ազատ/հատուկ տնտեսական գոտիների և մաքսային օրենսդրության գործող դրույթներին համապատասխանեցմանը, ազատ տնտեսական գոտիների ստեղծման և մեկնարկի ընթացակարգերի պարզեցմանը, շահագործողների ներգրավման ընթացակարգերի հստակեցմանը:

2018 թվականի ազատ տնտեսական գոտիներում ներգրավվել է 4 նոր շահագործող.

- «Ալյանս»՝ 2 շահագործող՝ հայտարարված 51.7 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 122 աշխատատեղով,
- «Մերիդիան»՝ 1 շահագործող՝ հայտարարված 45 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 100 աշխատատեղով,
- «Մեղրի»՝ 1 շահագործող՝ հայտարարված 44 մլն ԱՄՆ դոլար ներդրումներով և 102 աշխատատեղով:

Ստեղծվել է նոր բարձր տեխնոլոգիական «Էկոս» ազատ տնտեսական գոտին Կոտայքի մարզում, որը կնպաստի ՀՀ նոր տեխնոլոգիաների և արդյունավետությանն ուղղված ներդրումների ներգրավմանը:

Գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող հումքի և սարքավորումների ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն շրջանակներում հավանության է արժանացել 39 ներդրումային ծրագիր (նոր և ընդլայնվող), որոնց շրջանակներում նախատեսված է իրականացնել 403.8 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծել 3283 աշխատատեղ:

2019 թվականի մարտի 28-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվել է «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը:

Վավերացման գործընթացում է գտնվում «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը Կորեայի Հանրապետության հետ: Բանակցային փուլում է Սինգապուրի հետ «Ծառայությունների ազատ առևտրի և ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության համաձայնագիրը»:

Արդյունաբերություն

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը պետական աջակցության 2018 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

“Confindustria Emilia” արդյունաբերական ասոցիացիայի կողմից լիազորված “SAHAKA Marketing and Communication Consultancy” ընկերության ներկայացուցչի հետ համատեղ հայկական 5 ընկերություն մասնակցել է Իտալիայի Բոլոնիա քաղաքում սեպտեմբերի 5-6-ը կայացած “Farete” միջազգային գործարար համաժողովին:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ, ՀՀ կառավարության, ինչպես նաև Բիզնես Արմենիայի կազմակերպչական աջակցությամբ, հոկտեմբերի 22-24-ը Հայաստանում կազմակերպվել է «Եվրասիական շաբաթ» միջազգային ցուցահանդեսային համաժողովը, որին մասնակցել է 101 ընկերություն ԵԱՏՄ երկրներից (հայկական կողմից՝ 85 ընկերություն)՝ ներկայացնելով իրենց արտադրանքը: Միաժամանակ, համաժողովի ընթացքում իրականացվել են շուրջ 100 B2B հանդիպումներ:

Նկարահանվել և հրապարակվել են ավելի քան 20 տեսանյութեր, մասնավորապես՝ դեղագործության, ոսկեգործության, գյուղմթերքի վերամշակման, տեղեկատվական տեխնոլոգիաների, թեթև արդյունաբերության և այլընտրանքային էներգետիկայի ոլորտների

վերաբերյալ: Բացի այդ, նույն ոլորտների վերաբերյալ տարբեր լեզուներով պատրաստվել և տպագրվել են բրոշյուրներ, որոնք վերոգրյալ միջոցառումների ընթացքում տրամադրվել են մասնակիցներին:

"Global FDI reports" գործակալության հետ համագործակցության արդյունքում Արաբական Միացյալ Էմիրություններում հրատարակվող, Միջին Արևելքի և Ծոցի երկրներում տարածվող անգլալեզու Gulf News օրաթերթը 2018 թվականի մարտին հատուկ թողարկում է նվիրել Հայաստանին՝ ներկայացնելով մեր երկրի ներդրումային հնարավորությունները, երկրի իմիջն ու գործարար միջավայրը:

Ստոկհոլմում հոկտեմբերի 23-24-ը "The Emerging Europe Alliance for Business Services, Innovation and Technology" և "Nordic IT Association" կազմակերպությունների կողմից նախաձեռնած նորարարական տեխնոլոգիաների համաժողովին ներկայացվել են Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներուժը և ներդրումային առավելությունները:

Փետրվարի 5-9-ը Մոսկվայում կայացած սննդի, խմիչքի և դրանց արտադրության հումքի "PRODEXPO 2018" միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին կազմակերպվել է հայկական 21 ընկերությունների մասնակցությունը:

Մարտի 13-16-ը Մոսկվայում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային "Мосшуз" ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող 8 հայկական ընկերությունների և ԱՁ-երի մասնակցությունը:

Մարտի 20-23-ը Մոսկվայում կայացած "Текстильлегпром 2018" 50-րդ ցուցահանդեսին կազմակերպվել է 5 հայկական ընկերությունների մասնակցությունը:

Սեպտեմբերի 4-7-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած "CPM-Collection Premiere Moscow" ցուցահանդեսին կազմակերպվել է թեթև արդյունաբերության և նորաձևության ոլորտի հայկական 14 ընկերության մասնակցությունը:

Սեպտեմբերի 10-13-ը Մոսկվայում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային "Мосшуз" ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող 11 հայկական տնտեսավարողների մասնակցությունը:

Սեպտեմբերի 26-30-ը 6 հայկական տնտեսավարողներ մասնակցել են "Junwex Moscow" միջազգային ոսկերչական ցուցահանդեսին:

Հոկտեմբերի 21-25-ը 6 հայկական ընկերություններ մասնակցել են "SIAL Paris 2018" միջազգային սննդի ցուցահանդեսին:

Արդյունքում հայկական ընկերությունները կնքել են ընդհանուր գումարով 6 մլրդ 577 մլն դրամի պայմանագրեր:

2018 թվականի ընթացքում տրամադրվել է 26 վարկերի սուբսիդավորվում՝ 131.4 մլն դրամ ընդհանուր գումարով՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ոազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» միջոցառման շրջանակներում: Ընդհանուր առմամբ ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 459.4 մլն դրամ դրամաշնորհ:

2018 թվականին արձանագրվել է մշակող արդյունաբերության, մասնավորապես, հագուստի արտադրության ծավալների 40.8% և մանածագործական արտադրատեսակների արտադրության 77.0% աճ: 2018 թվականին տեքստիլ արտադրանքի արտահանման 65.4% աճ է գրանցվել: Նույն ժամանակահատվածում գրանցվել է ծառայությունների ավելացված արժեքի 9.8% աճ, ինչպես նաև շինարարության ծավալի 4.5% աճ: Նշվածները նպաստել են նաև զբաղվածության աճին:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Հայաստանում 2018 թվականի ընթացքում 2017 թվականի համեմատ աճել է 10.5%-ով՝ կազմելով 1 651 782 մարդ, ընդ որում՝ միայն 2018 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստան այցելությունների թիվը կազմել է 376 573, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է շուրջ 16.8%-ով:

Զբոսաշրջության զարգացման քաղաքականության առանցքային շեշտադրումը զբոսաշրջային հոսքի ակտիվացումն է և համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի դիրքավորումը: Այս տեսակետից զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները:

«ITB BERLIN 2018» ցուցահանդեսի շրջանակում իրականացվել է «Բացահայտիր Հայաստանը» խորագրով շնորհանդես:

Հայաստանը մասնակցել է Ցինդաո քաղաքում տեղի ունեցած Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների ներմուծվող ապրանքների ցուցահանդեսին:

Սմիթսոնյան հաստատության կողմից կազմակերպված «Ֆոլքլայֆ» ամենամյա փառատոնի շրջանակներում ԱՄՆ 3 քաղաքներում կայացել են հանդիպումներ զբոսաշրջության ոլորտի շուրջ 70 կազմակերպությունների և շուրջ 40 մասնագիտացված լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Նկարահանվել է Smithsonian Folklife փառատոնի վերաբերյալ կարճ տեսահոլովակ: Մասնակցության արդյունքում ԱՄՆ-ում հիմնվել է Հայաստանի զբոսաշրջային գրասենյակը:

Հայկական պատվիրակությունը մասնակցել է Դուբայում կազմակերպված Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող և Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ ու

բարենպաստ ուղղության ճանաչելիության բարձրացմանն ուղղված՝ «Հայաստան. ժամանակն է բացահայտելու» խորագրով շնորհանդեսին:

Հայաստան են հրավիրվել ավելի քան 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ: Այցերի արդյունքում նկարահանվել է 15 տեսանյութ, հրապարակվել են շուրջ 100 հոդվածներ, արձանագրվել է ավելի քան 3 մլն դիտում:

Պետական աջակցության ծրագրի շրջանակներում պետական բյուջեից համաֆինանսավորելու միջոցով ապահովվել է Հայաստանի 36 և Արցախի 3 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությունը միջազգային 6 զբոսաշրջային ցուցահանդեսների:

Կազմակերպվել և անց են կացվել 5 մարզային ավանդական փառատոններ («Թութ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ», Դիլիջան համայնքում պատմամշակութային վերածննդին նպաստող, Արենի համայնքում Գինու փառատոն, Ախթալա համայնքում Խորոված խորագրով ավանդական ուտեստների մրցույթ-փառատոն, Հնաբերդ համայնքում Տոլմա խորագրով ավանդական ուտեստների մրցույթ-փառատոն):

Տուրիստական գրավչությունը և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվել են մարզային մի շարք փառատոններ, իրականացվել են զբոսաշրջային տարբեր արդյունքների մշակման աշխատանքներ, ինչպիսիք են՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքում տուրիստական կենտրոնի կառուցման աշխատանքները, «Գինու զբոսաշրջություն» բրոշյուրի և տեսահոլովակի պատրաստումը, «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» երթուղիների մշակումը: Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով մեկնարկել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների նշանների տարատեղման սխեմաների պատրաստումը: Տեղադրվել են 3500 ճանապարհային նշաններ: Զբոսաշրջային վայրերի և հուշարձանների հասանելիությունը բարձրացնելու նպատակով իրականացվել են ճանապարհների վերականգնման աշխատանքներ (դեպի Գառնի, Տաթև, Կումայրի պատմական կենտրոնի տարածքում), լրացվել են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները:

Ապահովվել է մասնակցությունը Շվեյցարիայի Համադաշնության (ԺՆև)՝ ԺՆև Կանտոնի Առևտրաարդյունաբերական պալատում (CCIG) անցկացվող «Հայաստան. բացահայտեք հնարավորությունները» խորագրով գործարար համաժողովին:

Հայկական պատվիրակությունը մասնակցել է Հունաստանի Սալոնիկ քաղաքում կազմակերպված «Մետաքսի ճանապարհի զբոսաշրջություն թեմայով 8-րդ միջազգային համաժողովի աշխատանքներին:

Մշակվել է «Ռուսական հետք Հայաստանում» զբոսաշրջային արդյունքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել սեպտեմբերի 21-ին Ռուսական պետական թանգարանի Միխայլովյան դղյակում: Տպագրվել են բուկլետներ, պատրաստվել և ցուցադրվել է տեսահոլովակ, ինչպես նաև ներկայացվել է մշակութային ծրագիր:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման բնագավառ

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված՝ մշակվել է «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի նախագծով նկարագրվում են մարզպետների լիազորությունները, վերջիններիս հարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ, ինչպես նաև այլ հարաբերություններ:

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթում ընդգրկվել են նաև «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

ԵՄ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ծրագրեր, որոնք ուղղված են տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը: Հաշվետու ժամանակահատվածում ԵՄ-ի միջոցով, վերջինիս ֆինանսավորմամբ և ազգային համաֆինանսավորմամբ իրականացվում են տարածաշրջանային զարգացման պիլոտային 8 ծրագրեր: Ծրագրերը կրում են շարունակական բնույթ, և դրանց ավարտը նախատեսվում է 2020 թվականին:

Ծրագրերի իրականացման վերջնական արդյունքում նախատեսվում է ստեղծել 500-ից ավելի աշխատատեղ, ինչպես նաև բարձրացնել 300-ից ավելի ձեռնարկությունների մրցունակությունը: Տարածքային զարգացման ծրագրի ամբողջական բյուջեն 9.9 մլն եվրո է, որի 67%-ը ֆինանսավորվում է Եվրամիության, 17%-ը՝ ՀՀ կառավարության և 16%-ը՝ շահառուների կողմից: Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 180 նոր աշխատատեղեր, և բարձրացվել է ավելին քան 160 ձեռնարկությունների մրցունակությունը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցով իրականացվում են՝

● «Ինտեգրված աջակցություն գյուղական տարածքների զարգացմանը» համայնքների դիմակայության ամրապնդում» ծրագիրը: 2018 թվականին իրականացվել են շուրջ 1.52 մլն ԱՄՆ դոլարին համարժեք աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում կառուցվել է 30 նոր ջերմատուն, 500 մ^2 մակերեսով ջեռուցվող և կաթիլային ոռոգման համակարգով սածիլանոց, տնկվել է ավելի քան 18.5 հա նոր մրգատու այգի, հիմնվել են հացի և կարի արտադրամասեր և այլն:

● «Գյուղական զբոսաշրջության ինտեգրացված զարգացում» ծրագիրը, որի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են շուրջ 1.35 մլն ԱՄՆ դոլարին համարժեք աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում ստեղծվել են 4 զբոսաշրջության հետազոտական և զարգացման կենտրոններ, առցանց էլեկտրոնային տվյալների բազա, ինչպես նաև 4 գինու և 8 գաստրո բակեր, վերականգնվել են 3 համայնքային ճանապարհներ, անցկացվել են բիզնես ֆորումներ, 37 B&B հյուրանոցներին տրամադրվել են արևային վահանակներ ու ջրատաքացուցիչներ և այլն:

Սահմանամերձ համայնքներին տրամադրվող սոցիալական աջակցություն: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հատկացվել է շուրջ 928.9 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվել սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիք-ներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով: Սոցիալական աջակցությունը տրամադրվել է ընդհանուր առմամբ 16 համայնքի 37 բնակավայրերի ընտանիքներին (ՀՀ Արարատի մարզ՝ 2 համայնք, 3 բնակավայր, ՀՀ Գեղարքունիքի մարզ 1 համայնք, 2 բնակավայր, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 2 համայնք, 5 բնակավայր և ՀՀ Տավուշի մարզ՝ 11 համայնք, 27 բնակավայր):

Համայնքների վարչական տվյալների շտեմարան

Համայնքների վարչական տվյալների շտեմարանի թարմացված հարցաշարին համապատասխան տվյալներն ամբողջական և որակյալ հավաքագրելու նպատակով կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև խոշորացված ու խոշոր համայնքների տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուների մասնակցությամբ, որի ժամանակ վերջիններիս են ներկայացվել համայնքների վարչական տվյալների հարցաշարերը: Ներկայացված աշխատանքների արդյունքով՝ ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրվել և ծրագրում ներբեռնվել են մարզերի խոշորացված և խոշոր համայնքների համապատասխան տվյալները՝ սահմանված ձևաչափին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ համայնքների վարչական տվյալների հարցաշարերի հիման վրա մշակվել է էլեկտրոնային ծրագիր, որն անցել է

փորձնական գործարկման փուլ: Ներկայումս ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվում են էլեկտրոնային ծրագրի զարգացմանն ուղղված աշխատանքներ:

Տեղական ինքնակառավարման բնագավառ

Տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող օրենսդրության կատարելագործում

Մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Օրենքի ընդունմամբ կլուծվեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կիրարկումից առաջացած իրավակիրառ և իրավաիրացնող խնդիրները, կհստակեցվեն տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված մի շարք լիազորություններ, կհամապատասխանեցվեն տարբեր օրենսդրական ակտերի միջև եղած իրավական հակասությունները և կլրացվեն օրենսդրական բացերը: Օրենքը հնարավորություն կընձեռի համայնքի ավագանուն վերապահել իրավասություն օրենքով սահմանված կոնկրետ դեպքերում նախաձեռնելու և իրականացնելու համայնքի ղեկավարի պաշտոնանկությունը: Նշված օրենսդրական նախագծային փաթեթի ընդունման արդյունքում կկատարելագործվի տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ համակարգը, որը կարող է էականորեն ազդել տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման և առհասարակ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման վրա:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Օրենքի ընդունումը կնպաստի օրենքի կիրարկումից հետո համայնքների կողմից գրավոր ներկայացված, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումների ընթացքում առաջադրված և վերլուծությունների արդյունքում բացահայտված տեղական որոշ տուրքերի և վճարների սահմանման ընթացքում առաջացած խնդիրները: Օրենքի ընդունումը հնարավորություն կտա նաև համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար տեղական նոր վճար սահմանել:

«Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Օրենքի ընդունման արդյունքում 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում անցում կկատարվի համայնքի ավագանու ընտրության ամբողջական համամասնական ընտրակարգի, որով օրենսդրական մակարդակով համայնքի ներկայացուցչական մարմնի համար կընձեռվեն մրցակցային պայմաններ՝ ապահովելով լայն քաղաքական ներգրավվածություն: Այն լրացուցիչ խթան կհանդիսանա ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում՝ համայնքի ավագանու ինստիտուտի զարգացման համար:

Հնարավորություն կստեղծվի ներդնելու համայնքի ղեկավարի ընտրության անուղղակի ընտրակարգը, որով համայնքի ավագանին իր կազմից կընտրի համայնքի ղեկավարին, հետևաբար՝ համայնքի ղեկավարն էլ իր հերթին պատասխանատվություն կկրի համայնքի ավագանու առջև:

Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում

Գույքային հարկերի տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծում: Գույքային հարկերի տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման նպատակով ձևավորվել են գույքային հարկերի էլեկտրոնային համակարգի արդիականացման հիմնական պահանջները նկարագրող փաստաթղթերի նախագծերը:

10000 կամ ավել բնակչություն ունեցող համայնքներում ավագանու նիստերը կամ հանրային նշանակության այլ միջոցառումները համացանցում առցանց հեռարձակելու հնարավորության ապահովում: Ավագանու նիստերի առցանց հեռարձակումների հնարավորությամբ են ապահովվել ՀՀ Արարատի մարզի Վեդի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր, ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ, Նոր Հաճն, Բյուրեղավան, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան, Ծաղկահովիտ, Ապարան և ՀՀ Շիրակի մարզի Անի, Ախուրյան և Մարմաշեն (թվով 11) համայնքները:

Միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում: 2017 թվականի ընթացքում ձևավորված 34 միավորված համայնքներից 19-ում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ)՝ միավորված բազմաբնակավայր համայնքի համար մշակված տարբերակը, որը ՏԻՄ-երին թույլ է տալիս մեկ միասնական տեղեկատվական միջավայրում ներառել միավորված համայնքի կենտրոնը և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերը՝ համայնքային վարչական ծառայությունների հիմնական մասը հավասարապես հասանելի դարձնելով համայնքի բոլոր բնակավայրերում: Ընդհանուր առմամբ ՀԿՏՀ-ն ներդրված է հանրապետության 502 համայնքներից մոտ 400 ում, իսկ դրա՝ միավորված համայնքի համար մշակված տարբերակը՝ միավորված 52 համայնքներից 37-ում: Ընթացքի մեջ են այս համակարգը մնացած 15 միավորված համայնքներում ներդնելու աշխատանքները, որոնց շրջանակներում արդեն իրականացվել է անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի գնման գործընթացը:

Համայնքային վարչական ծառայությունների հասանելիության և մատչելիության ընդլայնման ապահովում 10000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի արդիականացման միջոցով: Միավորված բազմաբնակավայր համայնքներից 10-ում հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնց շնորհիվ համայնքապետարանները հնարավորություն ունեն բնակչությանը համայնքային ծառայություններ մատուցել «մեկ պատուհան» սկզբունքով: Արդիականացվել են նախկինում ստեղծված թվով 5 ՔՍԳ-ներ: Այդպիսով՝ ներկայումս հանրապետությունում գործում են ընդհանուր թվով 42 ՔՍԳ-ներ, որոնցից 33-ը՝ միավորված բազմաբնակավայր համայնքներում:

Համայնքային վարչական ծառայությունների որակի բարելավման նպատակով 10000 կամ ավելի բնակիչ ունեցող ավելի քան 40 համայնքների համացանցային կայքերի գլխավոր էջում զետեղվել է «Ծառայությունների հավաքածու» բաժինը, որը ներառում է համայնքապետարանի կողմից տրամադրվող ավելի քան 60 վարչական ծառայությունների տեղեկատվական քարտերը՝ ծառայության տրամադրման ժամկետ, անհրաժեշտ փաստաթղթեր, ծառայության դիմաց գանձվող վճար և այլն:

Տարածքային ներդրումային քաղաքականության բնագավառ

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման կարգը, որով հստակեցվել են ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացները:

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերին պետական բյուջեից աջակցելու նպատակով, 2018 թվականի ընթացքում ՀՀ 117 համայնքներից ստացվել են 230 հայտեր: Քննարկման արդյունքներով, սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերից հավանության են արժանացել 180-ը՝ 6.832 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որից 3.642 մլրդ ՀՀ դրամը համայնքների ներդրման գումարն է, 2.856 մլրդ ՀՀ դրամը՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման և 298.3 մլն ՀՀ դրամը՝ մասնավոր հատվածի:

Արդյունքում, ՀՀ համայնքներում գնումների օրենսդրության համաձայն կազմակերպված մրցույթների հիման վրա կնքված պայմանագրերի շրջանակում, ՀՀ պետական բյուջեից

Կառավարության 7 որոշումներով համաֆինանսավորվել են 152 սուբվենցիայի ծրագրեր՝ 1.62 մլրդ ՀՀ դրամի չափով:

Նշված ծրագրերն ուղղված են փողոցների ասֆալտապատմանը, մանկապարտեզների, մշակույթի տների, համայնքային կենտրոնների, երաժշտական դպրոցների կառուցմանն ու վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի անցկացմանը, էներգախնայող փողոցային լուսավորության անցկացմանը, զբոսայգիների, խաղահրապարակների, հրապարակների, այգիների ստեղծմանն ու բարեկարգմանը, կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը:

Հավանության արժանացած 180 ծրագրերից 25-ի իրականացումը եղանակային պատճառներով տեղափոխվել է 2019 թվական, իսկ 3 համայնքներ հրաժարվել են ծրագրի իրականացումից:

ՀՀ տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային գործարար ծրագրերի առցանց հարթակի ստեղծման և դրա կայացման աշխատանքների ապահովման նպատակով ՀՀ բոլոր մարզերից հավաքագրվել, ամփոփվել և համապատասխան ձևաչափով պատրաստվել են թվով 150 ներդրումային-գործարար ծրագրային առաջարկներ (հայերեն և անգլերեն լեզուներով): «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ մշակվել և պատրաստվել է ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի հարթակը, որում տեղադրվել են 150 ներդրումային-գործարար ծրագրային առաջարկները: Հարթակը նախատեսվում է գործարկել վերջինիս առանձին տեխնիկական բնութագրիչների (հոսթինգ և դոմեյն) հետ կապված հարցերի քննարկումների արդյունքներով:

Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ շարունակվում են Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների մշակման աշխատանքները, որոնց շրջանակում նախատեսվում է նախ՝ որոշակիացնել միջոցառումների ցանկը և այնուհետև՝ ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը:

Միջտարածաշրջանային և միջազգային համագործակցություն

Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովի շրջանակներում 29.06.2018թ. անցկացվել է ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խմբի հինգերորդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են միջտարածաշրջանային համագործակցության զարգացման

հեռանկարներին ու ուղղություններին, իրավապայմանագրային բազայի զարգացմանն ու հումանիտար ոլորտում գործակցությանը, ինչպես նաև տարբեր ոլորտներում կոնկրետ ծրագրերի իրագործման հնարավորություններին վերաբերող հարցեր: Գործընկեր տարածաշրջանների պատվիրակները ներկայացրել են համագործակցության ընթացիկ վիճակը և գործակցության ընդլայնման հնարավորությունները:

2018 թվականին Երևանում անցկացվել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովը: Համաժողովի շրջանակներում անցկացվել է լիագումար նիստ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակներում», ինչպես նաև «Թվային օրակարգ՝ մարզերի հայացքը», «Երևան-Մոսկվա. Խելացի քաղաքներ, խելացի լուծումներ», «Ագրո-արդյունաբերական համալիրի թվայնացում», «Զբոսաշրջության ոլորտի զարգացումը թվային տնտեսության ձևավորման պայմաններում» խորագրերով կլոր-սեղան հանդիպումները: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունների համաձայնությամբ անցկացվեց նաև երիտասարդական հարթակ՝ «Սոցիալական ցանցերի և թվային տարածության հանրահռչակությունը՝ որպես երիտասարդության միտումները որոշող գործոն» խորագիրը կրող կլոր-սեղան քննարկումը, որի կազմակերպիչ հանդես եկան հայկական կողմից՝ «Երիտասարդության հայ-ռուսական միությունը», իսկ ռուսական կողմից՝ «Մոլոդայա գվարդիա Եդինոյ Ռոսսիի» համառուսական հասարակական կազմակերպությունը:

Համաժողովի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև միջտարածաշրջանային համագործակցության ծրագրի 2018-2021թթ. իրականացման միջոցառումների ծրագիրը»:

2018 թվականին մշակվել և հաստատվել է Անդրսահմանային տարածքային համագործակցության հայեցակարգի իրականացումն ապահովող 2018-2020 թվականների միջոցառումների ծրագիրը:

2018 թվականի հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովը, որի շրջանակներում իրականացվել են Ֆրանկոֆոնիայի ավանի «Հայաստան» տաղավարի կազմակերպման աշխատանքներ: Տաղավարում ցուցադրվեցին հայկական 10 մարզերը ներկայացնող տարբեր ցուցանմուշներ և հուշանվերներ, որոնք այցելուների առջև բացեցին Հայաստանի տարբեր շրջանների մշակութային, ձեռագործական ու խոհարարական ավանդույթները:

2018 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աջակցությամբ Երևանում կայացավ Արևելյան գործընկերության տարածքային և

տեղական իշխանությունների համաժողովի՝ «Ապակենտրոնացում և տեղական տնտեսական զարգացում» խորագիրը կրող միջոցառումը: Համաժողովի ընթացքում քննարկվեցին տնտեսության զարգացման ոլորտում տարածքային և տեղական իշխանությունների դերին և տնտեսական զարգացմանն ուղղված տեղական նախաձեռնություններին վերաբերող հարցեր:

Արխիվային գործ

2018 թվականին կազմվել է ՀՀ արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերի կոդավորված հաշվառման համակարգի տեխնիկական բնութագիրը և մշակվել համակարգչային ծրագիր: Ընդունվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրենի «ՀՀԱՀ փաստաթղթերի կոդավորված հաշվառման տեղեկատվական շտեմարանում տվյալների ընդգրկման և շտեմարանի վարման կարգը սահմանելու մասին» հրահանգ: Հայտարարվել է մրցույթ, և ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ: Իրականացվում է աշխատակիցների մասնագիտական ուսուցում:

Մշակվել է «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտ

Իրականացվել են «ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրով» 2018 թվականի համար նախատեսված միջոցառումները:

Շարունակվել են աշխատանքները միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ:

2018 թվականին ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով ծառայություն է դիմել 213 օտարերկրացի, որոնցից ամենամեծ թվով հայցերը ստացվել են Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 59, Իրաքից՝ 55, Սիրիայից՝ 24, Եմենից՝ 17, Աֆղանստանից՝ 12, Բանգլադեշից՝ 10, Ուկրաինայից՝ 10: Փախստական են ճանաչվել և ապաստան են ստացել 73-ը:

Կացարանով ապահովվել է 104-ը, այդ թվում՝ ապաստան հայցողներից Հատուկ կացարան ՊՈԱԿ-ում՝ 74-ը, փախստականի կարգավիճակ ունեցողներից ծառայության ենթակայության տակ գտնվող հանրակացարաններում՝ 22-ը, իսկ սոցիալական տներում՝ 8-ը:

Տպագրվել և ապաստան հայցողներին են տրամադրվել 471 պաշտպանիչ շերտ ունեցող պլաստիկ քարտեր՝ «Ապաստան հայցողի վկայական»:

Կազմակերպվել է ՀՀ-ում ապաստան հայցող՝ «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված 14 օտարերկրացիների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական օգնության տրամադրումը՝ բնակարան վարձակալելու համար:

Շուրջ 200 ապաստան հայցողների համար ապահովվել է գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցումը, որից 74-ը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Ապաստանի հայցի վերաբերյալ լիազոր մարմնի ընդունած բացասական որոշումների՝ դատական կարգով բողոքարկման ժամկետը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հայցը դատարան ներկայացնելու ժամկետին համապատասխանեցնելու նպատակով կատարվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավահամեմատական վերլուծություն, որի արդյունքում մշակվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ներկայացվող՝ ՀՀ-ում ապաստան ստանալու մասին դիմումի ձևը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կատարվել է Եվրոպական և միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում մշակվել է «ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 232-Ն որոշման և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի նոր համալրվող անձնակազմի համար մշակվել է միջազգային պաշտպանության վերաբերյալ ներածական ուսուցման ծրագիր, և այն ներկայացվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ վերջինիս սահմանապահ զորքերի նոր համալրվող անձնակազմի համար իրականացվող ներածական ուսուցման ծրագրում ներառելու համար:

Սկսել են իրականացվել 2017 թվականին հաստատված «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրով» նախատեսված միջոցառումները: Փաստաթղթով նախատեսում է 3 հիմնական գործողությունների իրականացում.

- Հայոց լեզվի դասընթացների կազմակերպում,
- Քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում,
- Ժամանակավոր կացարանի տրամադրում:

2018 թվականին հայոց լեզվի դասընթացների կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել, այդ իսկ պատճառով դրանք 30 փախստականների համար իրականացվել են Հայկական ընդհանուր բարեգործական միության վիրտուալ քոլեջի կողմից:

Քաղաքացիական կողմնորոշման դասընթացները նպատակ ունեն տեղեկություններ տրամադրել Հայաստանում ընդունված սովորույթների, արժեքների, մշակույթի, ինչպես նաև փախստականների իրավունքների, պարտականությունների և հնարավորությունների վերաբերյալ: Դասընթացի տևողությունը 30 ժամ է: 2018 թվականի ընթացքում դասընթացին մասնակցել է 36 անձ:

Ժամանակավոր կացարանի տրամադրումն իրականացվում է բնակարան վարձակալելու համար փոխհատուցման տրամադրմամբ: Փոխհատուցումը կազմում է 60 000 դրամ՝ 9 ամսվա ընթացքում: 2018 թվականին բնակարան վարձելու նպատակով փոխհատուցում է տրամադրվել 25 անձի:

Շարունակվել են աշխատանքները ՌԴ ՆԳՆ միգրացիոն հարցերով գլխավոր վարչության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի բացման նպատակով: 2018 թվականին ռուսական կողմին է ուղարկվել 243 դիմում: Դրական պատասխանների թիվը կազմել է 18: Մերժում ստացած դիմումներից 57-ն առնչվել է դատական կարգով ՌԴ-ից վտարման դեպքերին:

Շարունակվել են օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին վերադարձի հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռող Tundarc.am կայքի միջոցով խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանքները:

Ստեղծվել է Վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆորում, որն ապահովում է ոլորտում առկա խնդիրների և ծրագրերի քննարկումներ, փորձի փոխանակումներ, տեղեկատվության տարածում և այլ գործառույթներ: 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է ֆորումի երեք հանդիպում:

2018 թվականի փետրվարի 22-ին Փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի և ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության միջև, որի շրջանակներում Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամն իր «մեկ պատուհան» ծառայության միջոցով տեղեկություններ է տրամադրում ՀՀ վերադարձող միգրանտներին վերաինտեգրմանն առնչվող հարցերի, այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի, ներգրավված մարմինների, ինչպես նաև հատկացվող օգնության տեսակների վերաբերյալ:

2018 թվականի նոյեմբերի 8-ին մեկնարկել է Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN) հայաստանյան ծրագիրը: Այն ֆինանսավորվում է Եվրոպական միության

Ապաստանի, միգրացիայի և ինտեգրման հիմնադրամի (AMIF) կողմից: Ծրագրի նպատակն է միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացումը, ինչպես նաև ԵՄ անդամ երկրներից կամավոր և/կամ հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիների սոցիալ-տնտեսական վերաինտեգրմանն աջակցության տրամադրումը:

Շարունակվել են աշխատանքները ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրման ուղղությամբ:

Շարունակվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի՝ միգրացիայի ոլորտի մասով, կիրարկմանն ուղղված աշխատանքները: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միգրացիայի հարցերով խորհրդատվական կոմիտեի նիստերի համար պարբերաբար նախապատրաստվել են նյութեր, միաժամանակ ներկայացվել են առաջարկներ ԵԱՏՄ պայմանագրի կիրարկման ապահովմանն ուղղված առկա բացերը (ՌԴ օրենսդրության մասով) վերացնելու ուղղությամբ: Ներկայացվել են նաև վիճակագրական տվյալներ:

Նոր թափ է ստացել համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ 23.12.2014թ. ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրի իրականացման շրջանակներում:

2018 թվականի հունվարի 23-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ Շարժունակության շուրջ գործընկերության երկրորդ բարձրաստիճան հանդիպումը, իսկ հունվարի 24-ին՝ ՀՀ-ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ կոմիտեի չորրորդ նիստը: 2018 թվականին ԵՄ անդամ պետություններից ստացվել է հետընդունման վերաբերյալ 989 հայց 1995 անձանց վերաբերյալ, որոնցից 1670-ի կամ 83.4%-ի քաղաքացիությունը հաստատվել է: ԵՄ անդամ պետությունների ներկայացուցիչները բարձր են գնահատել հետընդունման գործընթացում հայկական կողմից գործադրվող ջանքերը:

2018 թվականի մայիսի 17-ին տեղի է ունեցել Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ՀՀ-ԵՄ ենթակոմիտեի 9-րդ նիստը: Նախապատրաստվել են նիստի ընթացքում քննարկվելիք միգրացիայի և շարժունակության վերաբերյալ հարցերը:

Համագործակցություն է հաստատվել ԵՄ Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (FRONTEX) հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Միգրացիոն ծառայության ռեադմիսիոն գործառույթներ իրականացնող աշխատակիցների համար FRONTEX-ի կողմից վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու մասին:

Եռամսյա պարբերականությամբ հրատարակվել են «Միգրացիոն տեղեկագրի» 20-րդ՝ Հատուկ թողարկումը, 21-րդ և 22-րդ թողարկումները՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն

2018 թվականին Հայաստանից արտահանվել է շուրջ 163,7 հազար տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, ինչը 35,5%-ով գերազանցում է 2017 թվականի նույն ցուցանիշը: Ընդհանուր ագրոպարենային արտադրանքի արտահանումը 2018 թվականին աճել է մոտ 8%-ով: 2018 թվականին մթերված պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին տարեվերջին չվճարված գումարը կազմել է ընդամենը մթերման ընդհանուր արժեքի ընդամենը 0,7%-ը, այն դեպքում, երբ 2017 թվականին այն կազմում էր 5,9% , իսկ 2016 թվականին՝ 9,2%: 2018 թվականին մթերվել է շուրջ 188 հազար տոննա պտուղբանջարեղեն, ինչը մոտ 5%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացված քաղաքականությունը 2018 թվականին նպատակաուղղված էր գյուղատնտեսության և նրան սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Վերջինիս արդյունքում պետական աջակցության մի շարք ծրագրերի իրականացումով պայմաններ էին ստեղծվել ագրոպարենային ոլորտի կայունացման, հետագա զարգացման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, իրական եկամուտների ավելացման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: Իրականացվող քաղաքականության նպատակն էր ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդումը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարը, հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը և անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացումը, վարկերի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն նյութական ռեսուրսների մատչելիությունը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, մասնավորապես՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգային մեխանիզմներով մատակարարումը, ինտենսիվ այգեգործության խթանումը, կաթիլային ոռոգման ու հակակարկտային ցանցերի ներդրումը և այլն: Ոլորտում իրականացված քաղաքականության կարևորագույն ուղղություններից էր նաև հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության, օգտագործման և մոնիթորինգի բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը:

Ծրագրերի իրականացմամբ բարձրացել է գյուղատնտեսության համախառն արտադրանքը, պարենային անվտանգության մակարդակը, բարձրարժեք գյուղատնտեսության զարգացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, ներմուծման փոխարինումը, արտահանման ծավալների ավելացումը և գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

2018 թվականին ագրոպարենային ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել հետևյալ խնդիրների լուծմանը՝

● իրականացվել են պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության կատարելագործման մի շարք պետական աջակցության ծրագրեր,

● գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես՝ հողային ռեսուրսների օգտագործման շնորհիվ բարելավվել և բարձրացել են հողի բերրիության հիմնական ցուցանիշները,

● գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվել են գործունեության նպաստավոր պայմաններ, և բարձրացել է մրցունակությունը,

● կոոպերացիայի տարբեր ձևերի խթանման միջոցով զարգացել են գյուղատնտեսության տնտեսավարող ձևերը,

● որոշակիորեն բարելավվել է գյուղատնտեսական տեխնիկայով հագեցվածությունը: Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2018 թվականին հանրապետության բոլոր մարզերում երեք ֆինանսական կառույցի կողմից 133 լիզինգառուի տրամադրվել է 220 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Լիզինգի գումարը կազմել է 881,6 մլն դրամ, սուբսիդավորված գումարը՝ 67,7 մլն դրամ,

● ներդրվել են խորհրդատվական համակարգի կարողությունների ընդլայնման, բարելավ-ման մեխանիզմներ,

● գյուղատնտեսական մթերքների իրացման համար բարելավվել և վերամշակվել են պայմաններ, կատարելագործվել են գյուղատնտեսական մթերքների արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունները,

● ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում ներդրվել են արդիական մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Նշված քաղաքականության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին պետական բյուջեով նախատեսված ծախսերի առաջնահերթ նպատակաուղղվածությունն է եղել հետևյալ ծրագրերի իրականացումը՝

● կազմակերպվել են սերմնաբուծության և սերմապահովության միջոցառումներ: 2018 թվականին գարնանացան գարու, գարնանացան ցորենի, կորնգանի, առվույտի, հնդկացորենի, ոլոռի, եգիպտացորենի, սիսեռի սերմնացուներ ձեռք բերելու նպատակով կնքվել են պայմանագրեր.

● կազմակերպվել են բույսերի պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ: Կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության 502 համայնքներում (ներառյալ՝ Երևան քաղաքը) իրականացվել են անասնահակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ՝ ապահովելով այդ հիվանդությունների նկատմամբ վարակամերժ (իմուն ֆոն ունեցող) գլխաքանակ.

● 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ինտենսիվ այգեգործության ծրագրից օգտվել է 31 ընկերություն, տրամադրված վարկային պորտֆելը կազմել է շուրջ 6.0 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում տրամադրվել է 540 մլն դրամ վարկ՝ ընդհանուր հաշվով 16,5 հա ինտենսիվ այգու հիմնման համար. Ծրագրի թերկատարումը պայմանավորված է առևտրային բանկերի ներքին ընթացակարգերով ծրագրի իրականացման ընթացքի մոնիթորինգի արդյունքներով:

● 2019 թվականի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով պարզեցվում է ծրագրից օգտվելու ընթացակարգը (հանվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն նախնական հայտ ներկայացնելու պահանջը), ավելացվում է տրամադրվող վարկերի վերին շեմը մինչև 1.5 մլրդ դրամ և ընդլայնվում ծրագրի գործողության շրջանակը՝ ընդգրկելով կաթի գնման ուղղությունը, ինչպես նաև հնարավորություն է տալիս շահառուներին՝ գյուղացիական տնտեսություններին կանխավճարներ տրամադրելու: 2018 թվականին ծրագրից օգտվել են 31 տնտեսավարողներ՝ շուրջ 5.8 մլրդ դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է 150.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 7553 հատ բերքի գնման պայմանագրեր: 2018 թվականին մթերված պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին տարեվերջին չվճարված գումարը կազմել է ընդամենը մթերման ընդհանուր արժեքի 0.7%-ը: Ի համեմատություն՝ 2017 թվականին՝ 5.9%, 2016 թվականին՝ 9.2%: 2018 թվականին մթերվել է շուրջ 188.7 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող (28.0 մլրդ դրամի):

2017 թվականին մթերվել է շուրջ 180.7 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող (23.3 մլրդ դրամի).

● հողերի ագրոքիմիական հետազոտությունների և բերրիության բարձրացման նպատակով ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհի ձևով հատկացված գումարով գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ են իրականացվել թվով 170 համայնքներում: Հետազոտվող 105008 հա հողատարածքից վերցրած 35003 հողանմուշներում կատարվել են 88558 լաբորատոր փորձաքննություններ: Փորձաքննությունների արդյունքների հիման վրա նշված համայնքներին են հանձնվել ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, որտեղ հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմաներն ըստ կուլտուրաների և պարարտացման ժամկետները.

● ներդրվել են կաթիլային ոռոգման համակարգեր, 2018 թվականի համար տրամադրվել է 315.5 մլն դրամի վարկ (պետության սուբսիդիան կազմել է 5,885 մլն դրամ)՝ 146 հա կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար.

● բարձրացել է գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատչելիության մակարդակը.

● մատակարարվել են ֆինանսական վարձակալությամբ՝ լիզինգով ագրոպարենային ոլորտի տեխնիկական միջոցներ.

● գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող սուբյեկտներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում վարկ է տրամադրվել թվով 8 շահառուների՝ ՀՀ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Սյունիքի մարզերում: Վերլուծելով ծրագրի դանդաղ ընթացքը, կարելի է առանձնացնել նախատեսված սահմանաքանակների չիրացման հետևյալ պատճառները. ծրագրի մեկնարկով պայմանավորված՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ), ֆինանսական կառույցների և կապալառուների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերի՝ հուշագրերի, պայմանագրերի մշակման ու կնքման ժամանակատար գործընթացներ (գալիք տարիներին այս գործընթացների անհրաժեշտությունը բացակայում է), շահառուների իրազեկվածության դեռևս ցածր մակարդակ, շահառուների վարկունակության հիմնախնդիր, փոքր հողատարածքների համար համակարգերի ներդրման բավական մեծ ծախսատարություն, կապալառուների ներգրավվածություն,

● տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդման և զարգացման նպատակով 2018 թվականին ՀՀ պետական բյուջեի «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի

շրջանակներում ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով՝ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 335 ծրագրային խորհրդատվություն, որոնց մասնակցել է 8539 ֆիզիկական և իրավաբանական անձ, իրականացվել է 170 խմբային դասընթաց (2,147 մասնակից) (անասնաբուծություն, պտղաբուծություն, այգեգործություն, դաշտավարություն, գյուղատնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաներ թեմաներով), նկարահանվել է խորհրդատվական բնույթի 12 տեսանյութ.

- ներդրվել են հակակարկտային ցանցեր.
- անտառային տնտեսության պահպանման, պաշտպանության ծրագրի շրջանակներում իրականացվել է անտառների և անտառային հողերի վիճակի և դրանց վրա բացասական ներգործության ու հետևանքների մոնիթորինգ, ինչպես նաև ապօրինի հատումների կանխարգելման նպատակով դիտարկումներ, գնահատումներ, կանխատեսումներ և ուսումնասիրություններ, որոնք ընդգրկել են անտառատնտեսության և բնության հատուկ պահպանող տարածքների շուրջ 80 տոկոսը.
- Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ 37 բնակավայրերի հողօգտագործողներին փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար, որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրվել է յուրաքանչյուր հեկտարի հաշվով 60 հազար դրամ:

Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն նպատակաուղղվել է էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության մակարդակի բարձրացմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների արդյունավետ օգտագործման, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրման և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարման վրա:

Էներգետիկ բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են՝ վերականգնվող էներգապաշարների տնտեսապես հիմնավորված պոտենցիալի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի պահպանումը և զարգացումը, այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված աշխատանքների իրականացումը,

էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատականացում

2018 թվականին շարունակվել են Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1010-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, որով նախատեսված են փուլային ազատականացման միջոցառումներ մինչև 2022 թվականը:

Վերականգնվող էներգետիկայի զարգացում

2018 թվականի հուլիսի 18-ին ստորագրվել է «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» ՀՀ կառավարության աջակցության համաձայնագիրը: 2018 թվականի հոկտեմբերի 25-ին «ԷՖԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ն (կառուցապատող) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից (Հանձնաժողով) ստացել է «Մասրիկ–1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիան, որի պայմաններում ամրագրվել են մրցույթի արդյունքում ձևավորված էլեկտրական էներգիայի 0.0419 ԱՄՆ դոլար/կՎտժ սակագինը և դրա ճշգրտման մեխանիզմները: Արդյունքում ՀՀ Գեղարքունիքի մարզում կկառուցվի 55 ՄՎտ հզորության արևային էլեկտրակայան, որը տարածաշրջանում կլինի ամենամեծ հզորություն ունեցող ֆոտովոլտային էլեկտրակայանը՝ ամենացածր սակագնով:

Օրենսդրական բարեփոխումների շնորհիվ մի շարք որոշումներով ամրագրվել են ոլորտի կարգավորմանն ուղղված նոր դրույթներ, մասնավորապես՝ սահմանվել են տարեկան գումարային հզորությունների առավելագույն չափաքանակները և սակագնային նոր քաղաքականությունը: Մասնավորապես՝ հաշվի առնելով տեխնոլոգիաների զարգացումը և մասշտաբի էֆեկտը, 100 ՄՎտ գումարային հզորության ֆոտովոլտային կայանների կառուցման նպատակով մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ ներկայում գործող արևային ֆոտովոլտային կայանների համար

սահմանվել է 23.68 դրամ կՎտժ սակագին՝ 42.68 դրամի փոխարեն, և 01.01.2019թ. դրությամբ 7 կազմակերպություն՝ գումարային մոտ 31.5 ՄՎտ դրվածքային հզորությամբ, լիցենզավորվել են:

Միևնույն ժամանակ, 10 ՄՎտ գումարային հզորության շրջանակներում մինչև 1 ՄՎտ հզորության ֆոտովոլտային կայանների կառուցման նպատակով 12 կազմակերպություններ արդեն լիցենզավորվել են (սահմանաչափը լրացել է), որից 9-ը (գումարային շուրջ 7.02 ՄՎտ հզորությամբ) արդեն գործարկվել են:

Բացի այդ, ստեղծվել են հնարավորություններ խոշոր սպառում ունեցող ինքնավար էներգաարտադրողների համար՝ մինչև 150 կՎտ սահմանաչափը բարձրացվել է 500 կՎտ-ի (մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը): Մինչև 500 կՎտ սպառում ունեցող ինքնավար էներգաարտադրողներին տրված տեխնիկական պայմանների թիվը հասել է 907 (գումարային շուրջ 13 ՄՎտ հզորությամբ), որից 854-ն արդեն միացել են էլեկտրաէներգետիկ համակարգին (գումարային շուրջ 10.7 ՄՎտ հզորությամբ:

ՀՀ-ում փոքր ՀԷԿ-երի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների թիվը հասել է 188-ի, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմել է մոտ 369 ՄՎտ: Փոքր ՀԷԿ-երի կողմից էլեկտրական էներգիայի արտադրությունը 2018 թվականի արդյունքներով մոտ 1 մլրդ կՎտժ է: Ըստ տրամադրված լիցենզիաների՝ կառուցման փուլում են գտնվում ևս 33 փոքր ՀԷԿ-եր՝ նախագծային մոտ 66 ՄՎտ գումարային հզորությամբ և 226 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությամբ: Ընդ որում, 2018 թվականի ընթացքում գումարային մոտ 14 ՄՎտ հզորությամբ 4 փոքր ՀԷԿ-եր ըստ տրամադրված լիցենզիաների գտնվել են կառուցման փուլում, իսկ 6 փոքր ՀԷԿ-եր՝ գումարային 16.5 ՄՎտ հզորությամբ, 2018 թվականի ընթացքում սկսել են արտադրել էլեկտրաէներգիա:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերության միջև Հայաստանում հողմաէլեկտրակայանի կառուցման ծրագրի մասին ստորագրված փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում 100-150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանների կառուցում: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հավանություն է տրվել նաև գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի իրականացման նպատակով հողամասերն առանց մրցույթի՝ վարձակալությամբ «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությանը տրամադրելու հայտին: Արաբական Միացյալ Էմիրությունների «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությունը նախատեսում է ՀՀ Գեղարքունիքի մարզում կառուցել մինչև 150 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայաններ: 2018 թվականին վերոգրյալ ընկերությունների կողմից շարունակվել են իրականացվել քամու ներուժի գնահատման աշխատանքները: «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.»

ընկերությունն արդեն լիազոր մարմնին է ներկայացրել նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումը, որի քննարկման արդյունքներով գործընթացը կշարունակվի:

Մշակվել է Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկը:

էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքների արդիականացում

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի հատկացումների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվել են՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկ) աջակցությամբ իրականացվող՝ Հրազդան ՋԷԿ-ից մինչ Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ, շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերի, «Հաղթանակ», «Աշնակ» 220 կՎ, «Չարենցավան-3», «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցման, Երևանի ՋԷԿ-ի 220 կՎ ենթակայանի կառուցման աշխատանքները, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Ագարակ-2» և «Շինուհայր» 220 կՎ ենթակայանների, կարգավարման կառավարման ավտոմատացված (SCADA) համակարգերի ընդլայնման ու արդիականացման, պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքները: Ավարտվել են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների հաշվին ենթակայանների շահագործման ու պահպանության համար մեքենամեխանիզմների և պահեստամասերի ձեռքբերման աշխատանքները: Կշարունակվեն Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), Եվրոպական Ներդրումային Բանկի և Եվրամիության Հանձնաժողովի Հարևանության Ներդրումային Գործիքի (“NIF”) աջակցությամբ իրականացվել «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև շարունակվել են Իրանի Իսլամական Հանրապետության Արտահանման զարգացման բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին Իրան-Հայաստան 400 կՎ լարման նոր էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցման աշխատանքները:

2018 թվականին իրականացվել են Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքները և նախատեսված սարքերի ու

սարքավորումների մատակարարումները: Համաձայնություն է տրվել 13 լրացուցիչ համաձայնագրերում թվով 25 փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններին, հավանություն է տրվել ծառայություն իրականացնող կազմակերպությունների ընտրության առաջարկների ներկայացման թվով 9 հայտահրավերներին, ինչպես նաև լիազորված կազմակերպությունների միջև սահմանված կարգով կնքվել են ծառայությունների մատուցման թվով 10 պայմանագրեր և ներկայացվել են ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների հաստատմանը: ՀՀ կառավարությունը 2018 թվականի մայիսի 3-ին ընդունել է № 542-Ա որոշումը, համաձայն որի ծրագրի ավարտման ժամկետը նախատեսվում է երկարաձգել մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը: Ներկայումս ժամկետի երկարաձգման գործընթացը գտնվում է ՌԴ-ի հետ քննարկման փուլում:

Ծրագրով նախատեսված արդիականացման աշխատանքների իրականացման արդյունքում ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հզորությունը, առանց վառելիքի ծախսն ավելացնելու, կավելանա շուրջ 10%-ով, որը կնվազեցնի վարկային միջոցների վերադարձմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի աճը:

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում

2018 թվականի փետրվարի 2-ին ծրագրի գլխավոր կապալառու իրանական «Սանիր» ընկերության, պատվիրատու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի խնդիրների քննարկում, որի արդյունքում ստորագրվել է աշխատանքների իրականացման նոր ժամանակացույց՝ աշխատանքների ավարտման ժամկետ սահմանելով 2019 թվականի սեպտեմբերի 1-ը: Հաշվետու ժամանակահատվածում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ձեռք են բերվել 3 մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորներ: Համապատասխան մարզպետարանների, համայնքների և շահագրգիռ այլ մարմինների հետ շարունակվում են հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու, ինչպես նաև անտառհատման, անտառվերականգնման գնման գործընթացի իրականացման աշխատանքներ: Ծրագրով նախատեսված աշխատանքները վերսկսվել են 2018 թվականի մայիս ամսից: Հաշվետու ժամանակահատվածում ներկրվել և պահեստավորվել են HSD-10 տեսակի հենարանների մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսիչներ, հաղորդալարի, ամպրոպապաշտպան ճոպանի և օպտիկական մալուխների ամրաններ: Իրականացվել են էլեկտրահաղորդման օդային գծերի՝ 146 հենարանների հիմքերի բետոնապատման, 85 հենարանների մոնտաժման, 400 կՎ և 220 կՎ պարպիչների և հենարանների

հիմքերի բետոնացման լաբորատոր փորձարկման աշխատանքներ, էլեկտրահաղորդման տարբեր հատվածներում կառուցվել են մոտ 15 կմ մոտեցման ճանապարհներ:

Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ

Պետական պարտքի վրա ծրագրի ճնշումը մեղմելու և ծրագրի միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) հետ բանակցվել և համաձայնություն է ձեռք բերվել ծրագրի տեխնիկական լուծումների վերանայման և օպտիմալացման վերաբերյալ: Այդ նպատակով ծրագրի պատվիրատու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ծրագրի խորհրդատուի հետ համատեղ իրականացնում է ծրագրի տեխնիկական լուծումների վերանայման գործընթաց և զուգահեռ դիմել է KfW բանկին հայտարարված մրցույթները դադարեցնելու ու վերանայված տեխնիկական լուծումներով նոր մրցույթներ հայտարարելու վերաբերյալ թույլտվություն ստանալու համար:

Միևնույն ժամանակ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հրամանով ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների տեխնիկական առաջադրանքների մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է պատասխանատու լինի տեխնիկական առաջադրանքի պատրաստման համար, ինչպես նաև նախարարի մեկ այլ հրամանով ստեղծվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված տեխնիկական հանձնաժողով, որը պետք է դիտարկի և հաստատի պատրաստված տեխնիկական առաջադրանքը և որոշում կայացնի հետագա քայլերի վերաբերյալ:

2018 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության կառավարության, «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերության և «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա-ի միջև կնքվող՝ Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի տարածքում 250ՄՎտ գազային վառելիքով կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապետելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ փոփոխված և վերաշարադրված շրջանակային համաձայնագրին և հավելյալ համաձայնագրին: Կողմերի միջև վերաբանակցված համաձայնագիրը ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 13-ին, որի արդյունքում 6.02 ցենտ ԱՄՆ դոլար սակագինը նվազել է մինչև 5.7 ցենտ ԱՄՆ դոլար: Արդյունքում էլեկտրաէներգետիկական համակարգում տարեկան խնայողությունը կկազմի շուրջ 6.4 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման համար ներդրումները կկազմեն շուրջ

250 մլն դոլար: Կայանի շահագործման ժամանակ կստեղծվի մոտ 200-230 բարձր վարձատրությամբ աշխատատեղ:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերանորոգման ու զարգացման ուղղությամբ կատարվել են գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի օպտիմալ ծավալի որոշման և դրա արդիականացման աշխատանքները: Շարունակվել են գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն ու շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության գազամատակարարման և գազաֆիկացման գլխավոր սխեման քննարկվել է Գազպրոմ Պրոմգազ ընկերության հետ և առաջարկվել է արդիականացնել այն՝ հաշվի առնելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի 2018-2032թթ. համար կանխատեսված ելակետային տվյալները:

Էներգախնայողություն

Առաջին Էներգախնայողության գործողությունների ծրագրով սահմանված 2014 թվականի 3.3% էներգախնայողության ցուցանիշը փաստացի գերակատարվել է՝ հասնելով 8.6%-ի, ինչն էլ հնարավորություն է տվել ՀՀ կառավարությանը երկրորդ Էներգախնայողության գործողությունների ծրագրով (ԷԳԾ) վերանայել ոլորտային թիրախները՝ սահմանելով 2018 թվականի համար 20.7% ցուցանիշ ամբողջ տնտեսության համար:

Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում մաքուր էներգիայի զարգացմանն աջակցելու և արևի, կենսազանգվածի, քամու և այլ վերականգնվող աղբյուրներից էներգիայի ու կենսավառելիքի ստացման ծրագրերն իրականացնելու նպատակով 2017 թվականի օգոստոսից մեկնարկած «Էներգաարդյունավետ» վարկային ծրագրի շրջանակներում 31.12.2018թ. դրությամբ վարկավորման համար դրական եզրակացություն է տրվել 1804 արևային ջրատաքացուցիչների և 56 արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրմանը: Վարկավորման գումարը կազմում է շուրջ 828.8 մլն դրամ:

2017 թվականից մեկնարկած համայնքային «Էներգաարդյունավետ» վարկային ծրագրի շրջանակներում 31.12.2018թ. դրությամբ ուսումնասիրվել են հանրապետության թվով 29 համայնքների էներգախնայողության ծրագրերը, 7 համայնքներում (Քասախ, Նոր Երզնկա, Ակունք, Գանձակ, Ամբերդ, Աբովյան և Արամուս) էներգախնայողության միջոցառումների (արևային ջրատաքացման և ֆոտովոլտային համակարգերի տեղադրում, արտաքին լուսավորության լուսատուների փոխարինում ԼԷԴ լուսատուներով) իրականացումն ավարտվել է: Ներդրումը կազմել է

145.4 մլն ՀՀ դրամ, տարեկան էներգախնայողությունը՝ 642.245 կՎտժ, CO2 արտանետումները կկրճատվեն 282 տ-ով:

Մշակվել է 2017 թվականի էներգետիկ հաշվեկշիռը և ներկայացվել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ հրապարակման:

Ատոմային էներգետիկայի զարգացում

2018 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ ԷԵԲՊՆ, Հայկական ԱԷԿ-ի, «Ռոսատոմ» պետական կորպորացիայի, Ռուսատոմ Սերվիս ԲԸ ղեկավարության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել հայ-ռուսական համատեղ համակարգող հանձնախմբի 7 րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են 2018 թվականի պլանային նախազգուշական վերանորոգման ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև հետագա կատարվելիք աշխատանքների նախնական պլան-ժամանակացույցը, սարքավորումների փոխարինման, արդիականացման աշխատանքների ծավալները:

2018 թվականի ապրիլի 14-ին մեկնարկել են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի պլանային նախազգուշական վերանորոգման (ՊՆՎ) աշխատանքները, որի ժամանակ իրականացվել են երկրորդ էներգաբլոկի 4-րդ տուրբոգեներատորի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, որից հետո էներգաբլոկը հաջողությամբ գործարկվել է նախատեսված ժամկետում:

Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտին ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծախսային ծրագրի իրականացման համար տրամադրվել է շուրջ 11 մլն դրամ՝ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի գլխավոր շրջանառու խողովակաշարի տարրերի ջերմային ընդարձակման մոնիթորինգի համակարգի և ջերմային տեղաշարժի հսկման տեխնիկական մեթոդների մշակման ու սարքավորումների մետաղի հսկման ակուստիկ էմիսիոն մեթոդի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտը 2018 թվականին իրականացրել է շուրջ 246.2 մլն ծավալի աշխատանքներ ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունների պատվերով:

Մշակվել և հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2019-2026թթ. միջոցառումների ծրագիրը և պլան-ժամանակացույցը: Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների համար նախատեսված 34.9 մլն

դրամն օգտագործվել է ամբողջությամբ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մնացել է անփոփոխ: Ծրագրի շրջանակներում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը, ինչպես նաև իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նպատակով 2018 թվականին մեկնարկել են միջուկային էներգետիկայի ենթակառուցվածքների կարողությունների ինքնագնահատման աշխատանքները:

Միջուկային անվտանգություն

Միջուկային անվտանգության բնագավառում առաջնահերթ ուղղություններն են միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումն ու կատարելագործումը: Ոլորտում իրականացված առաջնահերթ միջոցառումներն էին.

● ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության և Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, ինչպես նաև հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի և «սթրես-թեստի» ուսումնասիրության արդյունքները, զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը և ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը,

● «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը, Հայկական ԱԷԿ-ի «սթրես-թեստի» ազգային հաշվետվության վերաբերյալ Եվրահանձնաժողովի փորձագետների առաջարկություններն ամփոփող հաշվետվության հիման վրա մշակված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը,

● ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային 10 պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության

համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծում և փոխանակում պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակում և ներկայացում),

● կոմիտեի տեխնիկական աջակցության կազմակերպության՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը,

● իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը,

● ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար,

● մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

● միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

● միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,

● կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,

● ժամանակակից պահանջներին համապատասխանող վթարային կենտրոնի զարգացումը,

● միջազգային համագործակցության զարգացումը:

Վթարային հակազդման համակարգի զարգացման, վթարային հակազդման ազգային համակարգը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին համապատասխանեցնելու համար.

● կատարելագործվել է գործող ճառագայթային մոնիթորինգի և տեղեկատվության համակարգը,

● վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գործունեության հրահանգները, համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին՝ հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի ուսումնասիրության արդյունքները,

● անցկացվել են վթարային վարժանքներ ԱԷՄԳ պահանջներին համապատասխան,

● վերանայվել են վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարությունների և գերատեսչությունների հետ փոխգործությունների մասին համաձայնագրերը,

● կատարելագործվել են ներքին և արտաքին տեղեկատվական համակարգերը:

Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացման նպատակով.

● վերամշակվել են նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,

● կատարելագործվել է միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,

● մշակվել և ներդրվել են միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիական համակարգեր, ներառյալ ծրագրային միջոցներ:

Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավորման շրջանակներում.

● լրամշակվել են նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը,

● միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար ՀՀ այլ պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ անցկացվել են միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի տեսչական ստուգումներ, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մարտահրավերները, վերանայվել է նախագծային սպառնալիքը,

● ստեղծվել են պաշտպանված կապուղիներ:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացման ուղղությամբ իրականացվել է.

● «միջուկային անվտանգության գնահատման ժամանակակից մեթոդների, ներառյալ ռիսկի գնահատման մեթոդների յուրացումը և կիրառումը,

● մասնագիտական որակավորման բարձրացումը և նոր կադրերի պատրաստումը, ռադիոլոգիական ազդեցության գնահատման և չափումների նորագույն միջոցների և մեթոդների ներդրումը:

Միջազգային համագործակցության շարունակականության ապահովման նպատակով նախատեսվում է Տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում շարունակել համագործակցությունն ԱԷՄԳ-ի, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների հետ:

Ընդերքի բնական պաշարների բնագավառ

2018 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ բնական պաշարների կառավարման ռազմավարությունը:

Ընդերքօգտագործման իրավունքի մրցակցային տրամադրման, ընդերքի արդյունավետ և պատասխանատու օգտագործման, ինչպես նաև թափանցիկության ապահովման նպատակով մշակվել և 2018 թվական մարտի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն, «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-192-Ն և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-193-Ն օրենքները:

Մշակվել և ՀՀ կառավարության կայքում (www.gov.am) Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության՝ ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը բաժնում հրապարակվել է ոլորտի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը (http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/BO%20roadmap_draft_ARM.pdf) :

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2018 թվականի հունիսի 8-ին ընդունվել է ԱՃԹՆ-ի շրջանակներում ընդունված օրենքներից (2018թ. մարտի 21-ի թիվ ՀՕ-191-Ն, ՀՕ-192-Ն, ՀՕ-193-Ն օրենքներ) բխող՝ «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանելու մասին» N 666–Ն որոշումը:

ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի շրջանակներում կազմվել և հրապարակվել է հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցը:

Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացի վարչարարությունը պարզեցնելու, ինչպես նաև վարչական վիճակագրական ռեգիստրի վարումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

2018 թվականին մշակվել և 2019 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Ոլորտի թափանցիկությունը բարձրացնելու, տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնելու և ներդրումային միջավայրը բարելավելու նպատակով շարունակվել են օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների նոր կազմված անձնագրերի թվայնացման աշխատանքները: Թվայնացված տեղեկատվությունը տեղադրվել է Հանրապետական երկրաբանական ֆոնդի կայքում:

Ջրային տնտեսություն

2018 թվականին ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

Հաշվետու ժամանակահատվածում համակարգում շարունակվել են կառուցվածքային բարեփոխումների, ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրերի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով աշխատանքները:

Ջրային տնտեսության ոլորտում 2018 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է

վարձակալության պայմանագիր, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից: 2018 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ապահովվել է 2121.0 մլն դրամի չափով վարձակալական վճարի մուտք ՀՀ պետական բյուջե: Համաձայն վարձակալության պայմանագրի վարձակալը պարտավոր է իրականացնել պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր (այսուհետ՝ ՊԿԱԾ): Այս ծրագրի նպատակն է՝ ընդունման պահին վարձակալված գույքի վիճակի զուտ պահպանումից բացի ապահովել դրա վիճակի որոշակի բարելավում:

Վարձակալի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, վարձակալության պայմանագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետի համաձայն, պայմանագրային յուրաքանչյուր տարվա սկզբից 60 օր առաջ վարձատուի՝ Ջրային կոմիտեի համաձայնեցմանն է ներկայացվում նշված պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) նախագիծը, այնուհետև՝ ավարտական ծրագիրը: 2018 թվականի ավարտական ՊԿԱԾ-ն վարձակալի կողմից ներկայացվել է 2018 թվականի նոյեմբեր ամսին:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2018 թվականի ՊԿԱԾ-ի նախագիծը Կոմիտեի կողմից, համաձայն Վարձակալության պայմանագրի, ուսումնասիրվել, վերլուծվել և Վարձակալին են ուղարկվել Վարձատուի առարկությունները: 2018 թվականի ՊԿԱԾ-ով նախատեսված է եղել իրականացնել պայմանագրային 2-րդ տարվա կտրվածքով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի պահպանման և կապիտալ վերանայման աշխատանքներ, այդ թվում՝ տեղադրել շուրջ 20 000 հատ ջրաչափական հանգույցներ, իսկ ջրառի կետերում՝ 102 հատ հոսքաչափեր:

«Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի համաձայն՝ սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մատուցվող ծառայությունների սակագինը 2019 թվականի հունվարի 1-ից պետք է ավելանար 22.27 դրամ/խմ-ով: Ընկերության հետ բանակցություններից հետո 2018 թվականի նոյեմբերի 26-ին ստորագրվել է համաձայնագիր, որով պայմանավորվածություն է ձեռք բերվել ջրի գործող սակագինն անփոփոխ թողնելու վերաբերյալ:

Չհաշվարկվող ջրի ծավալների կրճատման պահանջը վարձակալության պայմանագրի 6-րդ հոդվածով սահմանված է որպես հիմնական կատարողական ցուցանիշ (ՀԿՑ): 2018 թվականի համար սահմանված է չհաշվառվող ջրի ծավալների կրճատում՝ 3%-ով: Այս և մյուս ՀԿՑ-ների կատարման վերաբերյալ վարձակալի տարեկան հաշվետվությունը ստանալուց հետո ուսումնասիրություններ կիրականացվեն անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

2018 թվականին ավարտվել է Երևանի Աէրացիայի մաքրման կայանի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կառուցվածքների և տարանջատված տիղմի ջրազրկման սարքավորումների շինարարությունը:

Մշակվել են Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարության նախագծային փաստաթղթերի փաթեթները: Շինարարության մրցույթը կհայտարարվի 2019 թվականի ընթացքում:

Հիմք ընդունելով վարձակալության պայմանագրի 2-րդ հավելվածի 9-րդ կետի (Սպասարկման տարածքի ընդլայնում) դրույթները՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ուսումնասիրվել է 34 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակը, իրականացվել է գույքագրում և ներկայացվել են առաջարկություններ: Ստեղծվել է խմելու ջրի մատակարարման խնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ: Խմբում ընդգրկվել են հասարակական կազմակերպություններ: Վերջիններիս մասնակցությամբ քննարկվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների դիֆերենցված սակագնի կիրառման հնարավորությունները:

Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է 93.087 հազար հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

2018 թվականի ընթացքում ջրի պաշարների և ջրապահանջարկի, ինչպես նաև ջրօգտագործողների արձագանքների վերլուծությունը փաստում է, որ ջրօգտագործողների կողմից հայտերով ներկայացված ջրապահանջը տարվա ոռոգման ջրի դեֆիցիտի պայմաններում հիմնականում բավարարվել է:

Դեռևս 2016 թվականից մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA ջրաչափական համակարգի սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Վերը նշված սարքավորումների տեղադրումն ու շահագործումը (համապատասխան փուլերով) իրականացնելու արդյունքում հիմնականում կանոնակարգվելու են ոռոգման ջրի հաշվառման և համակարգի շահագործման հետ կապված խնդիրները: 2018 թվականին իրականացվել է հանրապետության ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերի գույքագրում, որի արդյունքներով գնահատվել է դրանք SCADA համակարգով հագեցած 2041 ջրաչափական սարքավորումներով կահավորելու անհրաժեշտությունը և դրանով պայմանավորված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը: ՀՀ կառավարության 20.12.2018թ. N1476-Ն որոշմամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով տրամադրվել է 44.9 մլն դրամ գումար, սակայն նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով անհրաժեշտ գործընթացը տարեվերջին ժամկետների ավարտի պատճառով չի կայացել: Այն նախատեսվում է իրականացնել 2019 թվականին: Ներկայումս

տեղադրված են և գործում են 71 SCADA համակարգերով աշխատող ջրաչափական սարքավորումներ:

Արարատյան դաշտի 26 համայնքներում խորքային թվով 38 նոր հորերի հորատման, ինչպես նաև գոյություն ունեցող թվով 17 հորերի վերականգնման աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N356-Ն որոշման համաձայն նախագծանախահաշվային աշխատանքներն իրականացնելու նպատակով տրամադրվել է 60.6 մլն դրամ գումար:

Ոռոգման ջրի սակավության ռիսկերի կանխման հրատապ միջոցառումների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ձեռք են բերվել թվով 20 շարժական պոմպեր: Շարժական պոմպերի ձեռքբերումը ոռոգման շրջանի սկզբում հնարավորություն է տվել առավել արդյունավետ օգտագործել ժամանակավոր ձևավորվող մակերևութային ջրահոսքերը, որոնք դուրս են գոյություն ունեցող ոռոգման համակարգերը սնող ավազաններից/ենթաավազաններից: Նշված պոմպերը տեղադրվել են նաև կոլեկտորադրենաժային ցանցի այն հատվածներում, որտեղ բացակայել են ստացիոնար պոմպակայանները:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 20.27 մլրդ դրամ՝ 2017 թվականի 17.78 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 2.49 մլրդ դրամ: Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2018 թվականին կազմել է 92.65%, որը նախորդ տարվա համեմատ ավել է 7.5 տոկոսային կետով:

Ոռոգման ոլորտում գանձվել է 3.284 մլրդ դրամ՝ 2017 թվականի 4.072 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 788 մլն դրամ: Ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2018 թվականին կազմել է 48%, որը նախորդ տարվանից պակաս է 15.5 տոկոսային կետով:

Հաշվի առնելով 2018 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ պայմանները՝ ոռոգման համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս, քանի որ մեխանիկական պոմպերը նախատեսվածից շատ են աշխատել: 2018 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 224.65 մլն կՎտժ կամ 8.33 մլրդ դրամ՝ 2017 թվականի 221.93 մլն կՎտժ-ի դիմաց կամ ավել է ծախսվել 2.72 մլն կՎտժ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 168.3 մլն կՎտժ կամ 6.51 մլրդ դրամ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ հաշվետվության համաձայն մանրէաբանական ցուցանիշների առումով գործող նորմերի և ստանդարտների պահանջը կազմել է 98.1 %: Կեղտաջրերի մաքրման կայանների բացակայության կամ դրանց վատ վիճակի պատճառով ջրային ավազաններ և այլ տարածքներ արտանետվող կեղտաջրերի որակը չի համապատասխանում բնապահպանական նորմերի պահանջներին:

2018 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 6.88 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

2018 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը Երևան քաղաքում եղել է 23.6 ժամ/օր, այլ քաղաքներում՝ 18.1 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 16.8 ժամ/օր:

Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում բարելավվել է ջրաչափության մակարդակը, բաժանորդների մոտ տեղադրված է 882125 հատ ջրաչափական սարք, որը 2017 թվականի համեմատությամբ ավել է 8323 հատով: Ջրաչափությունը կազմում է 98.1%:

2018 թվականի ապրիլի 12-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2018 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N436-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2018 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն մ^3: Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակի մեղմելու, ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ընդունվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի համաձայն 2018 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակն ավելացվել է 40 մլն մ^3-ով և սահմանվել մինչև 210 մլն մ^3:

2018 թվականի ապրիլի 18-ից հոկտեմբերի 25-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 204.2 մլն մ^3 ջուր, իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել 142.670 մլն մ^3 ջուր: Սևանա լճի մակարդակը 2018 թվականի տարեվերջին կազմել է 1900.46 մ՝ 2017 թվականի տարեվերջի 1900.42 մ-ի դիմաց:

«Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրի շրջանակներում Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են պայմանագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը: Ծրագրի ներդրումների չափը 2018 թվականին կազմել է 1.6 մլրդ դրամ: 2004 թվականին կնքված պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային

կառավարման, 2017-2019 թվականների համար «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրով 2018 թվականի ընթացքում հատկացվել է 205.8 մլն դրամ:

Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

● Վեդու ջրամբարը կառուցվում է ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը:

2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2021 թվականին: Ջրի փոխադրման և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներն արդեն ավարտված են: Ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծման աշխատանքներն ավարտված են, իսկ շինարարական աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2019 թվականին՝ շուրջ երկու տարի տևողությամբ:

● Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994 թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ թունելի փլուզման կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով՝ ճեղքելով պատվարը: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը: Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման աշխատանքներն ընդգրկվել են հակահեղեղային միջոցառումների ծրագրում:

«ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1» նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի պատվարը: Ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1.3 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

2019 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ինքնահոս համակարգի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները: Շինարարական աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2020 թվականին՝ շուրջ երեք տարի տևողությամբ:

● *Մաստարայի ջրամբարը* նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի ազատ հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն մ^3 ընդհանուր ծավալով:

Իրականացվել է Սելավ Մաստարա ջրամբարի ուսումնասիրություն: Ջրամբարի տեխնիկատնտեսական և նախնական նախագծի պատրաստման աշխատանքներն ավարտվել են: Ջրամբարի կառուցման նպատակահարմարության խնդիրը քննարկման փուլում է: Ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 3794 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, կավելանա լրացուցիչ 590 հա՝ ներկայումս չմշակվող ոռոգելի տարածք, կտնտեսվի տարեկան շուրջ 2.1 մլն էլեկտրաէներգիա, կկրճատվի ստորգետնյա ավազանից իրականացվող ջրառը:

● Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերի շրջանակներում իրականացվել են 191.1 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ, ընդ որում նախատեսվածից ավել աշխատանքները հնարավոր է եղել իրականացնել մեխանիզմների ձեռք բերման արդյունքում տնտեսումների հաշվին: Իրականացվել են նաև Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

● 2018 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

ՀՀ մարզերում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության խնդիրների լուծման նպատակով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման ծրագրով նախատեսված աշխատանքների շրջանակներում ընդհանուր թվով 11 քաղաքների և 41 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում վերակառուցվել են շուրջ 555.0 կմ նոր ջրագծեր, 36.5 կմ կոյուղագծեր, տեղադրվել են 27400 հատ անհատական տների ջրաչափական հորեր:

Ներկայումս ընթացքի մեջ է շինարարության նախաորակավորման գործընթացը Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում:

Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների բաշխիչ ցանցերի տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացման արդյունքում Երևան քաղաքի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի, Կենտրոն, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Ավան վարչական շրջաններում իրականցվել են 73.0 կմ նոր ջրագծերի և 58.0 կմ մուտքագծերի կառուցման, 8558 հատ ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն իր սեփական միջոցների հաշվին պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակներում իրականացրել է ընդհանուր երկարությամբ 62.2 կմ ջրագծերի, ընդհանուր երկարությամբ շուրջ 6 կմ կոյուղագծերի վերականգնման աշխատանքներ,

սահմանազատման կետ տեղափոխվող թվով 3495 հատ ջրաչափական հանգույցների տեղադրում, վերացվել են թվով 1316 հատ գաղտնի վթարներ:

«Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի մեխանիկական ոռոգումն ինքնահոս համակարգերով փոխարինման ենթածրագրի շրջանակներում Մեղրիի աջ ճյուղի, Նորակերտ-Բաղրամյանի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներն ավարտված են, և համակարգը շահագործվում է:

Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներն ավարտված են, համակարգը գտնվում է փորձարկման փուլում:

Գեղարդալճի ինքնահոս համակարգի 26 կմ մագիստրալ խողովակաշարից կառուցվել է 24 կմ, իսկ մնացած 2 կմ հատվածը Գողթ համայնքի բնակիչների բողոքների պատճառով չի կառուցվել (նախատեսվում է կառուցել այլ ծրագրերի շրջանակում):

Ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման, մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծային աշխատանքներն ավարտված են, իսկ երրորդ կարգի ջրանցքների նախագծային աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:

Ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման, մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման շինարարության համար հայտարարված մրցույթը 2018 թվականին գտնվել է գնահատման փուլում, որն ավարտվել է 2019 թվականի հունվարին, սկսվել է պայմանագրերի կնքման փուլը, իսկ երրորդ կարգի ջրանցքների շինարարության մրցութային գործընթացը կմեկնարկի նախագծային աշխատանքների ավարտից հետո:

Գառնիի մայր ջրանցքի և «Գառնի-Գեղարդ» ՋՕԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Գառնի և Հացավան համայնքների ոռոգման համակարգերի վերականգնման շինարարական աշխատանքների մի մասն ավարտված է, իսկ մյուս մասն ավարտվել է 2019 թվականի փետրվարին:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2018 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

Տրանսպորտ և կապ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների

գործունեության կառավարման և կոորդինացման միջոցով 2018 թվականին ապահովվել է տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, տեղեկատվական տեխնոլոգիաների, ռադիոհեռարձակման և հեռուստահեռարձակման, ինչպես նաև ճանապարհների պահպանման բնագավառներում:

Ճանապարհային տնտեսության բնագավառ

Հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքների կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման բնագավառում, ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) հիմնական և միջին նորոգումը, վերակառուցումն ու ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության ներքո: Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափո-խադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2018 թվականին իրականացվել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, ինչպես նաև պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում, շահագործում: Պետական նշանա-կության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծրագրի շրջանակներում իրականացվել են միջպետական և հանրապետական (այդ թվում՝ մարզային) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանումն ու շահագործումը՝ մշտապես ապահովելով ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2018 թվականին վարկային միջոցների հաշվին շարունակվել են Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Բագրատաշենի կամրջի վերակառուցման, ինչպես նաև Համաշխարհային բանկի

աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի լրացուցիչ վարկային ծրագրերը:

«Հյուսիս-հարավ» ծրագրի շրջանակներում բարձրացվել են շինարարական աշխատանքների որակի նկատմամբ պահանջները և վերահսկողությունը, արդյունավետ կառավարման շնորհիվ եռապատկվել են Թալին-Գյումրի հատվածի իրականացման ծավալները: Ավարտվել է Սիսիան-Քաջարան հատվածի նախագիծը, որը դիտարկվում է իրականացնել փուլային:

Ճանապարհների հիմնանորոգման շրջանակներում արդար և թափանցիկ մրցույթների իրականացման շնորհիվ տնտեսվել են ֆինանսական միջոցներ, որոնց մի մասն ուղղվել է ճանապարհների հիմնանորոգմանը, ինչպես նաև պետական բյուջե է վերադարձվել շուրջ 1,7 մլրդ դրամ: Արդյունքը՝ հիմնանորոգվել է 126 կմ ճանապարհ՝ նախանշված 87 կմ-ի փոխարեն:

Ճանապարհաշինության ոլորտում վերահսկողության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով արձանագրվել են անորակ իրականացված աշխատանքներ, որոնք չեն ընդունվել և ենթակա են վերակատարման՝ ընդհանուր 674 մլն դրամի չափով: Դրանց մի մասն արդեն վերակատարվել է համապատասխան կապալառու կազմակերպությունների կողմից, մնացածի մասով հետևողական աշխատանքներ են տարվում պահանջված որակով ավարտին հասցնելու համար:

Տրանսպորտի բնագավառ

2018 թվականին «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով շարունակվել են ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) կիրառման աշխատանքները:

Երկաթուղու բնագավառ

Կատարվել է 2018 թվականի արդյունքներով համաձայնեցված ծավալներով և ուղղություններով երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած վնասի փոխհատուցումը:

Կապի և հեռահաղորդակցության բնագավառ

Կազմվել է ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակ, իրականացվել են ռադիոեթերի մոնիտորինգի, ՌԷՄ-ի (ռադիոէլեկտրոնային միջոցների) և ԲՀՍ ի (բարձր հաճախության սարքավորումների) տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի

շինարարական աշխատանքների՝ տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

ՀՀ-ում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում շարունակվել է հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումը: Արդյունքում ապահովվել է անխափան և որակյալ ռադիոկապի, հեռախոսային կապի և հեռուստառադիոհեռարձակման ապահովում:

Հանրապետությունում սկսել է ներդրվել տրանսպորտային երթուղու միասնական ցանց, որի շրջանակներում հավաքագրվել են անհրաժեշտ ելակետային տվյալներ, քարտեզագրվել է գործող երթուղային ցանցը: Իրականացվում են միջմարզային և ներմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգի ներդրման աշխատանքները:

Միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներում սպասարկման որակը, անվտանգությունը և վերահսկողության մակարդակը բարձրացնելու նպատակով ձևավորվել են դեպի Ռուսաստանի Դաշնություն կանոնավոր ուղևորափոխադրումների 30 ավտոբուսային նոր երթուղիներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ

ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթություններից մեկը եղել և մնում է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացումը: ՏՏ ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է, որը մեծապես նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը:

2018 թվականին ոլորտում իրականացվել են Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների ծրագիրը, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիրը և 2019 թվականին Հայաստանում ՏՏ համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագիրը:

Քաղաքացիական ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով բնագավառում իրականացվում է թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Շարունակվում են արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը և նրա

ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման առնվազն ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար մրցակցային պայմաններ են ապահովվում ՀՀ-ից և դեպի ՀՀ օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

Ոլորտում 2018 թվականի գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

● օդային տրանսպորտի բնագավառում վարվող քաղաքականության հիմնադրույթների մշակումը, ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության սպասարկման նպատակով միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստումը, քննարկումը, բանակցությունների վարումը,

● օդանավակայանային գործունեության և օդային երթևեկության կազմակերպման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգումը և վերահսկողությունը,

● ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, լիցենզիաների, վկայականների և թույլտվությունների տրամադրումը, օդանավերի թռիչքային պիտանիության, աերոնավիգացիոն միջոցների և այլ ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմերի, օդային երթևեկության կարգավարների և օդանավերի տեխնիկական սպասարկման անձնակազմերի վկայականների տրամադրումը և վավերացումը,

● օտարերկրյա պետության ավիացիոն իշխանությունների կողմից տրված օդանավի անձնակազմի անդամների վկայականների ճանաչումը,

● քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործողների, կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողությունը և դրանց կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացումը,

● ՀՀ-ում օդանավերի երկրորդային հետևանքներ չառաջացրած աղետների դեպքում որոնողափրկարարական աշխատանքների համակարգումը,

● օդանավ շահագործողի վկայականի տրամադրումը,

● ՀՀ քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրների վարումը,

● ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի վարումը:

Քաղաքաշինություն

ՀՀ մարզերում բնակչության զբաղվածության մակարդակի և ընդհանուր կենսամակարդակի բարձրացման, կրթության, մարզական և մշակութային ոլորտներում վարվող միասնական քաղաքականության ապահովման նպատակների իրագործմամբ պայմանավորված՝ 2018 թվականին քաղաքաշինության բնագավառի հիմնական խնդիրներից են համարվել.

● **սոցիալական ոլորտի պետական սեփականություն հանդիսացող կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների կապիտալ վերանորոգում, վերականգնում ու կառուցում.**

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հատկացված 2.648.078,3 հազար դրամի չափով միջոցների հաշվին նախատեսվել են թվով 27 օբյեկտի շինարարական աշխատանքներ (այդ թվում՝ 17 կրթական (մանկապարտեզներ, դպրոցներ և միջին մասնագիտական կրթության հաստատություններ), 3 մարզական, 5 մշակութային, 1 բնակարանաշինության, 1 վարչական):

Ամբողջապես ավարտվել են Երևանի հենաշարժային համակարգի խախտումներ ունեցող երեխաների N17 հատուկ դպրոցի վերակառուցման, Երևանի N91 դպրոցի վերանորոգման, Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման, Մուսալեռ գյուղի Ֆ.Վերֆելի անվան դպրոցի վերանորոգման, Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման, ՀՀ գլխավոր դատախազության վերնակառույցի վերակառուցման, Արագած համայնքի N1 դպրոցի վերակառուցման, Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի կառուցման, Չարենցավանի մարզադպրոցի կառուցման աշխատանքները: Ընդ որում, վերջին 4 օբյեկտների շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո նաև փաստագրվել են և օբյեկտները հանձնվել են շահագործման:

Ավարտվել են նաև Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման, Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման և Սևան քաղաքի N1 հիմնական դպրոցի հիմնանորոգման շինարարական աշխատանքները:

Այսպիսով, վերը նշված 27 օբյեկտներից 12-ի շինարարական աշխատանքներն ավարտվել են, իսկ մնացած 15 օբյեկտները շարունակական են:

● **Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման (տեղայնացման) ծրագրի աշխատանքներ.**

Իրականացվել են «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ», «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերի մշակման աշխատանքները, «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերը գտնվում են մշակման փուլում:

● ՀՀ համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ.

Հանրապետության բոլոր համայնքներում 2017-2023 թվականների ընթացքում տեղական մակարդակի ծրագրային փաստաթղթերով (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր) ապահովման ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի բոլոր համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքները:

● Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացման աշխատանքներ:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված էր բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր և նպաստելով երկրի կայուն զարգացմանը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի նիստի N14 արձանագրային որոշման 2-րդ կետով հավանության արժանացած Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը՝ իրականացվել են աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման հայեցակարգի մշակման և միջազգային փորձի ուսումնասիրման աշխատանքները: Մշակվել է Աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման հայեցակարգը, ուսումնասիրվել է աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման միջազգային փորձը:

Միջազգային համագործակցության շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Դոհայում (Կատարի Պետություն) կայացած Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 23-րդ նստաշրջանին:

2018 թվականի հունվարի 29-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, արտոնությունների և

անձեռնմխելիությունների մասին» համաձայնագիրը: 2018 թվականի մայիսի 11-ին ուժի մեջ է մտել 2017 թվականի հոկտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և էկոլոգիական, տեխնոլոգիական և ատոմային վերահսկողության դաշնային ծառայության (Ռուսաստանի Դաշնություն) միջև արդյունաբերական անվտանգության կարգավորման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Ալմաթիում ԱԻ նախարարի կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

2018 թվականի հունիսի 28-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և արտակարգ իրավիճակների և տարերային աղետների ռիսկի նվազեցման Ալմաթիի կենտրոնի միջև փոխգործակցության և համագործակցության մասին» հուշագիրը: Ճապոնիայի դրամաշնորհային օգնության շրջանակներում 2018 թվականի առաջին կիսամյակում տարվել են բանակցություններ ճապոնական կողմի հետ, որի արդյունքում ԱԻՆ-ին կտրամադրվեն 10 արագ արձագանքման մեքենաներ՝ համալրված հիդրավլիկ համակարգով:

ԱԻ նախարարի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաք: Այցի շրջանակներում պատվիրակությունը մասնակցել է սեպտեմբերի 12-ին ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 11-րդ նիստին:

Երևանում տեղի է ունեցել Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված («Ուժեղ երկրաշարժի դեպքում հետևանքների վերացում» թեմայով) ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի՝ INSARAG-ի տարածաշրջանային սիմուլյացիոն վարժանքը: Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպվել են հիշատակի միջոցառումներ:

Արտաքին քաղաքականություն

2018 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները Հանրապետության նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշերի, իսկ թավշյա հեղափոխությունից հետո՝ ՀՀ վարչապետի կողմից սահմանված արտաքին քաղաքական առաջնահերթությունների հիման վրա:

Հայաստանում տեղի ունեցած փոփոխություններից հետո Հայաստանի իշխանությունները վերահաստատեցին հանձնառությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում

Ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ՝ հիմնված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա: Վերահաստատվել է, որ Արցախը, որպես հակամարտության հիմնական կողմ, պետք է որոշիչ ձայն և ներգրավվածություն ունենա իրական և տևական խաղաղ հանգուցալուծման գործընթացում:

Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների միջև կայացել է 3 հանդիպում Բրյուսելում, Նյու Յորքում, Միլանում (վերջինիս արդյունքներով ընդունվել է հնգակողմ հայտարարություն): Հայաստանի վարչապետի և Ադրբեջանի նախագահի միջև կայացել են երեք ոչ պաշտոնական, բաց օրակարգով հանդիպումներ Դուշանբեում, Սանկտ Պետերբուրգում և Դավոսում: 2018 թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով ընդունվել է 8 հայտարարություն:

2018 թվականին Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առաջնահերթությունների շարքում շարունակում էր մնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը նոր ցեղասպանությունների, միջազգային հանրության՝ մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ջանքերին:

Դեկտեմբերի 9-11-ը Երևանում անցկացվել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ գլոբալ ֆորումը:

2018 թվականին Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում: Դեկտեմբերի 6-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանը ստանձնել է ԵԱՏՄ մարմիններում 2019 թվականի նախագահությունը: Հայկական կողմն ակտիվ մասնակցություն է ունեցել ԵԱՏՄ Բարձրագույն խորհրդի կողմից նավթի, նավթամթերքի և գազի միասնական շուկաների ձևավորման ծրագրերի հաստատման գործընթացում: Հայկական կողմի առաջարկով ամսական պարբերականությամբ ԵԱՏՄ կառավարման մարմինների նիստերում քննարկվել են բիզնեսի կողմից առաջադրված խնդիրներ և սահմանվել են դրանց լուծման վերջնաժամկետներ: Հայաստանի առաջարկով մեկնարկել է անդամ երկրներում ուղեկցող էլեկտրոնային փաստաթղթերի փոխճանաչման միասնական համակարգի ձևավորման գործընթացը, որն զգալիորեն կդյուրացնի փոխադարձ առևտուրը՝ բացառելով առկա անհարկի ստուգումները: ԵԱՏՄ արտաքին տնտեսական կապերի զարգացման համատեքստում Հայաստանն ստանձնել և իրականացնում է ԵԱՏՄ-Եգիպտոս ազատ առևտրի համաձայնագրի կնքմանն ուղղված բանակցությունները:

Հաշվետու տարում քայլեր են ձեռնարկվել ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող համագործակցության հետագա խորացման ու կատարելագործման ուղղությամբ: Օգոստոսին հայկական կողմը նախաձեռնել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի լիազորությունների վաղաժամ դադարեցման գործընթաց, որն ավարտվել է հոկտեմբերին: Հաշվի առնելով, որ գլխավոր քարտուղարի պարտականությունների վաղաժամ դադարեցման դեպքերում կազմակերպության նորմատիվ իրավական բազան չի նախատեսում գործողությունների հստակ ընթացակարգ՝ հայկական կողմի նախաձեռնությամբ մեկնարկել են այդ մասով բացը լրացնելու աշխատանքները:

Հայաստանը շարունակել է իր ակտիվ մասնակցությունն ունենալ ՄԱԿ-ի և մի շարք այլ բազմակողմ հարթակներում:

Հոկտեմբերի 7-12-ը Երևանում կայացել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովը, որն աչքի է ընկել մասնակցության բարձր մակարդակով և մասնակիցների քանակով: Հայաստան է ժամանել մոտ 100 պատվիրակություն, որոնցից 35-ը գլխավորում էին նախագահներ, փոխնախագահներ, վարչապետ և փոխվարչապետ, իսկ մնացյալը՝ նախարարների կամ դեսպանների մակարդակով: Հայաստանն ստանձնել է ՖՄԿ նախագահությունը երկու տարի ժամկետով՝ մինչև 2020 թվականը: Գագաթնաժողովի ընթացքում ընդունվել է Երևանի հռչակագիրը, որն ուղղորդելու է ՖՄԿ գործունեությունն առաջիկա երկու տարիներին, ինչպես նաև «Ապրել միասին» Երևանի Ֆրանկոֆոն կոչը՝ հայկական կողմի նախաձեռնությամբ: ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովին ընդունվել է նաև վեց բանաձև, այդ թվում՝ Ճգնաժամային իրավիճակների, ճգնաժամերից դուրս գալու և խաղաղության ամրապնդման վերաբերյալ բանաձևը, որում Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների և կառավարությունների ղեկավարները վերահաստատել են Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը սատարելու իրենց դիրքորոշումը:

ԵՄ կողմին է ներկայացվել ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզը, որտեղ ներառված են այն միջոցառումները, որոնք ապահովում են համաձայնագրի ժամանակավորապես ուժի մեջ մտած դրույթների կիրարկումը: Այդ ճանապարհային քարտեզը ներառում է արդարադատությանը, տրանսպորտին, էներգետիկ համագործակցությանը, շրջակա միջավայրին, սպառողական պաշտպանությանը, միգրացիային և այլ ոլորտներին առնչվող 201 միջոցառում: ԵՄ-ն գոհունակություն է հայտնել ճանապարհային քարտեզի նախագծի վերաբերյալ՝ որպես ՀԸԳՀ իրականացման համար լավ մեկնակետ: ՀՀ-ԵՄ համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում 2017 թվականի տարեկան գործողությունների ծրագրով Հայաստանի Հանրապետությանը տրվող աջակցության ներքո մշակված ծրագրերի նախագծերի համաձայնեցման աշխատանքներն ավարտվել են, ստորագրվել է

3 համաձայնագիր՝ կրթության, արդարադատության և տնտեսական հարաբերություններին առնչվող ոլորտներում 34.5 մլն եվրո ընդհանուր արժողությամբ: Հաշվետու ժամանակահատվածում 2018 թվականի տարեկան գործողությունների ծրագրով ստորագրվել է համաձայնագիր՝ ուղղված Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը, առաջիկայում կստորագրվի երկրորդը՝ ուղղված տարածքային զարգացմանը, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 36 մլն եվրո:

Մեր երկիրն իր ակտիվ ներգրավվածությունն է ունեցել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, նաև Եվրոպայի խորհրդի աշխատանքներին: Շարունակվել է Հայաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) միջև փոխգործակցությունը:

Արտաքին քաղաքական կարևորագույն ուղղություններից է եղել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը:

Շարունակվել են քայլեր ձեռնարկվել խորհրդարանական դիվանագիտության, ապակենտրոնացված համագործակցության ընդլայնման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ: Կարևոր տեղ է հատկացվել միջազգային մշակութային համագործակցությանը:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Կիրիբատիի և Գամբիայի հետ:

Ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին աջակցության ցուցաբերումը: Հյուպատոսական ծառայության կողմից սպասարկվել է 153 000 քաղաքացի:

2018 թվականին ՀՀ նախագահը կատարել է 21 օտարերկրյա այց: ՀՀ վարչապետեր Կարեն Կարապետյանը և Նիկոլ Փաշինյանը կատարել են 19 այց արտերկիր: Մասնավորապես՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այց է կատարել Վրաստան, Գերմանիա, ինչպես նաև 6 աշխատանքային այց Ռուսաստանի Դաշնություն, 3 աշխատանքային այց Ֆրանսիա, ինչպես նաև Բելգիա, ԱՄՆ, Տաջիկստան, Լիբանան, Ղազախստան: Որոշ այցերի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ այդ երկրներում հայկական համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև գործարար շրջանակների հետ:

Տեղի են ունեցել ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանի 9 (2 պաշտոնական և 7 աշխատանքային) ու Զոհրաբ Մնացականյանի 16 (1 պաշտոնական և 15 աշխատանքային) արտերկիր կատարած թվով 69 պաշտոնական և աշխատանքային այցեր, տեղի են ունեցել օտարերկրյա շուրջ 114 բարձրաստիճան պատվիրակությունների պետական, պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն, որոնք բոլորն անցկացվել են

բարձր կազմակերպական և համապատասխան արարողակարգային մակարդակով: Մասնավորապես՝ պետական այցով Հայաստան է ժամանել Իտալիայի նախագահը, պաշտոնական այցով՝ Գերմանիայի կանցլերը, Կանադայի վարչապետը, աշխատանքային այցով՝ Ֆրանսիայի, Էստոնիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Լիբանանի, Թունիսի և մի շարք այլ երկրների ղեկավարներ և բարձրաստիճան պաշտոնյաներ:

Շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Արդարադատություն

Արդարադատության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության տեսլականը նախանշելու, միջոցառումների և ուղղությունների տեսքով առաջարկություններ հավաքագրելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է շահագրգիռ հասարակական կազմակերպություններին: Հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին ներկայացված առաջարկությունների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել, շրջանառվել և հանրային քննարկման է ներկայացվել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի առաջին տարբերակը:

2018 թվականի հունիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ իրավասու մարմինների վարույթում հարուցվել է կոռուպցիոն բնույթի և հարկերը վճարելուց խուսափելու վերաբերյալ 1079 քրեական գործ, որոնց շրջանակներում արձանագրվել է պետությանը պատճառած 66,9 մլրդ դրամի գույքային վնաս: Արձանագրված վնասից վերականգնվել և փաստացի վճարվել է պետական բյուջե շուրջ 22,5 մլրդ դրամ, իսկ քրեական գործերի քննության ընթացքում պետությանը կամավոր վճարվել է շուրջ 9,5 մլրդ դրամին համարժեք գումար:

Միջազգային առաջադեմ փորձի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նորարարությունների հաշվառմամբ մշակվել և հաստատվել է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը՝ այդպիսով ապահովելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի լիարժեք գործողությունը:

Սեփականության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության համար ստեղծվել են իրավական հիմքեր՝ մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Կատարողական գործողությունները հստակեցնելու՝ ներառյալ փորձաքննությունների կատարման ժամկետները նվազագույնի հասցնելու և հարկադիր կատարման մարմնի գործիքակազմին համապատասխանեցնելու նպատակով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը լրամշակվել են և 2019 թվականին ներկայացվել են ՀՀ ԱԺ:

Շարունակվել են հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները: Ծառայությունը 2-ամսյա ժամկետում ավարտին է հասցրել այն կատարողական վարույթների կարճման գործընթացը, որոնք նախատեսված էին 2018 թվականի հուլիսի 26-ին ուժի մեջ մտած «Մի շարք վարչական իրավախախտումների համար կիրառված տուգանքների համաներման մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Այդ նպատակով հարկադիր կատարման ծառայությունը կատարողական վարույթների վարման էլեկտրոնային համակարգում կատարել է համապատասխան ծրագրային փոփոխություն: Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական ակտերի համարները, որոնց հիման վրա հարուցված կատարողական վարույթները կարճվել են, ցանկով տեղադրված են ծառայության պաշտոնական կայք-էջում՝ «Համաներում» հղմամբ (http://harkadir.am/hamanerum/): 2012-2017թթ. ընթացքում կատարված երթևեկության կանոնների վարչական իրավախախտումների մասով համաներվել է շուրջ 13.7 մլրդ դրամ, վարչական պատասխանատվությունից ազատվել է շուրջ 150 հազար քաղաքացի:

2018 թվականին «Pro-bono» իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց խրախուսման, ինչպես նաև մատչելի իրավաբանական ծառայություն մատուցելու մեխանիզմներ ներդնելու նպատակով մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2019 թվականին ներկայացվել է ՀՀ ԱԺ:

Բարեփոխումներ են իրականացվել նաև նոտարական համակարգում: Վկայի ցուցմունքները ներառելով՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող ապացույցների շրջանակն ընդլայնելու համար «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների

նախագծերը 2018 թվականի դեկտեմբերի 26-ին ներկայացվել են շահագրգիռ մարմինների կարծիքին:

Հաշվետու տարում շարունակվել են բարեփոխումները քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով: Մշակվել և 2018 թվականի մայիսի 23-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում կատարվել են մոդելային և ընթացակարգային փոփոխություններ՝ ուղղված խնդրո առարկա ինստիտուտի արդյունավետության բարձրացմանը: 2018 թվականին իրականացված բարեփոխումների արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 266 անձ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է:

Անչափահաս դատապարտյալների հանրակրթության իրավունքի ապահովման նպատակով Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը քրեակատարողական հիմնարկներում հանրակրթություն իրականացնելու համար ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել են կալանավորված անձանց և դատապարտյալների մասնագիտական կրթության ծրագրերը: Կենտրոնի կողմից իրականացվել է Գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են «Առողջ ապրելակերպ», «Համակարգչային հմտություններ», «Հիմնական գրագիտություն/մաթեմատիկա», «Հիմնական գրագիտություն/հայոց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ/վիտրաժ», «Դեկորատիվ կիրառական արվեստ/ խեցեգործություն», «Սոցիալական ուսուցում և կյանքի հմտություններ» դասընթացները ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում: Դասընթացի մասնակիցների թիվը՝ 121 շահառու:

Պրոբացիայի շահառուների կողմից մասնագիտական հմտությունների ձեռքբերման նպատակով շահագործման են հանձնվել 3 սենյակներ, որոնք նախատեսված են համակարգչային, թաղիքագործության, լուսանկարչության դասընթացների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում ծրագրի իրականացումը: Ծրագրի շրջանակներում քրեակատարողական հիմնարկները վերազինվել են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և կահույքով, իրականացվել են քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմերի մոտ 1000 ներկայացուցիչների համար նախատեսված մի շարք վերապատրաստումներ և սեմինարներ: Բացի այդ, ծրագրի շրջանակում մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք ուղղված են բանտային առողջապահության հիմնախնդիրներին և բարեփոխումներին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում առողջության պահպանման իրավունքի իրացման գործընթացի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Մշակվել է պրոբացիայի ծառայության արդիականացման ծրագիրը: Թարմացվել և վերափոխվել է պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը: Հաշվետվու ժամանակահատվածում իրականացվել են պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ճանաչողական այցեր: 2018 թվականին պրոբացիայի ծառայության կողմից պիլոտային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում, Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում կիրառվել են էլեկտրոնային հսկողության սարքավորումներ:

2018 թվականին շարունակվել են էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման և շարունակական զարգացման, էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների նախատեսման աշխատանքները: Ներդրվել և լիարժեք գործարկվում է հարցումների միասնական www.e-request.am հարթակը: Կայքի օգնությամբ քաղաքացիները կարող են առցանց եղանակով պետական մարմիններին ուղղել իրենց հարցումը, դիմումը կամ բողոքը և սահմանված ժամկետում ստանալ դրա պատասխանը առցանց եղանակով:

ՀՀ կառավարության կողմից 2018 թվականի ապրիլի 26-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 524-Ն որոշումը, որով կարգավորվել են էլեկտրոնային հարցումների հետ կապված հարաբերությունները: Ավարտին է հասցվել e-Penitentiary էլեկտրոնային կառավարման ժամանակակից ծրագրային համակարգի մշակումը («Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստր»), որը գրեթե ամբողջությամբ ներառում է կալանավորված անձանց և դատապարտյալների առնչությամբ օրենսդրությամբ իրականացվող գրեթե բոլոր գործառույթների և անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ:

Միաժամանակ՝ աշխատանքներ են տարվում համակարգի գործարկման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները ձեռք բերելու ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաշվետու տարում իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, կազմվել է ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության e-probation էլեկտրոնային համակարգի վերաբերյալ տեխնիկական նկարագիրը:

Միաժամանակ՝ պայմանավորվածություն է ձեռ բերվել Եվրոպայի խորհրդի և Մեծ Բրիտանիայի կառավարության հետ e-probation էլեկտրոնային համակարգի ծրագրային լուծման մշակման ուղղությամբ:

2018 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվել և գործարկվում է թեժ գծի www.e-hotline.am կայքը, որի նպատակն է արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, ոլորտային խնդիրների լուծումը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովումը:

Իրականացվել են իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e draft.am կայքի զարգացմանը և արդիականացմանն ուղղված շարունակական աշխատանքներ:

Լիարժեք գործարկվել է էլեկտրոնային նոտար www.e-notary.am համակարգը:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Արդյունքում՝ նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է էլեկտրոնային կապ ստեղծել նոտարների, բանկային և վարկային կազմակերպությունների միջև՝ նոտարին տրամադրելով էլեկտրոնային կնիք և էլեկտրոնային թվային ստորագրություն:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից համակարգվում են e-court դատարանների միասնական էլեկտրոնային հարթակի ներդրման աշխատանքները: Ներկայումս՝ e-court համակարգի ներդրման աշխատանքների արդյունքում արդեն իսկ ստեղծվել են՝

- փաստաբանների ռեեստրի վարման ենթահամակարգը,
- նիստերի նշանակման խելացի ենթահամակարգը,
- խելացի դատական ակտերի խմբագրիչը,
- էլեկտրոնային հայցադիմումի կառուցման ենթահամակարգը,
- մակագրության, վարույթ ընդունելու, փաստաբան նշանակելու և մի շարք այլ գործողությունների կառավարման մոդուլները:

Արդյունքում ակնկալվում է ներդնել էլեկտրոնային դատարանների այնպիսի համակարգ, որը կբավարարի թվային միջավայր ստեղծելու ժամանակակից մարտահրավերներին՝ ապահովելով արդարադատության մատչելիությունը և հասանելիությունը:

2018 թվականի հոկտեմբերի 10-ի «ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» կառավարության N 1083-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների թիվը ավելացել է ևս մեկով: Պետության կողմից իրականացվող շուրջ 67 ծառայություն պատվիրակվել է սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող 10 օպերատորների: Ներկայումս պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների թիվը կազմում է 126:

2018 թվականին զգալի աշխատանքներ են իրականացվել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում: ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իր լիազորությունների շրջանակներում 2018 թվականի ընթացքում իրականացրել է 231 խորհրդատվություն: Գործակալության աշխատակիցների մասնակցությամբ տեղի են ունեցել շուրջ մեկ տասնյակ ուսուցում Երևանում և մարզերում, ինչպես նաև 20-ից ավելի քննարկումներ և հանդիպումներ:

2018 թվականի ընթացքում Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ներկայացվել է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ 35 ծանուցում: Գործակալության նախաձեռնությամբ կամ դիմումի հիման վրա հարուցվել է 33 վարչական վարույթ:

Մշակվել և հրապարակվել է 3 ուղեցույց.

- «Ուղեցույց. ինչպես անվտանգ դարձնել Instagram-ի էջն ու դրանում պահվող անձնական տվյալները»՝ http://moj.am/storage/uploads/00.Insta.pdf
- Ուղեցույց՝ «Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը հանրային միջոցառումների ընթացքում»՝ http://moj.am/storage/uploads/Hanrayin-mijocarum.pdf
- «Ուղեցույց. անձնական տվյալների մշակումը ֆոտոտպագրություն, տպագրություն, պատճենահանում և նման բնույթի այլ ծառայություններ մատուցողների կողմից»՝ http://moj.am/storage/uploads/photo-print.pdf

Սփյուռք

2018 թվականին Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին»

ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի թիվ 275-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Հայրենադարձության գործընթացի խթանում

Ուսումնասիրվել է հայրենադարձության խթանման միջազգային փորձը՝ Իսրայելի, Լեհաստանի, Գերմանիայի, Ռուսաստանի, Վիետնամի, Կորեայի, Ավստրալիայի, Ղազախստանի, Իռլանդիայի, Իտալիայի և այլ երկրների օրինակով: Ուսումնասիրությունների շրջանակում վեր են հանվել հայրենադարձության կազմակերպման փորձ ունեցող և ծրագրեր իրականացնող երկրների օրենսդրության առանձնահատկությունները, քայլերը, ձեռք բերված արդյունքները: Հայրենադարձության խթանման այլ երկրների հաջողված փորձը ներառվել է հայրենադարձությանը միտված ծրագրերում և աշխատանքներում, կազմվել են տարբեր երկրների փորձն արտացոլող համապատասխան տեղեկանքներ:

Հայաստան հայրենադարձվողների համար նախատեսված արտոնությունների ու ֆինանսական աջակցման վերաբերյալ կազմվել է «Հայրենադարձի զամբյուղ» ֆինանսական աջակցման փաթեթը, որում ներկայացվել են հայրենադարձներին նախատեսվելիք ֆինանսական, սոցիալ-տնտեսական աջակցությունն ու արտոնությունները, դրանց իրականացման ժամկետներն ու շահառու խմբերը: Փաթեթում ներառվել են հայրենադարձության համար 10-ից ավելի թիրախային ուղեցույցներ և գովազդային թերթոններ (բուկլետներ), որոնք նաև ամփոփվել են մեկ ընդհանուր ուղեցույց-տեղեկատու բրոշյուրում՝ «Հայրենադարձության կազմակերպման անհրաժեշտ քայլեր»-ը: Բրոշյուրում ներկայացվել են հայրենադարձության իրականացման համար անհրաժեշտ քայլերը, գործընթացի փուլային կազմակերպումը, ծրագրի ընտրությունը, անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, նախատեսվող արտոնությունները, «Հայրենադարձի զամբյուղ»-ով հատկացվող վճարումները: Հաշվարկվել են հայրենադարձ ընտանիքին և անհատներին հատկացվելիք գումարային օժանդակությունը 1 տարվա կտրվածքով:

Իրականացվել են «Հայրենադարձության կազմակերպման ռազմավարության» նախագծի մշակման և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքները:

Իրականացվել է համայնքային կառույցներին և անհատներին հանդիպումների ու տեսակոնֆերանսների միջոցով հայրենադարձության գործընթացի խթանման առաջարկությունների ներկայացում, հավաքվել և ամփոփվել են համայնքներից ստացված տարաբնույթ առաջարկությունները:

Պատրաստված նյութերը չեն տարածվել Սփյուռքի համայնքներում, քանի որ նպատակահարմար է գտնվել այն լրամշակել հայրենադարձության վերաբերյալ ռազմավարության

ընդունումից հետո, որտեղ կներկայացվի նաև պետության կողմից առաջարկվող աջակցությունը, որից հետո՝ այն կառաքվի սփյուռքահայերին:

Կազմակերպվել է Ամերիկայի՝ 9, Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի՝ 9 և Եվրոպայի 7 հայկական լրատվամիջոցների ղեկավարների հետ 3 տեսաժողով, որոնց ընթացքում ներկայացվել են հայրենադարձությանը միտված՝ ՀՀ կառավարության կողմից Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանն ուղղված 2018 թվականի հիմնական ծրագրերը, այդ թվում՝ հայրենադարձության ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2018 թվականի մայիսի 30-ից հունիսի 1-ը Երևանում կայացել է «Հայոց պետականությունը և հայ լրագրությունը» խորագրով լրագրողների համահայկական 9-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են Հայաստանի, Արցախի և 14 երկրների Սփյուռքի համայնքների 100-ից ավելի լրագրողներ, որոնցից 40-ը՝ գլխավոր խմբագիր: Համաժողովում ելույթ են ունեցել 30 հոգի, հարակից ելույթներով և առաջարկներով հանդես են եկել 50-ից ավելի մասնակիցներ: Համաժողովի ընթացքում քննարկվել են նաև Սփյուռքի լրատվամիջոցներում հայրենադարձության գործընթացի լուսաբանման կարևորությունը և արդեն հայրենադարձվածների մասին պատմությունների հրապարակումը:

Նոյեմբերի 29-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է Հայրենադարձության հիմնախնդիրներին նվիրված աշխատանքային խմբի հանդիպում-քննարկում՝ պետական մարմինների (ԱԳՆ, ԿԳՆ, ՏԿԶՆ ՄՊԾ, ՊԵԿ, ՀՀ ոստիկանության ԱՎՎ, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արդարադատության, Առողջապահության նախարարություններ), ՄՄԿ հայաստանյան ներկայացուցչության և հասարակական կառույցների (Վերադարձ Հայաստան, Դեպի Հայք, Կառուցիր Հայաստան, ՀԲԸՄ, ՖՀԶՀ, Idea հիմնադրամ) ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են հայրենադարձներին մաքսային ու հարկային, կրթական ու առողջապահական արտոնությունների անհրաժեշտ շրջանակները, օրենսդրական կարգավորումներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Քննարկման արդյունքում շահագրգիռ կողմերը վեր են հանել այն խնդիրների և օրենսդրական կարգավորումների շրջանակը, որոնց շտկումից հետո Հայաստան հայրենադարձվողները զերծ կմնան տարատեսակ խոչընդոտներից, մասնավորապես՝ առանց մաքսավճարի անձնական գույքը ներմուծելու արտոնությունից օգտվելիս, ինչպես նաև օգտվել հարկային արտոնություններից, բարելավել լեզվական և իրավական գիտելիքները և այլն:

ՀՀ սփյուռքի նախարարությունը սփյուռքի համայնքների հետ ունեցած տեսաժողովների ժամանակ ներկայացրել է հայրենադարձության ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև տարիներ շարունակ կիրառվող սիրիահայերի ինտեգրման փորձը և արդյունքները:

Դրանց շնորհիվ Սփյուռքի տարբեր համայնքներում հայրենադարձվելու ցանկություն հայտնած մեր հայրենակիցները լիարժեք պատկերացում են կազմել ՀՀ կառավարության կողմից իրականացվող քայլերի վերաբերյալ:

Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության փոխանցմանը և ամրապնդմանն աջակցություն

Մարտի 16-ին կայացել է «Հայոց ցեղասպանության պատճառով հայության կրած նյութական վնասները. «լքյալ գույք» և հայրենազրկում» թեմայով գիտաժողովը, որին մասնակցել են անվանի գիտնականներ, իրավաբաններ, թուրքագետներ, պատմաբաններ, ցեղասպանագետներ: Գիտաժողովի մասնակիցները հանդես են եկել մի շարք զեկուցումներով: Գիտաժողովի ավարտին տեղի է ունեցել մտքերի փոխանակում, հնչել են առաջարկություններ հետագա անելիքների վերաբերյալ:

Նոր կառավարության ձևավորումից հետո վերանայվել են Հայաստան-Սփյուռք գործակցության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, և որոշվել է «Արևմտահայությունը Թուրքիայում և տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակում. Արդի մարտահրավերներ, նրանց լուծման ուղիները» խորագրով գիտաժողովն առայժմ չանցկացնել:

Նոր կառավարության ձևավորումից հետո որոշվել է աջակցել Թուրքիայում ապրող համշենցիների քաղաքական մարտահրավերների, լեզվական իրավիճակի, կենցաղի, բանահյուսության և մշակույթի վերաբերյալ հետազոտության իրականացման աշխատանքներին, որոնք ընթացքի մեջ են:

Հավաքագրվել և ամփոփվել են Թուրքիայում առաջադեմ թուրք, քուրդ, ալեվի և համշեն գրողների կողմից հեղինակած՝ հայերի ջարդն ու կոտորածները նկարագրող հոդվածները:

Նոր կառավարության ձևավորումից հետո ծրագրերի վերանայման արդյունքում որոշվել է «Առաջին աշխարհամարտի արդյունքները և հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա դրանց ազդեցությունը» խորագրով միջազգային գիտաժողովը չանցկացնել:

Կրոնափոխ արևմտահայության կյանքն արտացոլող ֆիլմաշարի ստեղծման աշխատանքները, պայմանավորված ծրագրերի վերանայմամբ, տեղափոխվել են 2019 թվական:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամը պատրաստել և հրատարակել է «Հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված հակահայկական քարոզչությունը. վերլուծություն և լուծման ուղիներ» հետազոտությունը: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը պատրաստել է

«Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921թթ.)» հետազոտությունը, որը հրատարակվել է 2019 թվականի 1-ին եռամսյակում:

Հայաստան-սփյուռք գործակցության մեջ երիտասարդական կազմակերպությունների դերի ակտիվացում

ՀՀ կառավարությունն աջակցել է մարտի 31-ին Վիեննայում մեկնարկած Եվրահայկական 23-րդ խաղերի կազմակերպմանը, որոնց մասնակցել են 37 պատվիրակներ և մարզական թիմեր աշխարհի 15 երկրից՝ շուրջ 750 մասնակից: Աշխատանքներ են տարվել եվրոպահայ մարզիկներին խաղերին ներգրավելու ուղղությամբ, ցուցաբերել է տեղեկատվական աջակցություն:

Հուլիսի 20-29-ը Հայաստանում տեղի են ունեցել Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարություններ և 11-րդ բանակում: Հայաստան են ժամանել 3000 ՀՄԸՄ-ականներ 24 երկրի 26 շրջանից, որոնցից 1200 սկաուտներ մասնակցել են նաև Բյուրականի կենտրոնական բանակավայրում կազմակերպվող բանակումին (ՀՄԸՄ վրանային ճամբար, որի ընթացքում տեղի են ունեցել մարզական միջոցառումներ, թիմային աշխատանք, արշավներ, խարույկավառություն, կյանքի հմտությունների զարգացում, առաջին բուժօգնության ուսուցում և այլն):

ՀՀ վարչապետի 2018 թվականի փետրվարի 16-ի N 146–Ա «Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարությունները և 11-րդ բանակումը կազմակերպելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի կողմից ապահովվել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարությունների և 11-րդ բանակումի կազմակերպումը:

Նոր կառավարության ձևավորումից հետո վերանայվել է «Սփյուռք» ամառային դպրոցի իրականացման նպատակահարմարությունը, որի մի ուղղությունն էր «Երիտասարդ առաջնորդների դասընթացը»: Որոշվել է միավորել նախարարության «Արի տուն» և «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրերը, և օգոստոսի 10-24-ը կայացել է «Քայլ դեպի տուն» ծրագիրը, որին մասնակցել են նաև դասընթացին հայտ ներկայացրած սփյուռքահայ երիտասարդները (13-21 տարեկան):

Նշենք նաև, որ «Արի տուն» ծրագրին նախապես դիմած և տոմսերը գնած երիտասարդների համար հուլիս ամսին կազմակերպվել է 4 փուլերով առանձին ծրագիր, որին մասնակցել են աշխարհի 16 երկրից ժամանած 13-18 տարեկան 156 սփյուռքահայ պատանիներ:

Ծրագրերի վերանայման ընթացքում որոշվել է Համահայկական երիտասարդական հավաքը անցկացնել օգոստոսի 10-24-ը «Քայլ դեպի տուն» ծրագրի շրջանակներում, որին մասնակցել է շուրջ

400 սփյուռքահայ՝ աշխարհի 24 երկրից: Ծրագրի կրթական բաղադրիչի շրջանակներում դասընթացներ են անցկացվել Հայ-ռուսական համալսարանում, “Teach for Armenia” և “Birthright Armenia” հիմնադրամների դասավանդողների, ինչպես նաև ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանի ուսուցիչների միջոցով:

Ճանաչողական բաղադրիչը թույլ է տվել մասնակիցներին ծանոթանալ Գառնի, Գեղարդ, Սարդարապատ, Խոր վիրապ, Օշական, Հաղարծին ու Զվարթնոց հուշարձաններին, Հայաստանի լավագույն թանգարաններին: Բացի դրանից, «Թումո» կենտրոնում, «Այբ» դպրոցում, ՀԲԸՄ վիրտուալ համալսարանում, նաև այլ բուհական աղբյուրներից մասնակիցները հնարավորություն են ստացել տեղեկանալու Հայաստանում կրթություն ստանալու հնարավորություններին:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև պետական այրերի, կրթական և մշակութային գործիչների, հայրենադարձների, Հայաստանում կամավորական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ, այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր և Եռաբլուր, հայրենական արտադրության գործարաններ, ծանոթացել հայկական բանակի առօրյային և այլն:

Ծրագիրն ավարտվել է ճամբարային եռօրյա հանգստով՝ հագեցած «All Inclusive Armenia» ընկերության կողմից կազմակերպված ժամանցային, մարզական և մշակութային միջոցառումներով:

Պարբերական աշխատանքներ են տարվել Սփյուռքի հայկական երիտասարդական կազմակերպությունների հետ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերին մասնակիցների ավելի լայն շրջանակի ապահովման ուղղությամբ: Ծրագրերի տեղեկատվական փաթեթներն ուղարկվել են նաև Սփյուռքի կրթամշակութային, համահայկական և համայնքային կառույցներին, արդյունքում իրականացված ծրագրերի մասնակիցների գերակշիռ մասը եղել են սփյուռքի երիտասարդները:

2018 թվականին, թիրախավորելով սփյուռքի երիտասարդ ձեռներեցներին, առաջին անգամ կազմակերպվել է «ՆերՈւժ» սփյուռքի երիտասարդների ստարտափ ծրագիրը: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացմանը հայկական տնտեսական ներուժի ներգրավման միջոցով, աջակցել Հայաստանի Հանրապետությունում ներդրումների իրականացմանը, սփյուռքահայ ձեռներեցներին Հայաստանը որպես բիզնես միջավայր ներկայացնելը: Ծրագրի ավարտական փուլը, որի ընթացքում ամփոփվել են արդյունքները, անցկացվել է Հայաստանում՝ UWC Դիլիջան քոլեջում դեկտեմբերի 17-20-ը, որին մասնակցել են 27 երկրներից 71 ստարտափ գաղափար ներկայացրած 127 մասնակից, ընդ որում 51 ստարտափ գաղափար ներկայացվել է սփյուռքից: Դեկտեմբերի 20-ին ընտրվել են ծրագրին մասնակից այն 9 ստարտափները, որոնց հատկացվելու են դրամաշնորհները (5-15 մլն հայկական դրամ): Դրամաշնորհները տրամադրել են ՀՀ կառավարությունը, «Հայկական Կարիտասը», Ռուս-

հայկական համալսարանը, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «ImpactAim»-ը: Հաղթողներին տրվել են նաև դրամական այլ պարգևներ, իրավական և հարկային անվճար խորհրդատվության տրամադրում, անդամակցություն հովանավորների ստուդիաների և այլն:

Սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում, նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում, էլեկտրոնային գրադարանում, Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարանում բացվել է համապատասխան բաժին, որտեղ տեղադրվել են Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը: Միջոցառումների ծրագիրն ուղարկվել է Սփյուռքի բոլոր լրատվամիջոցներին, ինչպես նաև տարածվել է համայնքային կառույցների շրջանում:

Սփյուռքի նախարարության աջակցությամբ Սփյուռքի մի շարք համայնքներում կազմակերպվել են «Հայաստանի Հանրապետություն և Մայիսյան հերոսամարտեր - 100» խորագրով տասնյակ միջոցառումներ, որոնք լուսաբանվել են նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում:

Սփյուռքի համայնքային կառույցների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցությամբ Լիբանանում, ԱՄԷ-ում, Հորդանանում, Ղազախստանում, Ռուսաստանում կազմակերպվել են Երևանի 2800-ամյակին նվիրված «Երևանը՝ երեք հանրապետությունների մայրաքաղաք» լուսանկարների ցուցահանդեսներ: Կայացած միջոցառումների մասին նյութերը տեղադրվել են «Հայերն այսօր» պարբերականում:

Մայիսին նոր կառավարության ձևավորումից հետո «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխությունը կասեցվել է:

Սփյուռքում հայապահպանության հիմնախնդրի լուծման գործում մշակութային գործոնի ավելացում

Կազմվել է հայրենասիրական-ազգագրական, Երևանին նվիրված՝ կապված 2800 ամյակի հետ, երգերի փաթեթը, որտեղ ընդգրկվել է 27 երգ, և փաթեթը տրամադրվել է համայնքներին, մշակութային օջախներին, կրթօջախներում գործող 164 երգչախմբի, դաշնամուրի համար գործիքավորված 8 ստեղծագործություն է տրամադրվել դաշնակահար-մենակատարներին:

Հայաստանում նոր կառավարության ձևավորումից հետո «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի բովանդակությունն ու ձևաչափը վերանայվել են: Որոշում է կայացվել «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրում նախատեսված դասընթացները ներառել «Քայլ դեպի տուն» ծրագրում, և արդյունքում մասնակիցների համար անցկացվել են երգի ու պարի դասընթացներ:

Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական 4-րդ համաժողովը՝ «Մասնագիտական հայրենադարձություն Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության համատեքստում» խորագրով առայժմ հետաձգվել է:

«Իմ Հայաստան» համահայկական 4-րդ փառատոնի 2018 թվականի ծրագիրն ու միջոցառումների ցանկը հաստատվել են ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 6-ի թիվ 9-16 արձանագրային որոշմամբ: Նոր կառավարության ձևավորումից հետո, երբ փոխվեցին իրականացվող ծրագրերի և միջոցառումների նկատմամբ մոտեցումները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել փառատոնի ծրագիրը և քննարկել նոր ձևաչափով այն իրականացնելու նպատակահարմարությունը: Արդյունքում որոշվել է համերգներ կազմակերպել Սփյուռքից ժամանած այն խմբերի մասնակցությամբ, ովքեր նախապես գնել էին Հայաստան գալու տոմսերը, և անցկացվել է Համահայկական մշակութային փառատոն, որի շրջանակներում հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Պարարվեստի օրեր, որին մասնակցել են Սփյուռքի 9 երկրից ժամանած 12 պարախումբ: Պարախմբերը ելույթներ են ունեցել Հայաստանի և Արցախի համերգային սրահներում և մշակութային օջախներում: Բացի այդ, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել Ստամբուլի «Մարալ» երգի-պարի համույթի 80-ամյակին նվիրված հոբելյանական համերգը:
- Երգչախմբային արվեստի օրեր. Հայաստանի Երաժշտական ընկերության դահլիճում տեղի է ունեցել Էստոնիայի Տալլին քաղաքի «Երազանք» և Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքի «Աստղիկներ» երգչախմբերի համատեղ համերգը:
- Ասմունքի համահայկական փառատոն Շուշիում, որին մասնակցել են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ուսումնական հաստատությունները ներկայացնող 140 պատանի և աղջիկ, որից 31-ը՝ սփյուռքահայ, 4 երկրից:
- «Հայ երգի օր». ներկայացվել է պոլսահայ կոմպոզիտոր Մաժակ Թոշիկյանի «Սասունցիների պարը» բեմադրությունը:

Ընդհանուր առմամբ փառատոնին մասնակցել է 405 հոգի՝ 11 երկրից:

ՀՀ կառավարության աջակցությամբ, նաև սփյուռքի համայնքային, կրթամշակութային կազմակերպությունների, համահայկական կառույցների հետ համագործակցությամբ Հայաստանում իրականացվել և իրականացվում են սփյուռքահայ նշանավոր մշակութային գործիչների, խմբերի, կառույցների հոբելյաններին նվիրված միջոցառումներ:

«Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում մարտի 11-ին կազմակերպվել է Զապել Եսայանի 140-ամյակին նվիրված «Երգ երգոց» հեռուստատեսային հաղորդում:

Մարտի 20-ից մեկ ամսով պարուսույց է գործուղվել Ավստրալիա՝ տեղում գործող հայկական պարախմբերի պարուսույցների վերապատրաստման նպատակով:

Մարտի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի գրողների միության հետ համատեղ Հայաստանի գրողների միությունում տեղի է ունեցել Սիրիայից հայրենադարձ արձակագիր, բանաստեղծ, հրապարակախոս Թորոս Թորանյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջոցառում:

Համազգային հայ կրթական և մշակութային միության 90-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակներում մայիսի 23-29-ին Հայաստանում անցկացվել են Լիբանանի «Գասպար Իփեկեան» թատերախմբի ներկայացումները:

Աբխազիայի հայերի միության հետ համագործակցության շրջանակներում նախարարության կողմից մարտի 23-ից ապրիլի 2-ը Աբխազիայի Սուխում քաղաք են գործուղվել ուսուցիչներ՝ հայկական 25 դպրոցների տարրական դասարանների 65 դասվարի և հայոց լեզվի ու գրականության 29 ուսուցչի վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով: Անցկացվել են վերապատրաստման արդյունավետ դասընթացներ, որի մասին վկայում են համայնքի ղեկավարներից և վերապատրաստման մասնակից ուսուցիչներից ստացված արձագանքները:

Նոյեմբերին Հայաստանից գործուղված մասնագետների կողմից կազմակերպվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ Նիդերլանդների Ալմելո քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Սուրբ Մեսրոպ Մաշտոց հայկական դպրոցում:

Կրթություն

ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության կրթության ոլորտի միջոցառումները և գերակա խնդիրներն ուղղված են եղել կրթության որակի, մատչելիության և հասանելիության բարելավմանը՝ համակարգի բովանդակային և մեթոդների արդիականացման, իրավական դաշտի ամրապնդման ու կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով:

Նախադպրոցական կրթության մատչելիության, հասանելիության ընդլայնման համատեքստում, Համաշխարհային բանկի աջակցությամբ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 2018 թվականին հիմնվել է 17 նախակրթարան՝ շուրջ 425 երեխայի ընդգրկմամբ, այդ թվում՝ Վայոց Ձորում՝ 3, Լոռիում՝ 4, Գեղարքունիքում՝ 1, Երևանում՝ 9 նախակրթարան:

Մշակվել է «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «ԵՄ-ն քաղաքացիների համար՝ Հայաստանում ժողովրդավարության ամրապնդում» ֆինանսավորման համաձայնագիրը, համաձայն որի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության և խնամքի 40 հաստատություն կստեղծվի Հայաստանի գյուղական տարածքներում, որտեղ հնարավոր կլինի ընդգրկել նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության որակի և արդյունավետության բարելավման տեսանկյունից, փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցներում համապատասխան առարկայական ուսուցիչների բացակայության պայմաններում ուսուցչական կազմի՝ առցանց դասավանդող ուսուցիչներով համալրման նպատակով, հանրապետության 6 գյուղական դպրոցներում ներդրվել է հեռավար ուսուցման փորձնական ծրագիր:

Կրթության հասանելիությունն ու ներառականությունը լիարժեք ապահովելու նպատակով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ներառական կրթության հզորացում» ծրագրի շրջանակներում մշակվել է ՀՀ Սյունիքի մարզում ծրագրի իրականացման ճանապարհային քարտեզը: Աշխատանքներ են իրականացվում ՀՀ Սյունիքի մարզում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և 11 դպրոցների վերանորոգման նախագծանախահաշվային փաթեթների պատրաստման ուղղությամբ:

Շարունակվել են համընդհանուր ներառական կրթության ներդրման աշխատանքները, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի N698-Ա որոշմամբ «Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N15 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, իսկ ՀՀ կառավարության 2018 թվականի N701-Ա որոշմամբ «Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:

2018 թվականին ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի, Տավուշի մարզերում, իսկ սեպտեմբեր ամսից՝ ՀՀ Շիրակի մարզում բոլոր հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է սնունդ՝ յուրաքանչյուր երեխային օրական 140 դրամ հաշվարկով: Ծրագրում ընդգրկված է շուրջ 43000 աշակերտ:

Պետական բյուջեի միջոցներով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում գործածության համար անվճար տրվող դասագրքերը: Միաժամանակ, սոցիալական աջակցություն ստացող 39 համայնքի 49 դպրոցի 1-12-րդ դասարանների բոլոր սովորողներն ապահովվել են անվճար դասագրքերով:

Համայնքներում ուսումնական հաստատությունների թափուր ուսուցչական հաստիքները լրացնելու նպատակով ՀՀ կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1412-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ մանկավարժական կադրեր գործուղելու կարգի» համաձայն գործուղվել է 245 ուսուցիչ:

Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ուսումնասիրված և ընտրված անհետաձգելի հիմնանորոգման կարիք ունեցող թվով 20 ավագ դպրոցներից 5-ում սկսվել և իրականացվել են հիմնանորոգման աշխատանքները, դպրոցները հանձնվել են շահագործման: 2018 թվականի ընթացքում ավարտվել են «Կրթության բարելավում» վարկային ծրագրի 2-րդ փուլով նախատեսված 12 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման աշխատանքները:

Հանրակրթության ոլորտում դասարանների ձևավորման գործընթացի հստակեցման և կարգավորման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը»:

Մշակվել է «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի վերջնական ընդունման համար անհրաժեշտ են համապատասխան օրենքներում կատարել լրացումներ, որից հետո դրանք կհաստատվեն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով:

Սովորողների՝ արվեստի վերաբերյալ կրթական բացը լրացնելու նպատակով, ՀՀ մշակույթի նախարարության հետ համագործակցելով՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում մեկնարկել են «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա» նախագծերը և Դպրոցական աբոնեմենտային ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության բոլոր դպրոցները: Մշակութային հաստատություններին հատկացվող գումարը տարվա կտրվածքով աճել է շուրջ 400 միլիոն դրամով:

Հանրակրթական հաստատություններում ֆինանսական և ձեռնարկատիրական տարրերի ներդրման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ, որոնց արդյունքում որոշվել են գործընթացների իրականացման փուլերը (որոշ առարկաների ծրագրերի լրամշակում, ուսուցիչների վերապատրաստման ժամանակացույց, 2018-2019 ուս. տարվա ծրագրում տարբեր առարկաների շրջանակում ներդրվել են համապատասխան նյութերը):

Դպրոցականների՝ ՏՀՏ (տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ) ուղղվածությամբ մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով «ՄՏՍ Հայաստան», «Սինոփսիս Արմենիա», «Յունիքոմփ» ընկերությունների և Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Միկրոէլեկտրոնիկա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Հեռահաղորդակցության հիմունքներ» մասնագիտական առարկաների ներդրման վերաբերյալ: Ծրագրում կընդգրկվի ևս 5 դպրոց՝ դրանց ընդհանուր թիվը հասցնելով 15-ի:

Նախորդ տարիներին բացված և հետզհետե ընդլայնվող շուրջ 240 ինժեներական լաբորատորիաներում և ռոբոտաշինության խմբակներում ընդգրկվել է շուրջ 5500 սովորող:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական և ուսուցչական անձնակազմին ուղղված բարեփոխումներից են «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության նոր համակարգին հավանություն տալու մասին», «Ուսուցիչների կամավոր ատեստավորման ներդրման համակարգի ծրագրին հավանություն տալու մասին» նախագծերը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացի կազմակերպման շրջանակում 2018 թվականին ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ, շնորհվել է 411 տարակարգ, որից առաջին աստիճան՝ 393 ուսուցչի, 2-րդ աստիճան՝ 18 ուսուցչի:

Աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագետների պատրաստման համատեքստում ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը և պատրաստվել դրանից բխող օրենսդրական փաթեթ, որը քննարկումների ավարտից հետո կդրվի շրջանառության մեջ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը ՀՀ մարզերի զարգացման ուղղություններին և աշխատաշուկայի առանձնահատկություններին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ են իրականացվել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերում:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՀԳ/2015/038-246 ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում մշակվել են 24 գյուղատնտեսական և

գյուղատնտեսությանն առնչվող ՆՄՄԿՈՒ (նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում) պետական կրթական (որակավորման) չափորոշիչ և համապատասխան ուսումնական պլան՝ ձեռներեցության մոդուլի պարտադիր ներառմամբ: Կարևորելով աշխատաշուկա-կրթական համակարգ փոխադարձ կապի ապահովումը՝ շարունակվում են մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները: Ներկայումս ընթացքի մեջ է ՄԿՈ (Միջին մասնագիտական կրթություն և ուսուցում) բոլոր ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների պատասխանատուների վերապատրաստման գործընթացը:

Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության կողմից իրականացվող՝ մասնագիտական կրթության ոլորտում Երկակի ուսուցման (դուալ) համակարգի ներդրման գործընթացի շրջանակում փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել ՆՄՄԿՈՒ հաստատությունների և մասնավոր կայացած գործատուների միջև: Համակարգի ընդլայնման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով 2018-2019 ուսումնական տարվանից համակարգը փորձնականորեն ներդրվել է 8 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում: Նաև ընտրված 3 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում իրականացվում են երկակի ուսուցման (դուալ) կարճաժամկետ ծրագրեր:

Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության ոլորտների արդյունավետության բարձրացման, այդ ոլորտների արդիականացման ու միասնական օրենսդրական դաշտի կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ վերանայվել և լրամշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նախաձեռնելով «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» նոր՝ միասնական օրինագծի մշակում: Նման ընդհանուր օրինագծի առկայությունն անհրաժեշտ օրենսդրական հիմքեր կստեղծի ՀՀ կրթական ու գիտական բարեփոխումների ռազմավարության ու նորարարությունների խթանման, բուհ-հետազոտություն-տնտեսություն կապի ամրապնդման ու կարգավորող չափանիշների ներդրման, ինչպես նաև երկու համակարգերի մոտեցումների ու բաղադրիչների միասնականացման համար:

Շարունակվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից միջբուհական պայմանագրերով իրականացվող ընդհանուր կրթական չափորոշիչների հիման վրա համատեղ կրթական ծրագրերի ընդլայնումը, ինչպես նաև ուսանողների փոխանակման ծրագրերը:

Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից իրականացվել է սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի

ուսանողներին ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100%-ի չափով: 2018 թվականին փոխհատուցում ստացած ուսանողների թիվը կազմել է մոտ 3300, ուսման վարձավճարի փոխհատուցման գումարը՝ մոտ 700 մլն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում առկա ուսուցմամբ, բակալավրի կրթական աստիճանում բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ուսանողների համար նախատեսվել է ուսման վարձի լրիվ փոխհատուցում: Բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող, մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին պահուստային միջոցներից հատկացվել է ևս 20% զեղչ:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման գործընթացները կարգավորող կարգի վերանայման ու ներկայիս իրավիճակին համապատասխան դաշտի կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել և 2019 թվականին ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման, ազատման, ուսումնառության դադարեցման և ուսանողական իրավունքների վերականգնման հետ կապված հարաբերությունները կարգավորվող նոր կարգը: Հստակեցվել են նախկինում գործող կարգի պահանջները և կանոնակարգող հարաբերությունները՝ սահմանելով համապատասխան դրույթներ և լրացնելով առկա անհրաժեշտ իրավակարգավորումները, ապահովելով կրթության բովանդակության և շարունակականության կապը՝ միտված ուսումնական գործընթացի կազմակերպման բարելվմանն ու կրթության որակի բարձրացմանը:

2018 թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանում ԵՄ ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» ֆինանսավորման համաձայնագրին, որի նպատակն է վերացնել աշխատաշուկայի կարիքների և երկրի կրթական համակարգի արդյունքների միջև անջրպետը, կրթական համակարգում ներդնել կրթական տեխնոլոգիաների առկայություն ու դասավանդման ժամանակակից մոտեցումներ և շարունակել զարգացնել մարդկային կապիտալը: Համաձայնագրով նախատեսված է աջակցություն տրամադրել «ԵՄ-ն նորարարության համար՝ ԳՏՃՄ (STEM, գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) ոլորտի ուսանողներին իրենց մասնագիտական ոլորտի վերաբերյալ գործնական փորձառության ձեռքբերման համար հարթակ ստեղծելու նպատակով: Ծրագիրը կաջակցի նաև մարզերում ԳՏՃՄ առարկաների դասավանդմանը և ուսուցման գործընթացների ամրապնդմանը:

Մարզերում, գյուղական համայնքներում ուսուցման և վերապատրաստման հասանելիությունը մեծացնելու նպատակով ընդլայնվել է հեռավար ուսուցման և վերապատրաստման դաշտը, մասնավորապես՝ Կրթության ազգային ինստիտուտի Moodle հեռավար ուսուցման՝ https://learning.aniedu.am հարթակում 50 մասնագետների հետ անցկացվել են վերապատրաստումներ՝ «Google-ի կրթական գործիքները» թեմայով: Գործող «Սոցիալական մեդիայի գործիքները» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է աջակցել մանկավարժների սոցիալական մեդիայի և թվային գործիքների կիրառման զարգացմանը, ինչպես նաև ուսումնական և կառավարման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, հեռավար եղանակով վերապատրաստում է անցել ՀՀ մարզերի գյուղական դպրոցների 179 ուսուցիչ:

Ուսուցիչներին դասավանդման ժամանակակից մեթոդների հիմնական դրույթներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին ծանոթացնելու նպատակով «Smart էլեկտրոնային գրատախտակի կիրառումը հանրակրթական դպրոցում» ծրագրով իրականացվել են հանրակրթական դպրոցների 384 ուսուցչի վերապատրաստումներ:

«Հեռավար ուսուցում» համակարգի շրջանակում (https://elearning.armedu.am/) ուսուցիչների համար կազմակերպվել են «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով 3 դասընթաց, ակտիվ ու արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ՀՀ տարբեր մարզերի և Արցախի 104 ուսուցիչներ ստացել են հավաստագրեր: Հեռավար ուսուցման հմտություններ ունեցող ուսուցիչները մշակել և համակարգում վարել են տարբեր ուսումնական առարկաներին առնչվող 49 հեռավար դասընթացներ՝ 1705 գործընկերների համար:

Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) կրթական ակադեմիայի միջոցով հիմք է դրվել ինտերակտիվ ուսուցման առցանց ակադեմիայի ստեղծմանը, որը պարբերաբար համալրվում է նոր կրթական ռեսուրսներով: 2018 թվականին ԿԱԻ ակադեմիայում տեղադրված տեսադասերի քանակը 88-ից դարձել է 100, իսկ դիտումները 130000-ից դարձել են 190000: Կրթական ալիքում ավելացել են նոր տեսադասեր «Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Հայոց լեզու, գրականություն» առարկաներից:

ԿԱԻ-ի ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կրթական կայքում (www.informatika.am) 2018 թվականի ընթացքում թարմացվել են հետևյալ ծրագրերի տարբերակները՝

- HTML-ի առցանց դպրոց, որի միջոցով կայքի այցելուները կսովորեն կայքերի պատրաստման համար անհրաժեշտ HTML լեզուն,
- Corel Draw ծրագրի առցանց դպրոց, որի միջոցով կայքի այցելուները կսովորեն աշխատել գրաֆիկական խմբագրիչի հետ,

- թեստեր, որոնք ունեն ինքնագնահատման հնարավորություն,
- անվճար ծրագրեր, որոնք հնարավոր է ներբեռնել,
- տեսադասեր՝ համակարգչային ծրագրերի վերաբերյալ,
- համակարգչային հնարքներ, որոնք կարելի է օգտագործել կիրառական և ծառայողական ծրագրերը կիրառելիս,
- գործնական աշխատանքներ Microsoft Word, Microsoft Excel, Microsoft Access Photoshop, Corel Draw ծրագրերից:

Գործարկվել են նաև Եվրոպական միության «Իթվինինգ+» ծրագրի (http://etwinningplus.armedu.am), «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (http://ktak.am/) կայքերը:

Ընդլայնվել են Եվրոպական միության «Իթվինինգ+» և «Դպրոցների համագործակցության վիրտուալ համայնքի» ծրագրերի շրջանակներում աշխատանքները, ծրագրերում ընդգրկվել են 252 դպրոցներ և 1200 ուսուցիչներ:

Դպրոցների համագործակցության Եվրոպական Իթվինինգ ծրագրի ազգային կայքի (https://etwinningplus.armedu.am/) համապատասխան բաժիններում պարունակվում է մանրամասն տեղեկատվություն Ազգային համայնքի, ինչպես նաև համայնքին միանալու հնարավորությունների, ազգային պրոյեկտների մասին և այլն: Օգտագործելով «Հայկական կրթական միջավայր» պորտալի, Իթվինինգի ազգային կայքի, ֆեյսբուքյան էջերի, schools.am դոմեյնի հնարավորությունները՝ ՀՀ դպրոցները պարբերաբար տեղեկացվել են «Դպրոցների համագործակցության վիրտուալ համայնքի» ծրագրի նորությունների մասին: Վերապատրաստվել են մարզերի և Երևանի ավելի քան 800 ուսուցիչներ՝ մասնակից բոլոր դպրոցներից:

Հայաստանցի ուսուցիչների մասնակցությամբ իրականացվել է 300 միջազգային նախագիծ, որոնցից յուրաքանչյուրին մասնակցել է Հայաստանի առնվազն 1 ուսուցիչ, որից 45 նախագծերում ծրագրի մասնակից այլ երկրների ներկայացուցիչների հետ միասին հանդես են եկել որպես համահիմնադիր, սկիզբ է դրվել 10 ազգային նախագծերի, որոնց մասնակցում են տարբեր դպրոցների 120 ուսուցիչներ:

Կարևորելով բարձր տեխնոլոգիաների ոլորտում շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման առկա խնդիրները՝ համատեղ աշխատանքներ են իրականացվում Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի, ANEL ինժեներական լաբորատորիայի հետ՝ կազմակերպելով մասնագիտական դասընթացներ դպրոցականների և ուսանողների համար:

Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիական կենտրոնների մոդելով, ՀՕՖ-ի աջակցությամբ, Իջևանում, Գավառում և Եղեգնաձորում մեկնարկել է տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագիրը, որի նպատակն է ձևավորել և բարձրացնել ոլորտի մասնագիտական ներուժը մարզերում:

Գիտություն

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»* ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ Նախագահի աշխատակազմի «ՀՀ պետական կառավարման ակադեմիային»՝ 1 ծրագիր,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող 35 գիտական կազմակերպությունների՝ 41 ծրագիր,
- ՀՀ առողջապահության նախարարության կառավարման ոլորտում գործող 7 գիտական կազմակերպությունների՝ 7 ծրագիր,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող 4 գիտական կազմակերպությունների՝ 4 ծրագիր,
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 4 գիտական կազմակերպությունների՝ 4 ծրագիր,
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվին»՝ 1 ծրագիր,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող 15 գիտական կազմակերպությունների (այդ թվում՝ բուհերին)՝ 105 ծրագիր,
- ՀՀ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 2 գիտական կազմակերպությունների՝ 2 ծրագիր,
- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագրին,
- Գիտական կենտրոնների ստեղծմանը և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրին,
- Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության ծրագրին,
- Միջազգային գիտական կառույցների անդամակցության ծրագրին,
- Համակարգի գիտական գործուղումների իրականացման ծրագրին,
- Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցության ծրագրին,

- Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցության ծրագրին:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծախսային ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 3 գիտական կազմակերպությունների,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին,
- Երևանի պետական համալսարանին:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծախսային ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- 2018 թվականին մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված հետազոտություններին՝ 169 թեմա,
- Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտություններին՝ 33 թեմա,
- Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր,
- Արցախի հետ համագործակցության ծրագրին՝ 6 թեմա (2016-2018), 7 թեմա (2018-2020),
- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման ծրագրին՝ 5 թեմա,
- Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտություններին՝ 5 թեմա (2016-2018), 6 թեմա (2018-2020),
- ասպիրանտներին անհատական աջակցությանը՝ 28 թեմա (2016), 34 թեմա (2018):

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծախսային ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 6 գիտական կազմակերպությունների,
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 1 գիտական կազմակերպության,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին և 2 բուհերի,
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտին:

Առողջապահություն

Առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն ուղղված է որակյալ, արդյունավետ, հասանելի և թափանցիկ համակարգի ստեղծմանն ու զարգացմանը: Կառավարության քաղաքականության առաջնահերթ ռազմավարական նպատակներն ու խնդիրներն են հանդիսացել՝

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը,
- մոր և մանկան առողջության պահպանման ապահովումը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման ապահովումը,
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը,
- դեղագործական գործունեության կազմակերպումը, բնակչությանն անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

2018 թվականին շարունակականորեն, օրական/շաբաթական կտրվածքով իրականացվել է վարակիչ հիվանդություններին, սննդային և քիմիական թունավորումներին առնչվող տվյալների դիտարկում: Վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ, կոնտակտավորների և շրջակա միջավայրի լաբորատոր հետազոտություններ, բժշկահիգիենիկ գիտելիքների քարոզչություն, օջախների ախտահանում: Նաև վարակի հետագա տարածումը կանխարգելելու նպատակով հակահամաճարակային միջոցառումներ են իրականացվել աղիքային վարակիչ հիվանդությունների թվով 6 բռնկման օջախներում: Գրիպի և սուր շնչառական վարակների կանխարգելման ուղղությամբ իրականացվել է մշտադիտարկում՝ համապատասխան հաստատություններում: Կազմակերպվել են սեմինար դասընթացներ և աշխատաժողովներ համաճարակաբանների և կլինիցիստների համար:

Դաշտային պայմաններում իրականացվել են կենդանամակաբուծաբանական աշխատանքներ՝ հատուկ վտանգավոր վարակներով պայմանավորված կրծողների շրջանում տեղային բռնկումների հայտնաբերման նպատակով, արդյունքում կրծողների շրջանում նաև հայտնաբերվել են տուլարեմիայի էպիզոոտիաներ: Արձանագրված վայրերի հարակից բնակավայրերում իրականացվել

են կանխարգելիչ պատվաստումներ: Արդյունքում՝ բնակչության շրջանում տուլարեմիայով պայմանավորված բռնկումներ չեն արձանագրվել:

Արարատի և Արմավիրի մարզերում պիլոտային կարգով ներդրվել է առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) օղակի կողմից ֆիզիկական ակտիվության խթանման խորհրդատվություն՝ միջազգային մեթոդաբանությամբ:

Արցախի հետ համագործակցության շրջանակներում՝ Արցախի 4 բժշկական կազմակերպություններում իրականացվել են բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՎ) կանխարգելման կարողությունների գնահատում, արդյունքների վերլուծություն, առկա բացերի ուղղությամբ ներկայացվել են առաջարկություններ:

Լրամշակվել է արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման 2019-2022 թվականների նպատակային ծրագիրը, ստեղծվել է հեպատիտների ազգային բազա: CDA Foundation կազմակերպության հետ իրականացվել է երկրի բնակչության շրջանում հեպատիտների բեռի որոշում:

Իրականացվել է կառավարելի վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ նաև հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի համաճարակաբանական հսկողություն, ինչպես նաև սուր թորշոմած կաթվածահարության դեպքերի ակտիվ համաճարակաբանական հսկողություն, կարմրուկի, կարմրախտի դեպքերի ակտիվ համաճարակաբանական հսկողություն:

2018 թվականի զորակոչի ենթակա անձանց պատվաստումները ժամանակին և լիարժեք կազմակերպելու համար իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ:

Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգի (ՀՀԷՀՀ-ի) գործարկման շրջանակներում ներդրվել է տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ՝ համաձայն ISO / IEC 27001:2013 ստանդարտի, միջազգային փորձագետների կողմից իրականացված աուդիտից հետո «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ին տրամադրվել է հավաստագիր, ներկայումս համակարգը շահագործվում է:

Բնակչության առողջության առաջնային պահպանում

2018 թվականին շարունակվել է շեշտադրվել առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման վրա: Մասնավորապես, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով 2018 թվականին շարունակվել է 2015 թվականից մեկնարկած «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում

իրականացվող ՈՎՀ սքրինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-ից 68 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները հնարավորություն են ունեցել անվճար հետազոտվելու սպասարկող ԱԱՊ բժշկական հաստատություններում՝ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման և ախտորոշման, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

Առավել տարածված ՈՎՀ-ների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման նպատակով 2018 թվականին շարունակվել է 2015 թվականից սկսած սոցիալական փաթեթի շահառուների՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում տարեկան պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունների իրականացումը պոլիկլինիկական բժշկական հաստատություններում:

Շուրջ 230 հազար քաղաքացիներ ստանում են սոցփաթեթին հավասարեցված բուժօգնություն պետպատվերի շրջանակներում, որի մեջ ներառված են նաև սրտի և գլխուղեղի թանկարժեք վիրահատությունները: Վերացվել է չարորակ նորագոյացությունների ժամանակ կատարվող վիրահատությունների համավճարը, որը կփոխհատուցվի պետական բյուջեից:

2018 թվականին հանրապետությունում գործել են ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ 6 պրակտիկաներ, որոնք մատուցել են ԱԱՊ ծառայություններ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Բնակչության շտապ բժշկական օգնության ծառայություններ

2018 թվականին ՀՀ տարածքում ամբողջ բնակչության համար ապահովվել է շտապ և անհետաձգելի բժշկական օգնության իրականացումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով: Իրականացվել են միջոցառումներ, այդ թվում՝ շտապ բժշկական օգնության ծառայության արդյունավետության բարելավման նպատակով, նորացվել և ժամանակակից սարքավորումներով է հագեցվել հանրապետության շտապ բժշկական օգնության ծառայության ավտոպարկը:

Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում 2018 թվականին իրականացվել է հանրապետության՝ ծննդօգնություն իրականացնող բոլոր բժշկական 57 կազմակերպությունների գնահատում և դասակարգում՝ ըստ բուժօգնության 3 մակարդակների: Պետական պատվերով կազմակերպվել է շուրջ 63,000 հղիի նախածննդյան և հետծննդյան հսկողություն, 36,781 ծննդաբերություն, 15,793 հղիության ախտաբանության հիվանդանոցային դեպքի վարում: Իրականացվել է շուրջ 114,500 նորածնային սկրինինգ, հայտնաբերվել է 334 հիվանդ երեխա, որոնց

մոտ կանխվել է հիվանդության հետագա զարգացումը և հաշմանդամությունը: 70,883 երեխա ստացել է հիվանդանոցային բուժում և շուրջ 682,000 երեխա՝ ամբուլատոր բուժօգնություն ու հսկողություն:

2018 թվականին իրականացվել են բնածին հիպոթիրեոզի (36,464 սկրինինգ), ֆենիլկետոնուրիայի (36,533 սկրինինգ) և լսողության բնածին շեղումների վաղ հայտնաբերմանն (31,748 սկրինինգ) ուղղված սկրինինգային ծրագրերը: Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի սկրինիգներն ունեն 100 տոկոսանոց ծածկույթ, 2019 թվականից կապահովվի նաև լսողության սկրինինգի 100 տոկոսանոց ծածկույթ՝ 2018 թվականի շուրջ 80 տոկոսի փոխարեն: 2018 թվականից սկսել է իրականացվել անհասության ռետինոպատիայի հայտնաբերմանն ուղղված սքրինինգ պետական միջոցների հաշվին, իրականացվել է ընդհանուր առմամբ 3,133 սքրինինգ (որոնցից՝ 900-ը՝ առաջնային, իսկ 2,233 ը՝ շարունակական) կամ ստուգվել է 6,266 աչք:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում

Ապահովագրական համակարգի միջոցով 2018 թվականին իրականացվել է սոցփաթեթի շահառուների բժշկական օգնությունը և սպասարկումը: Տարվա ընթացքում պետության կողմից ֆինանսավորվել է ավելի քան 12,066 հիվանդանոցային դեպք, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններ:

Իջեցվել են սրտի ստենտավորման գներն ավելի քան 250,000 դրամով (1,100,000-ից իջել է 850,000 դրամի), ընդ որում, պետական պատվերի շրջանակներում կատարվող միջամտությունների ժամանակ ոչ դեղապատ ստենտը փոխարինվել է դեղապատ ստենտով:

Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության և սպասարկման մատչելիության ապահովման նպատակով 2018 թվականի ընթացքում պետության կողմից ֆինանսավորվել է ավելի քան 16,571 դեպք, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններ:

Սոցիալական, հատուկ նշանակություն ունեցող և առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում ու բուժօգնության կազմակերպում

2018 թվականին շարունակվել է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և

շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագրերի իրականացման արդյունքում տուբերկուլոզով հիվանդացությունը շարունակում է նվազել: 1000-ից ավելի ՄԻԱՎ վարակ ունեցող անձինք ընդգրկվել են հակառետրովիրուսային բուժման ծրագրում, ներարկային թմրամիջոցներ օգտագործող 500 անձանց շրջանում ներդրվել է մեթադոնային փոխարինող բուժում՝ ՄԻԱՎ և այլ արյունային վարակների կանխարգելման նպատակով:

Սրտի անհետաձգելի վիրահատությունների ծառայությունների շրջանակներում բուժօգնություն է ստացել 6000 քաղաքացի: Դիաբետով հիվանդների բժշկական օգնության ապահովման ուղղությամբ էնդոկրինոլոգիական դիսպանսերների և մասնագիտացված կաբինետների միջոցով իրականացվել են դիաբետով հիվանդների վաղ հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանումը ապահովելու աշխատանքներ:

Հեմոդիալիզային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին գրանցվել է 1041 դեպք, ապահովվել է ծառայության 100% բնակչության ծածկույթ:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ):

ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց ծրագրի շրջանակներում, կենտրոնացված կարգով 9 հիվանդությունների համար ձեռք է բերվել թվով 59 անվանում դեղ: Ծրագրի շրջանակներում 9 հիվանդությունից 7-ի դեղապահովումը կազմել է 100 տոկոս, իսկ 2 հիվանդության դեղապահովումը՝ 90 տոկոս:

Մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացում

2018 թվականին ավարտվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ի հիվանդանոցային նոր մասնաշենքի կառուցման, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական

կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները, կենտրոնները հագեցվել են անհրաժեշտ ժամանակակից բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով:

2018 թվականին ավարտվել են ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով հագեցման աշխատանքները:

Համաշխարհային բանկի հետ նախապես համաձայնեցվել են «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային համաձայնագրում փոփոխության կատարումը և ծախսային հոդվածների վերաբաշխումը: Վերաբաշխման արդյունքում որոշվել է ֆինանսական միջոցներն ուղղել ՀՀ Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզի հիվանդանոցային համակարգերի հետագա արդիականացմանը՝ Մարտունի և Եղեգնաձոր քաղաքներում կառուցելով նոր մոդուլային տիպի բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոններ: 2018 թվականին նշյալ երկու նոր բժշկական հաստատությունների կառուցման համար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման (ՆՆՓ) և հեղինակային հսկողության իրականացման նպատակով հայտարարվել է մրցույթ:

Սոցիալական պաշտպանություն

2018 թվականն առանձնացավ սոցիալական պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների և՛ ծավալի ու ընդգրկվածության, և՛ բովանդակային առումով: Գոհացուցիչ արդյունքներ արձանագրվեցին սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համագործակցային միջավայրի ստեղծման, պետություն-ոչ պետական համագործակցության զարգացման ու ինստիտուցիոնալացման ուղղությամբ: Շոշափելի քայլեր ձեռնարկվեցին մատուցվող ծառայությունների հասցեականության, որակի ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Աշխատանք և զբաղվածություն

Մշակվել և սահմանված ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Վերջինս 12.07.2018թ. քննարկվել է Վարչապետի աշխատակազմում, որի արդյունքում հանվել է շրջանառությունից:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին ՀՀ կառավարության 17.04.2014թ. N 534-Ն որոշման մեջ: Մասնավորապես՝ առաջարկվել է որոշումը համալրել «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն

աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծրագրի իրականացման կարգով», ինչպես նաև հստակեցնել աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշները, զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվող շահառուների շրջանակը, ծրագրերն իրականացնել ըստ կոնկրետ թիրախավորված շահառուների:

Փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 27.12.2012թ. N 1691-Ն որոշման մեջ, որով հետաձգվել է սոցիալական փաթեթից օգտվելու համար շահառուների՝ նույնականացման քարտ ունենալու պարտադիր պահանջ սահմանող ժամկետը:

Սոցիալական փաթեթի հատկացման կարգի դրույթները 2018 թվականին ընդունված մի շարք օրենքներով ամրագրված կարգավորումներին համապատասխանեցնելու, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում առաջացած որոշակի խնդիրներին լուծում տալու նպատակով մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել սոցիալական փաթեթի հատկացման կարգում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագիծ, որը լրամշակումից հետո կդառնա քննարկման առարկա;

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել են դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի գումարի հատուցման նվազագույն և առավելագույն չափն ու վճարման կարգը, գործուղման ժամանակ մեկ օրվա ընթացքում մեկից ավելի երկրում գտնվելու դեպքում աշխատողին օրապահիկը (լրացուցիչ ծախսերի հատուցումը) վճարելու չափը, ՀՀ տարածքից դուրս (բացառությամբ Արցախի Հանրապետության) դաշտային պայմաններում և տեղափոխման աշխատանքների կատարման դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվող՝ աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի գումարի չափը:

Ի կատարումն փոխվարչապետի հանձնարարականի, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դեռևս չի իրականացվում աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ ամբողջական պետական վերահսկողություն՝ մշակվել և փոխվարչապետին է ներկայացվել համապատասխան առաջարկությունների փաթեթ, որով նախատեսվում է ապահովել աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ ամբողջական պետական վերահսկողության իրականացում՝ այդ լիազորությունները վերապահելով մեկ տեսչական մարմնի՝ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:

Բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծման նպատակով մշակվել և հաստատվել է Զբաղվածության կարգավորման 2019 թվականի պետական ծրագիրը և միջոցառումների ցանկը:

Օտարերկրացիների համար աշխատանքի թույլտվության տրամադրման համակարգի բարելավման ու կատարելագործման նպատակով վեր են հանվել աշխատանքի թույլտվության համակարգի կիրառման արդի խնդիրները և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել դրանց կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ լուծումներին ուղղված իրավական կարգավորումների առաջարկություններ:

ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում, սոցիալական գործընկերների համագործակցության շարունակականությունն ապահովելու նպատակով, 01.08.2015թ. կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մեկ տարով:

Իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած որոշ խնդիրներից ելնելով՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում ծանր, վնասակար աշխատանքների համար հավելում ստանալու իրավունք ունեցող աշխատանքների և մասնագիտությունների անվանումները համապատասխանեցվել են այլ իրավական ակտերով սահմանված անվանումներին:

2018 թվականին իրականացվել է զբաղվածության կարգավորման թվով 11 պետական ծրագիր, որում ընդգրկվել է 2660 անձ: Զբաղվածության տարածքային կենտրոնները (ԶՏԿ) համագործակցել են շուրջ 18.5 հազար գործատուի հետ, որոնցից տարվա ընթացքում հավաքագրվել է 9.6 հազար չկրկնվող թափուր աշխատատեղ: Տարեսկզբից ԶՏԿ-ների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 11.9 հազար աշխատանք փնտրող, որոնցից շուրջ 2.0 հազար՝ զբաղվածության պետական ծրագրերի միջոցով: 2018 թվականին կազմակերպվել է 10 աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցել է 9466 աշխատանք փնտրող և 326 գործատու:

Կենսաթոշակային ապահովություն

2018 թվականի ընթացքում կենսաթոշակային ապահովության ոլորտում շարունակվել է առցանց մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ կենսաթոշակների, նպաստների նշանակման և վճարման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելու, ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու, կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման գործընթացի վարչարարությունը պարզեցնելու նպատակով: Իրականացված օրենսդրական փոփոխությունների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման արդյունքում 2018 թվականից ապահովվել է.

● 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու դիմումն առցանց ներկայացնելը,

● ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգի ներդրումը և դրա կիրառմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին էլեկտրոնային հարցում կատարելը, անհրաժեշտ տվյալներ ստանալը, այդ տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում հաշվառելը և դրանց հիման վրա որոշումներ կայացնելը (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը),

● զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով կենսաթոշակ և պարգևավճար նշանակելը (վերահաշվարկելը) և վճարելը:

Գործարկվում է աշխատանքային գրքույկների հաշվառումը և աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու համար էլեկտրոնային լուսապատճենների ստեղծումն ապահովող տեղեկատվական ենթահամակարգը: 2018 թվականին թվայնացվել է շուրջ 270000 աշխատանքային գրքույկ, և աշխատանքները կշարունակվեն նաև 2019 թվականին:

Պետական կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի արդյունավետությունը մեծացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունմամբ պայմանավորված՝ մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել պետական կենսաթոշակները և նպաստները սոցիալական ապահովության (պարբերական բնույթի վճարումներ) կամ միանվագ դրամական վճարների (ոչ պարբերական բնույթի վճարումներ) հաշիվների միջոցով վճարելն ապահովող՝ ՀՀ կառավարության որոշման 11 նախագիծ: Դրանց վերջնական տարբերակները 2019 թվականին կդառնան կառավարության քննարկման առարկա:

Օրենսդրության մեջ կատարվել են փոփոխություններ, որոնք միտված են եղել՝

● այն ընտանիքների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը, որոնք պատրաստվում են ունենալ 2-րդ երեխան (երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը երկրորդ երեխայի ծնվելու դեպքում սահմանվել է 150 000 դրամ՝ նախկինում սահմանված 50 000 դրամի փոխարեն,

- 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը (անկախ երեխայի 1 տարին լրացած լինելու հանգամանքից, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձն իրավունք ստացավ տնօրինել ընտանեկան դրամագլուխը՝ ամսական 50 000 դրամի չափով՝ նախկինում սահմանված 25 000 դրամի փոխարեն, որը հնարավոր էր օգտագործել միայն երեխայի 1 տարին լրանալուց հետո):

ՀՀ ԱԺ հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի հիմնական թիրախային նպատակադրումներից մեկը ծայրահեղ աղքատության հաղթահարումն է: Ըստ այդմ, ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության շրջանակներում 2019 թվականի հունվարի 1-ից արդեն իսկ բարձրացվել են ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը և սահմանվել են պարենային (ծայրահեղ) աղքատության գծի՝ 2019 թվականի համար կանխատեսված մեծության՝ 25500 դրամի չափով (հաշվի առնելով այդ նպաստների չափերը սահմանելու՝ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունը՝ այդ չափերը սահմանվել են ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1408-Ն որոշմամբ): Արդյունքում, շուրջ 63000 շահառուների 2019 թվականի հունվարի 1-ից վճարվում է 25500 դրամ նպաստ:

2019 թվականի մարտի 28-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-7-Ն ՀՀ օրենքը, որով սահմանվել է նվազագույն կենսաթոշակի չափը՝ 25500 դրամ: 25500 դրամից ցածր կենսաթոշակները կվերահաշվարկվեն 2019 թվականի հունվարի 1-ից: Այս դեպքում կբարձրանա ավելի քան 20000 շահառուների կենսաթոշակի չափը:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է 528255 կենսաթոշակառու և նպաստառու (ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնողի դեպքում նպաստներ ստացող), որից 460548-ը՝ աշխատանքային կենսաթոշակառու (կենսաթոշակի միջին չափը՝ 40113 դրամ), 65183-ը՝ նպաստառու (նպաստի միջին չափը՝ 17760 դրամ), 1866-ը՝ շարքային կազմի զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացող (կենսաթոշակի միջին չափը՝ 24488 դրամ), 658-ը՝ պետական պաշտոն զբաղեցրած անձինք (կենսաթոշակի միջին չափը՝ 340818 դրամ):

2018 թվականին մայրության նպաստ է նշանակվել 36000 (որից՝ 24720 չաշխատող) անձի, երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ 35934 անձի: Խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցողների թվաքանակը կազմում է 11992 ընտանիք կամ 12733 անձ:

Սոցիալական աջակցություն

Պետական նպաստներ

2018 թվականին շարունակվել են ընտանիքների անապահովության գնահատման համակարգով տրամադրվող նպաստների (ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն) հատկացման աշխատանքները: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության իրականացրած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցի 2017 թվականի ընտանեկան նպաստի համակարգի վերլուծության արդյունքների՝ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ընտանեկան նպաստի համակարգում 2008 թվականի 77.5%-ի համեմատ 2017 թվականին կազմել է 79.6%:

Ընտանեկան նպաստի ծրագրի ծածկույթը 2016 թվականին նման է 2015 թվականին և կազմում է ընդհանուր բնակչության շուրջ 13.6%-ը: 2017 թվականին ընդհանուր բնակչության ընտանեկան նպաստի ծածկույթը նվազել է մինչև 12.9%: Այնուամենայնիվ, 2017 թվականին աղքատների ընդգրկվածության աստիճանը 2016 և 2015 թվականների համեմատ բարձր է: Ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված է 3 աղքատներից (սահմանվում են որպես աղքատության վերին ընդհանուր գծից ցածր բնակչություն) մեկը: Մինչդեռ վերին երեք քվինտիլների ծածկույթը 2015-2016թթ. ընթացքում բարձրացել էր՝ 15.7%-ից հասնելով 19.9%-ի, 2017 թվականին այն նվազել է՝ հասնելով 12.3%-ի:

2018 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 115621 ընտանիքներից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել են ամսական միջինում 95516-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 82.6%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջինում 5152 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 4.5%-ը, նպաստի միջին չափը կազմել է 31350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 3891 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 9395 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 119 ընտանիքի:

Սոցիալապես անապահով ընտանիքներին մատակարարվող բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագները նվազեցվել են առնվազն 20-ական տոկոսով, իսկ խմելու ջրի սակագինը չի բարձրացել բոլոր սպառողների համար:

ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցության շնորհիվ հաջողվել է բարելավել շուրջ 125 հազար վարկառուների վարկային պատմությունը: Համապատասխան օրենսդրական փոփոխություններից հետո 2018 թվականի օգոստոսից սկսած ՀՀ առևտրային բանկերն իրականացրել են ժամկետանց վարկերի գծով կուտակված տույժերի և տուգանքների ներում, որի շնորհիվ ներվել են շուրջ 19,000 վարկառուների ժամկետանց վարկերի գծով տույժերն ու տուգանքները՝ շուրջ 9,5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:

Կուտակային կենսաթոշակային համակարգում իրականացված փոփոխության շնորհիվ շուրջ 209 հազար քաղաքացու ծախսային բեռն էականորեն նվազել է:

Հիփոթեքային ծրագրեր

Կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ ՀՀ հիփոթեքային շուկայում իրականացվող վարկավորման ծրագրերում էական բարելավումներ է արել, որոնց արդյունքում ավելացել են հիփոթեքային վարկավորման ծավալները և հիփոթեքային վարկերի հասանելիության մակարդակը:

2018 թվականի ընթացքում «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ-ի կողմից հիփոթեքային վարկերի հասանելիության խորացման նպատակով իրականացվեցին ծրագրային վարկերի ընդհանուր պայմանների փոփոխություններ՝ պարզեցնելով վարկավորման ընդհանուր պայմանները: Նշված փոփոխություններով հնարավորություն է ընձեռվել մինչև 30 տարեկան երիտասարդ մասնագետներին և չամուսնացած անձանց ձեռք բերել հիփոթեքային վարկեր նորակառույց շենքերում 7.5% կանխավճարով և 35 տարի մարման ժամկետով: Մյուս կողմից, 30 տարեկանից բարձր անձանց (ամուսնացածներ և չամուսնացածներ) համար գործում է կանխավճարի 10% հնարավորություն, եթե դրվում է երկրորդ գույքը որպես գրավ կամ ձեռք է բերվում կանխավճարի ապահովագրություն:

2018 թվականի ընթացքում էական բարելավումներ են իրականացվել նաև «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ-ի կողմից իրականացվող «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքին» սոցիալական ծրագրի ներքո, որոնք ուղղված են եղել հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացմանը՝ ստեղծելով նաև նոր հնարավորություններ նորակառույց շենքերում բնակարանների ձեռքբերման համար: Մասնավորապես, փոփոխվել է ամուսինների գումարային տարիքի առավելագույն շեմը՝ գործող 65 տարվա փոխարեն դառնալով 70 տարի, իսկ վարկավորման տարեկան տոկոսադրույքը երկրորդային շուկայից ձեռքբերվող բնակարանների դեպքում սահմանվել է առավելագույնը 9,5%՝ նախկին 10,5%-ի փոխարեն, ընդ որում, տոկոսագումարների սուբսիդավորումից հետո վարկառուների համար առավելագույն տարեկան տոկոսադրույքը Երևանում և ՀՀ մարզերում կազմելու է համապատասխանաբար՝ 7,5% և 5,5%: Վարկառուների համար ստեղծվել է նաև նոր հնարավորություն նորակառույց շենքերում բնակարանների ձեռքբերման համար. վարկառուները կարող են ձեռք բերել մինչև 30 մլն դրամ առավելագույն արժեքով բնակարաններ 7,5% տարեկան տոկոսադրույքով (եկամտային հարկի վերադարձման հնարավորությամբ, սա, ըստ էության, անուղղակի սուբսիդավորում է) և մինչև 30 տարի մարման ժամկետով: Ընդ որում, ծրագրի ներքո ներդրվել է նաև նոր հնարավորություն, և վարկառուները կարող են ստանալ հիփոթեքային վարկեր 10% կանխավճարով, եթե ձեռք են բերում

հիփոթեքային պարտավորության ապահովագրություն բնակարանի արժեքի մինչև 20%-ի չափով (իսկ նորակառույց շենքերում՝ բնակարանի արժեքի մինչև 10%-ի չափով):

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 2018 թվականի ընթացքում ՀՀ-ում տրամադրված ծրագրային հիփոթեքային վարկերի ծավալը 2017 թվականի նկատմամբ աճել է շուրջ 20%-ով, իսկ միջին կշռված տոկոսադրույքները նվազել են՝ տատանվելով 10.5%-ի շուրջ, նախկին 12.5%-ի փոխարեն: Փոփոխությունների արդյունքներն ավելի ակնհայտ են դարձել 2018 թվականի տարեվերջին, հատկապես «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքին» ծրագրում իրականացված փոփոխություններից հետո: Մասնավորապես, 2018 թվականի նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ վարկերի ծավալն աճել է 41%-ով, դեկտեմբերին՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ 85%-ով, իսկ 2019 թվականի հունվարին՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ 131%-ով: Ընդ որում, նշված ծրագրով վարկավորման միջին կշռված տոկոսադրույքները նվազել են՝ 2018 թվականի հունվարի 8.7%-ից դառնալով 2019 թվականի հունվարին 7.3%: Սա նշանակում է, որ ՀՀ առևտրային բանկերը փաստացի ավելի ցածր տոկոսադրույքով են տրամադրում վարկերը, որը սուբսիդավորումից հետո կարող է տատանվել 3.0-3.5%, օրինակ՝ ՀՀ մարզերում:

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում է տրվել (վճարվել) մինչև 31.12.1932թ. ներառյալ ծնված՝ 2940, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից՝ 926, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ ՀՀ սահմանամերձ համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 01.08.2014թ. դրությամբ հաշվառված՝ 1027 ավանդատուի, զոհված զինծառայողների 8 ժառանգների:

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

2018 թվականի ընթացքում իրականացվել են սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացմանն ուղղված աշխատանքներ՝ գնահատվել են պրակտիկ սոցիալական աշխատողների վերապատրաստումների կարիքները և դրանց հիման վրա անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 200 մասնագետ (սոցիալական աշխատողներ և բուժաշխատողներ):

Շարունակվել է հանրապետությունում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) համար շենք-շինությունների ընտրության և տրամադրման աշխատանքները, մշակվել են ՀՍԾՏԿ շինվերանորոգման էսքիզային նախագծերը և տարածքային

կենտրոնների կառուցման կամ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը: 2018 թվականին մեկ պատուհանի սկզբունքով սկսել են գործել ևս 4 ՀՍԾՏԿ-ներ (ընդամենը՝ 22), որոնք տեղակայված են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով զինված շենքերում:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը: 2018 թվականին շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելուն ուղղված աշխատանքները:

Հաշմանդամության գնահատման համակարգում նոր մոդելի ներդրման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագծերի փաթեթ («Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը): Փաթեթում ներառված իրավական ակտերի նախագծերով կարգավորվում են հաշմանդամության գնահատմանն առնչվող դրույթները, դրանք հիմնված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) մոտեցումների և սկզբունքների վրա: Փաթեթը վերջնականացնելուց հետո կդառնա կառավարության քննարկման առարկա:

2018 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ: 2018 թվականին լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները շահառուներին տրամադրվել են պետական հավաստագրերի հիման վրա: Ընդունվել է ՀՀ կառավարության 20.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N1151-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1516-Ն որոշումը, որի համաձայն 2019 թվականից

պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաները, վերականգնման աջակցող միջոցները հաշմանդամություն ունեցող և այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվելու են հավաստագրերի միջոցով:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն, «Լիարժեք կյանք» ՀԿ-ներին և «Աուտիզմ ազգային հիմնադրամին»՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 188460, որից 8193 ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա կարգավիճակով: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 4972 անձով: 2018 թվականի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 11719 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 757-ով), վերափորձաքննվել է 36451 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 12397-ով):

2018 թվականի ընթացքում շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացումը, ծերացման հիմնահարցերի լուծմանն ուղղված՝ սոցիալական պաշտպանության ոլորտում պետության որդեգրած ակտիվ ու առողջ ծերություն և տարեցների համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու քաղաքականությունը:

Իրականացվել են ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և ռազմավարության իրականացման 2017-2021թթ. միջոցառումների ծրագրի 2018 թվականի համար նախատեսված միջոցառումները: Մասնավորապես, մշակվել և շրջանառության մեջ են դրվել մի շարք իրավական ակտերի նախագծեր՝ կապված տարեցների խնամքի տրամադրման, սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանով ապահովելու ընթացակարգերի հստակեցման և բարելավման, խնամքի ծառայությունները շահառուներին հավաստագրի միջոցով տրամադրելու, բռնադատվածների վարկային պարտավորությունները զիջելու հետ և այլն: Միաժամանակ, նախարարի համապատասխան հրամաններով ստեղծվել է հասարակական դիտորդական խումբ՝ նախարարությանը ենթակա ՊՈԱԿ-ների գործունեությունը մշտադիտարկելու նպատակով, սահմանվել են խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման մեխանիզմներ և այլն:

Ոլորտի հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ--ի կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ և ուսումնասիրություններ, մասնավորապես, «Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման միասնական

մեխանիզմների մշակում և Հայաստանի Հանրապետությունում գործող պետական ու հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում», «Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրություն», «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մատուցվող ծառայությունների քարտեզագրում»:

2018 թվականին իրականացված միջոցառումների շրջանակում մշակվել են հանրապետությունում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված այլընտրանքային ծրագրեր, որոնք հիմնված են տարեցների իրական կարիքների լիարժեք ու բազմակողմանի գնահատման վրա: 2018 թվականին նախատեսված էր Արագածոտնի մարզում և Սյունիքի մարզում ներդնել այլընտրանքային ծառայություններ, մասնավորապես՝ Արագածոտնի մարզում տարեցների համար առողջ ապրելակերպի ակումբ-ցերեկային կենտրոնի ստեղծում, իսկ Սյունիքի մարզում՝ սոցիալական օգնականի ծառայությունների ներդրում: Համապատասխան ծրագրերը մշակվել և քննարկվել են Տարեցների սոցիալական ցանցում, արժանացել հավանության, որից հետո առաջարկություններն ուղարկվել են համապատասխան մարզպետարաններ՝ իրականացման համար: Համաձայն Արագածոտնի մարզպետարանից ստացված գրության, դեռևս չկան ներդրումներ՝ տարածքի անհատույց տրամադրման և պահպանման մնացած ծախսերի համար, սակայն մարզպետարանն ունի բանավոր պայմանավորվածություն «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ, որ տարածքի հարցը լուծելուց հետո, վերջինս կապահովի առողջ ապրելակերպի ակումբի աշխատողների աշխատավարձերի և այցելուների սննդի ծախսերի փոխհատուցումը: Ինչ վերաբերում է Սյունիքի մարզում սոցիալական օգնականի ծառայության ներդրմանը, ապա Կապան համայնքի ղեկավարի առաջարկության համաձայն, այն պետք է իրականացվի որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն, քանի որ համայնքի բյուջեի սղությունը թույլ չի տալիս համայնքին նոր հաստիքներ նախատեսել, իսկ Մեղրի համայնքի ղեկավարի հավաստմամբ իրենց համայնքում դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ խնամքից դուրս մնացած միայնակ տարեցներ չկան, միաժամանակ չկան նաև շահագրգիռ հասարակական կազմակերպություններ և ազատ ֆինանսական միջոցներ:

2018 թվականին պետական աջակցություն է ցուցաբերվել ևս երկու ոչ պետական կազմակերպության՝ «Խնամք ՀԿ-ին և «Ջերմիկ անկյուն ԲՀ-ին՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Տարվա ընթացքում հանրապետությունում պետական նպատակային ծրագրերի շրջանակում խնամքի (շուրջօրյա խնամքի հաստատություններում, տնային պայմաններում և սոցիալական

հոգածության ցերեկային կենտրոններում) ծառայություններ է ստացել դրա կարիքն ունեցող շուրջ 6500 տարեց և հաշմանդամություն ունեցող անձ:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

2018 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավմանը և սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Այդ նպատակով մշակվել և հաստատվել են «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը, որպես բնաիրային օգնություն, տրամադրելու, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը գույք նվիրաբերելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 762-Ն և «Առանց ծնողական խնամքի մնացած, հաշմանդամություն ունեցող երեխայի աջակցության անհատական սոցիալական ծրագրի կազմման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1444-Ն որոշումները:

Վերակազմավորման արդյունքում 56 երեխա գիշերօթիկ խնամքի հաստատությունից վերադարձել է կենսաբանական ընտանիք: Երեխաների և նրանց ընտանիքների անհատական ծրագրերին համապատասխան Միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում նրանց տրամադրվում է աջակցություն:

Գործընկեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Վանաձոր քաղաքում ստեղծվել է երեխայի խնամքի այլընտրանքային ծառայություն տրամադրող երկու Փոքր խմբային տուն, որոնցից առաջինում արդեն իսկ իրականացվում է Վանաձորի մանկատնից իրենց մոտ տեղափոխված առանց ծնողական խնամքի մնացած 12 երեխաների խնամքը՝ ընտանեկան միջավայրին առավել մոտ պայմաններում:

Ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում շուրջօրյա հաստատություններից ընտանիք է վերադարձել շուրջ 180 երեխա, այդ թվում՝ կենսաբանական ընտանիք է վերադարձել շուրջ 130, որդեգրվել է շուրջ 40 երեխա:

Մշակվել է «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնաիրային օգնություն

տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը քննարկումների արդյունքում կվերջնականացվի և կդառնա կառավարության քննարկման առարկա:

Շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի 890-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի 890-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնաիրային օգնություն անհատույց տրամադրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը: Լրամշակված նախագծերը գտնվում են քննարկման փուլում:

2018 թվականի ընթացքում ներկայացվել են նոր նախաձեռնություններ, որոնք ներառվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծախսային ծրագրում.

- «Համայնքահեն ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների համար» միջոցառումը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին բազմամասնագիտական ծառայություններ տրամադրելու նպատակով,
- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող սոցիալական հոգածության ծառայություններ» միջոցառումը, որն իրականացվում է ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում,
- «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» միջոցառումը:

Նախատեսված է սույն ծրագրերը պատվիրակել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնդիրներով մասնագիտացված կազմակերպություններին:

Տարվել են նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, թրաֆիքինգի կանխարգելման և դրա զոհերին աջակցելու աշխատանքներ: Մասնավորապես, ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի

Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվել են ոլորտի պետական քաղաքականության գերակայությունները, հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումները: Քննարկումների արդյունքում լրամշակված նախագիծը կդառնա կառավարության քննարկման առարկա:

Համաձայն ՀՀ վարչապետի 27.02.2018թ. N 181-Ա որոշման, մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր.

- «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ.
- «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի նիստում),
- «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի նիստում),
- «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի ձևավորման կարգը և գործառույթները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.07.2018թ. N 786-Ն որոշումը,
- «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 28.12.2018թ. որոշումը:

Մշակվել է նաև «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության

որոշման նախագիծը, որով կկանոնակարգվի նույնացման հանձնաժողովի աշխատանքը, կհստակեցվի երեխաների ուղղորդման ընթացակարգը, իսկ սոցիալական ոլորտի մասնագետները կստանան զոհերի նախնական նույնացման գործիք՝ նախաձեռնողական գործունեություն իրականացնելու համար: Քննարկումների արդյունքում նախագիծը կլրամշակվի և կդառնա կառավարության քննարկման առարկա:

Շարունակվել է «Թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագիրը, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել 15 շահառուի:

Ժողովրդագրություն

Ժողովրդագրության բնագավառում 2018 թվականին կատարված աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով անցած տարիներին հանրապետությունում արձանագրված ժողովրդագրական զարգացումները:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 01.10.2018թ. դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, հանրապետության մշտական բնակչությունը նվազել է 10400-ով՝ կազմելով 2969.2 հազար մարդ: 2018 թվականի առաջին 9 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ժողովրդագրական զարգացման հիմնական ցուցանիշները դրսևորել են տարբեր միտումներ: Մասնավորապես, ծնունդների թվաքանակի նվազման համապատկերում դրական պետք է համարել մահացությունների թվաքանակի, ինչպես նաև ուղևորափոխադրումների բացասական մնացորդի կրճատումը: Այսպես, նշված ժամանակահատվածում գրանցվել է 26483 ծնունդ (նվազում 1173-ով), արձանագրվել է մահացության 19135 դեպք (նվազում 1313-ով), ամուսնության 10910 դեպք (նվազում 355-ով), ամուսնալուծության 2879 դեպք (նվազում 84-ով): Հարկ է նշել, որ ծնունդների տարեկան թվաքանակի նվազումը պայմանավորված է ինչպես սուբյեկտիվ (միգրացիոն անցանկալի գործընթացներ, ամուսնության միջին տարիքի բարձրացում), այնպես էլ օբյեկտիվ իրողություններով, մասնավորապես, ամուսնական տարիք են մուտք գործել 1990-ական թվականների երկրորդ կեսին ծնված ոչ մեծաքանակ սերնդի ներկայացուցիչները:

Մշակվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև վերջինիս ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթը, որը քննարկումների արդյունքում կլրամշակվի և կդառնա կառավարության քննարկման առարկա:

Նախընթաց ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքային քննարկումները բազմազավակության խրախուսման շուրջ (այդ թվում՝ ժողովրդագրության բնագավառի մասնագետների մասնակցությամբ)՝ նպատակ ունենալով օրենքով ամրագրել առավել արդյունավետ կառուցակարգեր:

Զուգահեռաբար, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ աշխատանքներ են տարվում ծնելիությունը խթանող ծրագրերի մշակման ուղղությամբ:

Ընդ որում, վերը նշված քննարկումները ցույց էին տալիս, որ անհրաժեշտ է համապարփակ անդրադարձ կատարել երեխա ունեցող ընտանիքների պետական երաշխիքների (ծնելիության խթանման) համակարգին՝ նրանց տրամադրելով իրական արտոնություններ:

Ծնելիության խրախուսման նպատակով Կառավարությունը եռապատկել է երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ այն սահմանելով 150 հազար դրամ:

Սակայն, պայմանավորված արտահերթ խորհրդարանական ընտրություններով՝ համապատասխան որոշումներ չեն կայացվել (հնարավոր չի եղել հստակեցնել ծրագրերը):

Միաժամանակ, Ժողովրդագրության իրավիճակի կապակցությամբ առկա խնդիրները քննարկվել է նաև 2019 թվականի մարտի 22-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում:

Արդյունքում տրվել են հանձնարարականներ ՀՀ-ում ծնելիության և ժողովրդագրական իրավիճակն ու միտումներն առավել վերահսկելի դարձնելու նպատակով: Նախատեսվում է ՀՀ վարչապետի գլխավորությամբ ձևավորել Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհուրդ՝ ոլորտային և շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներգրավմամբ:

Համագործակցություն միջազգային, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերն ու բարեփոխումներն իրականացվում են միջազգային և բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Աշխատանքներ են տարվել մի շարք երկրների հետ միջգերատեսչական համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում օտարերկրյա պետությունների համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցությամբ մշակվել և/կամ համաձայնեցման տարբեր ընթացակարգեր են անցել հետևյալ միջազգային պայմանագրերի նախագծերը.

- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության

միջև աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիր՝ ուժի մեջ է մտել 08.03.2018թ.:

● «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագիր՝ ուժի մեջ է մտել 09.10.2018թ.: Համաձայնագրի իրականացման ընթացակարգերի վերաբերյալ փաստաթուղթը քննարկվել և համաձայնեցվել է բուլղարական կողմի հետ: Փաստաթուղթը ստորագրվել և ուժի մեջ է մտել 2019 թվականի մարտին:

● «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև աշխատուժի օգտագործման մասին» փոխըմբռնման հուշագիր: Փաստաթղթի նախագիծն ամբողջությամբ լրամշակվել է և ԱԳՆ-ի միջոցով ներկայացվել էմիրաթական կողմին: Լրամշակված նախագծի վերաբերյալ էմիրաթական կողմի պատասխանը ստանալուց հետո, գործընթացը կշարունակվի:

● Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կոոպերատիվների, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրի կատարմանն ուղղված համատեղ Գործողությունների ծրագիր, որի մշակման աշխատանքները սկսելու նպատակով ՀՀ պատվիրակության այցի ժամկետները ԻԻՀ հստակեցնելուց հետո աշխատանքները կշարունակվեն:

● Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ համագործակցությամբ մշակվել է «Արժանապատիվ աշխատանք» քառամյա ծրագրի նախագիծը, որի ստորագրումը տեղի կունենա 2019 թվականի մայիսի 14-ին Երևանում:

● Վավերացման նպատակով իրականացվել են աշխատանքներ հետևյալ համաձայնագրերի նախագծերի ներպետական համաձայնեցման ընթացակարգերն ապահովելու համար, որոնք դեռևս չեն ստորագրվել և գտնվում են քննարկման փուլում:

● «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին»:

● «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածության աջակցության բնագավառում համագործակցության մասին»:

Միջազգային պայմանագրերով աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում պատրաստվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության 5 կոնվենցիաների և Եվրոպայի Խորհրդի «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի» կիրարկման վերաբերյալ ազգային զեկույցներ:

Իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ Եվրոպական Միության հետ համագործակցության, ՄԱԿ, ԵԽ, ԵԱՏՄ, ԱՊՀ անդամակցության շրջանակներում, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովներում:

Մշակույթի ոլորտ

2017 թվականին մշակույթի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունը նպատակաուղղվել է ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախանշված հիմնական խնդիրների լուծմանը, մասնավորապես՝

- դրամաշնորհների հատկացման բաց մրցութային համակարգի ներդրում,
- աբոնեմենտային համակարգի ներդրման ծրագրի իրականացում,
- «Քո արվեստը դպրոցում» դրամաշնորհային ծրագրի իրականացում,
- ուսումնամեթոդական և գործնական օգնություն մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտական և մանկավարժական կազմին,
- «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման» ծրագրի իրականացում,
- «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում,
- մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների զարգացման ծրագրի իրականացում,
- Հայաստանում միջազգային փառատոների և մրցույթների, հեղինակավոր նախագծերի իրականացում,
- մարզերում առկա մշակութային օջախների վերագործարկում,
- ներառական ծրագրերի իրականացում մայրաքաղաքում և մարզերում,
- «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի «Մշակութային ժառանգության պահպանման, կառավարման և արժևորման տարածաշրջանային կենտրոն» մասնաճյուղում կադրերի վերապատրաստման ծրագրի իրականացում,
- հեռուստաթերթերի պատշաճ մակարդակի ապահովում, հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում մշակութային բաղադրիչի ընդլայնում,
- Հայկական պատմամշակութային ժառանգության, արվեստի ներկայացում ցուցահանդեսների, հայկական մշակույթի օրերի շրջանակներում և այլ ձևաչափերով,

● օտար մշակույթների ներկայացում հայ հանդիսատեսին՝ ազգային առանձնահատկություններն արտացոլող տարբեր միջոցառումների՝ մշակույթի օրերի և այլ ձևաչափերով,

● մասնակցություն միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին՝ հայ ստեղծագործական միավորների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար:

Շարունակվել են *թանգարանների ոլորտում* իրականացվող ծրագրերը, որոնք ուղղվել են թանգարանային հավաքածուների գիտական ուսումնասիրությանը, պահպանությանն ու համալրմանը, թանգարանային ցուցադրությունների արդիականացմանը, նոր հարթակների ստեղծմանը, հանրահռչակմանը, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացմանը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, թանգարանային մասնագետների վերապատրաստմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Գրադարանների ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված են եղել գրադարանային հավաքածուների՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուների) թվայնացմանը, պահպանությանն ու համալրմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, համայնքային գրադարանների զարգացմանը, գրադարաններում նոր ծառայությունների գործարկմանը, ոլորտի մասնագետների վերապատրաստմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական ցանկերի կազմմանն ու հրապարակմանը:

Հուշարձանների պահպանության ոլորտում շարունակվել են ծրագրերը, որոնք նպատակաուղղվել են պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, պահպանությանը, ուսումնասիրմանը, դիտանցումներին, պեղումներին, վերականգնմանը և օգտագործմանը, պահպանական գոտիներում, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքներում ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում իրականացվող ծրագրերը միտված են եղել ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, պաշտպանությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերի համալրմանը, ցանկերում ընդգրկված հայկական տարրերի հանրահռչակմանը, գիտաճանաչողական ֆիլմերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակ-

մանը, փառատոների, համերգների կազմակերպմանը, միջազգային ասպարեզում ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի համագործակցության ընդլայնմանն ու հանրահռչակմանը:

Ժամանակակից արվեստի ոլորտում իրականացվող ծրագրերը շարունակել են ուղղվել ազգային արժեհամակարգի հիման վրա ստեղծված հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, անհատի և հանրության հոգևոր-մշակութային առաջընթացի գործում մշակույթի դերի բարձրացմանը, հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը:

Գրահրատարակչության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված են եղել տպագիր արտադրանքի միջոցով ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային ժառանգության, գեղարվեստական, հանրագիտարանային, ալբոմային, հանրամատչելի գրականության պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը, հայ դասական գրականության հոբելյանական հրատարակությունների իրականացմանը, սփյուռքահայ, հայազգի օտարագիր գրողների գործերի լույսընծայման, ժամանակակից թարգմանիչներին և ստեղծագործողներին, ինչպես նաև հայ դասական և ժամանակակից գրականության թարգմանությունների աջակցմանը և մեր երկրի սահմաններից դուրս այլ լեզուներով տարածմանը: Աջակցվել է ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին (մամուլ, գրականություն), ապահովվել է մարզային մամուլի տպագրման շարունակականությունը, ինչպես նաև հայաստանյան պատվիրակությունների մասնակցությունը գրքի միջազգային ցուցահանդեսներին, Հայաստանում կազմակերպել են հանրապետական գրական փառատոներ, շնորհանդեսներ, հոբելյանական ցերեկույթներ:

Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ոլորտում իրականացվող ծրագրերը շարունակաբար ուղղվել են կադրերի պատրաստմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ

սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովման նպատակով շարունակվել են ծրագրերը ՀՀ մարզերում նոր ձևավորված մշակութային միավորումների և անհատների ստեղծագործական ծրագրերի աջակցությամբ, մշակութային կյանքի աշխուժացմամբ, միջմարզային կապերի ամրապնդմամբ, մշակութային գործընթացներում տեղի ազգաբնակչության ներգրավմամբ:

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում օտարերկրյա պետություններում շարունակվել են հայ մշակույթի ներկայացմանն ուղղված ծրագրերը՝ աշխարհի հեղինակավոր թանգարաններում և առաջատար ցուցասրահներում քաղաքակրթական ցուցահանդեսների կազմակերպմամբ, արվեստի, ճարտարապետության և գրականության ոլորտներում հեղինակավոր միջազգային փառատոներին, ցուցահանդես-տոնավաճառներին և մրցույթներին մասնակցության ապահովմամբ, ինչպես նաև կազմակերպվել են ծրագրեր Հայաստանում օտարերկրյա պետությունների մշակույթի ներկայացմամբ, փոխադարձության սկզբունքով կազմակերպվել են «Մշակույթի օրեր», միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ ընդլայնվել է մշակութային համագործակցությունը: Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով շարունակվել է սփյուռքում գործող կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացումը:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի և էթնիկ ինքնության պահպանման նպատակով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացներին ներգրավվածության ապահովմանը, Հայաստանի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, պատմամշակութային ժառանգության պահպանության ապահովմանը:

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության բնագավառ

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ՀՀ կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնախնդիրների լուծում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, մարզային փառատոների անցկացում, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական

աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին ծանոթացնելու նպատակով սեմինար-խորհրդակցությունների, ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

2018 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված 34 ազգային ֆեդերացիաները պետական աջակցության գումարներով կազմակերպել են 137 ուսումնամարզական հավաք, Հայաստանի Հանրապետության 96 առաջնություններ (մեծահասակների, երիտասարդների, պատանիների), մասնակցել են 185 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների:

Տարբեր տարիքային խմբերի (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) Եվրոպայի և աշխարհի առաջնություններում և Բուենոս Այրեսի երրորդ ամառային պատանեկան օլիմպիական խաղերում 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկները նվաճել են 203 մեդալ, այդ թվում՝ 71 ոսկե, 57 արծաթե և 75 բրոնզե մեդալ:

Սպորտի բարձրագույն նվաճումների բնագավառում կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը, օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը, մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը, միջազգային (այդ թվում՝ սփյուռքի հետ) կապերի ամրապնդմանը, մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը, միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

ՀՀ Նախագահի 2009 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի (ներառյալ հաշմանդամային սպորտը) կազմում օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության Նախագահի անվանական թոշակ հատկացնելու մասին» ՆԿ-1-Ն կարգադրության համաձայն 2017 թվականին ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար ՀՀ Նախագահի հավանությանն արժանացած ցուցակի

համաձայն ՀՀ հավաքական թիմերի 184 մարզիկներին և նրանց մարզիչներին (այդ թվում՝ 72 մարզիկի և 112 մարզչի) 2018 թվականին հատկացվել է ՀՀ Նախագահի անվանական թոշակ:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառներում կառավարության քաղաքականությունն ուղղված է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը, մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը, հասարակության լիարժեք անդամ հաշմանդամություն ունեցող մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը: Մասսայական սպորտի ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ Նախագահի սահմանած մրցանակների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզման, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջների կատարումը ապահովելու, Եվրոպայի խորհրդի սպորտի զարգացման կոմիտեի որոշումները կատարելու, նախադպրոցական և ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ապահովելու անհրաժեշտությունից: Ծրագրերի հիմքում դրված է բնագավառի գերակայություններ համարվող տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի, անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը: «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացվում է պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար՝ հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելուն և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրերի նպատակն է հաշմանդամային սպորտի զարգացման խթանումը, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանն ինտեգրվելու գործընթացի խթանումը, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորումը, առողջ կենսակերպ վարելու անհրաժեշտության գիտակցումը, հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդումն ու համակողմանի ներդաշնակ զարգացումը, մարզվածության վիճակի բարելավումը, աշխատունակության բարձրացումը և գործառական հնարավորությունների ընդլայնումը, ինչի մասին փաստում է մարզական ցուցանիշների համեմատական աճը:

Պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի ռազմավարական ուղղվածությունը հանգել է հետևյալ նպատակների իրականացմանը՝

● զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),

● բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,

● նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,

● ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները,

● հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին,

● նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,

● ակտիվացնել և զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,

● ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար,

● ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ ««Պետական երիտասարդական քաղաքականությունը ՀՀ մարզերում» այցելություն-խորհրդակցությունների կազմակերպում ՀՀ մարզեր», «Երիտասարդական պորտալի պահպանում», «Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն ուղղված ծրագրեր», ««Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում», «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում», «Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոներ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ, կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում», «Միջազգային երիտասարդական

համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում» և այլն:

Առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրվել է 24 դրամաշնորհ: Վճարվել է Եվրոպայի խորհրդի Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարը, տրամադրվել է 32 ուղևորության դրամաշնորհ:

Բնապահպանության ոլորտ

2018 թվականին բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության և ՀՀ կառավարության կողմից հաստատված ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված՝ բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովմանը:

Կենսառեսուրսների պահպանություն և կառավարում

2018 թվականին տրվել և կնքվել է ՀՀ տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) 3263 կտրոն և պայմանագիր (2017թ.՝ 2039), որի համար վճարվել է 48262.9 հազար դրամ բնօգտագործման վճար (2017թ.՝ 25353.4 հազար դրամ):

Տրամադրվել է կենդանիների և դրանց ածանցյալների արտահանման-ներմուծման 1321 ՍԻԹԵՍ թույլտվություն (2017թ.՝ 2567):

Կնքվել է գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման 5 պայմանագիր (2017թ.՝ 9), որի արդյունքում վճարվել է 509.6 հազար դրամ բնօգտագործման վճար (2017թ.՝ 10703.0 հազար դրամ):

Բանակցություններ են ընթանում մի շարք միջազգային բնապահպանական կազմակերպությունների հետ ԲՀՊՏ-ների քարտեզագրման, այդ թվում՝ բնության հուշարձանների պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներն իրականացնելու համար դրամաշնորհներ ձեռք բերելու ուղղությամբ:

ՀՊՏ-ներում միջինը 40%-ով, որոշ տեղերում՝ մինչև 100%-ով բարձրացվել են աշխատավարձերը (հիմնականում բարձրացվել են Բնության հատուկ պահպանվող տարածքներում

պահպանության գործառույթ իրականացնող աշխատակիցների, մասնավորապես, անտառապահների աշխատավարձերը՝ 85.0-100.0 հազ. դրամից հասցվելով մինչև 185.0 հազ.դրամ), միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել է տեխնիկական վերազինում, տեղադրվել են արևային կայաններ և առցանց հսկման համակարգեր:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում 2018 թվականի ընթացքում իրականացվել են՝

- անտառավերականգնման աշխատանքներ՝ 17.2 հա (2017թ.՝ 8.98 հա),
- տնկարանի հիմնում և խնամք՝ 5.2 հա (2017թ.՝ 4.5 հա),
- տնկանյութի աճեցման աշխատանքներ, այդ թվում՝ սերմնաբուսակներ՝ 9.3 հազար հատ (2017թ.՝ 1.4 հազար հատ) և տնկիներ՝ 33.2 հազար հատ (2017թ.՝ 35.9 հազար հատ):

Հաշվետու տարում իրականացվել է «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովում, ինչպես նաև տնկարկների պահպանություն և պաշտպանություն:

Բնության հուշարձանների ընդհանուր քանակը 233 է, անձնագրավորված հուշարձանների քանակը՝ 32: Բնապահպանության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի N68-Ն հրամանով հաստատվել է «Շաքի» ջրվեժ ջրագրական բնության հուշարձանի անձնագիրը:

2018 թվականի ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներ անվճար այցելել է 370000, իսկ վճարովի՝ 43148 զբոսաշրջիկ (2017թ.՝ 3811), որի արդյունքում ստացված եկամուտը կազմել է 27258.0 հազար դրամ (2017թ.՝ 8268.4 հազար դրամ):

Սևանա լճի մակարդակը 28.12.2018թ. դրությամբ կազմել է 1900.40 մ, ինչը նախորդ տարվա նույն օրվա դրությամբ (1900.42 մ) նվազել է 0.02 մ-ով: 2018 թվականի համար Սևանա լճից ոռոգման նպատակով սահմանվել է մինչև 210 մլն մ^3 չափաքանակ: Բաց թողնված ջրաքանակը կազմել է 200.623 մլն մ^3, ինչը 66.134 մլն մ^3-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: 2018 թվականի ընթացքում Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է բաց թողնվել 142.290 մլն մ^3 ջրաքանակ, ինչը 31.819 մլն մ^3-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: 2018 թվականի ընթացքում Սևանա լճի վիճակը կտրուկ վատթարացել է: Լճում դիտվում է ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի նախորդ տարիների համեմատությամբ աստիճանական աճ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում լճում

կապտականաչ ջրիմուռների աճի համար: Սևանա լճի թափանցիկությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կտրուկ նվազել է՝ 14 մ-ից իջնելով 2.5 մ:

Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի արդյունագործական պաշարներն ըստ ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կազմել են. սիգ՝ 737 տ (2017թ.՝ 554 տ), արծաթափայլ լճաձան (կարաս)՝ 30-35 տ (2017թ.՝ 46.7 տ), Սևանի իշխան՝ 1-1.5 տ (2017թ.՝ 17 տ), խեցգետին՝ 2312 տ (2017թ.՝ 2600 տ):

«Սևան» ազգային պարկի» ջրաածծկման ենթակա տարածքներից 2018 թվականին մաքրվել է 0.37 հա անտառածածկ տարածք ֆիզիկական անձի կողմից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված ջրաածծկի ենթակա անտառների մաքրման պայմանագրով: 2018 թվականին պետական բյուջեի միջոցներով մաքրման աշխատանքներ չեն իրականացվել՝ պայմանավորված բնապահպանության նախարարության սկզբունքների ու մոտեցումների և ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրաածծկ տարածքների մաքրման առաջնահերթությունների վերանայմամբ, ինչպես նաև այդ նպատակով կնքված պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի նախկինում մաքրված տարածքների հետ ավելի քան 20 տոկոսով համընկնումներով. ՀՀ բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև ստորագրված փոխադարձ համաձայնագրով լուծվել է հիշյալ պայմանագիրը:

2018 թվականի ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ պետական տարածքների վարձակալությունից ստացված միջոցներով պարկի տարածքում իրականացվել են 15.95 հա անտառավերականգնման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկի զարգացման հեռանկարներն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները՝ զբոսաշրջություն, այլընտրանքային էներգիա, արդյունագործական ձկնորսություն և խեցգետնի որս, գյուղատնտեսություն (ջերմատներ, օրգանիկ, ինտենսիվ այգիներ):

ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն» (ԳԱՏՕ) ծրագրի աջակցությամբ 2018 թվականի ընթացքում Արարատյան դաշտի 3 ձկնաբուծական տնտեսությունների 15 ջրառի կետերում տեղադրվել են առցանց հոսքաչափական սարքավորումներ:

Արարատյան ջրային ռեսուրսների փաստացի վիճակի պահպանության նկատմամբ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են ապօրինի և ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրաքանակից ավել օգտագործող 83 ձկնաբուծական տնտեսություն:

2018 թվականին Արարատյան դաշտում փականային ռեժիմի է բերվել 11 հորատանցք, ինչի արդյունքում խնայված ջրաքանակը կազմել է շուրջ 715 լ/վ: Մշտադիտարկումների արդյունքում նկատվում է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի մակարդակի կայունացում և որոշ հատվածներում բարձրացման միտում:

Ներկայումս ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար սահմանվել է 50 աշխատանքային օր՝ նախկինում գործող «մինչև 180 աշխատանքային օր» ժամկետի փոխարեն: 2018 թվականին մուտքագրվել է ՋԹ 346 հայտ, ձևակերպվել է 108 նոր ՋԹ, նախկինում տրված ՋԹ-ների ժամկետների երկարաձգում՝ 129, հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման (ՋՋ), ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաներ՝ 33:

2018 թվականի միայն երկրորդ կիսամյակում հայտնաբերվել է ջրօգտագործման 259 խախտում, նախորդ երեք տարիների ընթացքում խախտումները եղել են ընդամենը 15-ը:

Հաշվետու տարում շարունակվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոների արդյունահանված տարածքների մշտադիտարկումների իրականացման վճարների համալրման գործընթացը: Նախորդ տարվա համեմատ դրամագլխի մուտքերն ավելացել են ավելի քան 1.7 անգամ:

Առաջին անգամ Հայաստանում ստեղծվել է ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած 44 լքված/տիրազուրկ տարածքների և 5 փակված պոչամբարների տեղեկատվական բազա, նախնական համաձայնություն է ձեռք բերվել Եվրոպական միության հետ, որպեսզի տրամադրվի 5 մլն եվրո դրամաշնորհ ռեկուլտիվացման աշխատանքների իրականացման համար:

Առաջին անգամ Հայաստանում Արարատ համայնքի աղբավայրում ստեղծվել են կենցաղային թափոնների տեսակավորման ենթակառուցվածքներ:

Սառնարանների և սառցարանների, օդակարգավորիչների և այլ ֆրեոն պարունակող նյութերի ներմուծման ընթացակարգերը փոխվել են, գործողությունները կատարվում են անմիջապես սահմանին, խնայելով ժամանակ և ռեսուրսներ ավելի քան 1500 տնտեսավարողների համար:

2018 թվականի ընթացքում վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բնագավառի գծով մատուցված ծառայությունների շրջանակներում համաձայնեցվել է թափոնների 352 անձնագիր (2017թ.՝ 408): Պետական հաշվառում ունեցող կազմակերպությունների քանակը կազմում է 1341 (2017թ.՝ 1348):

2018 թվականին տրամադրված օզոնային շերտը քայքայող նյութերի (ՕՔՆ) ընդհանուր չափաքանակը կազմում է 114.02 տոննա (2017թ.՝ 114), հայտատուներին տրամադրված ՕՔՆ անհատական չափաքանակը / քվոտան կազմում է 114.02 տոննա (2017թ.՝ 106.9): Փաստացի ներկրվել է 40.144 տոննա (2017թ.՝ 32.64), տրամադրվել են ՕՔՆ մեկանգամյա ներմուծման 8 լիցենզիա (2017թ.՝ 7) և պարզաբանման 427 (2017թ.՝ 710) գրություններ:

ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգն իրականացվել է 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 17 դիտակետից, որոշված

ցուցանիշների քանակը՝ 36640, այդ թվում՝ իրականացվել է Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ՝ 2040 ցուցանիշ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում ջրի որակը «լավ» է (2-րդ դաս), բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավից» «միջակ» է (2-3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացվել է 11 քաղաքներում՝ 351680 անալիզ: Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքների համաձայն Երևան քաղաքում փոշու միջին ամսական պարունակությունը գտնվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) տիրույթում, և ՍԹԿ-ից գերազանցումները դիտվում են դիտարկումների 30% դեպքերում: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի ՍԹԿ-ից գերազանցումներ (1.5-1.7 անգամ) դիտվել են միայն օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Գր. Լուսավորիչ և Ագաթանգեղոս փողոցների խաչմերուկի (դիտակայան 18) հատվածում: Ածխածնի մոնօքսիդի կոնցենտրացիան օրվա ընթացքում բարձրանում է առավոտյան 8:00-10:00 և երեկոյան 18:00-21:00 ընկած ժամանակահատվածում՝ գերազանցելով ՍԹԿ: Մնացած աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաները գտնվել են համապատասխան ՍԹԿ-ների սահմաններում:

Ալավերդի քաղաքում գերնորմատիվային աղտոտվածություն դիտվել է ծծմբի երկօքսիդի (միջին ամսական կոնցենտրացիան գերազանցում է ՍԹԿ-ն 1.5-2.5 անգամ) և փոշու (միջին ամսական կոնցենտրացիան գերազանցում է 1.2-3.2 անգամ) նկատմամբ: Փոշու գերնորմատիվային աղտոտվածություն դիտվել է Վանաձոր (1.3-2.7 անգամ) և Հրազդան (1.2-1.9 անգամ) քաղաքներում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ հորատանցքերում և բնաղբյուրներում: Նախորդ (2016-2017թթ.) տարիների համեմատ ընթացիկ տարում նկատվում են Արարատյան գոգավորության ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ, ինչը պայմանավորված է նախկինում պահեստավորված հորատանցքերի վերագործարկմամբ, որոնք օգտագործվում են ձկնաբուծական նպատակներով:

2018 թվականի ընթացքում իրականացվել է թափոնների ուսումնասիրում և վերլուծություն 2017 թվականին ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների հիման վրա, հավաքվել և մշակվել է տեղեկատվություն՝ թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման

վայրերի մասին, իրականացվել է շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) մնացորդային քանակների որոշում՝ 300 հետազոտություն:

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և սեփական վերլուծությունների արդյունքում մշակվել է թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների ու երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների ու մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն:

2018 թվականին ՀՀ բնապահպանության նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ներկայացվել թվով 238 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 84 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Փորձաքննության գործընթացում են գտնվում 66 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություններ են տրամադրվել թվով 110 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ, այդ թվում՝ 2017 թվականին մուտքագրված գործունեություններին:

Ամբողջությամբ փոխվել է բնապահպանական փորձաքննության համակարգը, միջազգային ծրագրով վարձվել են փորձագետներ, որոնց հաստատումից հետո միայն տրվում է դրական կամ բացասական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է բնապահպանական ոլորտի 22 միջազգային կոնվենցիաների ու արձանագրությունների, որոնց դրույթների կատարման ուղղությամբ ՀՀ բնապահպանության նախարարությունը ծավալում է զգալի աշխատանք:

Շարունակվում է բնապահպանական ոլորտում համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների, այդ թվում՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP), ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP), Համաշխարհային բանկի (WB), Գլոբալ բնապահպանական հիմնադրամի (GEF), Տարածաշրջանային միացյալ քարտուղարության (TJS), Կովկասի բնության հիմնադրամի (WWF), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNIDO), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի (USAID), Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (GIZ) և այլ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա

պետությունների հետ, ինչպես նաև միջազգային բնապահպանական կոնվենցիաների և նախաձեռնությունների շրջանակներում:

Պետական գույքի կառավարում

2018 թվականին որդեգրված՝ պետական գույքի կառավարման քաղաքականության հիմնական շեշտադրումն է եղել պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի կառավարման քաղաքականության առանձին բնագավառներում իրականացվել են արմատական բարեփոխումներ, մասնավորապես՝ պետական գույքի կառավարման և մասնավորեցման ծրագրային գործընթացը շարունակելու, պետական գույքի մասնավորեցման, օտարման, լուծարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման ընթացակարգերը պարզեցնելու և վարչարարությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Պետական գույքի մասնավորեցման և օտարման բնագավառներում կատարվել են վաճառքի նոր ձևերի կիրառման և վաճառքի կազմակերպման արդիական գործիքակազմի ներդրման, ինչպես նաև վաճառքի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման գործընթացների թափանցիկության և դրանց արդյունքների հրապարակայնության ապահովման, որոշակի ժամանակահատվածի համար օտարման ենթակա գույքի անվանացանկի սահմանման, դրանում ընդգրկված յուրաքանչյուր գույքի շուկայական արժեքի որոշման և հանրային իրազեկման ապահովման ուղղությամբ նախատեսված աշխատանքները, ինչպես նաև ապահովվել է տարածքային և ոլորտային մակարդակով մասնավորեցման և օտարման գործընթացների ծրագրային իրականացումը և վերջին հաշվով՝ մասնավորեցման և օտարման գործընթացի արմատական բարեփոխումը: Մասնավորապես՝ մշակվել է էլեկտրոնային աճուրդի ծրագիրը և իրականացվել է այդ ծրագրի հաջողությամբ փորձարկումը: Պետական գույքի օտարման գործընթացը բարեփոխելու նպատակով լրացումներ և փոփոխություններ են կատարվել պետական գույքի օտարումը կանոնակարգող ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է պետական գույքի մրցույթով վաճառքը կանոնակարգող իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումը:

Ամբողջությամբ կատարվել են պետական գույքի կառավարման մասնավորեցման 2018-2020թթ. եռամյա ծրագրով 2018 թվականի համար նախատեսված ծրագրային առաջադրանքները:

Պետական գույքի օտարման և մասնավորեցման բնագավառներում հնարավորինս սահմանափակվել է ներդրումների դիմաց ուղղակի վաճառքի ձևով պետական գույքի շուկայական գնահատված արժեքից ցածր գնով վաճառքի կազմակերպման գործընթացը:

Ավարտին են մոտեցել հանրության լայն շրջանակների համար հասանելի և բոլոր պետական մարմինների համար կիրառելի պետական գույքի էլեկտրոնային ինտեգրացված հաշվառման համակարգի ներդրման աշխատանքները, որոնք հնարավորություն կտան շատ արագ և օպերատիվ կերպով ոչ միայն հետևելու պետական գույքի քանակական ցուցանիշների և կազմի փոփոխություններին, այլ նաև իրականացնելու գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ վերլուծություններ (մոնիթորինգ) և արդյունավետության գնահատումներ: Մասնավորապես, մշակվել է հաշվառման գործընթացը նոր մոտեցումների հիման վրա իրականացնելու ծրագիրը, այն հաջողությամբ փորձարկվել է, ներկայումս աշխատանքներ են տարվում հաշվառման գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության նոր որոշման ընդունման համար: Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի համաձայն հաշվառման նոր համակարգը կինտեգրի նաև համայնքային գույքի հաշվառման բազաները:

Հստակեցվել է պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրում ընդգրկված ընկերությունների ցանկը:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ղեկավար անձնակազմի աշխատանքի գնահատման և խրախուսման համար մշակվել են համապատասխան մեթոդական ցուցումներ, որոնք սահմանված կարգով դրվել են շրջանառության մեջ: Միաժամանակ կատարվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության որոշման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ, որոնց արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

2018 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրի կատարման 2017 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-385-Ն):

«Օտարման ենթակա պետական գույքն առանց գնային առաջարկի վաճառքը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը օրենսդրությամբ սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ:

Ընդհանուր առմամբ օրենսդրական բարեփոխումների նպատակով 2018 թվականի ընթացքում շարունակվել են պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել, հստակեցնել կառավարման

գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում:

Անշարժ գույքի կադաստր

2018 թվականի ընթացքում իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների շուրջ 162 հազար պետական գրանցում, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է 13%-ով: Ընդհանուր առմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ սպասարկման գրասենյակների կողմից հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է շուրջ 475 հազար դիմում, որը նախորդ տարվա համեմատ աճել է 18%-ով: Կայք-էջում ներդրված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ է մուտքագրվել առցանց ստացված ևս 7677 դիմում: Սպասարկման գրասենյակների կողմից 2018 թվականի ընթացքում ստորագրությունների իսկության ճանաչմամբ անվճար կնքվել է 17305 պայմանագիր: Բացի այդ, նոտարների կողմից ընդունվել է իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման 26752 դիմում, ՀՀ բանկերի կողմից՝ 5677 դիմում:

Հաշվետու ժամանակահատվածում անշարժ գույքի գնահատողի, ինչպես նաև քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) ու հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական է տրվել 51 դիմողի:

Ապահովվել է նաև պաշտոնական էլեկտրոնային կայքում (e-cadastre.am) դիմումների ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրում. քաղաքացին հնարավորություն ունի դիտելու, ներբեռնելու և տպելու ավարտական փաստաթուղթը (վկայական, տեղեկանք, կասեցում, մերժում և այլն): Իրականացվել է դիմումի քննարկման ընթացքի ավարտման վերաբերյալ կարճ հաղորդագրությամբ ծանուցում, որից օգտվել է 404758 դիմումատու: Ծանուցում է իրականացվել նաև կարճ հաղորդագրությամբ (SMS) և էլեկտրոնային նամակով կոնկրետ անշարժ գույքերի նկատմամբ համակարգ մուտքագրված որոշակի դիմումների վերաբերյալ: Տեղեկատվության որոշ տեսակներ քաղաքացիներին տրամադրվել է առցանց ինքնաշխատ եղանակով, որի դեպքում հարցումը կատարելուց հետո տեղեկատվությունը տրամադրվում է անմիջապես: Աշխատանքներ են տարվել մի շարք սպասարկման գրասենյակներում տեղեկատվական էլեկտրոնային վահանակների տեղադրման ուղղությամբ, որը հնարավորություն է տալիս պարբերաբար ցուցադրելու գրասենյակի գործառույթներին վերաբերող և քաղաքացիներին ուղղորդող կարճ տեսահոլովակներ:

Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում 2018 թվականին իրականացվել են՝

- ՀՀ տարածքում WGS-84 (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման համար GPS կետերի դիտարկում, II դասի նիվելիրացում, տրանսֆորմացիոն պարամետրերի որոշում և քվազիգեոիդի մոդելի ստեղծում,
- ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ Սպիտակ, Սևան, Ջերմուկ, Կապան և Գորիս բնակավայրերում,
- ՀՀ աշխարհագրական անվանումների բնագավառում իրականացվել են աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի վարման և թարմացման, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանների նախապատրաստման աշխատանքները,
- Թեմատիկ քարտեզագրության բնագավառում Հայաստանի Ազգային ատլասի ռուսերենով տարբերակի համար հրատարակման նախապատրաստական աշխատանքներ,
- 5 ուսումնական և տուրիստական քարտեզների խմբագրման և ձևավորման աշխատանքներ:

Հողաշինարարության և ՀՀ հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ոլորտում 2018 թվականին կայք-էջում առաջին անգամ տեղադրվել են ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման, ինչպես նաև ոռոգվող հողերի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվությունները (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների) նաև համայնքների կտրվածքով: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ կազմվել և համայնքներին են տրամադրվել 30 խոշորացված համայնքների հողային հաշվեկշիռները՝ հողերի ընթացիկ հաշվառում իրականացնելու համար:

Իրականացվել են գնահատման ոլորտի ընդլայնման, բարելավման և ինքնակարգավորման ուղղությամբ մի շարք քայլեր: Տեղի են ունեցել քննարկումներ բոլոր գնահատողների, ինչպես նաև գնահատողների շահերը ներկայացնող մի քանի կազմակերպությունների հետ և արդեն իսկ համատեղ մշակվել է գնահատման ինքնակարգավորման հայեցակարգը: Անշարժ գույքի շուկայի զարգացման վերլուծության ուղղությամբ մշակվել և առանձնացվել են վերլուծության համար անհրաժեշտ բազաները, անցկացվել են հանդիպումներ և քննարկումներ ոլորտի մասնագետների հետ: Ստեղծվել են նախադրյալներ 2019 թվականին վերլուծությունն իրականացնելու համար: Մշակվել է «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հասարակական կարգի պահպանություն

2018 թվականի ընթացքում, ունենալով ներքաղաքական գործընթացներով պայմանավորված ծանրաբեռնված օրակարգ, ՀՀ ոստիկանությունն, ընդհանուր առմամբ, կատարել է իր առջև դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը հանրապետությունում:

Ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ ոստիկանության գրեթե բոլոր ստորաբաժանումները ներգրավված են եղել հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներին: Բացի այդ, տարին հագեցած էր մի շարք համապետական նշանակություն ունեցող միջոցառումներով, ինչպիսիք էին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովը, Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումները, ՀՀ ԱԺ և Երևանի ավագանու արտահերթ ընտրությունները, որոնց պատշաճ կազմակերպումն ու անցկացումը պայմանավորված էր նաև ՀՀ ոստիկանության մեծաքանակ ծառայողների և ուժերի ներգրավվածությամբ: Ընդհանուր առմամբ, տեղի ունեցած 5767 միջոցառումներին ներգրավված են եղել 865050 ծառայող:

Թվարկված համապետական միջոցառումների պատշաճ անցկացմանը զուգահեռ, ՀՀ ոստիկանությունն արդյունավետ պայքար է իրականացրել նաև հանցավորության դեմ: 2018 թվականին հանրապետությունում գրանցվել է 22551 հանցագործության դեպք (2017թ.՝ 20284), որից 60.8%-ի դեպքում քրեական գործով անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործությունների 224 դեպք (2017թ.՝ 164), որից 59.7%-ի դեպքում քրեական գործով անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, ծանր հանցագործությունների 3638 դեպք (2017թ.՝ 2729), որից 38.0%-ի դեպքում քրեական գործով անձը ներգրավվել է որպես մեղադրյալ:

Ընդհանուր առմամբ, դեպքերի աճը հիմնականում պայմանավորված է երկու խումբ հանցատեսակների աճով:

Առաջինը կոռուպցիոն բնույթի հանցագործություններն են: Եթե 2017 թվականին արձանագրվել էր կոռուպցիոն բնույթի 634 դեպք, ապա 2018 թվականին դրանց թիվն աճել է մոտ 2 անգամ՝ կազմելով 1353: Այս հանցագործություններն իրենց բնույթով դասվում են առավել լատենտային հանցատեսակների շարքին, և դրանց թվի աճը, ինքնին, դրական արդյունք է, քանի որ դրանց հայտնաբերումն իրավապահ մարմինների համար բավականին բարդ է և պահանջում է օպերատիվ-քննչական լայնածավալ միջոցառումների պատշաճ իրականացում:

Հայտնաբերված դեպքերի 56.2%-ն ի հայտ է բերվել ոստիկանության մարմինների կողմից:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով ոստիկանության ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների արդյունքում 2018 թվականին բացահայտվել է պետությանը,

կազմակերպություններին և անձանց հասցված շուրջ 5.7 մլրդ դրամի վնաս (2017 թվականին՝ շուրջ 735 մլն): Վերականգնվել է շուրջ 654 մլն դրամի վնասը:

Ընդհանուր հանցագործությունների թվի աճի վրա էապես ազդել է նաև սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քանակի նկատելի ավելացումը՝ մոտ մեկ քառորդով (8102-ից 10112), ինչը կարելի է պատճառաբանել նաև այն հանգամանքով, որ նախորդ տարվա ընթացքում, կապված իրավիճակի փոփոխության հետ, բարձրացել է քաղաքացիների վստահությունը ոստիկանության գործունեության նկատմամբ, և վերջիններս չեն խուսափում դիմել ոստիկանություն: Եթե 2017 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ ստացվել է առերևույթ հանցագործության մասին 32321 հաղորդում, ապա 2018 թվականին դրանց թիվն աճել է 9145-ով կամ 28.3%-ով՝ կազմելով 41466: Ի դեպ, 807-ով կամ 27%-ով աճել են այն դեպքերը, երբ քաղաքացիները դիմել են ոստիկանություն՝ նախկինում իրենց կողմից չհայտնած դեպքերի վերաբերյալ (2922-ից 3729):

Հարկ է նշել նաև, որ հաղորդումների քանակի աճի պարագայում գրեթե իսպառ վերացել են դրանք հաշվառումից թաքցնելու դեպքերը:

Ուշագրավ է այն իրողությունը, որ հանցավորության ընդհանուր կառուցվածքում նվազել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշիռը (24.0%-ից 21.3%): Փաստորեն, հիմնական զանգվածի տեղաշարժը տեղի է ունեցել մարդու դեմ ուղղված հանցագործություններից դեպի սեփականության դեմ ուղղված հանցագործություններ, ինչը պայմանականորեն կարելի է դրական միտում համարել՝ հաշվի առնելով բռնությունների աննախադեպ աճի ներկայիս միջազգային զարգացումները:

Այս համատեքստում հատկապես դրական կարելի համարել այն իրողությունը, որ 2018 թվականի ընթացքում արձանագրվել է սպանությունների նվազագույն թիվը (35) վերջին 40 տարիների ընթացքում:

2018 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակում նախաձեռնվել է Ոստիկանության համակարգի կազմ-հաստիքային օպտիմալացման գործընթացը: Կազմ-հաստիքային օպտիմալացման հիմնական նպատակը ստորաբաժանումների կառուցվածքի արդիականացումն է, դրանց համապատասխանեցումն արդի մարտահրավերներին, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացումն ու աշխատանքային ծանրաբեռնվածության համաչափ բաշխվածության ապահովումը (մասնավորապես՝ քրեական ոստիկանության, հասարակական անվտանգության դեպարտամենտի ստեղծում):

Կազմակերպահրավական աշխատանքներ են իրականացվում ոստիկանության գործունեությունը նոր, միջազգային չափորոշիչներով կազմակերպելու ուղղությամբ: Առաջնային է

պարեկային նոր ծառայության ստեղծումը, որը նպատակ ունի բեռնաթափելու համայնքային ոստիկանության և օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների աշխատանքը, բարձրացնելու բնակավայրերում իրավախախտումների կանխարգելման արդյունավետությունը, հաշված րոպեների ընթացքում արձագանքելու իրավախախտումներին և պատահարներին: Պարեկային շարժական ծառայությունը բնակավայրերում կփոխարինի ՃՈ ստորաբաժանումներին, ընդ որում՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման հսկողությունն այդ ծառայության հիմնական գործառույթներից է լինելու: Պարեկային շարժական ծառայությունը ղեկավարվելու է օպերատիվ կառավարման կենտրոնի կողմից: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ֆինանսավորմամբ՝ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում իրականացվում է Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների կազմում թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ շահագործվող օպերատիվ կառավարման կենտրոնների ստեղծում: Նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հզորացնել նաև Երևան քաղաքի ՕԿԿ-ն: Մշակվել է օպերատիվ կառավարման կենտրոնների (ՕԿԿ) միջազգային ստանդարտներին համապատասխան տեխնիկական առաջադրանքը: Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հայտարարվել է մրցույթ: Գյումրիում և Վանաձորում ՕԿԿ ների համար նախատեսված տարածքներն առանձնացված են, վերանորոգված, առկա են կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

2018 թվականի հունիսի 14-ից գործում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին կից հասարակական խորհուրդը: Խորհուրդը բաղկացած է 50 անդամից՝ ներառյալ խորհրդի նախագահը, որից 19-ը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ են: Խորհրդում գործում են 5 մասնագիտական հանձնաժողովներ, միջինն ամիսը մեկ անգամ հրավիրվում են խորհրդի և մասնագիտական հանձնաժողովների նիստեր:

Ճանապարհային ոստիկանությունում ընթացող բարեփոխումների շրջանակներում մշակվել և ներդրվել են մի շարք նոր համակարգեր.

● Մեկնարկել է տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված՝ այլ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված Ճանապարհային երթևեկության կանոնների (ՃԵԿ) խախտումների համար կազմված որոշումների հաշվառման համակարգի շահագործումը: Համակարգը շահագործվում է Բագրատաշենի, Գոգավանի, Բավրայի սահմանային անցակետերում:

● Մշակվել և շահագործման է հանձնվել Ծանուցման թերթիկների էլեկտրոնային ռեգիստրի համակարգը, որը հնարավորություն է տալիս Ծանուցման թերթիկի սքանավորված տարբերակը մշակված վեբկայքի միջոցով հասանելի դարձնել Հարկադիր կատարման ծառայությանը, այլ

պետական մարմիններին և ՃՈ այլ ստորաբաժանումներին: Համակարգը հնարավորություն է տալիս նաև իրականացնել ճկուն գործիքակազմով տվյալները խմբավորելու տարաբնույթ վերլուծություններ: Աշխատանքներն իրականացվել են առանց լրացուցիչ ֆինանսական կամ այլ ռեսուրսների ներգրավման:

● Վերջնական տեստավորման փուլում է գտնվում նաև ՊԵԿ-ՃՈ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, որը թույլ կտա ամբողջովին էլեկտրոնային եղանակով իրականացնել ՊԵԿ-ի կողմից արգելանքների կիրառման և ազատման գործընթացը: Բացի այդ, համակարգն ապահովում է էլեկտրոնային եղանակով ավտոմատացված տեղեկատվության տրամադրում հարկային մարմիններին, ինչը և իր հերթին կհանգեցնի զգալի մարդկային և ֆինանսական ռեսուրսների տնտեսման:

● Երևանի հաշվառման-քննական բաժնում ներդրվել է հերթի կառավարման էլեկտրոնային համակարգ: Ընթացքի մեջ է նաև առցանց հերթագրման համակարգի ներդրումը, ինչպես նաև որոշակի վերահսկողական մեխանիզմների կիրառմամբ անկանոն հերթագրման պրակտիկայի բացառումն ապահովելու գործիքակազմի մշակումը:

2018 թվականին կատարվել է տեսազանգի և տեսակոնֆերանսներ կազմակերպելու “Skype for bussines” համակարգի փորձարկում կենտրոնական ապարատում, մի քանի մարզերում և կրթահամալիրում: Համակարգը հնարավորություն կտա մարզային ստորաբաժանումների ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացներն անցկացնել հեռահար կերպով առցանց ուսուցման եղանակով: Համակարգն ամբողջությամբ նախատեսվում է ձեռք բերել 2019 թվականի ընթացքում:

Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնման նպատակով ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային միջոցներով Երևան քաղաքում կառուցվել և արդեն իսկ շահագործվում է ևս մեկ նոր հենակետ Էրեբունի վարչական շրջանում:

2018 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստվել է համայնքային ոստիկանության 107 ծառայող:

Ամենօրյա խնդիրների լուծման հետ միաժամանակ ուշադրության կենտրոնում են գտնվել նաև ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական դաշտի ուսումնասիրությունը, վերլուծությունը, առկա բացերի վերհանումը և համապատասխան իրավական լուծումների առաջադրումը, որն ուղղված է եղել ոստիկանության օպերատիվ-ծառայողական գործունեության կանոնակարգմանը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, հասարակական վստահության բարձրացմանն ու հասարակական վերահսկողական գործիքների ավելացմանը:

2018 թվականի ընթացքում Ոստիկանության նախաձեռնությամբ մշակված 122 իրավական ակտերի, այդ թվում՝ 22 օրենքների նախագծերից սահմանված կարգով քննարկվել և ընդունվել է 2 օրենք, ՀՀ Նախագահի 1 հրամանագիր, ՀՀ կառավարության 37 և ՀՀ վարչապետի 8 որոշում, ՀՀ ոստիկանության պետի 3 նորմատիվ և մի քանի տասնյակ անհատական ու լոկալ բնույթի հրամաններ:

Հատկանշական է ճանապարհային երթևեկության ոլորտի բարեփոխումներին ուղղված օրենսդրական նախաձեռնությունը, որն առավելագույնս ուղղված է ճանապարհային երթևեկության ոլորտում վարչական պատասխանատվության անխուսափելիության և արդարության սկզբունքի ապահովմանը: Մասնավորապես, նախատեսվում է այս ոլորտում ներդնել նոր՝ տուգանային միավորների համակարգը, որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման իրավական գործիք:

Միաժամանակ, նախապատրաստվել է նաև օրինագիծ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով: Փոփոխությունների հիմնական նպատակը հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն է՝ ոստիկանությունում ծառայության ընդունվելու մեխանիզմների հստակեցման, կանխատեսելիության երաշխիքների ամրագրման միջոցով, ինչպես նաև գործող օրենքը «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքների կարգավորումներին համապատասխանեցնելը, որը գտնվում է քննարկումների փուլում:

Բացի այդ, 2018 թվականին ընդունվել են նաև Ոստիկանության գործունեությանն առնչվող էական նշանակություն ունեցող մի շարք այլ իրավական ակտեր: Մասնավորապես, ՀՀ վարչապետի կողմից 2018 թվականի հունիսի 11-ի N 751-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ ոստիկանության կանոնադրությունը, որով հստակ սահմանվել է նաև ՀՀ ոստիկանության կառուցվածքը: 2018 թվականի սեպտեմբերի 18-ի N 1222-Ա որոշմամբ սահմանվել է ՀՀ ոստիկանության հաստիքների առավելագույն թիվը, որով, ըստ էության, ապագաղտնիացվել է ՀՀ ոստիկանության աշխատողների թվաքանակը: Հիմնադրման օրվանից Ոստիկանության կառուցվածքը և թվաքանակը գաղտնագրված է եղել, ինչը բնորոշ չէ իրավական և ժողովրդավարական պետություններին: Այս քայլով նաև երաշխավորվել է Ոստիկանության գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը: ՀՀ ոստիկանության պետի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 30-ի N 10-Լ հրամանով հաստատվել են նաև ՀՀ ոստիկանության ներքին կարգապահական կանոնները:

Բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման առումով ՀՀ ոստիկանության ղեկավարությունը խիստ կարևորում է նաև յուրաքանչյուր ծառայողի կողմից

օրինականության պահպանման խնդիրը: 2018 թվականի ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ կատարվել է 1712 (2017թ.՝ 1559) ծառայողական քննություն, որի արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 843 (2017թ.՝ 937) ծառայող: ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված տարբեր օրինախախտումների փաստերով արձանագրվել է 204 դեպք (231 անձի վերաբերյալ), որից 197-ով հարուցվել է քրեական գործ (224 անձի նկատմամբ):

Հարկաբյուջետային քաղաքականություն

ՀՀ հարկաբյուջետային նոր կանոնների համակարգ

2018 թվականին ՀՀ կառավարությունը հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գործարկել է հարկաբյուջետային նոր, արդիականացված կանոնների համակարգը և ԱԺ-ում դրանց առանցքային սկզբունքներն ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում: Տարվա ընթացքում լրացուցիչ կարգավորումների միջոցով հարկաբյուջետային կանոնների համակարգն ամբողջականացվել է 2018 թվականի օգոստոսի 23-ին՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ:

Կանոնների արդիականացված համակարգը համահունչ է հարկաբյուջետային ողջամիտ քաղաքականության միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և ուղղված է արդյունավետ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար հիմքերի ստեղծմանը, պետական պարտքի կայունացմանը և առավել ճկուն ուղենիշներ է պարունակում երկարաժամկետ տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային քաղաքականության համար: Կանոնների նախորդ համակարգի համեմատ նոր համակարգն ունի առանցքային առավելություններ, քանի որ ներառում է ՀՀ կառավարության պարտքի ճկուն շեմեր, տալիս է տնտեսության զարգացումներին ճկուն արձագանքելու հնարավորություն, բարձրացնում է ՀՀ կառավարության հաշվետվողականությունը և ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության հանդեպ վստահության աճի հիմքեր ստեղծում, ինչպես նաև նախանշում այն բացառիկ դեպքերը, որոնց պայմաններում ՀՀ կառավարությունը կարող է շեղվել կանոններից և արձագանքել տնտեսական ու այլ ցնցումներին: Մասնավորապես՝

- Ներդրվել են ՀՀ կառավարության պարտքի 3 շեմեր՝ 40, 50, 60 տոկոս, որոնք անցնելու դեպքում պետք է գործեն համապատասխան ծախսային կանոններ.
- ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի աճը կախվածության մեջ է դրվում սեփական եկամուտների և սեփական եկամուտներ գեներացնելու հնարավորությունների, մասնավորապես՝

հարկային եկամուտների և տուրքերի մեծության ու նախորդ տարիների ՀՆԱ անվանական աճերի հետ.

● Սահմանվել է, որ ներգրավվող պարտքը պետք է ուղղվի երկարաժամկետ աճ ապահովող կապիտալ ծախսերին.

● ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազեցման համար սահմանվել է, որ 50% և 60% մակարդակները գերազանցելու դեպքում ՀՀ կառավարությունը մշակում է ՀՀ կառավարության պարտքի համապատասխան շեմերից նվազեցման ծրագրեր և նախանշում համապատասխան միջոցառումները.

● Սահմանվել են բացառիկ դեպքեր (խոշորածավալ տարերային և տեխնածին աղետներ, պատերազմական գործողություններ, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրում, տնտեսական ցնցումներ), որոնց առկայության պարագայում ՀՀ կառավարությունը կարող է շեղվել սահմանված կանոններից և գնահատելով դրանց ազդեցության չափը՝ կատարել հարկաբյուջետային քաղաքականության ճշգրտումներ:

2018 թվականի ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության առանցքային ռազմավարական փաստաթղթերը՝ ՀՀ 2019-2021թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և 2019թ. պետական բյուջեն մշակվել են նոր հարկաբյուջետային կանոններին համահունչ: Իսկ 2019-2021թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներդրվել է նաև ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. ծրագիրը:

Հարկեր

Հարկային համակարգի կարգավորումներ

1. Հարկային համակարգի շարունակական զարգացմանն ուղղված աշխատանքների շրջանակներում մշակվել է ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագիծ, որը 2018 թվականի հունիսի 21-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Կատարված օրենսդրական փոփոխությամբ, մասնավորապես՝

1) հնարավորություն է ստեղծվել, որպեսզի առևտրային բանկերը կարողանան առանց լրացուցիչ հարկային պարտավորություններ կրելու ֆիզիկական անձանց ներել մինչև 2018 թվականի մայիսի 31-ը անհուսալի ճանաչված վարկերի գծով հաշվարկված տույժերն ու տուգանքները,

2) ֆիզիկական անձանց համար իրականացվել է համաներում՝ ազատելով գույքի (ավտոմեքենա, բնակարան, առանձնատուն, արտադրական, հասարակական կամ այլ առևտրային տարածք) օտարման գործարքներից առաջացող ԱԱՀ-ի նկատմամբ հաշվարկված տույժերից ու

տուգանքներից՝ պայմանով, որ օրենքի ընդունումից սկսած՝ 90 օրվա ընթացքում վճարվի հարկի մայր գումարը,

3) կարգավորվել են 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի գործունեությունը արտոնագրային հարկի համակարգից շրջանառության հարկի համակարգ տեղափոխելու հետ կապված խնդիրները, որպեսզի այս ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները կարողանան սահուն անցում կատարել հարկման նոր համակարգին,

4) կիսով չափ նվազեցվել են Հայաստանի Հանրապետությունում հաշվառված տրանսպորտային միջոցների համար սահմանված՝ բնապահպանական հարկի դրույքաչափերը՝ հաշվի առնելով այն, որ 2018 թվականի հունվարի 1-ից բարձրացված դրույքաչափերը հանգեցրել էին դժգոհությունների,

5) 2022 թվականի հունվարի 1-ից վերացվել է արտահանման ծրագրերի մասով շահութահարկի նվազեցված դրույքաչափերի կիրառության արտոնությունը (40 մլրդ դրամ արտահանման ծավալի դեպքում՝ 5 տոկոս, 50 մլրդ դրամ արտահանման ծավալի դեպքում՝ 2 տոկոս, ինչպես նաև արտերկրում շինարարական աշխատանքներ կատարող ֆիզիկական անձանց վճարվող եկամուտների հարկում 13 տոկոս դրույքաչափով), քանի որ այս համակարգը ասոցացվում էր օֆշորային գոտու հատկանիշների հետ: Միաժամանակ, հնարավորություն է ընձեռվել, որպեսզի հարկ վճարողները կարողանան դեռևս մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը միանալ այս արտոնյալ համակարգին, որի պարագայում արտոնությունը կշարունակի գործել մինչև 2022 թվականի հունվարի 1-ը,

6) Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում գրանցված բեռնատար տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային հարկ վճարողներին տրվել է ճանապարհային հարկից ազատման արտոնություն, եթե նշյալ տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն մուտքի ամբողջ ժամանակահատվածում գտնվելու են Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության սահմանից առավելագույնը 1 կմ հեռավորության վրա՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տարածքներում: Խնդիրը կայանում էր նրանում, որ ճանապարհային հարկի վճարումից խուսափելու համար իրանական բեռնատարները չէին մտնում Հայաստանի Հանրապետության տարածք, ինչի արդյունքում բեռնափոխադրումների հետ կապված բոլոր հարակից ծառայությունները (բեռնում, բեռնաթափում, պահեստավորում, փաթեթավորում, կշռում և այլն) մատուցվում էին իրանական կողմի տարածքում,

7) անշարժ գույքի միասնական հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի ներդրումը հետաձգվել է մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ մինչև այդ շարունակելով կիրառել գույքահարկի և

հողի հարկի համակարգերը: Խնդիրն այստեղ կայանում էր նրանում, որ նոր համակարգերի ներդրումը ենթադրում էր մեծ ծավալի նախապատրաստական աշխատանքների կատարում Կադաստրի պետական կոմիտեի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Բացի այդ, Կառավարությունը նախատեսում է առաջիկայում հանդես գալ գույքային հարկերի համակարգը սկզբունքորեն վերանայելու առաջարկություններով,

8) տրանսֆերային գնագոյացման համակարգի կիրառությունը հետաձգվել է մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, քանի որ նախ՝ անհրաժեշտ է մշակել և ընդունել այս համակարգի կիրառությունն ապահովող՝ Կառավարության մի շարք որոշումների նախագծեր, և երկրորդ՝ այս ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տրանսֆերային գնագոյացման համակարգերի կիրառությունը բավական բարդ գործընթաց է անգամ զարգացած հարկային համակարգեր ունեցող երկրների համար, պահանջում է հարկային մարմնի և տնտեսավարող սուբյեկտների համապատասխան մասնագիտական ու ինստիտուցիոնալ կարողություններ,

9) սահմանվել է, որ հարկային և մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրության մասով պաշտոնական պարզաբանումները տրամադրելու է ՀՀ ֆինանսների նախարարությունը, ինչը կերաշխավորի, որպեսզի նախարարության կողմից իրականացվող հարկային և մաքսային քաղաքականության հիմքում դրված ուղղությունները պահպանված լինեն նաև դրա գործնական կիրառության հարթությունում,

10) սահմանվել է, որ եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հարկ վճարողները համարվում են փոխկապակցված, և հետևաբար, շրջանառության հարկի համակարգից տեղափոխվում են ԱԱՀ-ի հարկման համակարգ, ապա հարկման համակարգերի փոփոխությունը կատարվում է ոչ թե հարկային մարմնի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, այլ այդ որոշումը կայացնելու տարվա սկզբից: Հակառակ պարագայում խուսափելու համար ԱԱՀ-ի դաշտում գործելուց, փոխկապակցված ճանաչված հարկ վճարողները պարզապես լուծարվում էին, և դրանց փոխարեն ստեղծվում էին նորերը և այդպես շարունակ: Միաժամանակ, լուծվել է այս հարաբերություններում առկա իրավական խնդիրը և սահմանվել է, որ եթե դատարանի վճռով չեղյալ է ճանաչվում հարկային մարմնի ղեկավարի որոշումը, ապա հարկ վճարողը շրջանառության հարկ վճարողի կարգավիճակը վերականգնում է այն պահից, որ պահից որ կորցրել էր, և ոչ թե հաջորդ տարվա հունվարի 1-ից,

11) որոշակի պարենային ապրանքների համար վերանայվել է ապրանքների դրոշմավորման համակարգը՝ այն դարձնելով գործնականում ավելի կիրառելի և հարկ վճարողների մոտ իրականացվող հարկային հաշվառման տեսանկյունից ավելի հարմարավետ,

12) վերանայվել են ակցիզային դրոշմանիշերի տրամադրման առավելագույն քանակությունները՝ 5 միլիոն հատը ծխախոտի համար դարձնելով 20 միլիոն հատ, 300 հազար հատը ալկոհոլի համար դարձնելով 1,2 միլիոն հատ: Խնդիրը կայանում էր նրանում, որ նախկինում գործող սահմանաչափերը հնարավորություն չէին ընձեռում, որպեսզի ապահովվեր այս ապրանքների ներմուծման ու իրացման շղթայի անընդհատությունը,

13) չգրանցված աշխատողների համար սահմանվել է միասնական՝ 250 հազար դրամի չափով տուգանք՝ նախկինում սահմանված՝ չգրանցված աշխատողների քանակից կախված տարբերակված տուգանքների փոխարեն, քանի որ նախկինում սահմանված տուգանքները մի կողմից ստեղծում էին կոռուպցիոն ռիսկեր, մյուս կողմից՝ հնարավորություն չէին ընձեռում արդյունավետ պայքար մղել չգրանցված աշխատող պահելու երևույթի դեմ,

14) ներդրվել են համապատասխան օրենսդրական կարգավորումներ՝ հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով ծանուցումների ուղարկման համակարգը լիարժեք գործարկելու և հարկային մարմնի կողմից արգելանքի կիրառության համակարգն ինքնաշխատ եղանակով գործարկելու համար,

15) սահմանվել են հարկային պարտավորություններն էլեկտրոնային եղանակով կատարելու համակարգի օրենսդրական հիմքերը:

2. ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ կապիտալի և եկամտի հարկումից աստիճանաբար սպառման հարկման վրա շեշտադրում կատարելու ծրագրային դրույթի իրագործման, ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործման ու կիրառության շրջանակի ընդլայնման, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծման նպատակով կատարվել են բազմակողմանի վերլուծություններ: Արդյունքում մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթի տեսքով ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

3. Միաժամանակ, ակտիվ աշխատանքներ են կատարվել նաև միջազգային հարկային քաղաքականության ուղղությամբ: Մասնավորապես՝

1) 2018 թվականի մարտի 14-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան: Ներկա փուլում նախատեսվում է իրականացնել Կոնվենցիան ուժի մեջ մտնելու հետ կապված՝ օրենքով սահմանված ընթացակարգերը,

2) Ղրղզական կողմի հետ համաձայնություն է ձեռք բերվել նախկինում մշակված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղրղզստանի Հանրապետության Կառավարության միջև՝ եկամուտի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ և նախատեսվում է սահմանված կարգով իրականացնել վերոնշյալ համաձայնագրի ստորագրման գործընթացը,

3) 2018 թվականի ընթացքում նախաստորագրվել է նաև «Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան,

4) 2018 թվականի նոյեմբերի 13-15-ն ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցել բանակցություններ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, որի արդյունքում նախաստորագրվել է համապատասխան փոփոխություններ կատարելու արձանագրությունը,

5) նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2019 թվականի գարնանը Հայաստանի Հանրապետության Կառավարության և Օմանի Սուլթանության Կառավարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրերի կնքման նպատակով բանակցությունների անցկացնելու ուղղությամբ,

6) ձեռնարկված ակտիվ աշխատանքների շնորհիվ 2019 թվականի փետրվարի 11-ից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է «Հարկման բազայի խեղաթյուրման և շահույթների տեղաշարժ» ծրագրի ներառական հարթակի անդամ:

Հարկային վարչարարություն

2018 թվականի հունվարի 1-ից, ՀՀ հարկային օրենսգրքով ներդրված միասնական հաշվի համակարգի շրջանակներում, հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառումը, հարկային պարտավորությունների վճարումները կատարվում են մեկ միասնական հաշվով, իսկ եկամուտ են ճանաչվում միայն հաշվառված հարկային պարտավորությունների դիմաց միասնական հաշվին վճարված գումարները, ինչի արդյունքում վերացել է գերավճարների հավաքագրման խնդիրը:

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացված միջոցառումները բխել են ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ

կառավարության 2017-2022թթ. ծրագրից, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից, հարկային և մաքսային վարչարարության ոլորտին վերաբերող՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված այլ ծրագրերից:

<u>Հարկային ոլորտ</u>

Ոլորտի ռիսկը բնութագրող նոր չափանիշների ներառմամբ վերանայվել են ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգի ռիսկային չափանիշները: Դրա արդյունքում 2018 թվականին հարկային մարմնի կողմից իրականացված համալիր հարկային ստուգումների քանակը 2017 թվականի համեմատ նվազել է 16.2%-ով: Իրականացված համալիր ստուգումների թվի կրճատման պայմաններում արձանագրված լրացուցիչ պարտավորությունների գումարն աճել է 87.5%-ով, միաժամանակ աճել է նաև մեկ ստուգմանը բաժին ընկնող լրացուցիչ պարտավորության գումարը՝ 123.7%-ով: Ռիսկային չափանիշների կատարելագործմամբ ապահովվել է ստուգումների կազմակերպման գործընթացի հասցեականությունը: Վերանայվել են ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգի ռիսկային չափանիշները: Ստացված արդյունքների հիման վրա կազմվել և ՀՀ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվել է 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացման ենթակա համալիր հարկային ստուգումների ցանկը:

2018 թվականի չորրորդ եռամսյակի դրությամբ ոչ պետական աշխատատեղերի քանակն ավելացել է շուրջ 37 հազարով, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նույն ժամանակահատվածում ստվերից դուրս է բերվել առնվազն 30 հազար աշխատատեղ:

Կատարելագործվել է ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգը: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում.

- ներդրվել է շրջանառության հարկի հաշվարկման ինքնաշխատ համակարգը: Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ ԱԱՀ հաշվարկի ինքնաշխատ լրացման (prefiling) ուղղությամբ,
- ստեղծվել է ՀԴՄ կտրոնի վրա ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) տպագրելու հնարավորություն,

- ավարտվել են կամերալ ուսումնասիրությունների իրականացման ընթացակարգերի միասնականացման, համակարգի հետագա ավտոմատացման հիմնական աշխատանքները,
- երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և արդյունավետ օգտագործման հնարավորությունների ընդլայնման մասով հարկային վարչարարության արդիականացման ծրագրի շրջանակներում ավարտվել են Հարկատու-3 համակարգում երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և մշակման ավտոմատ համակարգի ծրագրավորման և թեստավորման աշխատանքները,
- ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգում ներդրվել են նոր հարկային հաշվարկների ձևերը, ինչպես նաև նոտարների, ֆիզիկական անձանց, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկ վճարողների առցանց գրանցման համակարգը:

Հարկային մարմին - հարկ վճարող գործընկերային հարաբերությունների ընդլայնման, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով՝

- 2018 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 11 աշխատանքային հանդիպումներ է անցկացրել 6 ոլորտներում՝ կաթնամթերքի, մսամթերքի, թռչնամսի, ձվի արտադրության, հանրային սննդի և հյուրանոցային տնտեսության օբյեկտների շահագործման գործունեություն իրականացնող հարկ վճարողների հետ,
- 2018 թվականի ընթացքում իր աշխատանքներն է շարունակել եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդը: e-draft.am կայքէջում պարբերաբար տեղադրվել են ՀՀ ՊԵԿ կողմից մշակված համապատասխան իրավական ակտերի նախագծերը,
- իրականացվել են հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ՝ թվով շուրջ 240 միջոցառում, իսկ ԶԼՄ ներկայացուցիչներից գրավոր և բանավոր եղանակով ստացվել է 1008 հարցում: Միաժամանակ, հարկ վճարողների տարբեր խմբերի համար 2018 թվականի ընթացքում կազմակերպվել են թվով 53 ուսումնական միջոցառում՝ 709 ակ/ժամ տևողությամբ, որոնց մասնակցել են 974 հարկ վճարողներ և (կամ) նրանց ներկայացուցիչներ,
- հարկման ընդհանուր դաշտում գործունեություն իրականացնելը խրախուսելու և օրինապահ հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունները զարգացնելու նպատակով մշակվել և ՀՀ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանով վերանայվել են օրինապահ հարկ վճարողներին ներկայացվող չափանիշները: 2018 թվականին ներկայացվել է օրինապահ հարկ վճարողի հավաստագրի ստացման թվով 141 դիմում, որոնցից թվով 94 հարկ վճարողի դիմում

բավարարվել է: Օրինապահ հարկ վճարողների ցանկերը հրապարակվել են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում,

- նախքան հարկային հսկողական միջոցառումներ իրականացնելը, հարկային կարգապահությունը բարձրացնելու և հնարավոր իրավախախտումները կանխելու նպատակով՝ մոնիտորինգային կենտրոնի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաներով, հաշվարկային փաստաթղթերով իրականացվող գործարքների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, 2018 թվականի ընթացքում իրականացված մոնիտորինգի արդյունքներով, հարկ վճարողներին բացառապես էլեկտրոնային եղանակով ուղարկվել է 9370 ծանուցում և նույն համակարգի միջոցով ստացվել է 1627 բացատրություն: Հաստատվել են նաև եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի իրականացման համար ռիսկայնության գնահատման չափանիշները:

Հարկային վարչարարության, ինչպես նաև հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հարկ վճարողների դիրքորոշման գնահատման նպատակով Համաշխարհային բանկի Հարկային վարչարարության արդիականացման վարկային ծրագրի շրջանակում իրականացվել է գործարար համայնքի շրջանակներում հարկ վճարողների՝ հարկային վարչարարության նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ հարկային ընկալման ուսումնասիրություն՝ համապատասխան հարցումների իրականացման միջոցով: Հարցման արդյունքները փաստում են, որ հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ հարկ վճարողների գոհունակությունը բարելավվել է:

ՀՀ ՊԵԿ ուշադրության կենտրոնում է եղել հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացումը: Այդ նպատակով 2018 թվականի ընթացքում, համաձայն հաստատված ծրագրի, 90 խմբերի համար իրականացվել են 35916 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և թեստավորվել են 1635 հարկային և մաքսային ծառայողներ և 76 խմբերի համար իրականացվել են 13914 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ ուսումնական դասընթացներ, որոնց մասնակցել են 1534 հարկային և մաքսային ծառայողներ:

Անցկացվել են աշխատանքային 11 հանդիպումներ տարբեր ոլորտներում՝ կաթնամթերքի, մսամթերքի, թռչնամսի, ձվի արտադրության, հանրային սննդի և հյուրանոցային տնտեսության օբյեկտների շահագործման գործունեություն իրականացնող հարկ վճարողների հետ, որոնց ընթացքում կարևորվել են տնտեսությունում փաստաթղթաշրջանառության պատշաճ ապահովման անհրաժեշտությունը, գործարքների ամբողջական փաստաթղթավորումը, ՀԴՄ շահագործման կանոնների պահպանումը:

Միաժամանակ, կոռուպցիոն երևույթների բացառման նպատակով ՀՀ ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվել են տարաբնույթ կանխարգելիչ, բացատրական աշխատանքներ, դիտարկվել է հարկային և մաքսային մարմնի ծառայողների և նրանց անմիջական ղեկավարների վարքագծի համապատասխանությունը էթիկայի կանոններին:

<u>Մաքսային ոլորտ</u>

2018 թվականից ուժի մեջ է մտել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017թ. ստորագրված պայմանագիրը և դրանից բխող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի շուրջ 40 որոշումներ: Նշված պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը բաղկացած է 9 բաժիններից, որոնցով սահմանված կարգավորումներն ուղղված են մաքսային օրենսդրության դրույթների կիրառման ընթացքում գործնականում ի հայտ եկած հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, տնտեսավարող սուբյեկտների համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծմանը՝ հիմքում ունենալով մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին Կիոտոյի կոնվենցիայի շրջանակային ստանդարտները: Մասնավորապես.

- կատարելագործվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների վերաբերյալ նախնական տեղեկատվության ներկայացման համակարգը,
- վերացվել է մաքսային արժեքի որոշման պարտադիր պահանջը «Մաքսային տարանցում», «Մաքսային պահեստ», «Ոչնչացում», «Հրաժարում հօգուտ պետության» և հատուկ մաքսային ընթացակարգերի դեպքում,
- ստեղծվել են մաքսատուրքերի վճարման ժամկետի հետաձգման և տարաժամկետման լրացուցիչ հնարավորություններ,
- ամրագրվել է էլեկտրոնային հայտարարագրման համակարգի գերակայությունը (թղթային եղանակով հայտարարագրումը սահմանվել է միայն որոշակի դեպքերում), ինչի առավելությունը ներկայումս գործող համակարգի նկատմամբ կայանում է նրանում, որ գերակայություն է տրվում էլեկտրոնային հայտարարագրմանը՝ դրանով իսկ նվազեցնելով տնտեսավարող սուբյեկտների և մաքսային մարմինների շփումները և կրճատելով մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակահատվածը,
- կրճատվել են ապրանքների բացթողման ժամկետները, մասնավորապես՝ գործող 1 աշխատանքային օրվանից ապրանքների բացթողման ժամկետը կրճատվել է մինչև 4 ժամ, ինչպես նաև կրճատվել են մաքսային հայտարարագրի գրանցման և գրանցումը մերժելու ժամկետները (2

ժամից մինչև 1 ժամ), ամրագրվել է հնարավորություն՝ մերժման հիմքերի վերացման նպատակով մաքսային մարմինների կողմից հայտարարատուին առաջարկների ներկայացման համար,

- ամրագրվել է ապրանքների մասին հայտարարագրի ներկայացման հնարավորությունը՝ առանց այնպիսի փաստաթղթերի զուգակցման, որոնց հիման վրա լրացվել է հայտարարագիրը,
- ամրագրվել է նախքան մաքսային հսկողության ավարտն ապրանքների բացթողման հնարավորությունը, ինչը թույլ կտա հայտարարատուի կողմից մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովում ներկայացնելու պայմանով ապրանքները բաց թողնել առանց մաքսային հսկողությունն ավարտելու,
- սահմանվել են ապրանքների նոր կատեգորիաներ (օրինակ՝ ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող, ցուցահանդեսների համար ներմուծվող և այլն), որոնց ներմուծման պարագայում ապրանքները կարող են բաց թողնվել նախքան մաքսային հայտարարագրի ներկայացումը,
- բարելավվել են «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների իրացմանն առնչվող պայմանները, մասնավորապես՝ անմաքս առևտրի խանութներից գնման իրավունք ունեցող անձանց ցանկում լրացվել են ԵՏՄ տարածք ժամանող ֆիզիկական անձինք,
- Հայաստանի Հանրապետության համար հնարավորություն է ամրագրվել՝ ստեղծել «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառմանն առնչվող՝ ԵՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների կիրառմամբ թվով 1 տարածքային ազատ տնտեսական գոտի, որտեղ կարող են ազգային օրենսդրության շրջանակներում սահմանվել ԵՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված կարգավորումներից տարբերվող կարգավորումներ (օրինակ՝ ապրանքների մանրածախ վաճառք, հայտարարագրման այլ ժամկետներ և այլն),
- երկարաձգվել է ԵՏՄ ֆիզիկական անձանց կողմից ԵՏՄ չհանդիսացող պետության տարածքում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամկետը, մասնավորապես՝ գործող 6 ամսվա փոխարեն սահմանվել է մինչև 1 տարի, ինչը հնարավորություն կընձեռի առանց մաքսային վճարների վճարման նշված ժամանակահատվածով ներմուծել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցներն ու հավասար պայմաններ ստեղծել օտարերկրյա և ԵՏՄ ֆիզիկական անձանց համար,
- ընդլայնվել են միջազգային փոստային առաքումների դեպքում Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերի՝ որպես մաքսային հայտարարագիր օգտագործման դեպքերը, մասնավորապես՝ հնարավորություն է ստեղծվել գործող օրենսդրությամբ

սահմանված՝ «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի հետ մեկտեղ Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերը կիրառել նաև «Արտահանում» և «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգերի դեպքում,

- մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրներում ընդգրկման համար որպես պայման սահմանվել է մաքսային վճարների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայությունը,
- կատարելագործվել է լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտը: Մասնավորապես, սահմանվել են լիազորված տնտեսական օպերատորի վկայականի 3 տեսակներ, որոնք հնարավորություն կտան օգտվելու տարբեր բնույթ ունեցող հատուկ պարզեցումների լայն շրջանակից՝ լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտը համապատասխանեցնելով միջազգայնորեն ամրագրված սկզբունքներին:

ՀՀ արտաքին առևտրի ազգային «մեկ պատուհան» համակարգում գործող «Ռիսկերի կառավարում» ենթահամակարգում չափանիշների վերանայման շրջանակներում ներդրվել են միջազգային նորմերին համապատասխան թիրախավորման մոտեցումներ, որի արդյունքում 2018 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակի արդյունքներով զննման դեպքերի թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմել է համապատասխանաբար 12.8% և 7.5%, որը մոտ է միջազգային չափանիշների 5% արդյունքին: Միաժամանակ, մշակվել և ներդրվել են թվով 9 ռիսկի պրոֆիլներ՝ կապված հետբացթողումային հսկողության ցուցիչների ավտոմատացման հետ:

Պարզեցվել է մաքսային հայտարարագրերի ներկայացման սկզբունքը, ինչի արդյունքում հայտարարատուները հնարավորություն են ստացել մաքսային հայտարարագրեր ներկայացնել վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որը տեղակայված է մաքսային հսկողության ենթակա ապրանքների գտնվելու վայրում կամ վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որի գործունեության տարածքն ընդգրկում է ապրանքների գտնվելու վայրը:

Էականորեն ընդլայնվել են ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ԱՏԳ ԱԱ 87 ապրանքային դիրքում դասակարգված անձնական օգտագործման ապրանք հանդիսացող տրանսպորտային միջոցների մաքսային գործառնությունների իրականացման վայրերը, ինչի արդյունքում սահմանվել է, որ այդպիսի գործառնություններ կարող են իրականացվել հայտարարագրերի գրանցման գործառույթներ իրականացնող բոլոր մաքսային մարմիններում:

Մշակվել և ՊԵԿ պաշտոնական կայք-էջում ներդրվել է ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ԱՏԳ ԱԱ 87 ապրանքային դիրքում դասակարգված անձնական օգտագործման ապրանք հանդիսացող տրանսպորտային միջոցների արժեքների էլեկտրոնային հաշվիչը, ինչը

հնարավորություն է ընձեռել ցանկացած անձի նախապես ծանոթանալ ավտոմեքենաների արժեքների վերաբերյալ մաքսային մարմինների տրամադրության տակ առկա տեղեկատվությանը:

Էականորեն պարզեցվել են նախկինում վերադաս մաքսային մարմնի կողմից տրամադրվող տարատեսակ թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը, այդ գործառույթները փոխանցվել են մաքսատուն-վարչություններին, ինչի արդյունքում էականորեն նվազել են վերադաս մաքսային մարմին դիմելու անհրաժեշտության դեպքերը:

Մշակվել և ներդրվել է մաքսային տարանցում ընթացակարգով ներկայացվող հայտարարագրերի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման հնարավորությունը, ինչը հնարավորություն է ընձեռել հայտարարատուների կողմից նշված ընթացակարգով հայտարարագրերը ներկայացնել առանց մաքսային մարմին այցելելու:

Պետական ծախսեր

Ծրագրային բյուջետավորում

2018 թվականին Կառավարությունը շարունակել է Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների իրականացումը:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով դեռևս նախորդ տարիներին ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման շրջանակներում իրականացված աշխատանքները՝ տարեկան պետական բյուջեի նախագիծը կազմել է ամբողջությամբ ծրագրային բյուջետավորման ձևաչափերին համապատասխան՝ այդ գործընթացում ապահովելով իրավական և մեթոդաբանական հիմքերի ստեղծում, մարդկային ռեսուրսների գծով կարողությունների զարգացում: «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծն ամբողջապես ծրագրային ձևաչափով ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու համար ապահովվել է պետական մարմինների համապատասխան աշխատողներին ծրագրային բյուջետավորման նոր մեթոդաբանության կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման հետ կապված աշխատանքների իրականացումը: Արդյունքում «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի

պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը կազմվել է ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ:

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ կազմակերպել են նաև «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումներ ՀՀ Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում: Արդյունքում, Կառավարության և Ազգային ժողովի համատեղ ջանքերով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեն հաստատվել է ծրագրային ձևաչափով:

Ծրագրային բյուջետավորման հիմնական սկզբունքներին համապատասխանության ապահովման համար՝ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով.

- պետական բյուջեի որևէ ծախսային ծրագիր վերագրվել է բացառապես մեկ պետական մարմնի՝ նպատակ ունենալով որոշակիացնել ծրագրերի պատասխանատուների իրավունքներն ու պարտականությունները,
- բյուջետային ծրագրերի/միջոցառումների իրականացման կատարողականի գնահատման նպատակով սահմանվել են ծրագրերի/միջոցառումների վերջնական/ ուղղակի արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշներ:

Մշակվել և Կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները՝ պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները (ՀՀ կառավարության 27.12.2018թ. N 1515-Ն որոշում):

Միաժամանակ մշակվել և համացանցում տեղադրվել է Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի համառոտ ուղեցույցը (քաղաքացու բյուջե), որի միջոցով այն առավել հանրամատչելի և տեսանելի է դարձել հանրության համար:

Արտաբյուջեներ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում առաջին անգամ ներառվել են պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվներով կանխատեսվող եկամուտները և ծախսերի ցուցանիշները՝ այդ թվում արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը և միջոցառումները, ինչը պայմանավորված է տվյալ պետական բյուջեի մասին օրենքում արտաբյուջետային հաշիվների միասնական ներկայացման և դրանց գծով հաշվետվությունների միջև առկա խզումների չեզոքացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկության ապահովմամբ: Մասնավորապես ՀՀ 2019 թվականի

պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների համապատասխան հավելվածներում արտացոլված են արտաբյուջետային հաշիվներ ունեցող պետական հիմնարկների՝ այդ թվում ուժային կառույցների արտաբյուջետային հաշիվների 2019 թվականի եկամուտները, ծախսերը, դեֆիցիտը (պակասուրդը) և դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները:

Արտաբյուջետային միջոցների ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ներառումը կապահովի պետական բյուջեի ծրագրավորման և հաշվետվողականության միասնականության հիմքերը:

Բյուջետային կարգապահություն

2018 թվականի հունվարից ուժի մեջ մտած «Գանձապետական համակարգի մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների փոփոխությունների համաձայն՝ ՊՈԱԿ-ների ֆինանսական գործառնությունները նախատեսվում է իրականացնել գանձապետական միասնական հաշվով, իսկ ՊՈԱԿ-ների գանձապետական հաշիվներով շրջանառվող միջոցների նկատմամբ նախնական հսկողություն՝ 2019 թվականի հունվարի 1-ից սկսած: Հիշյալով պայմանավորված մշակվել և ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշմամբ հաստատվել է Բյուջեների կատարման կարգը: 2018 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ բոլոր ՊՈԱԿ-ների հաշիվները տեղափոխվել են գանձապետական համակարգ:

2019 թվականի բյուջետային հայտերի քննարկումների շրջանակում ոլորտային քննարկումների արդյունքներով վեր են հանվել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատվող ծրագրերը/ծախսերը, ինչպես նաև վերջիններիս իրականացնող մարմինների և դրանց ենթակա (նշանակալիորեն ֆինանսավորվող) կազմակերպությունների (հիմնարկներ, առևտրային, ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնադրամներ և այլ) գործառույթները, կառուցվածքը, ռեսուրսները, կառավարման, ներառյալ ֆինանսական կառավարման, հսկողության և այլ համակարգերը ու դրանց հետ կապված տեսանելի ռիսկերը:

Քննարկումների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները և դրանց մասով ձևավորված ընդհանուր առանցքային մոտեցումները ներառվել են ՀՀ կառավարության ծրագրում (ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8 թիվ 65-Ա որոշմամբ հավանության արժանացած), որոնք հանգել են հետևյալին:

● Ընդհանուր և ոլորտային քաղաքականության թիրախները բացակայում են կամ դրանք անորոշ են, միջոլորտային քաղաքականությունների ներդաշնակեցման (համակարգման) մակարդակը ցածր է: Առանձին վերցված գործառույթների/ծրագրերի ոչ ֆինանսական՝ արդյունքային ցուցանիշները բացակայում են կամ թերի են, դրանց կապը քաղաքականության թիրախների հետ թույլ են:

● Հանրային կառավարման բոլոր մակարդակներում առկա են ռեսուրսների արդյունավետ, օգտավետ և խնայողաբար կառավարման ռիսկեր: Առկա են նաև ինստիտուցիոնալ ռիսկեր՝ պայմանավորված որոշումների ընդունման, իրականացման, հսկողության և վերահսկողության միմյանցից տարանջատված, փոխլրացնող և որոշակի մոտեցումների/համակարգերի բացակայությամբ, ինչպես նաև զուգահեռ համակարգերի/մարմինների առկայությամբ և կառավարչական հաշվետվողականության ցածր մակարդակով:

Հիշյալ խնդիրներին համակարգային լուծում տալու նպատակով Կառավարությունը նախաձեռնել է, որ՝

● յուրաքանչյուր մարմին, ոլորտ պետք է ունենա հստակ՝ համառոտ և կոնկրետ սահմանված քաղաքականության նպատակներ/թիրախներ:

● չափելի և համադրելի ցուցանիշների կիրառմամբ նկարագրվի ընդհանուր տնտեսության մեջ յուրաքանչյուր ոլորտի/մարմնի առաքելությունը՝ կշիռը և դերակատարությունը, ինչպես նաև նշված ոլորտում պետական կարգավորման խնդիրները և դրանց ապահովման միջոցառումները: Միայն դրանց հիման վրա և միայն դրանց իրագործման նպատակով կկազմվեն տարաժամկետ ծրագրեր, այդ թվում ՄԺԾԾ-ն կամ այլ, որոնց հիման վրա և որոնց իրականացման նպատակով տվյալ տարվա բյուջեով կամ այլ աղբյուրներից կնախատեսվեն ռեսուրսներ և կիրականացվեն կոնկրետ միջոցառումներ:

● ցանկացած պարագայում ռեսուրսների կառավարումը պետք է լինի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար/տնտեսող:

● հանրային յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն, անկախ կազմակերպաիրավական կամ այլ առանձնահատկություններից, պետք է գործի օրենքով սահմանված որոշակի լիազորությունների շրջանակում՝ բացառապես իրականացնելով տվյալ մարմնի նպատակներին համապատասխանող և դրանցից բխող գործառույթներ:

Ընդ որում՝

● քաղաքականությանը վերաբերող գործառույթները/ստորաբաժանումները պետք է համախմբվեն և իրականացվեն/գործեն պետական մարմինների կառուցվածքում՝ որպես մասնագիտացված ստորաբաժանումներ,

● օժանդակ, սպասարկող, աջակցող և/կամ մասնագիտացված/խորհրդատվական այլ ծառայությունների/գործառույթների մասով պետք է դիտարկել դրանք մասնավորին պատվիրելու հնարավորությունը և նպատակահարմարությունը: Անհնարին և/կամ ոչ նպատակահարմար լինելու դեպքում, նման գործառույթները պետք է կազմակերպվեն տվյալ մարմնի աշխատակազմում գործող համապատասխան ստորաբաժանումների միջոցով՝ բացառելով նույնանման գործառույթների,

ներառյալ հաստիքների և ստորաբաժանումների մի քանի միավորների/աշխատակազմերի կողմից իրականացումը: Այս նպատակներով պետության կողմից նոր ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, Հիմնադրամների, ՓԲԸ-ների և/կամ այլ կառույցների ստեղծումից պետք է ձեռնպահ մնալ, իսկ գործող կառույցների գործունեությունը դադարեցնել (լուծարել, միավորել և այլն), եթե վերը նշված մոտեցումների ներքո չի հիմնավորվում դրանց գոյության անհրաժեշտությունը:

Գնումներ

ՀՀ կառավարությունը նախաձեռնել է գնումների համակարգի բարեփոխումների իրականացման գործընթացը, որը պայմանականորեն բաժանված է երկու փուլի՝

● Պատվիրատուներից և քաղաքացիական հասարակությունից ստացված առաջարկությունների, ինչպես նաև լիազորված մարմնի կողմից կատարված ախտորոշումների արդյունքում արձանագրված ընթացիկ՝ ենթաօրենսդրական ակտերի կարգավորման դաշտում գտնվող խնդիրների կարգավորում.

● գնումների համակարգում ախտորոշված համակարգային բնույթ կրող խնդիրների կարգավորում, որոնք հիմնականում վերաբերում են գնման առարկաների բնութագրերի հնարավորինս նորմավորմանը և միասնականացմանը, գնումների պլանավորման միասնական համակարգի ներդրմանը, խտրական բնույթ կրող պահանջների բացառմանը, գնման ընթացակարգերի կազմակերպման ժամկետների կրճատմանը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումները ազգային ընթացակարգերով իրականացմանը, Էլեկտրոնային համակարգի նոր ծրագրային ապահովման մշակմանը և այն օգտագործող պատվիրատուների շրջանակի ընդլայնմանը:

Միաժամանակ համակարգի վերաբերյալ օբյեկտիվ և մասնագիտական գնահատականներ ունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատանքներ են տարվում գնումների բնագավառում գործունեություն ծավալով միջազգային փորձագիտական կազմակերպությունների կողմից համակարգի գնահատման միջոցով առաջարկներ ստանալու ուղղությամբ, որով ներկայացված առաջարկությունները ևս քննարկման առարկա կդառնան ապագայում նախատեսվող օրենսդրական փոփոխությունները նախագծելիս:

Կառավարության պարտք

2018 թվականի ընթացքում կառավարության պարտքի կառավարումն իրականացվել է «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ կառավարության պարտքի կառավարման նպատակներին համապատասխան: 2018 թվականի ընթացքում իրականացված

գործառնությունների արդյունքում ապահովվել են ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները.

- կառավարության պարտքի մինչև մարումը միջին ժամկետը կազմել է 8.7 տարի՝ սահմանված ուղենշային 8-11 տարի միջակայքի դեպքում,
- առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական պարտատոմսերի կշիռը պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալի մեջ կազմել է 12.9%՝ սահմանված առավելագույնը 20% ցուցանիշի դիմաց,
- ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կազմել է 85%՝ սահմանված նվազագույնը 80% ցուցանիշի դիմաց,
- ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կազմել է 21.8%՝ սահմանված նվազագույնը 20% ցուցանիշի դիմաց:

Հաշվապահություն և աուդիտ

ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրամանով հաստատված՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցին համապատասխան՝ թվով 21 հանրային հատվածի կազմակերպությունների, քաղաքային և գյուղական համայնքների, նրանց ենթակա ՊՈԱԿ-ների և ՀՈԱԿ-ների համար ուժի մեջ է մտել հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հանրային հատվածի նոր համակարգին 2018 թվականի հունվարի 1-ից անցում կատարելու պահանջը: Միաժամանակ իրականացվել են 2016-2017 թվականներին նոր համակարգին անցում կատարած կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվապահական հաշվառման գրանցամատյանների և ֆինանսական հաշվետվությունների փաթեթների մշտադիտարկման աշխատանքներ: Եռամսյակային պարբերականությամբ հանրային հատվածի կազմակերպություններին տրամադրվել է «Մասնագիտական տեղեկատու» պարբերականը, որում ներառվել է իրականացված մշտադիտարկման արդյունքում վեր հանված առանձին անճշտությունների և սխալների, դրանց ուղղման ուղղությամբ գործնական առաջարկների վերաբերյալ տեղեկատվություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում բարեփոխումների իրականացման գործընթաց: Իրականացվող բարեփոխումների շրջանակում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել են «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և

հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ մասնագիտացված կառույցներ - հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: Նախատեսվում է ճշգրտել նաև պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը՝ ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն:

ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից՝ 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1009-Ա որոշմամբ, և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

2018 թվականին տեղի ունեցան աննախադեպ քաղաքական փոփոխություններ, որոնք կարող էին հանգեցնել տնտեսական աճի էական դանդաղման և մակրոտնտեսական անկայունության, ինչը հատուկ է նմանատիպ իրադարձություններին: Սակայն առաջացած ռիսկերը հնարավոր եղավ հաղթահարել և խելամիտ մակրոտնտեսական քաղաքականության արդյունքում ապահովել մակրոտնտեսական կայունություն և գրանցել 5.2% տնտեսական աճ, որը, չնայած դանդաղել է նախորդ տարվա համեմատ, սակայն տարածաշրջանում ամենաբարձրերից է եղել:

2018 թվականին գրանցված տնտեսական աճը պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների ճյուղի բարձր աճով և ուղեկցվել ներքին պահանջարկի աճով: Ընդ որում, տնտեսության կառուցվածքում էական փոփոխություններ չեն գրանցվել, և աճը շարունակել է պայմանավորվել հիմնականում ոչ արտահանելի (մասնավորապես՝ մշակույթ զվարճություններ և հանգիստ, առևտուր և ֆինանսական ու ապահովագրական գործունեություն) ճյուղերի աճով: Սակայն, մյուս կողմից, որոշակի դրական տեղաշարժեր են գրանցվել տնտեսության արտահանելի հատվածում, և արդյունաբերության ճյուղի աճի հիմնական մասն ապահովվել է մշակող արդյունաբերության հաշվին:

Տարվա ընթացքում և՛ արտահանումը, և՛ ներմուծումը շարունակել են աճել, որի պայմաններում արտաքին ապրանքաշրջանառության ընդլայնումը շարունակվել է, իսկ առևտրային հաշվեկշիռը ցուցաբերել է վատթարացման միտում, ինչի արդյունքում ընթացիկ հաշվի բացասական մնացորդը խորացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 9.1%-ը:

2018 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 1.8%, իսկ միջին գնաճը՝ 2.5%: Տնտեսական զարգացումներից ելնելով՝ ՀՀ ԿԲ-ը չի փոփոխել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (6%) և պահպանել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությունը: Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել, իսկ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2018 թվականին շարունակել են աճել:

2018 թվականին տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղությունը պահպանվել է: Արդյունքում պետական բյուջեի պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 1.8%-ը: Նվազել է նաև ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 51.4%:

Համախառն առաջարկ

2018 թվականին տնտեսության զարգացումն ընթացել է նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով: Գրանցվել է իրական ՀՆԱ-ի 5.2% աճ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից 2.3 տոկոսային կետով ցածր է: Ընդ որում՝ ՀՆԱ-ի աճին դրական են նպաստել առևտրի և ծառայությունների (4.7 տոկոսային կետ), արդյունաբերության (0.7 տոկոսային կետ) և շինարարության (0.1 տոկոսային կետ) ճյուղերը՝ աճելով համապատասխանաբար 9.6%-ով, 4.1%-ով և 1.6%-ով, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն (1.3 տոկոսային կետ)՝ նվազելով 8.5%-ով:

Գծապատկեր 1. 2017-2018 թվականներին ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ



2018 թվականին արդյունաբերությունն[2] աճել է 4.3%-ով՝ պայմանավորված և՛ արտաքին, և՛ ներքին պահանջարկի աճով: Արդյունաբերության աճին հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերությունը՝ 6.3 տոկոսային կետով (աճը՝ 10.0%), իսկ հանքագործական արդյունաբերությունը 2.9 տոկոսային կետով բացասական է ազդել (նվազումը՝ 14.0%)՝ պայմանավորված մետաղական հանքաքարի արդյունահանման 15.8% նվազմամբ:

[2] Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

Մշակող արդյունաբերության աճին էական դրական նպաստում են ունեցել սննդամթերքի արտադրությունը՝ 3.0 տոկոսային կետով (աճը՝ 10.3%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 1.7 տոկոսային կետով (աճը՝ 39.5%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 1.3 տոկոսային կետով (աճը՝ 8.4%):

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը 0.9 տոկոսային կետով դրական է նպաստել արդյունաբերությանը (աճը՝ 5.7%):

2018 թվականին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ նվազել է 7.3%-ով: Գյուղատնտեսության նվազմանը հիմնականում նպաստել է բուսաբուծությունը՝ 6.1 տոկոսային կետով (նվազումը՝ 12.1%): Բուսաբուծության նվազումը պայմանավորված է եղել բոստանի շուրջ 41.2%, բանջարեղենի 27.0% և կարտոֆիլի բերքի շուրջ 24.2%, ինչպես նաև խաղողի համախառն բերքի 14.4% և պտուղ, հատապտուղների 5.0% նվազմամբ: Միևնույն ժամանակ, հացահատիկի համախառն բերքն աճել է 11.6%-ով:

Անասնաբուծությունը նույնպես նպաստել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազմանը՝ 1.3 տոկոսային կետով (նվազումը՝ 2.7%): Անասնաբուծության նվազումը պայմանավորված է եղել մսի և կաթի արտադրության համապատասխանաբար 1.1% և 8.0% նվազմամբ: Միևնույն ժամանակ, ձվի արտադրությունը դրական է նպաստել՝ աճելով 6.4%-ով:

Տնտեսությունում իրականացված շինարարության աճի տեմպերը նախորդ տարվա համեմատ արագացել են: 2018 թվականի տարեսկզբին ճյուղում արձանագրված երկնիշ աճի տեմպերը նվազեցին, և տարեկան տվյալներով նախորդ տարվա նկատմամբ շինարարությունն իրական արտահայտությամբ աճեց 4.5%-ով: Շինարարության ծավալների աճին 2.6 տոկոսային կետով նպաստել է պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարությունը (աճը՝ 9.8%)[3], այդ թվում՝ միջազգային վարկային միջոցներով ֆինանսավորվող շինարարությունը՝ 2.5 տոկոսային կետով (աճը՝ 14.1%): Շինարարությանը 1.3 տոկոսային կետով նպաստել է նաև բնակչության միջոցներով իրականացված շինարարությունը (աճը՝ 5.4%):

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարությանը նպաստել են էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ենթաճյուղը՝ 4.0 տոկոսային կետով (աճը՝ 32.0%), տրանսպորտը՝ 3.5 տոկոսային կետով (աճը՝ 27.2%), մեծածախ և մանրածախ

[3] Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը գերազանցում է պետական բյուջեից կատարված կապիտալ ծախսերի աճը: Այս տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային վարկերի միջոցով իրականացվող շինարարության որոշ մասի ամբողջական ֆինանսավորումը տեղի է ունենում շինարարական աշխատանքների ավարտից հետո:

առևտուր ենթաճյուղը՝ 2.8 տոկոսային կետով (աճը՝ 150.0%) և կրթության ենթաճյուղը՝ 1.9 տոկոսային կետով (աճը՝ 49.1%): Շինարարության աճի վրա հիմնականում բացասաբար են ազդել հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղը՝ 5.7 տոկոսային կետով (նվազումը՝ 74.2%), գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն ենթաճյուղը՝ 2.4 տոկոսային կետով (նվազումը՝ 31.0%), ինչպես նաև մշակույթ, զվարճություններ և հանգիստ ոլորտում իրականացված շինարարությունը՝ 1.0 տոկոսային կետով (նվազումը՝ 24.6%):

Ծառայությունների և առևտրի ճյուղերում արձանագրվել է բարձր աճ: 2018 թվականին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 18.8%-ով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը՝ 7.2 տոկոսային կետով (աճը՝ 36.6%), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 4.1 տոկոսային կետով (աճը՝ 19.6%), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 2.5 տոկոսային կետով (աճը՝ 32.0%):

2018 թվականին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա համեմատ աճել է 8.7%-ով: Առևտրի աճին հիմնականում նպաստել է մեծածախ առևտուրը՝ 7.3 տոկոսային կետով (աճը՝ 16.4%): Մանրածախ առևտրը և ավտոմեքենաների առևտուրը ևս դրական են ազդել առևտրի շրջանառության վրա՝ նպաստելով 0.7 տոկոսային կետով (աճերը՝ հապատասխանաբար 1.3% և 16.7%):

Առևտրի և ծառայությունների աճի հիմնական գործոններն են եղել վարկավորման ծավալների բարձր աճը, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամուտների աճը:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը՝ աճել, իսկ ուղևորափոխադրումների ծավալը նվազել է: 2017 թվականի համեմատ արձանագրվել է բեռնափոխադրումների ծավալի 3.7% աճ, ինչին 2.9 տոկոսային կետով նպաստել են ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումները (աճը՝ 3.5%), որն էլ իր հերթին պայմանավորված է եղել ներկրման և ներհանրապետական բեռնափոխադրումների համապատասխանաբար 23.0% և 1.8% աճերով (նպաստումները՝ 1.7 և 1.3 տոկոսային կետեր): Երկաթուղային բեռնափոխադրումների ծավալն աճել է 9.1%-ով՝ 0.9 տոկոսային կետով նպաստելով բեռնափոխադրումների աճին:

Ուղևորափոխադրումների ծավալը նվազել է 7.0%-ով՝ պայմանավորված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով իրականացված ուղևորափոխադրումների 9.5% նվազմամբ (նպաստումը՝ 8.3 տոկոսային կետ): Ուղևորափոխադրումների ծավալի նվազմանը 1.1 տոկոսային կետով հակազդել են էլեկտրական տրանսպորտով ուղևորափոխադրումները (աճը՝ 10.5%):

Կապի ծառայությունները դրսևորել են աճի միտում: 2018 թվականին կապի ծառայություններից ստացված հասույթի 1.0% աճին հիմնականում նպաստել են հեռահաղորդակցման ծառայությունները՝ 0.7 տոկոսային կետով (աճը՝ 0.8%), ինչին 4.2 տոկոսային կետով նպաստել է ինտերնետ ծառայությունների հասանելիությունը (աճը՝ 12.6%): Նույն ժամանակահատվածում հեռահաղորդակցության աճին 3.3 տոկոսային կետով հակազդել է բջջային հեռահաղորդակցությունը (նվազումը՝ 7.3%):

Աշխատանքի շուկա

2018 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է գործազրկության մակարդակի նվազմամբ և միջին ամսական աշխատավարձի աճով:

Գործազրկության մակարդակը 2018 թվականին կազմել է 16.3%՝ 1.5 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նկատմամբ: Զբաղվածների թվաքանակն աճել է 6.1%-ով՝ կազմելով 1073.8 հազար մարդ, նախորդ տարվա 1011.7 հազար մարդու դիմաց, իսկ գործազուրկների թվաքանակը՝ կրճատվել 4.8%-ով՝ կազմելով 208.4 հազար մարդ, նախորդ տարվա 219 հազարի դիմաց[4]:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից նոր մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակը 2018 թվականին կազմել է 20.4%՝ 0.4 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նկատմամբ[5]: Նոր մեթոդաբանությամբ հաշվարկված զբաղվածների թվաքանակը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.4%-ով՝ կազմելով 915.5 հազար մարդ, իսկ գործազուրկների թիվը կրճատվել է 1.1%-ով՝ կազմելով 234.0 հազար մարդ:

2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.0%-ով՝ կազմելով 172,727 ՀՀ դրամ, իսկ իրական աշխատավարձն աճել է 1.5%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 2.9%-ով՝ կազմելով 149,188 ՀՀ դրամ, իսկ մասնավոր հատվածում աճել է 3.7%-ով՝ կազմելով 186,254 ՀՀ դրամ[6]:

[4] Տվյալների աղբյուրը ՀՀ ԱՎԾ-ի կողմից կատարվող աշխատուժի հետազոտությունն է:

[5] Նոր մեթոդաբանությամբ զբաղվածությունը համարվում է աշխատանքի հինգ ձևերից միակը, որն իրականացվում է այլոց համար՝ վարձատրության կամ եկամտի դիմաց: Նախկին սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթվա ընթացքում իրենց տնտեսությունում զբաղվել են ապրանքների արտադրությամբ՝ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ: (Նոր մեթոդաբանությունն առավել մանրամասն տե՛ս ՀՀ ԱՎԾ կայք-էջում http://armstat.am/file/article/sv_06_18a_141.pdf):

[6] Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալներով:

Համախառն պահանջարկ

2018 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի աճով:

Վերջնական սպառման աճը պայմանավորված է եղել հիմնականում մասնավոր սպառման աճով: Սպառումն իրական արտահայտությամբ աճել է 3.4%-ով՝ 2017 թվականի համեմատ դանդաղելով 6.6 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի աճի տեմպի դանդաղմամբ (հիմնականում պայմանավորված տրանսֆերտների նվազմամբ): Մասնավոր սպառումն աճել է 5.3%-ով (նպաստումը տնտեսական աճին՝ 4.1 տոկոսային կետ): Միևնույն ժամանակ պետական սպառումը նվազել է 6.4%-ով (տնտեսական աճին բացասական նպաստումը՝ 0.9 տոկոսային կետ)՝ պայմանավորված զսպող հարկաբյուջետային քաղաքականությամբ:

Կապիտալ ներդրումների աճը պայմանավորված է եղել մասնավոր ներդրումների բարձր աճով: 2018 թվականին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 5.0%-ով[7]:

Ներդրումներին դրական են նպաստել ծառայությունների ու արդյունաբերության ճյուղերի որոշ ենթաճյուղերում (մասնավորապես՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, տրանսպորտի, մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, մշակող արդյունաբերության և անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտներում) կատարված ներդրումների աճը[8]:

Զուտ արտահանումը նախորդ տարվա համեմատ վատթարացել է՝ պայմանավորված հիմնականում արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով: 2018 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 5.2%-ով՝ նախորդ տարվա համեմատ դանդաղելով 13.5 տոկոսային կետով (նպաստումը տնտեսական աճին՝ 1.9 տոկոսային կետ): Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ դանդաղել են 13.7 տոկոսային կետով՝ կազմելով 10.9% (նպաստումը տնտեսական աճին՝ 5.4 տոկոսային կետ): Ներմուծման նշված աճը պայմանավորված է եղել տնտեսական ակտիվությամբ և ներքին պահանջարկով:

[7] Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները: Պետք է նշել, որ 2018 թվականին ներդրումների բարձր՝ 28.5 տոկոս աճ է գրանցվել, որի մեծ մասը պայմանավորված է պաշարների փոփոխությամբ: Իսկ հիմնական միջոցներում ներդրումներն աճել են 5.0 տոկոսով և համահունչ են շինարարության զարգացումներին:

[8] Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տե՛ս Շինարարություն հատվածում:

Գներ և սակագներ

2018 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 1.8% (միջին գնաճը՝ 2.5%), ինչ պայմանավորվել է նախորդ տարվա համեմատ ներքին պահանջարկի որոշակի թուլացմամբ և արտաքին հատվածից փոխանցվող որոշ ապրանքների ցածր գնաճով:

Գծապատկեր 2. 2017-2018 թվականներին 12-ամսյա գնաճի նպաստումները 4 խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ





ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 1.8% 12-ամսյա գնաճին առավելապես նպաստել է սննդամթերքի (ներառյալ՝ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) և ոչ պարենային ապրանքների գների աճը: 12-ամսյա գնաճը պայմանավորվել է սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ՝ ալկոհոլային խմիչք և ծխախոտ) ապրանքախմբում արձանագրված 1.8% գնաճով (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ) և ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 3.2% գնաճով (նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների 0.8% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ): Սննդամթերքի ապրանքախմբում գնաճին նշանակալից դրական են նպաստել մսամթերքի, մրգի, ծխախոտի, յուղերի և ճարպերի գների աճը, իսկ որոշ գյուղմթերքների գները (բանջարեղենի, ձվի, պանրի, կաթնաշոռի) ունեցել են բացասական ազդեցություն:

Տարվա ընթացքում, տնտեսական զարգացումներից ելնելով, ՀՀ ԿԲ-ը չի փոփոխել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (6%) և պահպանել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությունը:

Արտաքին հատված

2018 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ կտրուկ խորացել է՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 9.1% և շեղվելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից[9]: Ընթացիկ հաշվի խորացումը պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև սկզբնական և երկրորդային եկամուտների նվազմամբ:

Դոլարային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 15.4%-ը՝ նախորդ տարվա համեմատ վատթարանալով 3.2 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է եղել արտահանման համեմատ ներմուծման առաջանցիկ աճով (համապատասխանաբար 8.4% և 15.3%): Տնտեսություն ներհոսող դրամական փոխանցումները 2018 թվականին նվազել են 0.9%-ով և կազմել 1118.5 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված ռուսական ռուբլու արժեզրկմամբ: Ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը նպաստել են նաև զուտ ներդրումային եկամուտները: Նշված զարգացումների արդյունքում 2018 թվականին նախորդ տարվա համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է ՀՆԱ-ի 6.7 տոկոսային կետի չափով:

[9] ՀՀ ՖՆ գնահատականներով այդ երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակը կազմում է 3-4%:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան,
% ՀՆԱ-ի նկատմամբ



Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է 37.6%՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը 0.3 տոկոսային կետով: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինն ավելացել է 3.5 տոկոսային կետով և կազմել է ՀՆԱ-ի 53%-ը: Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը տարվա արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 9%-ը՝ նախորդ տարվա 9.8%-ի դիմաց:

Ներմուծման և արտահանման աճով պայմանավորված՝ 2018 թվականի ընթացքում ընդլայնվել է արտաքին առևտրաշրջանառությունը, իսկ առևտրային հաշվեկշիռը ցուցաբերել է վատթարացման միտում, որը պայմանավորվել է ապրանքների ներմուծման առաջանցիկ աճով[10]: Դոլարային արտահայտությամբ ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդը (2551.3 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 37.2%-ով:

[10]Այսուհետ ներկայացված է արտաքին առևտրի վիճակագրությունն ըստ բեռնամաքսային հայտարարագրերի (ներմուծում՝ ՍԻՖ գներով):

Գծապատկեր 4. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը (7375.2 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա համեմատ աճել է 16.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 7.8%- ով՝ կազմելով 2411.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 21.1%-ով՝ կազմելով 4963.2 մլն ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածում ներմուծման աճ է արձանագրվել գրեթե բոլոր ապրանքախմբերով՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ, ներքին պահանջարկով, ինչպես նաև պաշարների կուտակմամբ[11]: Ներմուծման 21.1% աճի 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է ներդրումային բնույթի՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբով: Ներմուծման աճին նշանակալիորեն նպաստել են նաև «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.8 և 1.8 տոկոսային կետերով):

[11] Տնտեսական ակտիվության աճն ամբողջությամբ չի բացատրում ներմուծման զարգացումները և, հաշվի առնելով այն, որ ներմուծման մեջ մեծ է միջանկյալ սպառման ապրանքների դերը, ներմուծման մի մասն, ըստ էության, կարող է կապվել պահանջարկի հատվածում նկատվող պաշարների կուտակման երևույթի հետ (պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 7-րդ հղման մեջ):

Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[12] տարվա ընթացքում ներմուծման աճին ամենամեծ նպաստումն են ունեցել «Միջանկյալ սպառման ապրանքները» (8.9 տոկոսային կետով, այդ թվում՝ արդյունաբերական մատակարարումները՝ 7.7 տոկոսային կետով) և «Կապիտալ ապրանքները» (6.9 տոկոսային կետով):

2018 թվականի արտահանման 7.8% աճը հիմնականում պայմանավորվել է արտաքին պահանջարկի աճով: Արտահանման աճին ամենամեծ դրական նպաստումն է ունեցել «Մանածագործական իրեր» ապրանքախումբը՝ 4 տոկոսային կետով: Աճին դրական են նպաստել նաև «Բուսական ծագման արտադրանք», «Պատրաստի սննդի արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 1.4, 1.3 և 1.2 տոկոսային կետերով):

Արտահանման աճը հիմնականում զսպել է «Հանքահումքային արտադրանք» (1.4 տոկոսային կետ) ապրանքախումբը:

Ներմուծման ծածկման գործակիցը: Հիմնականում պայմանավորված ներմուծման

առաջանցիկ աճով՝ ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է

2018 թվականի արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման շուրջ 71%-ը:

Գծապատկեր 5. Ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով

[12] Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) 2018 թվականի պաշտոնական տվյալները կհրապարակվեն ընթացիկ տարվա վերջին, ուստի այս հատվածում ներկայացված են ՀՀ ՖՆ գնահատականները (կիրառվել են արտաքին առևտրի 4-անիշ վիճակագրությունից BEC-ին անցման միջազգային փորձում ընդունված անցումային բանալիներ):



2018 թվականին ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: 2018 թվականի արտաքին առևտրաշրջանառության 30%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 27%-ը՝ ԵԱՏՄ), 24.8%-ը՝ ԵՄ և 45.2%-ը՝ այլ երկրներին: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 16.8% աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել այլ երկրները՝ 7.6 տոկոսային կետով (հիմնականում՝ Չինաստանից ներմուծման 39% աճի հաշվին):

2018 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 26.1%, նախորդ տարվա 27.3%-ի դիմաց) և Ուկրաինան (համապատասխանաբար՝ 2.3% և 2%), իսկ ԵՄ և այլ երկրներից՝ Չինաստանը (առևտրաշրջանառության 10.5%, նախորդ տարվա 9.4%-ի դիմաց), Շվեյցարիան (6.3% և 5.6%), Գերմանիան (5.8% և 5.3%), Իրանը (4.9% և 4.1%), Բուլղարիան (3.5% և 5.1%), Թուրքիան (3.5% և 3.5%), Իտալիան (3.2% և 3.2%) և ԱՄՆ-ն (3.1% և 3.2%): Հանրապետության թվով 40 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (շուրջ 83%-ով) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Երկկողմանի փոխարժեք: ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ դրսևորել է կայուն վարքագիծ: 2018 թվականի ընթացքում միջին փոխարժեքը կազմել է 483.0 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի (482.72) նկատմամբ արժեզրկվելով 0.06%-ով:

Տարեսկզբից նկատվել է եվրոյի դիմաց ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման տեմպի դանդաղման միտում. նախորդ տարվա համեմատությամբ միջին արժեքով ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ արժեզրկվել է՝ 4.5%-ով:

ՌԴ ռուբլու նկատմամբ 2018 թվականի տարեսկզբին ՀՀ դրամը դրսևորել է արժեզրկման տեմպի դանդաղման միտում, իսկ ապրիլ ամսից սկսել է արժևորվել: 2018 թվականին ՀՀ դրամի

միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժևորվել է 7.1%-ով (2017 թվականին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել էր 13.2%-ով):

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա

2018 թվականին փողի բազան հիմնականում աճել է՝ պայմանավորված զուտ ներքին ակտիվների աճով: 2018 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 1’216 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ աճով 17.8%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 0.6%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 70.9%-ով[13]:

Փողի բազայի աճին հիմնականում նպաստել են ՀՀ ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվների աճը: Այսպես, փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 9.8%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 4.9 տոկոսային կետ), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով աճել են համապատասխանաբար 12.9%-ով և 38.3%-ով (նպաստումը փողի բազայի փոփոխությանը կազմել է համապատասխանաբար 3.9 և 6.6 տոկոսային կետ):

2018 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 2’775.1 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 7.4%-ով, նախորդ տարվա 18.5%-ի համեմատ: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 233.8%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 13.4%-ով[13]:

Փողի զանգվածի աճը պայմանավորվել է հիմնականում դրամային ավանդների աճով: Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը նպաստել է 1.2 տոկոսային կետով, իսկ դրամային և արտարժույթով ավանդները՝ համապատասխանաբար 5.9 և 0.4 տոկոսային կետերով:

Գծապատկեր 6. 2018 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ

[13] Աղբյուր՝ ՀՀ ԿԲ (Զուտ արտաքին ակտիվները հաշվարկված են փաստացի փոխարժեքով):





2018 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը նվազել է: Ռեզիդենտների արտարժութային ավանդներ/ռեզիդենտների ընդհանուր ավանդներ հարաբերակցությունը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նվազել է 3 տոկոսային կետով՝ կազմելով 52.7%: Վարկավորման ընդհանուր կառուցվածքում ռեզիդենտներին տրամադրված արտարժույթով վարկերի կշիռը 2017 թվականի համեմատ նվազել է 7.3 տոկոսային կետով՝ կազմելով 53.9%:

2018 թվականին ավանդների և վարկերի ծավալները (ռեզիդենտների) շարունակել են աճել: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 6.7%-ով, որին 6.2 տոկոսային կետով նպաստել է դրամային ավանդների աճը, 0.5 տոկոսային կետով՝ արտարժութային ավանդներինը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 16.6%[14]-ով: Վարկերի աճին 14.9 տոկոսային կետով նպաստել են դրամային վարկերի և շուրջ 1.6 տոկոսային կետով՝ արտարժութային վարկերի աճերը: Վարկերի աճին դրական են նպաստել բոլոր ճյուղերը, մասնավորապես՝ ամենամեծ նպաստումն են ունեցել սպառողական վարկերը (8 տոկոսային կետ), արդյունաբերության (3.8 տոկոսային կետ), հիպոտեկային (1.9 տոկոսային կետ) և տրանսպորտի ու կապի ոլորտին տրամադրված վարկերը (1.4 տոկոսային կետ):

Գծապատկեր 7. 2017-2018 թվականներին ռեզիդենտների վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)

[14] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:





Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների սպրեդը 2018 թվականին աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 4.7 տոկոսային կետ: Ընդ որում, դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքների սպրեդը նվազել է 1.3 տոկոսային կետով՝ կազմելով 4.1, իսկ արտարժույթով սպրեդն աճել է 1 տոկոսային կետով՝ կազմելով 5.1 տոկոսային կետ:

Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել: 2018 թվականին ՀՀ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 8.7%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով: ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 12.8%՝ նվազելով 1.6 տոկոսային կետով:

Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2018 թվականին կազմել է 2.8%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.1 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը չի փոփոխվել և կազմել է 8%:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկա: ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է ՊՊ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերության նվազում, որը պայմանավորված էր ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազման ընդհանուր միտումներով: Այսպես, եթե 2017 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել էր 9.9%, ապա 2018 թվականի նույն ժամանակահատվածում այն

կազմել է 8.8%: Արդյունքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է շուրջ 1.1 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 154.0 մլրդ դրամ՝ 2017 թվականի 180.3 մլրդ դրամի դիմաց, իսկ տեղաբաշխման միջին կշռված ժամկետայնությունը՝ 4145 օր, 2017 թվականի նույն ժամանակահատվածի 3478-ի համեմատ:

2018 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.68 անգամ (2017 թվականին՝ 2.23 անգամ), իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.96 (2017 թվականին՝ 0.97):

ՀՀ եվրապարտատոմսերի երկրորդային շուկայում և՛ 2013 թվականին, և՛ 2015 թվականին թողարկված արժեթղթերի եկամտաբերություններն աճի միտում են դրսևորել: Միջազգային կապիտալի շուկայում 2013 թվականին 6.25% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2018 թվականին միջինում կազմել է 4.69%՝ 2017 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 4.19%-ի դիմաց: 2015 թվականին 7.5% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2018 թվականին միջինում կազմել է 5.73%՝ 2017 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 5.56%-ի դիմաց:

Հարկաբյուջետային հատված

2018 թվականի ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պահպանվել է. տնտեսության վերականգման պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.4%-ը՝ նախորդ տարվա 22.2%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ՀՆԱ-ի 21%-ը[15] նախորդ տարվա 20.8%-ի դիմաց: 2017 և 2018 թվականների համադրելի[16] ցուցանիշների

[15] Նշենք, որ 2019 թվականի համար պետական բյուջեում պլանավորվել է 20.7% հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշ, և 2018 թվականի փաստացի արդյունքների համեմատ այդ ցուցանիշն ավելի ցածր է, սակայն 0.4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան 2019 թվականի պետական բյուջեով 2018 թվականին սպասվող 20.3% ցուցանիշը: Սա պայմանավորված է նրանով, որ 2019 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսման համար հիմք է հանդիսացել 2018 թվականի ՀՆԱ-ի գնահատականը, որով անվանական ՀՆԱ-ն գնահատվում էր ավելի բարձր, քան փաստացի արձանագրվեց: Եվ եթե հաշվի առնենք 2018 թվականի փաստացի ՀՆԱ-ն, ապա, եթե չփոխենք տնտեսական աճի կանխատեսումները, 2019 թվականի պետական բյուջեով հաստատված հարկային եկամուտները ՀՆԱ-ում պետք է նույն չափով բարելավվեն:

համեմատության դեպքում պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն ՀՆԱ-ի 23.2%-ը՝ նախորդ տարվա 21.9%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ՀՆԱ-ի համապատասխանաբար 21.8%-ը և 20.5%-ը: Արդյունքում հարկային եկամուտները և պետական տուրքերը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել են 1.3 տոկոսային կետով: 2018 թվականի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1341.7 մլրդ դրամ, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ 1258.1 մլրդ դրամ: Նշենք, որ ըստ առանձին հարկատեսակների պետական բյուջեի մուտքերը համադրելի չեն նախորդ տարվա մուտքերի հետ, ուստի դրանց համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների նկատմամբ չի ներկայացվում[17]: Հատկանշական է, որ հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի ցուցանիշը գերազանցել է «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված ցուցանիշը (շուրջ 108.8 մլն դրամով[18]):

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2.9 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.1 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կշիռը՝ 1.7 տոկոսային կետով: 2018 թվականին պետական բյուջեի ընդամենը ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.1%-ը, որից ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 2.5%-ը: Նշենք որ նախորդ տարվա 4.3%-ի կշռի մեջ ՀՆԱ-ի 1.6%-ը «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի գումարն է:

2018 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,447.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 3.8%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են շուրջ 1,299 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.5%-ով[19]: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 148.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 37.6%-ով, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են շուրջ 152 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն

[16] 2017 և 2018 թվականների պետական բյուջեի եկամուտների համեմատությունը ներկայացվում է համադրելի ցուցանիշների միջև, մասնավորապես՝ 2017 թվականի եկամուտները նվազեցվել են ԱԱՀ-ի վերադարձված գումարների (16.6 մլրդ դրամի) չափով, որն իրականացվել էր ծախսերի միջոցով, իսկ 2018 թվականի եկամուտներն ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքի (48.1 մլրդ դրամի) չափով:

[17] Առավել մանրամասն տե՛ս «Պետական բյուջեի եկամուտներ» բաժնում:

[18] Համադրելիության նպատակով հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի ցուցանիշից հանված են ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, դրոշմանիշային վճարների գումարները, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումների արդյունքում ձևավորված եկամուտները:

[19] Պետք է նկատի ունենալ, որ 2017 թվականի ծախսերի մեջ ներառված է եղել ԱԱՀ վերադարձի 16.6 մլրդ դրամ գումարը, իսկ 2018 թվականի վերադարձն ամբողջությամբ տեղի է ունենում հարկային եկամուտներից: Սա հաշվի առնելով՝ 2018 թվականին ընդամենը ծախսերի նվազումը կկազմի շուրջ 2.8%, իսկ ընթացիկ ծախսերի աճը՝ 3.9%:

ժամանակահատվածի համեմատ նվազելով 36.2%-ով, իսկ առանց նախորդ տարվա «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի՝ այդ ծախսերի աճը կազմում է 0.1%[20]:

Արդյունքում, զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում պետական բյուջեի պակասուրդը նվազել է: 2018 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է 105.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված 267 մլրդ դրամի համեմատ: 2018 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 1.8%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.0 տոկոսային կետով, իսկ առանց 2017 թվականին «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազել է 1.4 տոկոսային կետով: Պակասուրդի՝ նախորդ տարվա հետ համադրելի ցուցանիշն առանց վերոհիշյալ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի՝ պակասուրդի մեծությունը 2017 թվականին կազմել էր 180.5 մլրդ դրամ, իսկ պակասուրդ / ՀՆԱ ցուցանիշը՝ 3.2%, որոնց նկատմամբ 2018 թվականի համադրելի ցուցանիշը (ներառյալ՝ հարկերի միասնական հաշվի մնացորդը), որը կազմել է 57.3 մլրդ դրամ, նվազել է համապատասխանաբար 68.3%-ով և 2.2 տոկոսային կետով:

Պակասուրդի ֆինանսավորման 34.2%-ը կատարվել է արտաքին աղբյուրների միջոցների ներգրավմամբ, որով պայմանավորված՝ 2018 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 40.2%՝ նախորդ տարվա 42.5%-ի համեմատ նվազելով 2.3 տոկոսային կետով: Արդյունքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 51.4%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.3 տոկոսային կետով:

Հարկաբյուջետային ազդակը: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2018 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 2.3 զսպող ազդեցություն՝ պայմանավորված ծախսերի և եկամուտների[21] համապատասխանաբար 1 և 1.3 զսպող ազդեցություններով:

[20] Կապիտալ ծախսերը համահունչ չեն կատարված շինարարությանը, տե՛ս իրական հատվածի 6-րդ հղումը:
[21] Եկամտային ազդակի հաշվարկներում ՀՀ պետական բյուջեի եկամուտներին ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքերը, որոնք համարվում են հարկ վճարողների կողմից փաստացի վճարված գումարներ (առավել մանրամասն տե՛ս «Պետական բյուջեի եկամուտներ» բաժնում):

Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2012 թվականից



ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջեի մասին օրենքով, ելնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող զարգացումներից, ինչպես նաև օրենսդրության փոփոխություններից և վարչարարական միջոցառումներից ակնկալվող մուտքերից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1,308.3 մլրդ դրամ եկամուտներ, որից 1,272.5 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 35.8 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով:

Հարկ է նշել, որ բյուջեի տարեկան ծրագրի համար հիմք է հանդիսացել նախորդ տարիների վիճակագրությունը, որը ձևավորվել էր այլ հարկային ռեժիմի պայմաններում: 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ հարկային օրենսգիրքը, որի համաձայն հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման նպատակով կիրառվում է հարկերի միասնական հաշիվ: Քանի որ պետական բյուջեի հաշվառումն իրականացվում է դրամարկղային սկզբունքով, նախորդ տարիներին պետական բյուջեի մուտքեր (եկամուտներ) էին համարվում առանձին հարկատեսակների գծով եկամուտները հաշվառող գանձապետական հաշիվներին հարկ վճարողների կողմից կատարված վճարումները, իսկ նշյալ համակարգի ներդրման արդյունքում՝ 2018 թվականից պետական բյուջեի եկամուտներ են համարվում հարկային հաշվետվություններով հիմնավորված հարկային պարտավորությունների չափով հարկերի միասնական հաշվից եկամտատեսակների գանձապետական ենթահաշիվներին ուղղորդվող գումարները: Նշենք, որ հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը 2018 թվականին կազմել է 48.1 մլրդ դրամ[22], որը, թեպետ, իր բնույթով կարող է համադրելի համարվել նախկինում վճարվող կանխավճարների (գերավճարների) հետ, սակայն ի տարբերություն նախորդ տարիների, վերոնշյալ փոփոխությամբ պայմանավորված՝ չի հաշվառվել որպես պետական բյուջեի եկամուտ, ինչը 2018 թվականի ցուցանիշը 2017 թվականի ցուցանիշի հետ անհամադրելի դարձնող գործոններից մեկն է: Բացի այդ, հարկերի գծով առաջացած գերավճարների վերադարձը նույնպես կատարվում է մեկ միասնական հաշվով: Սա նշանակում է, որ առանձին հարկատեսակների գծով գումարների վերադարձը չի արտացոլվում տվյալ հարկատեսակների մուտքերում, ինչպես կատարվում էր նախկինում: Ուստի առանձին հարկատեսակների մուտքերը նույնպես համադրելի չեն նախորդ տարվա մուտքերի հետ: Հարկ է նշել նաև, որ տնտեսավարողների հարկային հաշվետվություններով 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կանխավճարների (գերավճարների) հաշվին տարեկան հարկային

[22] 2018 թվականի ընթացքում միասնական հաշվին կատարված վճարումների հանրագումարը 48.1 մլրդ դրամով գերազանցել է հարկային հաշվարկների հիման վրա միասնական հաշվից կատարված մարումների հանրագումարը, և, որպես հետևանք, տարեվերջին միասնական հաշիվն այդ գումարի չափով ունեցել է մնացորդ:

պարտավորությունների հետ հաշվանցման գումարը կազմել է 55.3 մլրդ դրամ[23] կամ պետական բյուջե մուտքագրված հարկերի և տուրքերի 4.4%-ը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ պետական բյուջեի եկամուտների՝ սկզբնական տարեկան ծրագրի հետ համադրելի փաստացի ցուցանիշը կկազմի ավելի քան 1,344.8 մլրդ դրամ (որից 48.1 մլրդ դրամը հարկերի միասնական հաշվի զուտ մուտքն է) կամ 102.8%: Հարկ է նկատել, որ հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը հաշվի առած՝ Օրենքով միայն ներքին ռեսուրսների հաշվին ծրագրված (առանց արտաքին աղբյուրներից ծրագրված դրամաշնորհային միջոցների) եկամուտների համադրելի կատարողականը կազմում է 104.8%:

Օրենսդրության պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը (40.9 մլրդ դրամ), դրոշմանիշային վճարների գումարները (7.1 մլրդ դրամ), ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումների արդյունքում ձևավորված եկամուտները (0.2 մլրդ դրամ): Բացի այդ, կառավարությունը, ի լրումն օրենքի պահանջով եկամուտների ցուցանիշների վերոնշյալ փոփոխության, իր լիազորությունների շրջանակում ևս 8.9 մլրդ դրամով վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը: Արդյունքում, կառավարության լիազորությունների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ընդհանուր առմամբ ավելացվել է 57 մլրդ դրամով (4.4%-ով)՝ կազմելով 1,365.3 մլրդ դրամ: Նշված գումարից 1,326.8 մլրդ դրամը կազմել է ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, շուրջ 38.6 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը: Պետական բյուջեի եկամուտների՝ կառավարության կողմից ճշտված ծրագրի կատարողականը կազմել է 98.3%՝ 1,341.7 մլրդ դրամ: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 99.7%-ով՝ առանց հարկերի միասնական հաշվի մնացորդը հաշվի առնելու, իսկ վերջինս հաշվի առած՝ կատարողականի ցուցանիշը կազմել է 103.5%: Այլ եկամուտների ծրագիրը կատարվել է 111.8%-ով, պաշտոնական դրամաշնորհներինը՝ 29.1%-ով: Նշենք, որ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 37.4 մլրդ դրամ՝ 91.5%-ով ապահովելով ծրագիրը:

[23] Հարկերի անցումային գերավճարներից մարված հարկային պարտավորությունները կարող են փոփոխվել հարկ վճարողների կողմից ներկայացվող հարկային հաշվարկների ճշգրտման արդյունքում:

Գծապատկեր 9. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի եկամուտները



ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները 8.4%-ով կամ 103.9 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: 2017 և 2018 թվականների համադրելի ցուցանիշների[24] համեմատության դեպքում պետական բյուջեի եկամուտների աճը կկազմի 13.8% կամ 168.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 14.4%-ով (164.9 մլրդ դրամով) և 11%-ով (7.2 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ նվազել 23.2%-ով (3.4 մլրդ դրամով):

[24] Հաշվետվությունում 2017 և 2018 թվականների պետական բյուջեի եկամուտների համեմատությունը ներկայացվում է համադրելի ցուցանիշների միջև, մասնավորապես՝ 2017 թվականի եկամուտները նվազեցվել են ԱԱՀ-ի վերադարձված գումարների (16.6 մլրդ դրամի) չափով, որն իրականացվել էր ծախսերի միջոցով, իսկ 2018 թվականի եկամուտներն ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքի (48.1 մլրդ դրամի) չափով:

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2017=100%



Արդյունքում 2017 թվականի համեմատ 2018 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.5 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) տեսակարար կշիռը, իսկ այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.1 և 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



2018 թվականին ապահովվել է ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության ծրագրված ցուցանիշը. այն կազմել է 22.4%: Նախորդ տարվա հետ համադրելի բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 23.2%՝ շուրջ 1.3 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը (21.9%), որը պայմանավորված է ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտների առաջանցիկ անվանական աճով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել էր 1,248.5 մլրդ դրամ հարկերի ու տուրքերի ստացում: Փաստացի պետական բյուջե են մուտքագրվել 1,258.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են օրենքով հաստատված ծրագրային ցուցանիշի 100.8%-ը: Ինչպես արդեն նշվել է, եթե հաշվի առնենք նաև միասնական հաշվի 48.1 մլրդ դրամ զուտ մուտքը, որը թեև օրենքի տեսանկյունից չի համարվում պետական բյուջեի հարկային եկամուտ, սակայն փաստացի հարկ վճարողների կողմից վճարվել է հարկերի միասնական հաշվին, ինչպես նաև բացառելով պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերն ու առանց սահմանափակման իրականացվող ծախսերի արդյունքում ձևավորված եկամուտները, ապա հավաքագրված եկամուտների համադրելի ցուցանիշը կկազմի 1,296.7 մլրդ դրամ կամ սկզբնական տարեկան ծրագրի 103.9%-ը: Պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերը, առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումների արդյունքում ձևավորված եկամուտները և կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները ներառյալ՝ 2018 թվականի ճշտված ծրագիրը կազմել է 1,262.1 մլրդ դրամ, որի դիմաց ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,258.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր՝ 99.7%-ով ապահովելով ճշտված ծրագրի կատարումը և ապահովելով ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.8%-ը: Հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը ներառած՝ հարկերը և տուրքերը կկազմեն 1,306.2 մլրդ դրամ կամ 2018 թվականի ճշտված ծրագրի 103.5%-ը:

Հարկ է նշել, որ 2018 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել նաև հարկերի վերադարձված գումարների աճը: Մասնավորապես՝ 2018 թվականի ընթացքում ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձված գումարը կազմել է 79,326.5 մլն դրամ, ինչը 32.3%-ով կամ 19,376.2 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: 2018 թվականից սկսած՝ կատարվել է ԱԱՀ-ի դեբետային գումարների վերադարձ, որը կազմել է 10,820.1 մլն դրամ, հետևաբար նույն չափով էլ ազդեցություն է ունեցել նախորդ տարվա համեմատությամբ: 2018 թվականի ընթացքում Tax free հաշիվներով ԱԱՀ-ի վերադարձված գումարը կազմել է 834.9 մլն

դրամ, ինչը 25.4%-ով կամ 169.2 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: 2018 թվականի ընթացքում վերը նշված վերադարձերի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 90,981.5 մլն դրամ, ինչը 50.1%-ով կամ 30,365.5 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հատկանշական է, որ հարկերի միասնական հաշվի ներդրման և գերավճարների վերադարձի աճի պայմաններում 2017 թվականի համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով արձանագրվել է աճ՝ 8.6%-ով կամ 100.1 մլրդ դրամով, իսկ համադրելի ցուցանիշի աճը կազմում է 14.4% կամ 164.9 մլրդ դրամ:

Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ[25]:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր / ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2018 թվականին կազմել է 21%[26], իսկ հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը հաշվի առած՝ 21.8%, որը 0.5 տոկոսային կետով գերազանցում է կանխատեսված և 1.3 տոկոսային կետով՝ 2017 թվականի համապատասխան ցուցանիշը:

2018 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 34.8%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է 438.2 մլրդ դրամ: Նշված գումարից 296.6 մլրդ դրամը ստացվել է ներմուծման հարկումից, որից շուրջ 92 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքներից, 141.6 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2017 թվականի համեմատ աճ է արձանագրվել և՛ ներքին շրջանառությունից, և՛ ներմուծումից գանձված ավելացված արժեքի հարկի գծով:

Նախորդ տարվա համեմատ ԱԱՀ-ի աճը հիմնականում բացատրվում է մակրոտնտեսական միջավայրով: 2018 թվականին անվանական ՀՆԱ-ն կանխատեսվել էր 5,850.7 մլրդ դրամ, այնինչ փաստացի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի 6,002.7 մլրդ դրամ մակարդակ: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 152 մլրդ դրամ (կամ աճել է 2.6%-ով): Վերջինս, այլ հավասար պայմաններում, համարժեք է 11 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով

[25] ՊԵԿ-ի կողմից կատարված վերլուծությունների համաձայն հաշվետու տարում նախորդ տարվա համադրելի ցուցանիշների համեմատ բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ այլ հարկային եկամուտների, արձանագրվել է աճ:

[26] Նշենք, որ 2019 թվականի համար պետական բյուջեում պլանավորվել է 20.7% հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշ և 2018 թվականի փաստացի արդյունքների համեմատ այդ ցուցանիշն ավելի ցածր է, սակայն 0.4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան 2019 թվականի պետական բյուջեով 2018 թվականին սպասվող 20.3% ցուցանիշը: Սա պայմանավորված է նրանով, որ 2019 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսման համար հիմք է հանդիսացել 2018 թվականի ՀՆԱ-ի գնահատականը, որով անվանական ՀՆԱ-ն գնահատվում էր ավելի բարձր, քան փաստացի արձանագրվեց: Եվ եթե հաշվի առնենք 2018 թվականի փաստացի ՀՆԱ-ն և չփոխենք տնտեսական աճի կանխատեսումները, 2019 թվականի պետական բյուջեով հաստատված հարկային եկամուտները ՀՆԱ-ում պետք է նույն չափով բարելավվեն:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 7.23% ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունը (152*7.23%): Բացի այդ, ՀՆԱ-ի իրական աճը կանխատեսված 4.5%-ի փոխարեն փաստացի կազմել է 5.2%, իսկ ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը կանխատեսված 103.5%-ի փոխարեն՝ 102.5%:

Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել նաև ներմուծման ծավալների աճը 418.3 մլրդ դրամի չափով կամ 21.1%-ով, իսկ ՀՀ սահմանին հարկման ենթակա ապրանքների ծավալներն աճել են 30.5 մլրդ դրամով կամ 2.7%-ով, որից, այլ հավասար պայմաններում, հաշվարկվել է 6.1 մլրդ դրամ ԱԱՀ (30.5*20%):

Միաժամանակ, ԱԱՀ-ի մուտքերի վրա բացասական ազդեցություն է թողել բոլոր հարկ վճարողների համար ԱԱՀ-ի շեմի սահմանումը 115 մլն դրամ: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով օտարերկրյա ֆիզիկական անձինք ՀՀ տարածքում իրականացվող՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման) մասով, այդ թվում՝ նրանց փոխարեն հարկային գործակալի կողմից, ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չեն կրում:

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկի» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ 2018 թվականի հունվարի 1-ից ԱԱՀ-ից ազատման արտոնություն է սահմանվել ԱԱՀ վճարողների կողմից մեքենա սարքավորումների (հիմնականում ԱՏԳ ԱԱ 84-85 խմբերին դասվող), որոշ հումքատեսակների ներմուծման մասով:

Միաժամանակ, 2018 թվականի հունվարի 16-ին նշված օրենքում կատարված լրացմամբ ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2517102000, 2529100000 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման մասով սահմանվել է ավելացված արժեքի հարկից ազատման արտոնություն:

ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի թիվ 865 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 938 որոշմամբ (ընդունվել է 2018 թվականի օգոստոսի 9-ին) բարձրացվել են Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները:

Ստորև ներկայացվում են նաև մի շարք այլ օրենսդրական փոփոխություններ, որոնք 2018 թվականի ընթացքում կարող էին ազդեցություն ունենալ ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա:

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) 59-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն եթե նրանք Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ապրանքներ (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից), որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ եթե մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ, ապա պարտավոր են օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործարքներից և (կամ) գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

Մինչև Օրենսգրքի ուժի մեջ մտնելը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ԱԱՀ-ի վճարման պարտավորություն էին կրում, եթե՝

ա) նրանց իրականացրած գործարքները համարվում էին ապրանքի մատակարարում,

բ) մատուցել էին այնպիսի ծառայություններ (բացառությամբ անշարժ գույքի վարձակալության գործարքների) կամ մատակարարել էին այնպիսի ապրանքներ, որոնց իրականացումն օրենքի համաձայն չի դիտվում որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն,

գ) նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք էին ներմուծվում ապրանքներ, որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ Հայաստանի Հանրապետության տարածք էին ներմուծվում ավտոմեքենաներ, բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների:

ՀՀ հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ, ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, իսկ օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը:

Մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և

վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված էր, որ ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման նպատակով, բացի ներմուծվող ապրանքների ձեռքբերման արժեքից, ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հարկման բազայում ներառվում են նաև՝

1) մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը,

2) մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը, բացառությամբ ապրանքներ ձեռք բերելու համար կատարված կոմիսիոն և միջնորդային ծախսերի,

3) Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված՝ ներմուծվող ապրանքներով համապատասխանաբար բաշխված՝

ա) ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը,

բ) ապրանքների արտադրության մեջ օգտագործվող գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը,

գ) ապրանքների արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը,

դ) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ և, ներմուծման երկրից բացի, այլ երկրում իրականացված ճարտարագիտական, ձևավորման, նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը.

4) գնորդի կողմից ապրանքների վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները,

5) տարայի, փաթեթի և փաթեթավորման աշխատանքների արժեքը,

6) Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարները:

Օրենսգրքով հանվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ) սահմանված՝ բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց կողմից բրոքերային և միջնորդական այլ

ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցման ԱԱՀ-ից ազատման արտոնությունը:

2017 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-192-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների կողմից ներդրումային նշանակություն ունեցող ապրանքների (բացառությամբ այն ապրանքների, որոնք միաժամանակ, կարող են օգտագործվել նաև ոչ ներդրումային նպատակներով) ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Նույն պարբերությունը կիրառվում է նաև պետական կառավարչական հիմնարկների նկատմամբ՝ անկախ վերջիններիս՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու հանգամանքից: Մինչև վերոնշյալ օրենքի ուժի մեջ մտնելը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ) սահմանված էր, որ ԱԱՀ վճարող համարվող անձանց կողմից ներդրումային նշանակության որոշ ապրանքների ներմուծման դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 13.5%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով 170.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով ևս արձանագրվել է մուտքերի աճ, որը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտի շահութահարկի աճով:

Ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի աճին նպաստել են 2017 թվականի մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև հարկային վարչարարությունը: Մասնավորապես՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2017 թվականի համախառն եկամուտները կազմել են 6,689.1 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 901.9 մլրդ դրամով կամ 15.6%-ով: Ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2017 թվականի հարկվող շահույթը կազմել է 724 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 199.7 մլրդ դրամով կամ 38.1%-ով: Այսինքն՝ 2017 թվականի հարկվող շահույթների աճի արդյունքում, միայն ռեզիդենտ շահութահարկ վճարողների մասով շահութահարկի մուտքերի աճ է արձանագրվել շուրջ 40 մլրդ դրամով (199.7*20%): Միաժամանակ, ռեզիդենտ շահութահարկ վճարողների մոտ շահութահարկի մուտքերի աճը պայմանավորված է նաև օրենսդրական փոփոխությունների արդյունքում շահութահարկի կանխավճարների բազայի

նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 75%-ից 80% բարձրացնելու հանգամանքով: ՀՀ հարկային օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով ՀՀ գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ (բացառությամբ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի)՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով (մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը սահմանված էր 18.75 տոկոս), եթե տվյալ հարկ վճարողը նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով չի ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման՝ նույն մասով սահմանված այլ-ընտրանքային եղանակը:

2017 թվականի մակրոտնտեսական ցուցանիշները դրականորեն են ազդել նաև մշտական հաստատության միջոցով գործունեություն իրականացնող կամ եկամուտ ստացող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի աճի վրա: Մասնավորապես՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2017 թվականի համախառն եկամուտները կազմել են 63.7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 11.4 մլրդ դրամով կամ 21.8%-ով: Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2017 թվականի հարկվող շահույթը կազմել է 8.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 1 մլրդ դրամով կամ 13.2%-ով: Այսինքն՝ 2017 թվականի հարկվող շահույթների աճի արդյունքում միայն ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների մասով 2018 թվականին շահութահարկի մուտքերի աճ է արձանագրվել շուրջ 0.2 մլրդ դրամով (1.0*20%):

2017 թվականի մակրոտնտեսական ցուցանիշները դրականորեն են ազդել նաև աղբյուրի մոտ պահվող՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի մուտքերի վրա, որի նպաստումը 2018 թվականի ընդհանուր շահութահարկի մուտքերում կազմել է շուրջ 33% կամ շուրջ 20 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 356.6 մլրդ դրամ *եկամտային հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 28.3%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է միջին ամսական անվանական աշխատավարձի աճով (2018 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով և 2018 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցված աշխատողների քանակի աճով (36.9 հազար անձով)): Միաժամանակ, հարկ է նշել, որ եկամտային հարկի մուտքերի վրա իր բացասական ազդեցությունն է թողել բնակարան ձեռքբերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին է վերադարձվել վճարված եկամտային հարկի գումարների աճը: Այսպես, 2018 թվականի ընթացքում բնակարան ձեռքբերելու կամ անհատական բնակելի տուն

կառուցելու նպատակով հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին է վերադարձվել վճարված եկամտային հարկի 4,679.9 մլն դրամ գումար, որը նախորդ տարվա համեմատ աճել է 93.4%-ով կամ 2,419.3 մլն դրամով, ինչն իր հերթին նշանակում է, որ նշված գործոնի հետևանքով ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա բացասական ազդեցության չափը կազմում է շուրջ 2.3 մլրդ դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով վերանայվել է հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների վերադարձման համակարգը, մասնավորապես՝

- վճարված եկամտային հարկի գումարներից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարները վերադարձվում են նաև անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում,
- եկամտային հարկի գումարներից փոխհատուցելու մասով սահմանվել են հետևյալ սահմանափակումները՝

ա) 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով փոխհատուցման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց չի փոխհատուցվում, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման պայմանագրային արժեքը գերազանցում է 55 մլն դրամը,

բ) 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տան կառուցմանը կամ անհատական բնակելի տան ձեռք բերելուն փաստացի ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով վարկառուին և համավարկառուներին փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուր ձեռք բերված բնակարանի կամ կառուցված անհատական բնակելի տան կամ ձեռք բերված անհատական բնակելի տան մասով չի կարող գերազանցել 1.5 մլն դրամը,

գ) 2018 թվականի հունվարի 1-ից հետո եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից ֆիզիկական անձինք կարող են օգտվել միայն մեկ անգամ, այդ թվում՝ որպես համավարկառու:

Ստորև ներկայացվում են այն օրենսդրական փոփոխությունները, որոնք նույնպես 2018 թվականի ընթացքում կարող էին ազդեցություն ունենալ եկամտային հարկի մուտքերի վրա:

ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածով եկամտային հարկի համար սահմանվել են հետևյալ դրույքաչափերը՝ մինչև 150000 դրամը ներառյալ՝ 23 տոկոս, 150000-ից մինչև 2000000 դրամը ներառյալ՝ 28 տոկոս, 2000000-ից ավելի դրամը՝ 36 տոկոս: Մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը եկամտային հարկի դրույքաչափերը կազմում էին՝ մինչև 120000 դրամ՝ 24.4 տոկոս, 120000-2000000 դրամ՝ 26 տոկոս, 2000000 դրամից ավելի՝ 36 տոկոս:

ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ եթե հարկային գործակալի կողմից հարկ վճարողներին վճարվող եկամուտների մասով առկա չեն օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթղթեր, ապա այդ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով (նախկին 11 տոկոսի փոխարեն)՝ առանց հաշվի առնելու օրենսգրքով սահմանված նվազեցումները:

ՀՀ հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստացած շահաբաժինների (եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով) հարկմանը վերաբերող դրույթն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:

ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանվել է, որ հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Նույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման նույն տեսակի գույքի (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա)՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում: Մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված էր, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը

կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 8.7%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 109 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 47.2 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 61.7 մլրդ դրամ: 2017 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերի աճ է արձանագրվել և՛ տեղական արտադրության, և՛ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով: Հարկ է նշել, որ ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերն ավելի ցածր տեմպով են աճել, քան հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից մուտքերը: ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծխախոտի, շարժիչային յուղերի և օղու արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով:

Ակցիզային հարկի մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով, մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի համաձայն՝ 2018 թվականի հունվարի 1-ից ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքատեսակների մասով բարձրացվել են ակցիզային հարկի դրույքաչափերը: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանվել է, որ՝

1) սպիրտային խմիչքների (բացառությամբ պտղային և հատապտղային օղու, կոնյակի, վիսկիի և ռոմի)համար ակցիզային հարկի դրույքաչափը 2018 թվականի հունվարի 1-ից կազմում է առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի արժեքի կամ մաքսային արժեքի կամ ձեռքբերման արժեքի 73 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 725 դրամ: Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նշյալ սպիրտային խմիչքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանված էր 63 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 630 դրամ.

2) վիսկիի և ռոմի համար ակցիզային հարկի դրույքաչափը 2018 թվականի հունվարի 1-ից կազմում է առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի արժեքի կամ մաքսային արժեքի կամ ձեռքբերման արժեքի 66 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3970 դրամ: Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նշյալ ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանված էր 57 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3450 դրամ.

3) պտղային և հատապտղային օղիների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2018 թվականի հունվարի 1-ից կազմում է 1 լիտրի համար 800 դրամ, մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի արժեքի կամ մաքսային արժեքի կամ ձեռքբերման արժեքի կամ 1 լիտրի 55 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 550 դրամ.

4) ծխախոտի արտադրանքի համար ակցիզային հարկի դրույքաչափը 2018 թվականի հունվարի 1-ից կազմում է առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գնի 15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 7275 դրամ, օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նշյալ ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանված էր 15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար 6325 դրամ).

5) յուղերի և քսայուղերի համար ակցիզային հարկի դրույքաչափը 2018 թվականի հունվարի 1-ից կազմում է առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի արժեքի կամ մաքսային արժեքի կամ ձեռքբերման արժեքի 50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 400 դրամ, 2017 թվականի համար ակցիզային հարկը կազմում էր 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 400 դրամ: Միաժամանակ, 2018 թվականի հունվարի 1-ից նույն նշանակությամբ օգտագործվող որոշ ապրանքատեսակներ նույնպես սկսել են հարկվել ակցիզային հարկով և դրանց ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 400 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասով 2018 թվականի հունվարի 1-ից նվազեցվել է դիզելային վառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը և 1 տոննայի համար սահմանվել է 13000 դրամ, միաժամանակ, օրենսգրքով հանվել է դիզելային վառելիքի ներմուծման և (կամ) օտարման դեպքերում ԱԱՀ-ի մասով արտոնությունը:

Նույն մասով սահմանվել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից բենզինի ակցիզային հարկի դրույքաչափը սահմանված է 1 տոննայի համար 40000 դրամ (25000 դրամի փոխարեն), սեղմված բնական գազինը՝ 1000 մ^3 համար 25000 դրամ (8330-ի դրամի փոխարեն):

ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից բենզինի մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և Օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135000 դրամից (120000 դրամի փոխարեն) պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135000 (120000 դրամի փոխարեն) դրամի:

Հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.4%-ն ապահովվել է *մաքսատուրքի* հաշվին՝ կազմելով 80.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ

մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 10.6%-ով կամ 7.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ինչպես ԵՏՄ անդամ պետությունների կողմից հավաքագրվող մաքսատուրքերի ընդհանուր գումարի աճով, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից հավաքագրվող մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների աճով:

2018 թվականին ԵՏՄ անդամ երկրներից փոխանցված մաքսատուրքը կազմել է 73,204.7 մլն դրամ (այդ թվում՝ հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքը կազմել է 671.2 մլն դրամ)՝ 2017 թվականի նույն ժամանակահատվածում վճարված 68,585.9 մլն դրամի փոխարեն՝ աճելով 6.7%-ով կամ 4,618.8 մլն դրամով, ընդ որում՝ ԵՏՄ երկրներից ավել եկած մաքսատուրքը (ԵՏՄ երկրներից բաշխված և ԵՏՄ երկրների միջև բաշխվող մաքսատուրքերի տարբերությունը) կազմել է 18,202.7 մլն դրամ: Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքից գանձվող մաքսատուրքն աճել է 3,066.5 մլն դրամով կամ 77.3%-ով: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրքի գումարներից ԵՏՄ պետությունների միջև բաշխվել է 54,366.1 մլն դրամ, որից փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 663.3 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 46,355.3 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 3,835.5 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 2,479.1 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,033.0 մլն դրամ: 2018 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքի գումարներից ԵՏՄ պետությունների միջև բաշխվել է 635.9 մլն դրամ, որից փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 7.8 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 542.2 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 44.9 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 29 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 12.1 մլն դրամ:

Ներմուծման մաքսատուրքի գծով մուտքերի աճը պայմանավորված է երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների ծավալների աճով, մասնավորապես՝ ԵՄ երկրներից ներմուծվող ապրանքների ծավալը, ըստ արտահանող և ըստ ծագման երկրի, աճել է համապատասխանաբար 30.5%-ով և 26.8%-ով, ԵԱՏՄ անդամ չհանդիսացող ԱՊՀ այլ երկրներից ներմուծվող ապրանքների ծավալը, ըստ արտահանող և ըստ ծագման երկրի, աճել է համապատասխանաբար 44.7%-ով և 44.9%-ով, այլ երկրներից ներմուծվող ապրանքների ծավալը, ըստ արտահանող և ըստ ծագման

երկրի, աճել է համապատասխանաբար 23.2%-ով և 26%-ով: Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով հաստատված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի մասով 2018 թվականին կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կարող էին ազդել մաքսատուրքի գծով 2018 թվականի բյուջեի եկամուտների վրա:

2018 թվականին *շրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 21.3 մլրդ դրամ՝ կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.7%-ը: Շրջանառության հարկի գծով ևս նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աճ՝ հիմնականում պայմանավորված առևտրի և ծառայությունների ծավալների համապատասխանաբար 12.5% և 20.4% աճով: Մյուս գործոնը, որն ազդել է շրջանառության հարկի մուտքերի աճի վրա, հանրային սննդի ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխություններն են, որոնց համաձայն 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի գործունեության մասով կիրառվել է ընդհանուր հարկման համակարգ կամ շրջանառության հարկով հարկման համակարգ՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը կիրառված արտոնագրային հարկման համակարգի փոխարեն:

ՀՀ հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածով սահմանվել են շրջանառության հարկի հետևյալ դրույքաչափերը՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների, 5 տոկոս՝ նախկին 3.5 տոկոսի փոխարեն, կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար՝ 1.5 տոկոս, խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտների համար՝ 1.5 տոկոս՝ նախկին 3.5 տոկոսի փոխարեն, վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտների համար՝ 25 տոկոս (մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը սահմանված էր հաստատագրված վճար, և խաղարկությունով ու ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում էր ելակետային տվյալի 25 տոկոսի չափով), նոտարական գործունեությունից ստացվող եկամուտների համար՝ 10 տոկոս՝ նախկին 20 տոկոսի փոխարեն:

ՀՀ հարկային օրենսգրքի 256-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկով հարկման օբյեկտ են համարվում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը (մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը շրջանառության հարկով հարկվող օբյեկտ էր համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության

հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), ինչպես նաև ստացվող այլ եկամուտները):

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունն արտոնագրային հարկով հարկման համակարգից տեղափոխվել է շրջանառության հարկի կամ հարկման ընդհանուր (ԱԱՀ-ի և շահութահարկի) համակարգեր: Մասնավորապես, նույն օրենքով սահմանվել է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կարող են համարվել շրջանառության հարկ վճարող նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում: Նույն մասով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում են շրջանառության հարկ վճարող՝ անկախ Օրենսգրքով սահմանված սահմանափակումներից, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2.1 մասով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն: Միաժամանակ սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով 6 տոկոս դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի երեք տոկոսը կազմող գումարի չափով: Եթե այդ նվազեցումից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսը:

2018 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 54.2 մլրդ դրամ *բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար*՝ կազմելով հարկերի և տուրքերի 4.3%-ը: Նշված

գումարից 11.8 մլրդ դրամը կազմել է բնապահպանական հարկերը, 42.4 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները, որից 39.3 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի աճով: Վերջինս հիմնականում պայմանավորված է Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա հայտարարված հիմնական արտադրատեսակներ համարվող պղնձի և մոլիբդենի տարեկան միջին գների աճով: Մասնավորապես՝ պղնձի 2017 թվականի տարեկան միջին գինը 2016 թվականի համեմատ աճել է 26.72%-ով, իսկ մոլիբդենինը՝ 10.18%-ով: Նշենք, որ 2017 թվականին մետաղական հանքաքարի թողարկման ծավալներն աճել են 31.48%-ով, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն է թողել նշված եկամտատեսակի մուտքերի վրա[27]:

Նախորդ տարվա համեմատ 47.9% աճ է արձանագրվել նաև ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մուտքերի գծով, որոնք կազմել են շուրջ 9.4 մլրդ դրամ:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար գանձվող բնօգտագործման վճարների աճը հիմնականում պայմանավորված է արդյունահանման ծավալների շուրջ 42.8 % աճով: Նշված մուտքերը կազմել են 3.1 մլրդ դրամ:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար մուտքերը կազմել են 1.4 մլրդ դրամ, որոնց աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում շահագործվող ավտոմեքենաների քանակի աճով:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար մուտքերը կազմել են շուրջ 931.8 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26.5%-ով կամ շուրջ 195 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ սահմանը հատած այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների քանակի աճով:

Բնօգտագործման վճարների գծով կատարված փոփոխությունների մասով՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-191-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) կվարցիտի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար սահմանվել է բնօգտագործման վճար 360 դրամ հաստատագրված դրույքաչափով և 6 տոկոս դրույքաչափով:

[27] Համեմատությունը կատարվել է 2016 և 2017 թվականների միջև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականի ընթացքում վճարված ռոյալթիի գումարներն, ըստ էության, ձևավորվել են 2017 թվականի ընթացքում ձևավորված գներով հաշվարկված ռոյալթիի բազայի հիման վրա:

2018 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա) 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կիսով չափով նվազեցվել են ՀՀ հարկային օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված բնապահպանական հարկի դրույքաչափերը՝ մինչև 50 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 5 դրամ՝ 10 դրամի փոխարեն, 51-80 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 10 դրամ՝ 20 դրամի փոխարեն, 81-100 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 15 դրամ՝ 30 դրամի փոխարեն, 101-150 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 20 դրամ՝ 40 դրամի փոխարեն, 151-200 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 25 դրամ՝ 50 դրամի փոխարեն, 201-250 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 30 դրամ՝ 60 դրամի փոխարեն, 251-300 ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 30 դրամ՝ 70 դրամի փոխարեն, 301 և ավելի ձիաուժ՝ յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 50 դրամ՝ 100 դրամի փոխարեն:

Միաժամանակ, նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվա և դրան հաջորդող երկու հարկային տարիների համար բնապահպանական հարկի դրույքաչափը սահմանվում է նույն կետով սահմանված համապատասխան (ըստ շարժիչի հզորության) դրույքաչափի 50 տոկոսի չափով, իսկ ավտոտրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող երրորդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար բնապահպանական հարկի դրույքաչափը սահմանվում է հաշվետու տարվան նախորդող տարվա համար նույն մասով սահմանված կարգով հաշվարկվող դրույքաչափի և ՀՀ հարկային օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափի տասը տոկոսի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան ՀՀ հարկային օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափը: ՀՀ հարկային օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառության իմաստով, այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար բնապահպանական հարկի դրույքաչափը սահմանվում է նույն կետով սահմանված համապատասխան (ըստ շարժիչի հզորության) դրույքաչափի կրկնապատիկի չափով:

Հաշվետու ժամանակահատվածում 17.4 մլրդ դրամ են կազմել *նպատակային սոցիալական վճարները,* որոնք կազմել են հարկերի և տուրքերի 1.4%-ը: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 9.9%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է ինչպես վճարողների

քանակի, այնպես էլ միջին ամսական աշխատավարձի աճով: Չնայած նրան, որ նպատակային սոցիալական վճարների գծով մուտքերն աճել են վերը նշված գործոնների հաշվին, այնուամեֆնայնիվ հարկ է նշել, որ նպատակային սոցիալական վճարների գծով մուտքերի վրա բացասական ազդեցություն է թողել 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 21-ին ՀՕ-337-Ն օրենքը, որի արդյունքում փաստացի ՀՀ պետական բյուջե չի հաշվեգրվել շուրջ 7.5 մլրդ դրամ: Վերոգրյալը պայմանավորված է նրանով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անձանց համար (օգտին) մինչև նրանց կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային հատկացումները կատարվում են հետևյալ չափով.

1) ամսական համախառն եկամտի 10 տոկոսի չափով՝ ամսական համախառն եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 25000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմի 10 տոկոսը.

2) ձեռնարկատիրական եկամտի 10 տոկոսի չափով՝ ձեռնարկատիրական եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 300000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմի 10 տոկոսը:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր դեպքերում նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի և այդ անձանց համար (օգտին) կատարվող կուտակային հատկացման գումարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 25000 դրամը և տարեկան 300000 դրամը: Օրենքի անցումային դրույթների 81-րդ հոդվածի 8.1-ին և 8.2-րդ մասերին (2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած 2018 թվականի հուլիսի 21-ին ՀՕ-337-Ն օրենքի խմբագրությամբ) համապատասխան՝ մինչև ՀՀ հարկային օրենսգրքով անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտային հարկով հարկման բեռի նվազեցումը օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված սոցիալական վճարի կեսը, սակայն ոչ ավել, քան 12500 դրամ, կատարում է պետությունը: Ընդ որում՝ մինչև ՀՀ հարկային օրենսգրքով անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտային հարկով հարկման բեռի

նվազեցումը վերոնշյալ անձանց համար կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 37500 դրամը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 28.5 մլրդ դրամ *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.3%-ը: Այլ հարկերում շուրջ 7.4 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 11.6%-ով կամ 765.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է դրոշմանիշային վճար վճարողների քանակի աճով (2018 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցված աշխատողների քանակն աճել է 36.9 հազար անձով):

2018 թվականին շուրջ 6.5 մլրդ դրամ է կազմել արտոնագրային հարկը, որի աճը պայմանավորված է արտոնագրային հարկով հարկվող գործունեության տեսակներով զբաղվող հարկ վճարողների թվի ավելացման և գործունեության ընդլայնման, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների արդյունքում հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակները արտոնագրային հարկով հարկման համակարգ տեղափոխվելու հանգամանքով: Միաժամանակ հարկ է նշել, որ արտոնագրային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն են թողել հանրային սննդի ոլորտում 2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց համաձայն 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի գործունեության մասով կիրառվել է ընդհանուր հարկման համակարգ կամ շրջանառության հարկով հարկման համակարգ՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը կիրառված արտոնագրային հարկման համակարգի փոխարեն: 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկը հաշվարկվում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ կիրառելով 6% դրույքաչափ՝ նվազեցնելով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի) հանրագումարի 3% կազմող գումարի չափով: Եթե նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում

է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4%-ը:

Այլ հարկերում շուրջ 6.1 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 14.1%-ով կամ 995.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2 կազմակերպության կողմից 2017 թվականի 4-րդ եռամսյակի ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մի մասը 2018 թվականի փոխարեն 2017 թվականի 4-րդ եռամսյակում վճարելու հանգամանքով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 3.3 մլրդ դրամ են կազմել ճանապարհային հարկի գծով մուտքերը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են, որը պայմանավորված է 2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն 2018 թվականի հունվարի 1-ից ճանապարհային հարկի վճարման օբյեկտ չի համարվում այլ պետություններում գրանցված թեթև մարդատար տրանսպորտային միջոցներով պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելը: ՀՀ հարկային օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի վճարումից ազատվում են նաև՝

- Վրաստանի տարածքում գրանցված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային հարկ վճարողները, բացառությամբ 44 տոննան գերազանցող թույլատրելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցների համար նույն բաժնով սահմանված ճանապարհային հարկի,
- միջազգային պայմանագրերին համապատասխան ճանապարհային հարկի արտոնություններից օգտվող ճանապարհային հարկ վճարողները:

ՀՀ հարկային օրենսգրքի 184-րդ հոդվածով սահմանվել է, որ ճանապարհային հարկ վճարողներ են համարվում՝

ա) օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ նույն բաժնով սահմանված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատեր կամ նրանց կողմից լիազորված անձ (ներկայացուցիչ) համարվող, ինչպես նաև նույն հոդվածով սահմանված գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք,

բ) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ ավտոտրանսպորտային միջոցներով (բացառությամբ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված) Հայաստանի Հանրապետություն (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) մուտք գործողները,

գ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում նույն բաժնով սահմանված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ նրանց կողմից լիազորված անձինք (ներկայացուցիչները),

դ) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդ տեղադրողները (գովազդակիրները):

ՀՀ հարկային օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանվել է, որ՝

ա) ճանապարհային հարկով հարկման բազա է համարվում ճանապարհային հարկով հարկման օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է ճանապարհային հարկի գումարը,

բ) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկով հարկման բազա է համարվում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտքի և Հայաստանի Հանրապետությունում գտնվելու տևողությունը՝ արտահայտված օրերով, ըստ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների (այդ թվում՝ կցորդների և կիսակցորդների) թույլատրելի առավելագույն զանգվածի՝ արտահայտված տոննաներով,

գ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկով հարկման բազա է համարվում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի հաշվառման վկայագրում նշված՝ թույլատրելի առավելագույն զանգվածը՝ արտահայտված տոննաներով,

դ) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար հարկման բազա է համարվում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրված գովազդային վահանակի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով: Բազմակողմ (երկու և ավելի կողմ ունեցող) գովազդային վահանակի դեպքում հարկման բազա է համարվում գովազդային վահանակի բոլոր կողմերի մակերեսների հանրագումարը,

ե) թամբային քարշակ թափքի տեսակ ունեցող ավտոմոբիլի և կիսակցորդի միակցված շարժակազմի (ավտոգնացքի) դեպքում հարկման բազայի որոշման նպատակով հիմք է ընդունվում ավտոգնացքի մեջ մտնող ավտոմոբիլի և կիսակցորդի թույլատրելի առավելագույն զանգվածների հանրագումարը՝ արտահայտված տոննաներով, իսկ կցորդով շարժվող միակցված շարժակազմի (ավտոգնացքի) դեպքում՝ շարժակազմի մեջ մտնող ավտոտրանսպորտային միջոցների (այդ թվում՝ կցորդների և կիսակցորդների) թույլատրելի առավելագույն զանգվածների հանրագումարը՝ արտահայտված տոննաներով:

ՀՀ հարկային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով վերանայվել են Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի դրույքաչափերը և, մասնավորապես, սահմանվել են՝ 20-ից ավելի մինչև 30 տոննա ներառյալ՝ 110000 դրամ, 30-ից ավելի մինչև 44 տոննա ներառյալ՝ 152000 դրամ, 60-ից ավելի մինչև 70 տոննա ներառյալ՝ 233000 դրամ, 70-ից ավելի մինչև 80 տոննա ներառյալ՝ 285000 դրամ, 80-ից ավելի մինչև 90 տոննա ներառյալ՝ 318000 դրամ, 90-ից ավելի մինչև 100 տոննա ներառյալ՝ 603000 դրամ, 100 տոննայից ավելի՝ 753000 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով վերանայվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի դրույքաչափերը և սահմանվել են՝ մինչև 20 տոննա ներառյալ՝ 0 դրամ, 20-ից ավելի մինչև 25 տոննա ներառյալ՝ 120000 դրամ, 25-ից ավելի մինչև 30 տոննա ներառյալ՝ 240000 դրամ, 30-ից ավելի մինչև 35 տոննա ներառյալ՝ 360000 դրամ, 35 տոննայից ավելի՝ 480000 դրամ, նախկինում՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված 20-ից մինչև 35 տոննա և ավելի բեռնատարողությամբ ավտոմեքենաների երթևեկության վճարը հաշվարկվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝ 20-ից մինչև 25 տոննա՝ 15000 դրամ, 25-ից մինչև 30 տոննա՝ 30000 դրամ, 30-ից մինչև 35 տոննա՝ 45000 դրամ, 35 և ավելի տոննա՝ 60000 դրամ:

Շուրջ 2 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հարկային մուտքերը՝ 17.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է հարկային ընթացակարգով ստուգումների քանակի աճով:

2018 թվականին ավելի քան 1.9 մլրդ դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները՝ 88%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

736.5 մլն դրամ է մուտքագրվել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով՝ 6.9%-ով կամ 54.5 մլն դրամով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է հարկ վճարողների քանակի նվազմամբ:

2018 թվականին շուրջ 595.1 մլն դրամ են կազմել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարները, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 90.8%-ով կամ 283.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ տարածք ներմուծվող փոստածրարների քանակի աճով:

2018 թվականին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 282.6 մլն դրամ հաստատագրված վճարներ: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են՝ պայմանավորված 2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի 445-րդ հոդվածով սահմանվել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, և որոշ գործունեության տեսակներ, որոնք հաստատագրված վճարով հարկվող էին, ներկայումս համարվում են արտոնագրային հարկով գործունեության տեսակներ:

Հաշվետու տարում ավելի քան 14.1 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները, որոնք 93.1%-ով կամ 191.8 մլն դրամով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հարկ վճարողների քանակի նվազմամբ:

-863.4 մլն դրամ են կազմել դրոշմապիտակների իրացումից զուտ մուտքերը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 303.9 մլն դրամի դիմաց, ինչը պայմանավորված է նրանով, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Առևտրի ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմապիտակները հարկ վճարողներին տրամադրվում են անվճար:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 607.1 մլն դրամ այլ հարկային եկամուտներ:

Հարկային վարչարարության բնագավառում իրականացվել են հետևյալ օրենսդրական փոփոխությունները:

Դրոշմապիտակներով ապրանքների դրոշմավորման մասով՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) ավելացել են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակները:

Հարկային պատասխանատվության մասով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 400-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսգրքով նախազգուշացումն առաջին անգամ սահմանվել է որպես պատասխանատվության տեսակ: Մասնավորապես, 2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքով՝ դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված, սակայն կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջներին չբավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության հայտնաբերման առաջին դեպքում կիրառվում է նախազգուշացում:

Միաժամանակ, «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային հարկից ազատված գործունեության տեսակների մասով ՀՀ հարկային օրենսգրքի 420-րդ հոդվածով սահմանված խախտումները (արտոնագրային հարկի հաշվարկման համար ելակետային տվյալը կամ գործակիցը պակաս հաշվարկելը) կատարած արտոնագրային հարկ վճարողների նկատմամբ կիրառվում է նախազգուշացում:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում են հինգ միլիոն դրամի չափով:

Օրենսգրքով ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) 401-րդ հոդվածով երկու անգամ նվազեցվել է հարկի գումարը ժամանակին չվճարելու համար սահմանված

տույժի չափը՝ 0.15-ի փոխարեն սահմանվելով 0.075: Միաժամանակ, վերանայվել է տույժի հաշվարկման առավելագույն ժամկետը՝ 365 օրվա փոխարեն նախատեսելով 730 օր:

Օրենսգրքով վերացվել է հարկային հաշվետվությունները սխալ կազմելու համար պակաս հաշվարկված հարկի գումարի 10 տոկոսի չափով տուգանքը:

2018 թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, իսկ ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից) գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար 250000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ նախկին օրենսդրությամբ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար գանձվում էր տուգանք՝

1) 60000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը մեկից երեք էր,

2) 150000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը չորսից վեց էր,

3) 300000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը յոթից ինն էր,

4) 600000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը գերազանցում էր ինը:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով սահմանվել է, որ առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգմամբ հայտնաբերվելու դեպքում,

բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 421-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի, կազմակերպությունից և (կամ) անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի համար օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի գումարը, և կազմակերպությունը և (կամ) անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում են:

Նույն մասով սահմանված խախտումը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրվելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության նույն տեսակի (տեսակների) մասով կրկին կատարվելու դեպքում կազմակերպությունից և անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս, քան երեք ամսվա) համար՝ օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի կրկնակի չափով, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Նույն մասով սահմանված տուգանքի հաշվարկման համար օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործակիցը հաշվի չի առնվում:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքի 409-րդ հոդվածի համաձայն, համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով արգելված գործունեություն հայտնաբերելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս տասը միլիոն դրամից: Հարկ է նշել, որ նախկին օրենսդրությամբ սահմանված չի եղել նվազագույն տասը միլիոն դրամի շեմը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն ՀՀ օրենքով հանվել է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում 200 հազար դրամի չափով տուգանքը:

2018 թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն ՀՀ օրենքի 52-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) առաջադրված գումարների նկատմամբ դրանց անբողոքարկելի դառնալու երկամսյա ժամկետի համար տույժեր չեն հաշվարկվում:

2018 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 37.9 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 6.7%-ով կամ շուրջ 2.4 մլրդ դրամով գերազանցելով ՀՀ կառավարության

տարեկան ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը հիմնականում ձևավորվել է պետական գրանցման, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար վճարվող տուրքերի ծրագրված մուտքերը գերազանցելու և դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար վճարվող տուրքերի ծրագրված մուտքերը զիջելու արդյունքում: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 2%-ով կամ 756.8 մլն դրամով, որը հիմնականում ձևավորվել է պետական գրանցման, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար վճարվող տուրքերի աճի և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու ու ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար վճարվող տուրքերի նվազման արդյունքում:

2018 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.8 մլրդ դրամ (որից 168 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 14.4%-ով զիջելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 1.3%-ով կամ 23.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների կողմից վճարվող և պետական բյուջեից փոխհատուցվող գումարների նվազմամբ:

2018 թվականի հունվարի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-45-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից) սահմանվել է, որ Սահմանադրական դատարան դիմելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է Սահմանադրական դատարան դիմելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, Սահմանադրական դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 50 տոկոսի և յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 128.2 մլն դրամ՝ 14.6%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 16%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը պայմանավորված է ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման համար դիմած քաղաքացիների թվի աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 2.3 մլրդ դրամ՝ 17.5%-ով (կամ 346.1 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 21.3%-ով (կամ 407.3 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի աճի հիմնական պատճառ է հանդիսանում այն, որ հաշվետու տարում ավելի մեծ թվով քաղաքացիներ են դիմել հյուպատոսական ծառայություններ ստանալու համար, որը վերաբերում է առավելապես անձնագրային ոլորտի ծառայություններին: Անձնագրային ոլորտի ծառայությունների տեսակարար կշիռը հյուպատոսական ծառայությունների ընդհանուր թվում կազմում է 65-70%:

Պետական տուրքերի 14.3%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով 5.4 մլրդ դրամ, որը 39.1%-ով գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 18.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձված տուրքերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 2 մլրդ դրամ է ստացվել ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար, որը 49.8%-ով գերազանցել է ծրագրված մուտքերը և 25.9%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ավտոմոբիլների քանակի աճով:

Հաշվետու տարում ավելի քան 1.1 մլրդ դրամ են կազմել լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերը, որոնք 38.3%-ով գերազանցել են ծրագրված մուտքերը և 1.8%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը պայմանավորված է տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական

զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված մուտքերի աճով:

Ավելի քան 1 մլրդ դրամ պետական տուրք է ստացվել ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար, որը 51.8%-ով գերազանցել է ծրագրված մուտքերը և 26.6%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը պայմանավորված է ինչպես 2018 թվականին ՀՀ տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների քանակի, այնպես էլ տրանսպորտային միջոցների վերահաշվառման գործարքների քանակի աճով:

Ավելի քան 1 մլրդ դրամ է ստացվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմաց, որը 18.2%-ով գերազանցել է ծրագրված մուտքերը և 18.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է գործարքների թվի և, մասնավորապես, արագացված գործակցով կատարված գործարքների թվի աճով:

Հաշվետու տարում 177.6 մլն դրամ են կազմել ՀՀ պետական ռեգիստրում պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք 13.3%-ով գերազանցել են ծրագրված մուտքերը և 10.2%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է գործարքների թվի աճով:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2018 թվականին պետական բյուջե է վճարվել 565.1 հազար դրամ, որը 19.3%-ով զիջել է կանխատեսված ցուցանիշը և 16%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակի նվազմամբ: 2018 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը կազմել է 113՝ կանխատեսված 140-ի և 2017 թվականի 134-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել շուրջ 412.5 մլն դրամ պետական տուրք՝ 8.3%-ով զիջելով կանխատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է հայտատուների՝ կանխատեսվածից պակաս քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 0.4%-ով կամ 1.6 մլն դրամով:

2017 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-234-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 6-ից) սահմանվել է պետական

տուրք բույսերի սորտերի հետ կապված գործողությունների գծով (բազային տուրքի նկատմամբ գործակիցներով)՝ բույսի սորտի հայտ ներկայացնելու համար՝ 5, կոնվենցիայով՝ առաջնություն խնդրարկելու համար՝ 4, բույսի սորտի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար՝ 2, արտոնագիր տալու համար՝ 3, լիցենզիոն պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է մեկ արտոնագրի՝ 10, մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար)՝ 5, արտոնագրի կրկնակը տալու համար՝ 1:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2018 թվականին գանձվել է շուրջ 2.6 մլրդ դրամ (պետական տուրքի մուտքերի 6.9%-ը)՝ 7.5%-ով զիջելով ծրագրված մուտքերը, ինչը պայմանավորված է ՀՀ քաղաքացիների կողմից նույնականացման քարտերի փոխարեն նախկին նմուշի անձնագրերի ստացման համար դիմելու ու անձնագրերում վավերականության մասին նշում կատարելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 5%-ով կամ 136.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է նույնականացման քարտերի համար գանձվող վճարների նվազմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 28%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար: Նշված տուրքերի գծով պետական բյուջե է մուտքագրվել 10.6 մլրդ դրամ՝ 101.7%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 7.1%-ով (կամ 814.4 մլն դրամով) զիջելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ծրագրից շեղումը հիմնականում ձևավորվել է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի համար գանձված տուրքերի ծրագրված մուտքերը գերազանցելու ու պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառի համար գանձված տուրքերի ծրագրված մուտքերը զիջելու արդյունքում: Հաշվետու տարում շուրջ 8.5 մլրդ դրամ են կազմել վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի համար գանձված տուրքերը, որոնք 6.3%-ով կամ 500.3 մլն դրամով գերազանցել են ծրագրված մուտքերը՝ պայմանավորված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար կանխատեսված 2 լիցենզիայի դիմաց 3 լիցենզիայի համար վճարված գումարներով: Նախորդ տարվա համեմատ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձված տուրքերի 7.1%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի համար գանձված տուրքերի նվազմամբ: Վերջինս պայմանավորված է նրանով, որ 2018 թվականի հուլիս ամսին վերաձևակերպվել է վիճակախաղերի

կազմակերպման 1 լիցենզիա, իսկ նոյեմբեր ամսին ուժը կորցրած է ճանաչվել թվով խաղատան կազմակերպման 1 լիցենզիա:

Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառի լիցենզավորման գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 484.2 մլն դրամ՝ 22.8%-ով զիջելով ծրագիրը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տրված թույլտվությունների քանակի նվազմամբ՝ որոշ կազմակերպությունների իրավունքների դադարեցմամբ և հրաժարմամբ, ինչպես նաև ընկերությունների կողմից դեռևս չվճարված տուրքերով: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 13%-ով կամ 72.5 մլն դրամով, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տնտեսավարող սուբյեկտների և լիցենզառուների իրավունքների դադարեցմամբ:

Հաշվետու տարում 326.6 մլն դրամ ստացվել է տրանսպորտի բնագավառի լիցենզավորման գծով՝ 9.3%-ով զիջելով նախատեսված և 25.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է տրանսպորտի ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում տրամադրվող տարբեր լիցենզառուների, մասնավորապես՝ տաքսի ծառայություններ մատուցող լիցենզառուների թվաքանակի նվազմամբ: 2018 թվականին ուժը կորցրած է ճանաչվել շուրջ 2700 լիցենզիա և լիցենզիայի ներդիր:

Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գծով մուտքերը կազմել են 322.7 մլն դրամ, որը 13.7%-ով զիջել է նախատեսված և 6%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է նրանով, որ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-236-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 27-ից) կատարված փոփոխությունների արդյունքում դադարել են «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիաների ու ներդիրների գործողությունը, և նոր լիցենզիաներ ու ներդիրներ չեն տրամադրվել:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 297.1 մլն դրամ, որը 13.5%-ով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը՝ պայմանավորված էներգետիկայի բնագավառում նախատեսվածից ավելի մեծ թվով լիցենզիաների տրամադրմամբ, ինչպես նաև 2 նոր տեսակի լիցենզավորման ենթակա գործունեության համար լիցենզիաների տրամադրմամբ: Նշված հանգամանքի վրա ազդեցություն է գործել նաև արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման նոր սահմանաչափի սահմանումը: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 0.8%-ով: 2018 թվականի հուլիսի 1-ից էլեկտրական էներգիայի ներկրումը և արտահանումը դադարել են համարվել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ, փոխարենը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են

համարվել էլեկտրական էներգիայի մեծածախ առևտուրը և մատակարարումը (ներառյալ՝ երաշխավորված): Միաժամանակ, 2018 թվականի փետրվարի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-102-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի, ինչպես նաև էլեկտրական էներգիայի մատակարարման (ներառյալ՝ երաշխավորված) համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի 1000-ապատիկը:

Առողջապահության բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է շուրջ 182.2 մլն դրամ, որը 12.7%-ով զիջել է կանխատեսված և 2%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված լիցենզավորվող կազմակերպությունների քանակի նվազմամբ:

Բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 165.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 95.2%ը և 1.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 89.6 մլն դրամ՝ 58.5%-ով զիջելով նախատեսված և 42.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է նրանով, որ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-265-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի օգոստոսի 1-ից) կատարված փոփոխությունների արդյունքում զգալիորեն նվազել են հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար սահմանված տարեկան պետական տուրքերի դրույքաչափերը: 2017 թվականի մայիսի 31-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) սահմանվել են պետական տուրքեր ռադիոհաղորդումների հեռարձակման համար Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում հեռարձակման համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով՝ 150-ապատիկի փոխարեն, Երևան քաղաքի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով՝ 100-ապատիկի փոխարեն, Երևան քաղաքը չներառող՝ մեկից ավելի մարզերի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով՝ 50-ապատիկի փոխարեն, մեկ մարզի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 25-ապատիկի փոխարեն:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-265-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է պետական տուրք հանրապետական սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով՝

20000-ապատիկի փոխարեն, մայրաքաղաքային սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով՝ 10000-ապատիկի փոխարեն, տարածքային սփռման համար՝ տարեկան (բացառությամբ անալոգային հեռարձակումների) բազային տուրքի 100-ապատիկի չափով՝ 1000-ապատիկի փոխարեն:

2017 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-171-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի նոյեմբերի 25-ից) ուժը կորցրած են ճանաչվել մաքսային բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը սահմանող դրույթները: Արդյունքում 2018 թվականին մաքսային բնագավառում լիցենզավորման գծով մուտքեր գրեթե չեն արձանագրվել, որոնք 2017 թվականին կազմել էին 17 մլն դրամ:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվող գործունեության լիցենզավորման դիմաց 2018 թվականին գանձվել է 43.6 մլն դամ պետական տուրք՝ 54.4%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը և 23.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է 2018 թվականի փետրվարի 8-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-105-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ (ուժի մեջ է մտել 2018 թվականի մարտի 10-ից), որով վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի յուրաքանչյուր ներդիրի համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 40-ապատիկի չափով:

2018 թվականին պետական տուրքերի 38.4%-ը բյուջե է վճարվել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների դիմաց՝ կազմելով ավելի քան 14.5 մլրդ դրամ, որը 6.3%-ով գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 3.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների գերազանցումը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ (80.8%) ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի աճով: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են շուրջ 11.8 մլրդ դրամ՝ 7.6%-ով (կամ 830.1 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 6.5%-ով (կամ 717.4 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է մեկնած ուղևորների քանակի 8.2% աճով:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գումարներից 830.5 մլն դրամը ստացվել է վարորդական իրավունքի վկայական

և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար՝ 11.5%-ով զիջելով կանխատեսված և 16.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի նվազմամբ:

Հաշվետու տարում օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական բյուջե է մուտքագրվել 822.7 մլն դրամ պետական տուրք՝ 7.1%-ով զիջելով կանխատեսված և 7.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռքբերողների քանակի նվազմամբ:

Գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման համար գանձված պետական տուրքերը կազմել են 376.3 մլն դրամ՝ 50.4%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նախատեսվածից ավելի շատ ծավալներով գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման հանգամանքով: Միաժամանակ նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել եմ 16.3%-ով՝ պայմանավորված գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի արտահանման ծավալների նվազմամբ:

Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար գանձված տուրքերը կազմել են 237.1 մլն դրամ՝ 23.3%-ով զիջելով կանխատեսված և 18.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Նշված մուտքերի նվազումը պայմանավորված է դիմողների քանակի նվազմամբ:

Սև մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների արտահանման համար գանձված տուրքերը կազմել են 104.9 մլն դրամ՝ 3 անգամ գերազանցելով կանխատեսված և 83.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է սև մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների արտահանման ծավալների աճով:

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար գանձված տուրքերը կազմել են ավելի քան 86.1 մլն դրամ՝ 14.2%-ով զիջելով կանխատեսված և 8.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է թույլտվությունների փաստացի քանակով:

«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու կամ այդ փաստաթղթերն օրինականացնելու համար գանձված տուրքերը կազմել են 177.4 մլն դրամ՝ 4.1%-ով

զիջելով կանխատեսված և 1.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի նվազմամբ:

Բացի վերը նշված օրենսդրական փոփոխություններից, 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.075 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ՝ 0.15 տոկոսի փոխարեն:

Պաշտոնական դրամաշնորհներ

2018 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են ավելի քան 11.2 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 29.1%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 27.3 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 11.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 35%-ը:

Նշված գումարից 282.3 մլն դրամը ստացվել է ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում, որը կազմել է կանխատեսված ցուցանիշի 86.7%-ը: Մասնավորապես՝ արտաբյուջետային միջոցներից 89.5 մլն դրամը (99.1%) ստացվել է «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի, 73.3 մլն դրամը (71.4%)՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ոչ արտաբյուջետային նպատակային ծրագրերի շրջանակներում ստացվել է կանխատեսված միջոցների 34.5%-ը՝ շուրջ 11 մլրդ դրամ: Նշված գումարից 2.3 մլրդ դրամ (նախատեսվածի 33.3%-ը) հատկացվել է Ռուսաստանի Դաշնության, 1.7 մլրդ դրամ (նախատեսվածի 74.4%-ը)՝ Եվրոպական ներդրումային բանկի, ավելի քան 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 80.6%-ը)՝ Համաշխարհային բանկի, 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 27.1%-ը)՝ Եվրոպական միության, 1.3 մլրդ դրամ (նախատեսվածի 54.4%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 945.3 մլն դրամը (նախատեսվածի 138%-ը)՝ ԱՄՆ կառավարության, 802.4 մլն դրամ (նախատեսվածի 18.3%-ը)՝ Վերակառուցման և զարգացման

եվրոպական բանկի, 425.9 մլն դրամ (նախատեսվածի 25.5%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW), 89.9 մլն դրամ (նախատեսվածի 3.3%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի, 72.8 մլն դրամ (նախատեսվածի 1337.9%-ը)՝ Եվրասիական հիմնադրամի, 60.2 մլն դրամ (նախատեսվածի 8.4%-ը)՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և 15.7 մլն դրամ (նախատեսվածի 32.8%-ը)՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից: Նշենք նաև, որ 2018 թվականին Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները՝ համապատասխանաբար 1.5 մլրդ դրամի և 574.3 մլն դրամի չափով, չեն ստացվել:

Եվրամիության կողմից բյուջետային աջակցության նպատակով մի շարք ծրագրերի շրջանակներում նախատեսված 6.5 մլրդ դրամ (11.5 մլն եվրո) ընդհանուր գումարով դրամաշնորհները չեն ստացվել: Մասնավորապես, «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում նախատեսված 5 մլն եվրո դրամաշնորհից ստացվել է 1.5 մլն եվրոն (830.5 մլն դրամ) նախապայմանների ոչ ամբողջական կատարման պատճառով: Առաջին փոփոխական հատկացման ներքո տրամադրվել է 1 մլն եվրո, չկատարված է գնահատվել Երեխայի պաշտպանության նախապայմանը, մասամբ կատարված են գնահատվել Ընտրական համակարգի բարելավում, Պաշտպանություն խոշտանգումներից և Կանանց ու տղամարդկանց իրավահավասարության նախապայմանները: Երկրորդ փոփոխական հատկացման ներքո տրամադրվել է 0.5 մլն եվրո, մասամբ կատարված է գնահատվել միայն Ընտրական համակարգի բարելավում նախապայմանը, իսկ հատկացման ներքո մյուս նախապայմանների համար ներկայացվել է իրականացման ժամկետների հետաձգման առաջարկ:

«Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրի» շրջանակներում նախատեսված 3 մլն եվրո դրամաշնորհից 2.7 մլն եվրոն (1.5 մլրդ դրամ) ստացվել է 2019 թվականի հունվարին՝ նախապայմանների ոչ ամբողջական կատարման պատճառով: Չկատարված է գնահատվել Գենդերային զգայուն բյուջետավորման նախապայմանը:

«Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ և պատասխանատու հանրային կառավարման միջոցով» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում 2018 թվականին նախատեսված 2 մլն եվրո դրամաշնորհը չի ստացվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ԵՄ կողմից գնահատում չի իրականացվել և համաձայնագրի ղեկավար կոմիտեի նիստում երկկողմ

քննարկումների արդյունքում ներկայացվել է նախապայմանների իրականացման ժամկետների հետաձգման առաջարկ:

«Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում 2018 թվականին նախատեսված 1.5 մլն եվրո դրամաշնորհը ևս չի ստացվել, քանի որ ԵՄ կողմից գնահատում չի իրականացվել և, համապատասխանաբար, հատկացում չի տրամադրվել: Համաձայնագրի ղեկավար կոմիտեի նիստում երկկողմ քննարկումների արդյունքում ներկայացվել է նախապայմանների իրականացման ժամկետների հետաձգման առաջարկ:

Արդյունքում, 2017 թվականի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 23.2%-ով կամ 3.4 մլրդ դրամով:

Այլ եկամուտներ

2018 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 72.3 մլրդ դրամ այլ եկամուտներ, որոնք 11.8%-ով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերի գերազանցմամբ՝ համապատասխանաբար 4.9 անգամ և 7 անգամ: Այլ եկամուտներից 35.2 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ապահովվել են 90.5%-ով: 2017 թվականի համեմատ այլ եկամուտներն աճել են 11%-ով կամ 7.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պաշտոնական դրամաշնորհների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի աճով:

2018 թվականին *ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների* գերազանցումից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 378.7 մլն դրամ՝ նախորդ տարվա 19.3 մլն դրամի դիմաց, որը ծրագրով նախատեսված չէր:

2018 թվականին *պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության* դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 2.5 մլրդ դրամ, որը գերազանցել է կանխատեսված մուտքերը 6%-ով՝ հիմնականում պայմանավորված վարձակալությամբ տրամադրված տարածքների և գների փոփոխությամբ: Նշված եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 22%-ով, որը հիմնականում պայմանավորված է «Վեոլիա Օ կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից ՀՀ պետական բյուջե փոխանցված վարձակալական վճարների աճով, որոնք կազմել են 2,121.0 մլն դրամ և 23.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարվա ընթացքում *բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից* ստացվել են ավելի քան 7.6 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 4.9 անգամ գերազանցելով տարեկան ծրագրված և 25.4%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: 2018 թվականին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 118 ավանդային պայմանագիր՝ 883 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Նախորդ տարի կնքվել է 130 ավանդային պայմանագիր՝ 804 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Հաշվետու ժամանակահատվածում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է 7.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավանդի միջին մեծությունն աճել է 1.2 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է 2018 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագրային ցուցանիշների համեմատաբար ցածր կատարողականով, որի պայմաններում առաջացել են լրացուցիչ ժամանակավոր ազատ դրամական միջոցներ, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի միջոցների մնացորդն ավելի ցածր, բայց վճարումների անխափան իրականացման համար բավարար մակարդակում պահելու հանգամանքով: Ներդրվող ավանդների մեծությամբ է պայմանավորված թե՛ 2018 թվականի ընթացքում բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և ավանդներից ստացված տոկոսագումարների ծրագրավորված ցուցանիշի գերազանցումը, և թե՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց աճը: 2018 թվականի ընթացքում ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.6%, որը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են ավելի քան 2.1 մլրդ դրամ շահաբաժիններ՝ 30%-ով գերազանցելով տարեկան ծրագրված մուտքերը և 88.1%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ օդային տարածքով իրականացվող տարանցիկ չվերթների աճի արդյունքում

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կառավարմանը հանձնված 100 տոկոս պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականի գործունեության արդյունքներով ունեցած բարձր շահույթով, որից ՀՀ պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ 185.5%-ով կամ 914.3 մլն դրամով գերազանցելով նախորդ տարի փոխանցված գումարը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարները կազմել են ավելի քան 10.2 մլրդ դրամ՝ 87.2%-ով ապահովելով ծրագիրը, որից 10.1 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 142.3 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին (Վրաստանին) տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներն ապահովել են ծրագրային ցուցանիշը 87%-ով, իսկ ոչ ռեզիդենտների վճարումները՝ 100%-ով: Նախորդ տարվա համեմատ տոկոսավճարներից մուտքերը նվազել են 17.2%-ով կամ 2.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտներից ստացված տոկոսավճարների նվազմամբ:

2018 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 3.6 մլրդ դրամ *ոչ պաշտոնական դրամաշնորհներ*՝ 7 անգամ գերազանցելով տարեկան ծրագրված և 5.4 անգամ՝ նախորդ տարվա ցուցանիշը:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է գանձվել 14.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99%-ը: Մասնավորապես՝ ծրագրի նկատմամբ շեղում է արձանագրվել ՀՀ ճանապարհային ոստիկանության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում ստացված մուտքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 9.6 մլրդ դրամ (կանխատեսված ցուցանիշի 86.9%-ը) և 660.3 մլն դրամ (կանխատեսված ցուցանիշի 43.9%-ը): 2017 թվականի համեմատ իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերն աճել են 9.3%-ով կամ 1.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերի և ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված ճանապարհային իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից մուտքերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար շուրջ 2 մլրդ դրամ և 9.6 մլրդ դրամ՝ 19.5 անգամ և 16.3%-ով գերազանցել նախորդ տարվա մուտքերը, ինչպես նաև

օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներից գանձված գումարներով, որոնք կազմել են 1.3 մլրդ դրամ:

Հաշվետու տարում *ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից* ստացված եկամուտները կազմել են 27.4 մլրդ դրամ՝ 94.5%-ով ապահովելով ծրագիրը: Մասնավորապես՝ ծրագրի նկատմամբ զգալի շեղում է արձանագրվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի (Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN4 և 4/3 հասցեներում) շրջանակներում ստացված արտաբյուջետային մուտքերի գծով, որոնք կազմել են 635.1 մլն դրամ կամ կանխատեսված մուտքերի 18.9%-ը: Ծրագրի նկատմամբ շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերոհիշյալ հասցեներում կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրի բնակարանների բաշխման և վաճառքի գործընթացը սկսվել է 2018 թվականի նոյեմբերին, և կնքվել է ընդամենը երկու նախնական պայմանագիր: Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն աճել են 0.6%-ով կամ 156.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված միջոցների, ՀՀ կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարների, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի եկամուտների աճով: ՀՀ կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարների աճը պայմանավորված է կատարված գործարքների թվի աճով, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային մուտքերի աճը՝ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից մաքսային ձևակերպումների քանակի աճով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող *այլ եկամուտները* կազմել են 3.8 մլրդ դրամ՝ 21.9%-ով գերազանցելով տարեկան ծրագիրը և 75%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր տարեկան 1,465.2 մլրդ դրամ ծախսերի կատարում: Ելնելով օրենսդրության պահանջներից՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 1,527.3 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,447.1 մլրդ դրամ, տարեկան ծրագիրը կատարվել է 94.7%-ով: Ծրագրից շեղման ընդհանուր գումարի 48%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է բյուջեի ծախսերի 95.2%-ը կամ 1,377.7 մլրդ դրամը, որոնց ծրագիրը կատարվել է 97.9%-ով: Բյուջեի ծախսերի 4.8%-ը՝ 69.4 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է ծրագրի 57.7%-ը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի համեմատաբար ցածր կատարողականին՝ հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերը նվազել են 3.8%-ով կամ 57.7 մլրդ դրամով: Ինչպես նշվել է, 2017 թվականի պետական բյուջեով արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձը բյուջեի ծախսերում նախատեսված էր միայն առաջին եռամսյակում, որն իրականացվել է ամբողջ ծավալով, իսկ երկրորդ եռամսյակից սկսած այն հիմնականում իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով: Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ 2017 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 2.8%-ով՝ 41.1 մլրդ դրամով նվազում, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռք բերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի կրճատմամբ:

2018 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 7.8% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են 2.8%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 24.1%՝ 2017 թվականի 26.7%-ի և կանխատեսված 25%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

Ընթացիկ ծախսեր

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 1,299 մլրդ դրամ, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 97.1%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5%-ով կամ 31.5 մլրդ դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ համադրելի դասակարգմամբ (առանց 2017 թվականին ԱԱՀ-ի վերադարձի)՝ ընթացիկ ծախսերի աճը կազմում է 3.9% կամ 48.2 մլրդ դրամ:

Ընթացիկ ծախսերի 11.8%-ը՝ շուրջ 152.8 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն աճել են 5.2%-ով:

2018 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 155.6 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 12%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 93.6%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն աճել են 0.9%-ով կամ 1.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ նորոգման ու պահպանման և նյութերի ձեռք բերման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 139 մլրդ դրամ ուղղվել է կառավարության պարտքի և մուրհակների սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Մասնավորապես՝ ներքին տոկոսավճարները կազմել են 64 մլրդ դրամ (99.8%), արտաքին տոկոսավճարները՝ 75 մլրդ դրամ (100%): Պարտքի սպասարկման ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 13.8%-ով: Մասնավորապես՝ ներքին պարտքի սպասարկման ծախսերն աճել են 10%-ով, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերը՝ 17.3%-ով[28]:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 111.2 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 99%-ը: Նշված գումարից շուրջ 106.7 մլրդ դրամը տրամադրվել է պետական կազմակերպություններին, 4.5 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից, ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, 84.9 մլրդ դրամը տրամադրվել է կրթության, 9.8 մլրդ դրամը՝ հանգստի, մշակույթի և կրոնի, 6.9 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների, 5.8 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 1.4 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 34.8 մլն դրամը՝ շրջակա միջավայրի

[28] ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի մանրամասն վերլուծությունը ներկայացված է պետական բյուջեի գործառական դասակարգմամբ ծախսերի վերլուծության բաժնում (էջ 236-238):

պաշտպանության, 59.2 մլն դրամը՝ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառների կազմակերպություններին, և ևս 1.2 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուբսիդիաների գծով ծախսերը նվազել են 1.4%-ով կամ 1.6 մլրդ դրամով: Սուբսիդիաների նվազումը հիմնականում պայմանավորված է 2018 թվականին կրթության ոլորտի սուբսիդավորման նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 9.7%-ը կամ 126.3 մլրդ դրամ տրամադրվել է դրամաշնորհներին՝ ապահովելով 97.3% կատարողական: Նշված գումարից 123.1 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, որից 48.2 մլրդ դրամը՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: 3.2 մլրդ դրամ է տրամադրվել միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության համար՝ կազմելով ծրագրի 95.2%-ը: 11.2 մլրդ դրամ սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին, որից 8.7 մլրդ դրամը կազմել են ընթացիկ սուբվենցիաները, որոնք կատարվել են 99.1%-ով, 2.5 մլրդ դրամը՝ կապիտալ սուբվենցիաները, որոնց կատարողականը կազմել է 73.1%: 2017 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները նվազել են 5%-ով: Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ դրամաշնորհների ծախսերում արձանագրվել է 8.5% (9.9 մլրդ դրամով) աճ՝ հիմնականում պայմանավորված ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների համար, ինչպես նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումներով, համայնքներին տրամադրված կապիտալ սուբվենցիաների և ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին կատարված փոխանցումների աճով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 32.8%-ը՝ 425.5 մլրդ դրամ են կազմել սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98.4%-ով: Նշված հատկացումներից 130.8 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 294.7 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 95.2%-ով և 100%-ով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 3.5%-ով կամ 14.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների գծով ծախսերի 5.1% (14.4 մլրդ դրամով) աճով: Ընդ որում, կենսաթոշակների աճը հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով:

2018 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 14.5%-ը կամ 188.5 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 92.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.2%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2018 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 148.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 10.2%-ը և տարեկան ծրագրի 78%-ը: 2017 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 37.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի կրճատմամբ:

2018 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 152 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 74%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 67.7 մլրդ դրամը կատարվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք կատարվել են 61.7%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 123.9 մլրդ դրամը՝ նախատեսվածի 76.6%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 25 մլն դրամը կամ նախատեսվածի 64.8%-ը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 3 մլրդ դրամը կամ նախատեսվածի 61.4%-ը՝ այլ հիմնական միջոցների, 12.2 մլն դրամը կամ նախատեսվածի 45.7%-ը՝ պաշարների ձեռքբերման նպատակով: 2017 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 36.2%-ով կամ 86.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի նվազմամբ, որոնց գծով 2017 թվականին 86.6 մլրդ դրամ էր հատկացվել Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ծրագրի շրջանակներում, որի գծով 2018 թվականին միջոցներ չեն օգտագործվել:

Հաշվետու տարվա ընթացքում 3.9 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախատեսված 15.6 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 1.9 մլրդ դրամը ստացվել է հողի, 2 մլրդ դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից 278.5 մլրդ դրամ տրամադրվել է *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների* ծախսերին՝ ապահովելով ծրագրի 97.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի, ինչպես նաև հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի կատարողականով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականին արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձը մասամբ արտացոլվել էր ծախսերում, իսկ 2018 թվականին այն ամբողջությամբ իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով՝ 2017 թվականի համադրելի ցուցանիշի (առանց ԱԱՀ-ի վերադարձի) համեմատ ոլորտի ծախսերի աճը կազմում է 7.9% կամ 20.4 մլրդ դրամով, որի բացատրությունները ներկայացվում են ստորև:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 20.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 2.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի նվազմամբ:

2018 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 91.2%-ով՝ կազմելով շուրջ 4.1 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է նախատեսված մի շարք գործուղումների և ընդունելությունների չկայացմամբ: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 1.8%-ով, հիմնականում պայմանավորված հաստիքների կրճատմամբ, բարենպաստ եղանակով և էներգախնայող միջոցառումների իրականացմամբ, ինչպես նաև Ազգային ժողովի արտահերթ ընտրություններով պայմանավորված գործուղումների գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 19.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի և գործուղումների գծով ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 13.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 92.3%-ը, որը տնտեսումների արդյունք է: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ սփյուռքի նախարարության, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը 22.6%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված 2018 թվականին վերոհիշյալ 3 նախարարությունների պահպանման ծախսերը տվյալ դասում ներառելու հանգամանքով:

Հաշվետու տարում շուրջ 1.1 մլրդ դրամ սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանին՝ աշխատակազմի պահպանման նպատակով, որն ամբողջությամբ օգտագործվել է և նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխության չի ենթարկվել:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 21.6 մլն դրամն օգտագործվել է 99.8%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 19.8%-ով:

ՀՀ Վերահսկիչ պալատի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 14.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 92.7%-ը:

232.1 մլն դրամ է տրամադրվել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացմանը՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Նշված ծրագրի շրջանակներում միջոցներն օգտագործվել են հիմնականում հետևյալ ուղղություններով. ձեռք են բերվել 4 ավտոմեքենա, 1 միկրոավտոբուս, 1 տրակտոր, 3 խոտհնձիչ մեքենա, 150 դյուրակիր համակարգիչ, 103 համակարգիչ, 18 օդորակիչ, 3 փոշեկուլ, 8 մետաղական պահարան, նորաստեղծ մամուլի ակումբի համար գույք, վերազինվել է լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 249.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 93.2%-ը: Հատկացված միջոցներով ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ արդարադատության և սփյուռքի նախարարությունների աշխատակազմերի համար ձեռք են բերվել գույք, սարքավորումներ, համակարգչային տեխնիկա: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է որոշ գնումների գծով գնման գործընթացի չկայացմամբ:

ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը կազմել են 62.5 մլն դրամ կամ ծրագրի 50.7%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) 3 հետազոտություն (եռամսյակը մեկ

անգամ), համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) 1 հետազոտություն, որոնց արդյունքները հրապարակվել են ՀՀ կառավարության կայք-էջում: Այս հետազոտությունները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի բարեփոխումների ռազմավարության մշակման համար և տալիս են օբյեկտիվ ու ճշգրիտ տեղեկատվություն ոլորտների զարգացման մասին: Ծրագրից շեղումը պայմանավորված է ծրագրի ժամանակավոր դադարեցմամբ՝ պատվիրատուի և կատարողի միջև պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագրի փոփոխությամբ, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը նվազել են 49.3%-ով:

ՀՀ արդարադատության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով 2018 թվականին օգտագործվել է 19.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 91.7%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման համար հատկացված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 91.4 մլն դրամ: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը, հստակեցմանն ու պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումը, նոր կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծությունը և ազդեցության գնահատումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության պահպանմանը տրամադրվել է 21.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 77.3%-ը: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի նվազումը (5.8%-ով) պայմանավորված են թափուր հաստիքների առկայությամբ:

Պետության կողմից ծառայությունների էլեկտրոնային մատուցման համալիր ծրագրի ապահովման նպատակով 2018 թվականին նախատեսված 3.2 մլն դրամը չի օգտագործվել: Նշված ծրագիրը գործում է 2017 թվականից: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հիմնական միջոցներից է արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորումը, որի նպատակով կարևորվում է նաև հանրային կառավարման համակարգի շարունակական արդիականացումը: Այս պատճառով նախատեսվում էր պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայությունները էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման

վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում: Սակայն 2018 թվականին որոշում է կայացվել ծրագիրը չիրականացնել՝ հաշվի առնելով, որ նախատեսվում է ստեղծել օրենքով սահմանված անկախ, ունիվերսալ, անհրաժեշտ երաշխիքներով և գործիքակազմով օժտված հակակոռուպցիոն նոր մարմին:

Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովմանը տրամադրվել է 514 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 87.3%-ը: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվել են 335.3 մլն դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 96.8%-ը: Տվյալ միջոցները գոյանում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ապոստիլ դնելու և շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վճարովի ծառայությունների մատուցումից: Արձանագրվել են տնտեսումներ որոշ ապրանքատեսակների ձեռքբերման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.8%-ով:

2017 թվականի հուլիսի 31-ին ՀՀ արդարադատության նախարարության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև կնքվել է «Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցով բարելավելու օրենսդրական և կարգավորիչ դաշտը՝ աջակցելու ազդարարների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծմանը» դրամաշնորհային ծրագրի իրականացման մասին փոխըմբռնման հուշագիր: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործում, մասնավորապես, ազդարարների պաշտպանության մասով՝ ազդարարներին հնարավորություն ընձեռելով հաղորդել կոռուպցիոն ռիսկերի մասին պաշտպանված եղանակով, և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում՝ հանրային իրազեկմանն ուղղված գործունեությանը, ընդգրկելով նաև ազդարարների պաշտպանության համակարգը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին օգտագործվել է 6.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2018 թվականին ծրագիրն ավարտվել է:

ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված N AAG-111-G-13-001 Զարգացման համագործակցության համաձայնագրի ներքո իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2018 թվականին ծախսվել է նախատեսված միջոցների 73.1%-ը՝ 51 մլն դրամ կատարված ծախսերի և դրան համապատասխան ներկայացված հայտերի հիման վրա: Ծրագրի իրականացման նպատակով 2016 թվականին

ստեղծվել է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը:

Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունը ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով ստեղծված արտաբյուջետային հաշվի միջոցներից 2018 թվականին օգտագործվել է 1.3 մլն դրամ կամ ծրագրի 94.3%-ը, որը պայմանավորված է դիմած անձանց քանակով: 2017 թվականին այս նպատակով օգտագործվել էր 2 մլն դրամ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին 2018 թվականին տրամադրվել է 26.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 93.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի ու ՌԴ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ-ին անդամակցության շրջանակներում ՀՀ-ին տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 31.6%-ով, իսկ (առանց ԱԱՀ-ի վերադարձի) աճել են 18.5%-ով կամ 4.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերով, որոնք 2017 թվականին չէին նախատեսվել:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 15.6 մլրդ դրամ, որն օգտագործվել է 98.6%-ով՝ պայմանավորված գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՊԵԿ-ի աշխատողների դրամական խրախուսման ծախսերի աճով:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով տրամադրվել է 29.6 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նշենք, որ 2017 թվականին այս նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.3%-ով, որը պայմանավորված է ակցիզային դրոշմանիշերի տպագրական աշխատանքների գների աճով և պահեստավորված մնացորդի բացակայությամբ:

Հաշվետու տարում ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 162.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 95%-ը, որը պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցված ծառայությունների ծավալով, ինչպես նաև գնման գործընթացի արդյունքում առաջացած միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 16.1%-ով, որը պայմանավորված է ՊՈԱԿ-ների հաշիվները գանձապետարան տեղափոխելու հանգամանքով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված շուրջ 85.6 մլն դրամն օգտագործվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 80.3%-ով, որը պայմանավորված է էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման հանգամանքով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարողությունների զարգացմանը հատկացվել է 351.4 մլն դրամ, որն օգտագործվել է 98.1%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով:

Դրոշմապիտակների ձեռք բերման ծախսերը կազմել են 3 մլրդ դրամ: Տարեկան ծրագիրը կատարվել է 100%-ով: 2018 թվականի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 800 մլն հատ դրոշմապիտակ: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն աշխատանքներն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին 2018 թվականի 4-րդ եռամսյակում ձեռք է բերվել ևս 400 մլն հատ դրոշմապիտակ: 2017 թվականին դրոշմապիտակների ձեռքբերման նպատակով գումար չէր տրամադրվել՝ պայմանավորված պահեստավորված դրոշմապիտակների առկայությամբ:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման վճարը կազմել է 30.6 մլն դրամ կամ նախատեսվածի 92.4%-ը և նախորդ տարվա համեմատ նվազել է 5.6%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ, ինչպես նաև 2018 թվականին Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությամբ: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի

հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի հանդիսանում ԱԱՀ վճարող (կամավորության սկզբունքով չի հաշվառվել որպես ԱԱՀ վճարող)՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից ՀՀ ֆինանսների նախարարությունը ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու, ինչպես նաև ԱԱՀ-ի ու ակցիզային հարկի միասնական հաշվարկներ հարկային մարմին ներկայացնելու պարտավորություն չի կրում:

ՌԴ կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ անդամակցության շրջանակներում ՀՀ տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 507 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 46.3%-ը, ինչը պայմանավորված է «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի լուծարմամբ և այն հանգամանքով, որ 2018 թվականին կնքված պայմանագրերից 2 կազմակերպությունների մատուցած ծառայությունների մի մասի դիմաց վճարումները, համաձայն պայմանագրի, տեղափոխվել են 2019 թվական:

Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 5.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 83.1%-ը, որը պայմանավորված է ՀՀ ՊԵԿ-ում իրականացվող հարկային և մաքսային մարմինների վարչարարության բարեփոխումների և համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով գնման նոր գործընթացների կազմակերպմամբ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով, որը պայմանավորված է 2018 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեում կատարված կառուցվածքային փոփոխություններով, կազմակերպված գնումների նոր գործընթացներով և եկամուտների բարձր հավաքագրմամբ:

Հաշվետու տարում 17.1 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 97.5%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2017 թվականի համեմատ աճել են 14.4%-ով՝ հիմնականում պայմանավորված Երևանում Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման ու անցկացման և ՀՀ դեսպանությունների ու ներկայացուցչությունների պահպանման ծախսերի աճով:

2018 թվականին արտաքին հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանն ու ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությանը տրամադրվել է շուրջ

1.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.7% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով:

Արտաքին հարաբերությունների դասում ավելի քան 10.1 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 530 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Հատկացումները ծախսվել են արտերկիր գործուղված դիվանագետների աշխատավարձերի, ամսական փոխհատուցման, բնակարանների վարձակալության, ինչպես նաև ծառայողական շենքերի վարձակալության, պահպանման և դեսպանությունների այլ ծախսերի համար: Օտարերկրյա պետություններում գործում է ՀՀ 58 դիվանագիտական ներկայացուցչություն: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի հաշվին կատարված ծախսերն աճել են 5.2%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի փոխարժեքների փոփոխությամբ: Արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք գոյանում են նվիրատվություններից և հանգանակություններից, ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը նվազել են 25.4%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության ծախսերը կազմել են ավելի քան 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների բյուջեի նվազմամբ, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամավճարների տոկոսադրույքների փոփոխությամբ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 108 միջազգային կազմակերպությունների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.3%-ով, որը պայմանավորված է Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի, Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպայի տարածաշրջանի համագործակցության ծրագրի և միջխորհրդարանական միության անդամակցության վճարների ավելացմամբ, ինչպես նաև արտարժույթների փոխարժեքների աճով:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 137.7 մլն դրամ և 508.7 մլն դրամ, որոնց ճշտված ծրագրերը կատարվել են 68.8%-ով և 90.8%-ով: Նախորդ տարվա համեմատ պատվիրակությունների ընդունելությունների ծախսերը նվազել են 24.9%-ով, իսկ արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը՝ 9.9%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը տրամադրվել է 155.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.9%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Նախատեսված ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 36.5 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով՝ ըստ պայմանագրի, 2018 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2017 թվականի համեմատ աճել են 7.5%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են շուրջ 81.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 82.7% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին ու արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.5%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ, ինչպես նաև 2018 թվականին Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությամբ, որի համաձայն: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի հանդիսանում ԱԱՀ վճարող (կամավորության սկզբունքով չի հաշվառվել որպես ԱԱՀ վճարող)՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից ՀՀ ֆինանսների նախարարությունը ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու, ինչպես նաև ԱԱՀ-ի ու ակցիզային հարկի միասնական հաշվարկներ հարկային մարմին ներկայացնելու պարտավորություն չի կրում:

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերակառուցման աշխատանքների ծախսերի փոխհատուցման ՀՀ մասնաբաժինը կազմել է 12 մլն դրամ (100%): ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելությունը տեղակայված է Բրյուսելում: ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շահագործումից հետո Գործընկերների համար հատկացված մասնաշենքում տարածքների վարձակալության վերաբերյալ ՆԱՏՕ-ն որոշում է կայացրել, որ ծախսերի հիմնական մասը կիրականացվի իր կողմից՝ պայմանով, որ դրանք վարձակալների կողմից սկսեն մարվել 2016 թվականից սկսած: Այդ գումարները պետք է վճարեն գործընկերներ-երկրները՝ ըստ իրենց զբաղեցրած տարածքների: Հայաստանի մասնաբաժինը կազմում է 154970 եվրո, որից 12 մլն դրամի համարժեք եվրոն նախատեսված է ներքին հարդարման լրացուցիչ աշխատանքների համար և վճարվել է 2018 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.5%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Երևանում Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 93.8%-ը: Ծախսերի կատարողականը պայմանավորված է նրանով, որ միջոցառումների մի մասն իրականացվել է ստացված նվիրատվության հաշվին: 2018 թվականի հոկտեմբերի 7-12-ը Հայաստանը հյուրընկալել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամենաբարձր ղեկավար ատյանի՝ Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների 17-րդ գագաթնաժողովը: Երևանում անցկացված գագաթնաժողովին Հայաստանը երկու տարի ժամկետով՝ մինչև 2020 թվականը, ստանձնեց 84 անդամ, ասոցացված և դիտորդ պետություններին և կառավարություններին միավորող այս խոշոր կառույցի նախագահությունը: Երևանում անցկացված ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովն աչքի ընկավ մասնակցության բարձր մակարդակով և քանակով: Գագաթնաժողովին ընդհանուր առմամբ մասնակցեցին շուրջ 3000 հոգի՝ կազմակերպության անդամ երկրներից և կառավարություններից, կազմակերպությունից և կազմակերպության գործընկեր կառույցներից: Ընդ որում, միջոցառմանը ներկա շուրջ 100 պատվիրակություններից 35-ը գլխավորում էին նախագահներ, փոխնախագահներ, վարչապետ և փոխվարչապետ: Բացի այդ, ներկա էին նաև մեծ թվով լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Որպես հյուրընկալ կողմ՝ Հայաստանը ստանձնեց կազմակերպության անդամ 84 երկրի և կազմակերպության պաշտոնական պատվիրակությունների հյուրընկալության ծախսերը 1+4 ձևաչափով: Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի և նախորդող մյուս ատյանների նիստերին զուգահեռ անցկացվել են նաև մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ Ֆրանկոֆոնիայի ավանի կազմակերպում Օպերայի հարակից Ազատության հրապարակում, Ֆրանկոֆոն Գործարար և թվային ֆորումի կազմակերպում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում, ֆրանկոֆոն

գալա համերգի կազմակերպում Հանրապետության Հրապարակում ֆրանկոֆոն երկրների հանրահայտ արտիստների մասնակցությամբ:

Հաշվետու տարում 600.4 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 79.1%-ը և 18.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի) պահպանման ծախսերի նվազմամբ: Նշված ծախսերը կազմել են 175.9 մլն դրամ կամ նախատեսվածի 54.2%-ը և 42.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի լուծարմամբ:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 113.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 310.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.8%-ը՝ կապված տնտեսումների հետ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.3%-ով:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 98.8%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 19%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովման նպատակով 2017 թվականին ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել էր 560.9 մլն դրամ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ ծրագրի 98.7%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են շուրջ 620.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հացահատիկի մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում առաջացած կորուստներ», «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն», «Աշխատուժի հետազոտություն» վիճակագրական հետազոտությունները և սոցիալ-տնտեսական բնույթի այլ սկզբնական տեղեկատվության հավաքագրումը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը

նվազել են 7.5%-ով, ինչը պայմանավորված է աշխատավարձի, էներգետիկ, կապի, մասնագիտական, տպագրական ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի խթանման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 96.2 մլն դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը և 3.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի կատարողականը պայմանավորված է համակարգչային ծառայությունների գծով առաջացած տնտեսմամբ:

Հերթական մարդահամարի աշխատանքների կազմակերպման, անցկացման և ամփոփման նպատակով տրամադրվել է 69.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 92.2%-ը, քանի որ որոշ ծառայությունների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջացել, ինչպես նաև մրցույթների արդյունքում որոշ պայմանագրեր կնքվել են նախատեսվածից ցածր գներով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ 2020 թվականի մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման աշխատանքներ:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրին տրամադրվել է 149.6 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոններն իրենց գործունեությունը ծավալում են երեք հիմնական ուղղություններով՝ մասնագիտական կարողությունների զարգացում, բիզնես զարգացում ու աքսելերացիա և կառավարվող աշխատանքային տարածքների պահպանություն:

2019 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացված 96.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում կատարվել է տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային այլանսին անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի փոխանցում՝ 2019 թվականին տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը Հայաստանում կազմակերպելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Եվրասիական տնտեսական միության հետ տեղեկատվական հոսքերի ապահովման նպատակով ինտեգրացված համակարգի ազգային սեգմենտի պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներն օգտագործվել են 99.5%-ով՝ կազմելով 93.9 մլն դրամ Ծրագիրն իրականացնում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ն, որը ՀՀ կառավարության որոշմամբ ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն

շլյուզ (պետական բաղադրիչի օպերատոր): Ծրագրի նպատակն է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումը: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շլյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 94.3%-ով՝ պայմանավորված անհրաժեշտ ծրագրային ապահովման քանակի ավելացմամբ:

Հերթական մարդահամարի աշխատանքների կազմակերպման նպատակով միջազգային համագործակցության շրջանակներում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության արտաբյուջետային հաշվին փոխանցված միջոցներից օգտագործվել է 12.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 88.8%-ը: Շեղումը պայմանավորված է կայացած մրցույթների արդյունքում պայմանագրերն ավելի ցածր գներով կնքելու հանգամանքով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 980.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 11.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարմամբ, որին 2017 թվականին հատկացվել էր 69.1 մլն դրամ, ինչպես նաև տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ծախսերի նվազմամբ: Հաշվետու ժամանակահատվածում 698.4 մլն դրամ տրամադրվել է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.8 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 90.1% և 97.7%: Նախորդ տարվա համեմատ նշված առաջին ծրագրի ծախսերը նվազել են 8.7%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պահպանման ծախսերի նվազմամբ: Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերն աճել են 1.9%-ով:

Հաշվետու տարում պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 276.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 100%-ը: Ծրագրով իրականացվում է կառավարական N 1 շենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության աշխատակազմին ամրացված այլ շենքերի և շինությունների սպասարկում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով, որը պայմանավորված է Բաղրամյան 24 և 26 հասցեների շինությունների ընթացիկ պահպանման, շահագործման և սպասարկման աշխատանքների ավելացման հանգամանքով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվել է 405.3 հազ դրամ՝ վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով: Միջոցներն օգտագործվել են 84.7%-ով:

2018 թվականին *«Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք»* դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 10.3 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի կրճատմամբ:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 776.8 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 96.8% կատարողական և 5.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը պայմանավորված է հավելավճար ստացած գիտաշխատողների փաստացի քանակով: 2018 թվականին հավելավճարներ է տրամադրվել 582 գիտության դոկտորների և 1460 գիտության թեկնածուների, իսկ 2017 թվականին՝ 601 գիտության դոկտորների և 1559 գիտության թեկնածուների, սակայն տարբեր է եղել ֆինանսավորվող ժամանակահատվածը (ըստ ամիսների):

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 13.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերող գիտական հետազոտություններ: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ նվազել են 7%-ով՝ պայմանավորած մրցույթում ներկայացված ցածր գնային առաջարկով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են շուրջ 7.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Միջոցներն ուղղվել են բազային ֆինանսավորում ստացող գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.7%-ով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծախսերը կազմել են 705.6 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 839.4 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված են Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի կրճատմամբ:

Ամբողջությամբ օգտագործվել են նաև ««ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 275.4 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում ԱՐԵԱԼ գծային արագացուցչի ծրագրի շնորհիվ հնարավորություն ստեղծվեց հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրման ծախսերը կազմել են 158.4 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում վճարվել են 46 իսկական և 54 թղթակից անդամների պատվովճարներ:

Ներդրումները ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպություններում կազմել են 50 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի ինստիտուտների վերազինմանն արդի պահանջներին համապատասխանող սարքավորումներով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը 2018 թվականին կազմել են 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.2%-ը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի կրճատմամբ: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 1.2 մլրդ դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 94.8%-ով: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված մրցույթներն իրականացվել են տարեվերջին: Մրցույթների ուշ իրականացումը պայմանավորված է փորձաքննության արդյունքների ուշ հրապարակմամբ, ինչը անկախ փորձագետների գործառույթն է: Նախորդ տարվա համեմատ պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերը նվազել են 17.9%-ով՝ պայմանավորված թեմաների քանակով: 2018 թվականի ընթացքում ֆինանսավորվել են ընդհանուր առմամբ 267 գիտական թեմաներ՝ 2017 թվականի 271-ի դիմաց:

Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների ծախսերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 135 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 34.7%-ով՝ պայմանավորված 2018 թվականին ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտին» բյուջեից ֆինանսավորում չտրամադրելու հանգամանքով՝ ծրագրերի ավարտման պատճառով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 10.2 մլրդ դրամ կամ ծրագրի 82.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ու դրամաշնորհային ծրագրերի ծախսերի կատարողականով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերը նվազել են 24.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին ՀՀ Ազգային ժողովի և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացմամբ ու «Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով: Նշենք, որ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի արտահերթ ընտրությունները ֆինանսավորվել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պահպանման նպատակով տրամադրվել է 94.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 77.8%-ը, որը պայմանավորված է խնայողություններով: 2018 թվականի ընթացքում հանձնաժողովն, իրականացնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթները, դիմումների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ իրավական ընթացակարգերի շրջանակում իրականացրել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց առերևույթ հակաէթիկական վարքագծին, շահերի բախմանը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից հայտարարագրման ենթակա տվյալների առնչությամբ առերևույթ խախտումներին առնչվող ուսումնասիրություններ, որոնց թիվը կազմել է 421: Այդ կապակցությամբ նախաձեռնվել են համապատասխան ընթացակարգեր, և ՀՀ պետական բյուջե է վճարվել 8,730.5 հազար դրամ:

Հաշվետու տարվա ընթացքում ավելի քան 1 մլրդ դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասում ընդգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ

կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 95.3%-ը՝ պայմանավորված տնտեսումներով, ինչպես նաև որոշակի ծախսեր կատարելու նպատակահարմարության բացակայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով:

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման նպատակով օգտագործվել է 716.4 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 49.8%-ով՝ պայմանավորված 2018 թվականին ավելի մեծ թվով համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների անցկացմամբ:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրվել է 515.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննությունների քանակի նվազմամբ: 2018 թվականին ընդհանուր առմամբ իրականացվել է 14437 փորձաքննություն՝ 2017 թվականի 17596-ի դիմաց:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներն իրականացնելու համար պետական բյուջեից տրամադրվել է 30.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով: 2018 թվականին իրականացվել են պետական գույքի՝ թվով 369 աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում, նախորդ տարվա 435-ի դիմաց:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը հաշվետու տարում կազմել են 301.1 մլն դրամ, որոնք նույնպես նախատեսված ծավալով իրականացվել են և նախորդ տարվա համեմատ աճել 10.9%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական գույքի հաշվառման թվով 9335 (2017թ.՝ 7616), պետական գույքի գնահատման 82 (2017թ.՝ 932), գույքի գույքագրման և ուսումնասիրությունների անցկացման 758 (2017թ.՝ 916) աշխատանքներ և շենքերի սպասարկման աշխատանքներ:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 637.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը և 20%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված համակարգի օպտիմալացման շրջանակներում հաստիքների կրճատմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 3.3 մլրդ դրամ կամ ծրագրի 97.7%-ը: 2017

թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.1%-ով, որը պայմանավորված է կոմիտեի եկամուտների աճով:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 36 մլն դրամ կամ նախատեսվածի 32.5%-ը: Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով: ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանի համաձայն, ծրագրի կառավարման խմբի միջոցով իրականացվում է ծրագրի շարունակության կառավարումը և վերահսկումը: 2018 թվականին ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են, և ծրագրից շեղումը հանդիսանում է ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 14.1 մլն դրամ կամ նախատեսվածի 91%-ը, որը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով ապրանքների ձեռքբերմամբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային և տնտեսական գույք:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 410 մլն դրամ կամ նախատեսվածի 86.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է որոշ գեոդեզիական աշխատանքների կատարման անհրաժեշտության բացակայությամբ և փաստացի կնքված պայմանագրերի ցածր արժեքով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.6%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի նպատակն է՝ օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումները, որպեսզի հնարավորություն ընձեռվի արդիականացնել բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման

ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2018 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ և լիցենզիաներ ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի համար ուսուցման գործընթացի և հեռահար ուսուցում անցկացնելու նպատակով.
- Իրականացվել է «Բիզնես միջավայրի շրջանակներում հարկային ընկալման հետազոտություն հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքի վերաբերյալ».
- Մշակվել և գործարկվել է «Հարկային ստուգումների գործերի կառավարման համակարգը».
- Ձեռք են բերվել ցանցային սարքավորումներ և անվտանգության լիցենզիաներ, արդիականացվել են ՀՀ ՊԵԿ ենթակառուցվածքի 19 շենքերի ներքին ցանցերը.
- Մշակվել են հինգ նոր ենթահամակարգեր Ինտեգրացված եկամուտների կառավարման («Հարկատու 3») համակարգի համար.

1. Գանձապետարանից ստացված տվյալների ավտոմատացում,
2. Երրորդ անձանց տվյալների ավտոմատացում,
3. Կամերալ ուսումնասիրությունների ավտոմատացում,
4. Իրավական վարույթների էլեկտրոնային ենթահամակարգ,
5. Էլեկտրոնային վճարումների ենթահամակարգ:

Նկարահանվել է հինգ տեսաֆիլմ, որտեղ ներկայացվում են հարկային վարչարարությունը, մաքսային վարչարարությունը, ՏՏ ենթակառուցվածքները, ՀՎԱԾ ծրագրի ընդհանուր աշխատանքները, հարկային վճարումների գովազդումը Հայաստանում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 3.6%-ը: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնարկություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,

- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2018 թվականի ընթացքում կատարվել է միայն վարկային ծրագրի աուդիտը:

2018 թվականի համար ծրագրված աշխատանքների թերակատարումը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկային ծրագիրը սառեցված է 2016 թվականից: 2018 թվականի նոյեմբերի վերջին ծրագրի շրջանակում կատարվեց առաքելական այց Համաշխարհային Բանկի պատվիրակության կողմից, որի ժամանակ քննարկվեցին ծրագրի վերակառուցման և իրականացման հետագա բնականոն ընթացքն ապահովելու հարցերը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ 2019 թվականին, նոր կառավարության և Ծրագրի Ղեկավար Հանձնաժողովի ձևավորումից հետո, վերջինիս հաստատմանը կներկայացվի Ծրագրի իրականացման գործողությունների ժամանակացույցը և Գնումների պլանը, որից հետո այն կուղարկվի Համաշխարհային Բանկ հաստատման նպատակով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80.9%-ը: Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր,
- Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ,
- Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ,
- Ծրագրի կառավարում:

2018 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Էլեկտրոնային կառավարման կազմակերպման և ղեկավարման քաղաքական և ինստիտուցիոնալ կառուցվածքի հզորացում,
- Պետական կառավարման ներքին համակարգերի (փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման համակարգ, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգ և այլն) արդիականացում և ինտեգրում,
- Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի մոնիթորինգի և գնահատման հերթական փուլը,
- Ծրագրի տարեկան աուդիտը:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ «Աջակցություն ՀՀ Ֆինանսների նախարարությանը Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) տեխնիկական պահանջների սահմանման, մատակարարի ընտրության և համակարգի մշակման և

ներդրման գործընթացի վերահսկման հարցերում» խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով խորհրդատուի ընտրության գործընթացի տևողությամբ: Մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը նպատակ ունենալով նվազեցնել ԿՖԿՀՏ ներդրման գործընթացի բոլոր փուլերում հնարավոր ռիսկերը՝ նախաձեռնել է միջազգային խորհրդատուի ներգրավման գործընթաց: Վերջինիս ընտրության հիմքում դրվել է ՖՆ մշակված տեխնիկական առաջադրանք, որն ամփոփել է մասնակիցների մասնագիտական որակների և փորձի առկայության պահանջները: Համաշխարհային բանկի կողմից սահմանված կանոնների համաձայն տեխնիկական առաջադրանքի հիման վրա կազմակերպվել է մրցույթ, որին մասնակցության նպատակով ներկայացվել են թվով 22 հայտեր տարբեր երկրների փորձագետների կողմից:

Հաշվի առնելով ներկայացված հայտերի քանակը, ինչպես նաև տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջների ծավալը և ընդգրկվածությունը՝ «Պետական արդիականացման երրորդ ծրագրի» կառավարման խորհրդի որոշմամբ ստեղծվել է հայտերը գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Վերջինիս կողմից առաջնահերթ մշակվել է մասնակիցների ներկայացրած ծավալուն և տարաբնույթ հայտերը առավելագույնս կոմպետենտ և արդարացի գնահատելու միասնական մեթոդական ուղեցույց:

Հայտերի նախնական գնահատման արդյունքում հանձնաժողովն ընտրել է թվով 6 մասնակիցներ: Ընտրված մասնակիցների՝ պետական ֆինանսական կառավարման համակարգի, նորագույն տեղեկատվական համակարգերի վերաբերյալ ունեցած գիտելիքների ընդհանուր, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման համակարգում դրանց պրակտիկ կիրառման պատկերացումների գնահատման նպատակով՝ Հանձնաժողովը մշակել և մասնակիցներին է տրամադրել գրավոր առաջադրանք/հարցաշար: Այնուհետ լրացված հարցաշարերը քննարկելու նպատակով ընտրված մասնակիցների հետ անցկացվել է երկփուլ հարցազրույց տեսակապի միջոցով, որի արդյունքում ընտրվել է հաղթող մասնակից: Հանձնաժողովը մրցույթի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացրել է ՀԲ-ին, որին ի պատասխան ՀԲ-ը հայտնել է իր դրական եզրակացությունը:

Արդյունքում, Հանձնաժողովն ընտրել է միջազգային խորհրդատու, որի հիմնական առաջադրանքն է լինելու վերանայել և ավարտական տեսքի բերել ԿՖԿՏՀ մրցութային փաստաթուղթը: Ներկայումս տարվում են աշխատանքներ հաղթողի հետ պայմանագրի կնքման նպատակով:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում քաղաքական իրադրության փոփոխություն է տեղի ունեցել: Ձևավորված կառավարությունն ամրագրել է պետական կառավարման համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման առաջնահերթությունները: ԿՖԿՏՀ

ներդրման աշխատանքների հետագա ընթացքի ապահովման նպատակով ծրագրին առնչվող ողջ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետին: Ակնկալվում է, որ առաջիկայում կկայացվեն համապատասխան որոշումներ, և, ըստ այդմ, կապահովվի ծրագրի իրականացումը:

«Գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի արդիականացմանն ուղղված խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով» մրցույթի ամփոփումը հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ նոր կառավարության ծրագրում սահմանվել են հակակոռուպցիոն հանձնաժողովի նոր լիազորություններ, որոնց իրականացման համար պետք է կատարվեն օրենսդրական փոփոխություններ:

Չեն կայացել հայտարարված հետևյալ մրցույթները.

- Էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգի մատակարարում և տեղադրում,
- Ոստիկանության համար օպերատիվ կառավարման փորձնական համակարգերի մատակարարում և տեղադրում (մարզերում),
- Էլեկտրոնային կառավարման, Mobile ID համակարգի, զանգերի ընդունման կենտրոնի և քաղաքացիների հետ հետադարձ կապի վերլուծության իրականացման համար միասնական պորտալի մատակարարում և տեղադրում:

2018 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 8.1%-ը՝ 46 մլն դրամ: Դրամաշնորհային համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ու Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2017 թվականի ապրիլի 28-ին: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 5-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2021 թվականի հունիսի 30-ը: Ծրագրի նպատակը Հայաստանի ազգային վիճակագրական համակարգում կարողությունների և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի մասնագիտական կարողությունների հետագա բարելավումն է՝ միջազգային չափանիշներին համահունչ վիճակագրությունը ժամանակին ստանալու և տարածելու համար: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ,
- Տվյալների հավաքագրում և տվյալների նախապատրաստում,
- Տվյալների տարածում և իրազեկում,
- Սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացում,
- Ծրագրի կառավարում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տնային տնտեսությունների և գների վիճակագրության ու միջազգային համադրումների հետազոտությունները համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույց վարելու (CAPI) համակարգով իրականացնելու նպատակով դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2018 թվականին ձեռք են բերվել 99 պլանշետներ, ինչպես նաև CAPI համակարգի ներդրմանն աջակցելու և համապատասխան բաժինների աշխատակիցների կարողությունները զարգացնելու նպատակով ծրագրի շրջանակում ընտրվել են CAPI համակարգի տեխնիկական և ուսուցման փորձագետներ, որոնք 2018 թվականին նոյեմբերին հաջողությամբ իրականացրել են անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունները և ուսուցման դասընթացները:

ՀՀ ԱՎԾ-ի կենտրոնական գրասենյակի և չորս մարզային գրասենյակների վերանորոգման աշխատանքների և կորպորատիվ ու տեղական SS ցանցերի արդիականացման նպատակով ծրագրի շրջանակում հայտարարվել է մրցույթ, և ընտրվել է խորհրդատու ընկերություն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և հետագայում վերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների իրականացման համար:

Ծրագրի շրջանակում հայտարարվել է միջազգային մրցույթ «Թվինինգ գործընկերություն ՀՀ ԱՎԾ-ի հետ ծրագրի իրականացման համար»: Մրցույթի գնահատման արդյունքներով հաղթող է ճանաչվել գերմանական GOPA Consultants ընկերության գլխավորած համատեղ ձեռնարկությունը, որին և շնորհվել է պայմանագիր, որը ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 3-ին: Ծառայությունների մատուցման գործընթացը կմեկնարկի 2019 թվականից:

Ծրագրի ցածր կատարողականի պատճառներն են.

● Տարվա ընթացքում նախատեսված մրցույթների տեխնիկական հանձնարարականների մշակման, և դրանց, ինչպես նաև գնահատման արդյունքների՝ Համաշխարհային Բանկի կողմից հաստատման գործընթացը երկար տևեց, որի արդյունքում հայտարարված մրցույթների շրջանակներում պայմանագրերը կնքվեցին տարեվերջին, ուստի դրանց իրականացումը տեղափոխվեց 2019 թվական.

● Քանի որ ՀՀ ԱՎԾ-ի և մարզային կենտրոնների վերանորոգման աշխատանքների նախագծային և նախահաշվային փաստաթղթերը պատրաստ կլինեն միայն 2019 թվականի փետրվարին, ՀՀ ԱՎԾ-ի և մարզային կենտրոնների վերանորոգման աշխատանքների, դրանց կահավորման և տեխնիկայով հագեցման հետ կապված մրցույթները, որոնց համար գումարներ էին նախատեսված 2018 թվականին, նույնպես տեղափոխվել են 2019 թվական.

● Առցանց հաշվետվությունների ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի մշակումը նախատեսված է եղել 2018 թվականի 4-րդ եռամսյակում, որի տեխնիկական հանձնարարականը դեռ գտնվում է մշակման փուլում, և միջոցառումը տեղափոխվել է 2019 թվական.

- ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակի և մարզային 5 գործակալությունների վերանորոգման աշխատանքների և կորպորատիվ ու տեղական SS ցանցի արդիականացման նախագծման առաջարկների գնահատումը երկարաձգվեց մրցույթին դիմած խորհրդատուների հայտերում ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև բանակցությունների փուլի երկար տևողության պատճառով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ԿԱՀ) ընդլայնման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 3.2 մլն դրամ կամ նախատեսվածի 20.3%-ը: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել Հայաստանում կենսապայմանների մշտադիտարկումը՝ տնային տնտեսությունների և անհատական հետազոտական տվյալների բարելավման միջոցով, որոնք հավաքագրվում է ՀՀ ԱՎԾ միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- ԿԱՀ ընտրանքի ընդլայնում,
- Ծրագրի կառավարում:

Ծրագիրը հաջողությամբ իրականացվել է նախորդ տարի: 2018 թվականի 4-րդ եռամսյակում իրականացվել է դրամաշնորհային ծրագրի աուդիտը: Ծրագրի կատարման արդյունքում առկա է տնտեսում:

Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման նպատակով 2018 թվականին տրամադրվել է 24 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 84%-ը, որը պայմանավորված է աշխատանքների կատարման համար իրականացված մրցույթի արդյունքում ձևավորված գներով:

Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի մշակման, ներդրման և կիրառման նպատակով տրամադրվել է 19.8 մլն դրամ, Կառավարման N 2 շենքում տեղակայված սարքերի և սարքավորումների հետերաշխիքային սպասարկման նպատակով՝ 15 մլն դրամ, որոնք օգտագործվել են ամբողջությամբ:

ՀՀ տարածքների նոր գոտիավորման և բազային արժեքների սահմանման նպատակով 2018 թվականին տրամադրվել է 248.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 7.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 32.6%-ը: Վերջինս հիմնականում պայմանավորված է գործուղումների ծախսերի կրճատմամբ:

Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավորը մինչև 5 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու

ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպման ծախսերը կազմել են 3.2 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը, որոնք կատարվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 52.2 մլն դրամ կամ նախատեսվածի 51.9%-ը: Համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2018 թվականի մարտի 20-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցում՝ իրականացնելով Արտահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Հաշվետվությունների ներկայացում և հաստատում,
- Կարողությունների զարգացում և առաջմղում,
- Հաղորդակցություն և տեղեկատվական արշավ,
- Իրական սեփականատերերի բացահայտում և ծրագրի կառավարում:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անկախ ադմինիստրատորի կողմից կազմվել է ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, անցկացվել են վերապատրաստման դասընթացներ և աշխատանքային հանդիպումներ, մասնավորապես՝ 2018 թվականի հուլիսի 10-ին կազմակերպվել է հանդիպում-դասընթաց Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվությունները ներկայացնելու կարգի և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործածման վերաբերյալ, նոյեմբերի 2-3-ն անցկացվել է «Շահագրգիռ կողմերի հանդիպում ԱՃԹՆ-ի զեկույցի նախագծի և 2019 թվականի ԱՃԹՆ-ի աշխատանքների շուրջ» խորագրով 2-օրյա արտագնա աշխատաժողով, որի նպատակն էր անկախ ադմինիստրատորի, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամների և այլ շահագրգիռ անձանց հետ քննարկել ԱՃԹՆ-ի զեկույցի նախագծի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունները, ինչպես նաև դեկտեմբերի 5-ին անցկացվել է ԱՃԹՆ բազմաշահառու խմբի հերթական նիստը, իրականացվել են հասարակայնության հետ կապերի և թարգմանչական աշխատանքներ, Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի ու միցառումների հանրային իրազեկման աշխատանքներն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել թվային տեսախցիկ, անցկացվել են նաև մրցույթներ տպագրական և սոցիալական մեդիայի՝ տեղեկատվական հոլովակների արտադրության և տարածման ծառայություններ ձեռք բերելու համար:

Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ Ազգային զեկույցի կազմման ժամկետի հետաձգմամբ պայմանավորված՝ զեկույցը կազմող կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է առավել երկար ժամկետով: Մրցույթի արդյունքում տվյալ կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է նախատեսվածից շուրջ 5 մլն դրամով պակաս արժեքով: Ազգային զեկույցի ներկայացման կոնֆերանսը և մարզային հանդիպումները տեղափոխվել են 2019 թվական՝ զեկույցի հրապարակումից հետո: Միաժամանակ նախատեսված երկու ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստերից միայն մեկի մասնակցության համար է գործուղման ծախս կատարվել դրամաշնորհային միջոցների հաշվին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 1 մլն դրամ՝ նախատեսված 134.3 մլն դրամի փոխարեն: Ծրագրի նպատակն է՝ աջակցել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանը, որի առանցքում Հայաստանում կայուն տնտեսական աճին հանքարդյունաբերության ոլորտի նպաստի ամրապնդումն է:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Վերլուծական հիմնավորումներ,
- Քաղաքականության մշակման համար իրազեկում և խորհրդակցություն,
- Կարողությունների զարգացում:

Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում երկու հետազոտությունների համար նախատեսված մրցույթների հայտարարության ժամկետները պարբերաբար հետաձգվել են տեխնիկական առաջադրանքի վերջնական տարբերակի շուրջ առկա տարաձայնությունների և մրցույթին դիմող կազմակերպությունների սակավության պատճառով: Ծրագրի հիմնական միջոցառումների անցկացումը նախատեսված է 2019 թվականին: 2018 թվականի ընթացքում իրականացվել է միայն մեկ գործուղման համար մասհանում՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ից 19-ը Ժնևում (Շվեյցարիայի Համադաշնություն) կայացած Հանքարդյունաբերության, հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով միջկառավարական ֆորումի (ՄԿՖ) 14-րդ ամենամյա ընդհանուր հանդիպմանը ՀՀ մասնակցությունն ապահովելու նպատակով:

2018 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 99.9%-ով և կազմել 139 մլրդ դրամ: 2017 թվականի համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերն աճել են 16.1%-ով կամ 19.3 մլրդ դրամով: Արդյունքում պարտքի սպասարկման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում աճել է 1.6 տոկոսային կետով և 2018 թվականին կազմել 9.6%: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի

աճը պայմանավորված է եղել նախ և առաջ 2018 թվականի ընթացքում պարտքի ծավալի 3.2% աճով: Աճին նպաստել են նաև.

● պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճը 38.4 մլրդ դրամով և դրանց կառուցվածքում երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժնի աճը 3.6 տոկոսային կետով, որը հանգեցրել է պարտքի սպասարկման ծախսերի ավելացմանը: Պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման ծախսերն ընդհանուր առմամբ աճել են 8.2 մլրդ դրամով,

● ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման միջին տոկոսադրույքի աճը՝ 2.1%-ից 2.4%,

● արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությունը (մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 475.36-ից աճել է մինչև 483.06՝ 1.6%-ով):

Հաշվետու ժամանակահատվածում 64 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ գանձապետական պարտատոմսերի սպասարկման ծախսերն աճել են 14.6%-ով, ինչը պայմանավորված է շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճով: Հարկ է նշել, որ 2017 թվականին պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը ևս 2.4 մլրդ դրամ տրամադրվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, որը հաշվի առած՝ սպասարկման ծախսերի աճը կազմել է 10%: Սպասարկման ծախսերի աճը որոշակի չափով զսպվել է՝ պայմանավորված նախորդ տարվա համեմատ հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված գանձապետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերության նվազմամբ 1.08 տոկոսային կետով՝ 9.93%-ից հասնելով 8.85%-ի:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 43.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով.

● արտաքին վարկերի գծով պարտքի բացարձակ մեծության աճով՝ 0.6%-ով,

● ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման միջին տոկոսադրույքի աճով՝ 2.1%-ից մինչև 2.4%: Արտաքին վարկերի գծով տվյալ ցուցանիշն աճել է 0.3 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկերի սպասարկման ծախսերի հաշվարկման հիմքում ընկած LIBOR դրույքաչափի բարձրացմամբ:

Նշենք, որ 2017 թվականին 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR դրույքաչափի միջին ցուցանիշը կազմել էր 1.5%, իսկ 2018 թվականին՝ 2.5%, ընդ որում հիշյալ տոկոսադրույքի հիման վրա է իրականացվում արտաքին վարկերի շուրջ 20%-ի սպասարկումը:

Պայմանավորված արտաքին վարկերի կառուցվածքով՝ սպասարկման ծախսերի 83.7%-ը կազմել են միջազգային կազմակերպություններին վճարված տոկոսավճարները, որոնց ծավալն աճել է 15.6 մլն ԱՄՆ դոլարով, իսկ մասնաբաժինը նվազել է 2.2 տոկոսային կետով՝ պայմանավորված պարտքի կառուցվածքում օտարերկրյա պետությունների նկատմամբ պարտքի ծավալի և վերջինների վարկերի տոկոսադրույքներով: Փաստացի տոկոսավճարների 27.1%-ը կազմել են Զարգացման Միջազգային Ընկերակցության վարկերի սպասարկման ծախսերը, որոնց մասնաբաժինը նվազել է 5.5 տոկոսային կետով՝ պայմանավորված պարտքի կառուցվածքում մյուս վարկատուների պարտքի ծավալների և տեսակարար կշիռների աճով: Միևնույն ժամանակ, աճել են Ասիական Զարգացման Բանկի (3.3 տոկոսային կետով), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (0.9 տոկոսային կետով) և Եվրասիական Զարգացման Բանկի (0.9 տոկոսային կետով) մասնաբաժինները:

Օտարերկրյա պետություններին վճարված տոկոսավճարների ծավալն աճել է 4.8 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 16%: Մեկական տոկոսային կետով նվազել են գերմանական և ճապոնական վարկերի սպասարկման ծախսերի կշիռները: Ավելացել են Ռուսաստանի Դաշնության վարկերի սպասարկման ծախսերը, որոնց կշիռն ավելացել է 5 տոկոսային կետով (4.9 մլն ԱՄՆ դոլարով):

Վճարված տոկոսավճարների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարված տոկոսավճարների տեսակարար կշիռը կազմել է 25.5% և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 4.4 տոկոսային կետով:

Մուրհակների սպասարկմանը հաշվետու տարում տրամադրվել է 36.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման գծով 2018 թվականին նախատեսված վճարումները կատարվել են թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում և ամբողջ ծավալով: Նշված ծախսերը կազմել են 31.8 մլրդ դրամ և 1.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է եղել փոխարկումների համար կիրառվող ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի աճով (2017թ.՝ 475.36, իսկ 2018թ.՝ 483.06): Հատկացված գումարից 14.5 մլրդ դրամ ուղղվել է 2020 թվականին մարման ենթակա պարտատոմսերի, 17.3 մլրդ դրամը՝ 2025 թվականին մարման ենթակա պարտատոմսերի սպասարկմանը:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* կատարվել են 99.6%-ով՝ կազմելով 48.9 մլրդ

դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.3%-ով կամ 161.1 մլն դրամով: Հատկացված գումարից 48.2 մլրդ դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով և 2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական աջակցությունը սահմանամերձ համայնքներին կազմել է 709.6 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 76.4%-ը: Ծրագիրը նախատեսված է ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի բնակիչների գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման, բնակիչների բնական գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի մասնակի փոխհատուցման և 22 սահմանամերձ համայնքներում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց գանձվող վարձավճարների 50 տոկոսի փոխհատուցման համար: Ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է օգտագործված բնական գազի և էլեկտրաէներգիայի փաստացի ծավալներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.3%-ով կամ 161.1 մլն դրամով:

Պաշտպանություն

2018 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 238.5 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 96.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ռազմական կարիքների բավարարման և ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի անձնակազմի նյութական խրախուսման ծախսերի կատարողականով և Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ծրագրի շրջանակներում նախատեսված 3.3 մլրդ դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով: Հիմնականում վերջինիս արդյունքում նախորդ տարվա համեմատ պաշտպանության ոլորտի ծախսերում արձանագրվել է 19%-ով (56 մլրդ դրամով) անկում:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 229 մլրդ դրամ ուղղվել է *ռազմական պաշտպանության* ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 96.3%-ը: Նշված գումարից 227 մլրդ դրամը հատկացվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմել է ծրագրի 98.2%-ը և 14.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 399.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի պահպանման, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություններում ՀՀ առաքելությունում ՀՀ ռազմական ներկայացուցչի պահպանման ու ռազմական նշանակության համակարգերի պահպանման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով համապատասխանաբար 48.7 մլն դրամ, 51.4 մլն դրամ և 1.2 մլրդ դրամ: 2018 թվականին պետական բյուջեից 59.6 մլն դրամ տրամադրվել է ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ ռազմական խորհրդականի պահպանմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 82.1%-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի անձնակազմի նյութական խրախուսման ծախսերը կազմել են 235.7 մլն դրամ կամ ծրագրի 13.9%-ը:

Հաշվետու տարվա ընթացքում *արտաքին ռազմական օգնության* նպատակով նախատեսված միջոցները՝ 117 մլն դրամի չափով, ամբողջությամբ տրամադրվել են: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 58.3 մլն դրամ: 49.1 մլն դրամ է տրամադրվել ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական

համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման նպատակով: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի տարածքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ արտաքին ռազմական օգնության ծախսերը նվազել են 28.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման համար 2018 թվականի պետական բյուջեում միջոցներ չնախատեսելու հանգամանքով:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով 91.7% կատարողական և նախորդ տարվա համեմատ աճելով 40.8%-ով:

Պաշտպանության՝ *այլ դասերին չպատկանող ծախսերը* կազմել են 7.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 99.6%-ը, որից 40.5 մլն դրամը (ծրագրվածի 96.7%-ը) տրամադրվել է այլընտրանքային ծառայության ապահովմանը, 39.6 մլն դրամը (ծրագրվածի 78.6%-ը)՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրամադրմանը և քննությունների ընդունմանը, 213.8 մլն դրամը (ծրագրվածի 91.7%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպմանը և 6.8 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ պաշտպանության բնագավառի այլ ծախսերին: Այլ ծախսերի գծով արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 108.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 14.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

2018 թվականին *հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության* բնագավառներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 123.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 96.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված գումարների հաշվին կատարված ծախսերի, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության ապահովման ու Ազգային անվտանգության ապահովման ծրագրերի շրջանակներում նախատեսվածից պակաս միջոցներ օգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.5%-ով կամ 555.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 67.2%-ը կամ 82.7 մլրդ դրամ կազմել են *հասարակական կարգի և անվտանգության* խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 96%-ով: Նշված գումարից 60.6 մլրդ դրամը կազմել են ոստիկանության դասի ծախսերը, որոնք կատարվել են 95.3%-ով: 2017 թվականի համեմատ *ոստիկանության* դասի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 723.4 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 97.1%-ը և նախորդ տարվա համեմատ աճել են 4.3%-ով:

2018 թվականին հասարակական կարգի պահպանության ապահովման նպատակով 36.5 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը՝ ապահովելով 98.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը կատարվել են 99.7%-ով՝ կազմելով 3.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով՝ պայմանավորված ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկը համալրվելու հանգամանքով:

ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին՝ կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերի տոկոսագումարների 2 կամ 3 տոկոսային կետով համաֆինանսավորման ծախսերը կազմել են 9 մլն դրամ կամ նախատեսվածի 44.4%-ը՝ պայմանավորված շահառուների փաստացի քանակով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 27.7%-ով:

2018 թվականին շուրջ 7.3 մլրդ դրամ ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 98.4%-ը՝ պայմանավորված գնումների մրցույթների արդյունքում առաջացած տնտեսման և տարվա ընթացքում որոշ մրցույթների չկայացման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.6%-ով:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են 11.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 83.4%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են 10%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ծառայությունների և ապրանքների, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը՝ այլ ծախսերի, դրամաշնորհների և ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 8.9 մլն դրամ կամ նախատեսվածի 89.3%-ը և նախորդ տարվա համեմատ նվազել 11.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 89.4%-ով՝ կազմելով 617.9 մլն դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև որոշ մրցույթների չկայացմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.7%-ով՝ հիմնականում պայմանավորված անձնագրերը (այդ թվում՝ նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր) սեղմ ժամկետներում ստանալու համար դիմողների թվաքանակի աճով:

2018 թվականի ընթացքում *Ազգային անվտանգության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 19.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ազգային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերի կատարողականով: 2017 թվականի համեմատ Ազգային անվտանգության դասի ծախսերը նվազել են 0.8%-ով:

2018 թվականին շուրջ 19.5 մլրդ դրամ տրամադրվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որը կատարվել է 98%-ով՝ պայմանավորված խնայողություններով: 2017 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.5%-ով:

ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 45.1 մլն դրամ ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 85.3% կատարողական և 55.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական պահպանության ապահովման նպատակով օգտագործվել է 2.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 97.5%-ը և 4.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված զինծառայողների թվի կրճատման արդյունքում աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների տնտեսմամբ:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է շուրջ 8.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով: Տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական, իսկ կարողությունների զարգացմանը տրամադրվել է 9.5 մլն դրամ՝ ապահովելով 95.7%, որը պայմանավորված է խնայողություններով:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 98.6%-ով՝ կազմելով 7.4 մլրդ դրամ և 0.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական աջակցությունը ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնին կազմել է 7.7 մլն դրամ, որն իրականացվել է ամբողջությամբ: Միջոցներն ուղղվել են կենտրոնի պահպանմանը:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 12.1 մլրդ դրամ՝ 96.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ դատարանների պահպանման և ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին

ձևավորվող նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերում: Սակայն հիմնականում 2017 թվականի համեմատ նշված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճի արդյունքում դատարանների դասի ծախսերն աճել են 2.2%-ով: Նշված արտաբյուջետային միջոցներից հաշվետու տարում օգտագործվել է 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է որոշ ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ավելի ցածր գներով ձեռքբերմամբ:

8.4 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.1%-ը: 562.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը: Տվյալ ծրագրերում արձանագրվել են որոշակի խնայողություններ, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում ավելի քան 1.3 մլրդ դրամ են կազմել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 98.4%-ով: Այս ծախսերը ևս նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 8.8 մլն դրամ և 151.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 75.9%-ը և 87.8%-ը:

61.3 մլն դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների կարողությունների զարգացմանը՝ կազմելով նախատեսվածի 88.8%-ը: Շեղումը պայմանավորված է խնայողություններով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են 70.6 մլն դրամ կամ նախատեսվածի 78.2%-ը: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականի ապրիլի 7-ին ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջև կնքված «Հայաստանում դատական արխիվային նյութերի թվայնացման» դրամաշնորհային ծրագրի իրականացման մասին համաձայնագրի համաձայն: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ «Համակարգի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման» պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման 4-րդ փուլի ավարտը և դրանց դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2019 թվականին, որը ներառում է հետևյալ ծառայությունների մատուցումը՝

- Համակարգի ներդրում,
- Ձեռնարկների մշակում և օգտագործողների ուսուցում,

- Թեստային համակարգի շահագործում և սխալների շտկում:

Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին:

Հաշվետու տարում պետական բյուջեից 817.5 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2018 թվականին կազմել են 362.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41.1%-ով՝ պայմանավորված աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունների շրջանակում հաստիքների ավելացմամբ:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 377.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք չեն փոփոխվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 86.6%-ով՝ կազմելով 2.1 մլն դրամ, որով ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք և սարքավորումներ: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում ապրանքների ցածր գնով ձեռքբերման հանգամանքով:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 15.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Տվյալ ծրագրի ծախսերը 34.3%-ով զիջել են 2017 թվականի ցուցանիշը: Սակայն հարկ է նշել, որ 2018 թվականին դատավարություններին ընդգրկված թարգմանիչների վարձատրությանը ևս 20 մլն դրամ հատկացվել է ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի միջոցներից:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 17.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը և 18.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է սնանկության գործերի քանակի ավելացմամբ, որը նախորդ տարվա 490-ի դիմաց 2018 թվականին կազմել է 580:

Երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքելու համար ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 4.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 92.6%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Պատրաստվել է «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ»

Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց (հայերեն և անգլերեն լեզուներով).

● Թարգմանվել, ադապտացվել և տպագրվել է «Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում» գործնական ուղեցույցը.

● Պատրաստվել է և տպագրվել «Զանգվածային լրատվամիջոցները և երեխաների իրավունքները» թեմայով ձեռնարկը լրագրողների համար.

● ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների բարձրացման նպատակով Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ երեխաների իրավունքներին վերաբերող թեմաներով.

● Մշակվել է մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ երեխաների իրավունքների իրականացման մեխանիզմների զարգացման հեռանկարային ծրագիր 2018-2020 թվականների համար.

● Երեխաների իրավունքների մոնիտորինգի նպատակով իրականացվել են այցելություններ Լոռու, Շիրակի մարզերի և Երևան քաղաքի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ:

Ֆինլանդիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը որպես մարդու իրավունք» արտաբյուջետային ծրագրի ծախսերը կազմել են 6.5 մլն դրամ կամ նախատեսվածի 58.4%-ը, որը պայմանավորված է որոշ վճարումներ 2019 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության առկա վիճակը գնահատելու համար իրականացվել են օրենսդրության և դպրոցներում առկա պայմանների ուսումնասիրություններ.

● Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիության մշտադիտարկում իրականացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և փորձագետների կողմից մշակվել է հստակ մեթոդաբանություն.

● Մշակվել են հատուկ հարցաշարեր, իսկ այցերը եղել են չհայտարարված: Ընդ որում, կազմվել են առանձին երկուական հարցաշարեր և՛ նախադպրոցական, և՛ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնելու համար՝ հիմք ընդունելով ներպետական օրենսդրությամբ ամրագրված ջրամատակարարմանը և սանիտարական կանոններին ներկայացվող պահանջները, միջազգային չափանիշները և ՄԱԿ-ի կայուն զարգացման

նպատակները: Ավելին, հարցաշարերում ներառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական բաղադրիչ պարունակող հարցեր.

● Այցերի ընթացքում հատուկ ուսումնասիրության են ենթարկվել ջրի և սանիտարական ծառայություններից օգտվելու կանոնները: Մասնավորապես, մշտադիտարկման արդյունքում ճշտվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակների առկայությունը, իսկ նախադպրոցական հաստատություններում՝ առկա բաժակների անհատականացված լինելը կամ չլինելը, միևնույն ժամանակ տեղեկություններ են հավաքվել հաստատություններում սովորողների առանձին խմբերից և անցկացվել են առանձնազրույցներ ինչպես ուսումնական հաստատության անձնակազմի, այնպես էլ երեխաների հետ.

● 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել Երևանի և մարզերի 181 ուսումնական և նախակրթական ուսումնական հաստատություն՝ 111 դպրոց և 70 մանկապարտեզ.

● Արդյունքում մշակվել է արտահերթ հրապարակային զեկույց «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ»:

2018 թվականին Նիդերլանդների Թագավորության դեսպանատան կողմից հատկացված միջոցներով իրականացվող «Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում» ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տրամադրվել է 11.4 մլն դրամ կամ նախատեսվածի 92.5%-ը:

Ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

● Իրականացվել է համակողմանի ուսումնասիրություն ՀՀ-ում պրոբացիայի ծառայության գործունեության օրենսդրական և գործնական հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքներով կազմվել է ՀՀ պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկման վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց, որը թարգմանվել է անգլերեն և տպագրվել է հայերեն ու անգլերեն լեզուներով.

● Կազմակերպվել է վերոնշյալ զեկույցի ներկայացման և քննարկման միջոցառում՝ շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2018 թվականին Բուլղարիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վարչական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արտաբյուջետային միջոցներից օգտագործվել է շուրջ 5

մլն դրամ կամ նախատեսվածի 25.1%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ծրագիրը շարունակվելու է նաև 2019 թվականին:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Հայաստանում Բուլղարիայի դեսպանության միջև համատեղ իրականացվող ծրագրի վերաբերյալ հանրությանը և շահագրգիռ կառույցներին իրազեկելու նպատակով կազմակերպվել է ծրագրի մեկնարկային միջոցառում.

● ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել է Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների ճանաչողական այց Բուլղարիա.

● Պատրաստվել է հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց:

Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կազմել են 5.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված այլ անձանց իրավունքների պաշտպանության իրավիճակը, ոլորտի օրենսդրական կարգավորումները և դրանց գործնական կիրարկումը.

● Իրավիճակի ուսումնասիրության և վերլուծության, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով այցելություններ են իրականացվել ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված հատուկ կացարաններ և «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, որտեղ բնակվում են ապաստան հայցող անձինք: Այցերի ընթացքում, բացի մշտադիտարկումից, առանձնազրույցներ են տեղի ունեցել կացարանի բնակիչների հետ, ինչպես նաև վերջիններիս համար կազմակերպվել են Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, ոլորտում Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ.

● Ըստ անհրաժեշտության այցեր են իրականացվել նաև այն քրեակատարողական հիմնարկներ, որտեղ ազատությունից զրկված են փախստականները և ապաստան հայցող անձինք: Դրանք հիմնականում պայմանավորված են եղել Պաշտպանին հասցեագրված անհատական դիմումներով, ինչպես նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից ստացված տեղեկությամբ.

● Կազմակերպվել է փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ համաժողով, որին մասնակցել են Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև ոլորտում գործող պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում հիմնականում քննարկվել են իրավասու պետական մարմինների կողմից 2017 թվականին հրապարակված՝ ոլորտի վերաբերյալ արտահերթ զեկույցի առաջարկությունների կատարումը, ինչպես նաև 2018 թվականի ընթացքում կատարված մյուս գործողությունները և առկա մարտահրավերները.

● ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Չեխիայի Հանրապետություն ուսուցողական այցին, որի շրջանակներում ուսումնասիրվել է տեղի փորձը փախստականների և ապաստան հայցող անձանց վերաբերյալ.

● Տարբեր համալսարանների ուսանողների համար կազմակերպվել են Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև կատարված աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ.

● Ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք:

2018 թվականին Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից հատկացված միջոցներից «Ազգային կանխարգելման մեխանիզմի վերաբերյալ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջարկությունների իրականացում և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արտաբյուջետային ծրագրի ծախսերը կազմել են 8.8 մլն դրամ կամ նախատեսվածի 74.1%-ը: Նշենք, որ ծրագիրը շարունակվելու է նաև 2019 թվականին: Ծրագրի ընթացքում, մասնավորապես, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

● Գնահատվել է Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի կողմից կատարված այցի վերաբերյալ զեկույցում Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմին ներկայացված առաջարկությունների իրացման մակարդակը: Այս նպատակով 2018 թվականի հունիսին կազմակերպվել է կլոր սեղան քննարկում Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջարկությունների իրականացման ճանապարհային քարտեզ մշակելու համար՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի անդամ հանդիսացող հրավիրված երկու փորձագետների մասնակցությամբ.

● Կանխարգելման ազգային մեխանիզմների գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի փոխանակման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 4 ներկայացուցիչ ուսումնական այց են կատարել Սլովենիա՝ Լյուբլյանա.

● Կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի ընդլայնված նիստ.

● Կազմակերպվել է երկօրյա սեմինար Կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակում ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների, դատարանի խցերի, ոստիկանության՝ ձերբակալված անձանց պահելու վայրերի մշտադիտարկման վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի, ոլորտում գործող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև փաստաբաններ.

● Տպագրվել են տեղեկատվական թռուցիկներ, որոնք պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցության հնարավորությունների մասին.

● Տպագրվել են նաև կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցության հնարավորությունների մասին տեղեկատվություն պարունակող պաստառներ՝ ազատությունից զրկման վայրերում փակցնելու նպատակով.

● Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների զարգացման նպատակով ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա և սարքեր:

● Թարգմանվել և տպագրվել է «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային եռալեզու զեկույցը:

2018 թվականին 4.1 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 100%-ը և 9.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացված միջոցներից 3.9 մլրդ դրամը տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.2%-ով՝ կապված Դատախազության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման հետ: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված ծախսերը և կարողությունների զարգացմանն ուղղված ծախսերը կազմել են համապատասխանաբար 85.6 մլն դրամ և 34.9 մլն դրամ, որոնք իրականացվել են ամբողջությամբ:

Հաշվետու տարում քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը կազմել են 8 մլրդ դրամ կամ 98.6%: Շեղումը պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած խնայողություններով: 2017 թվականի համեմատ դրանց 2.2%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է համաներման կիրառման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվի կրճատմամբ:

Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային ստորաբաժանումներում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 183 հազար դրամ: Ծրագրի նպատակն է՝ փորձարկել էլեկտրոնային մոնիտորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար: 2018 թվականին ծրագիրն ավարտվել է:

2018 թվականին միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, դատապարտյալներին ՀՀ տեղափոխելու համար քրեակատարողական համակարգի պահպանմանը արտաբյուջետային միջոցների հաշվին տրամադրվել է 1.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 30.3%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականին փաստացի Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել 2 դատապարտյալ՝ նախատեսված 4-ի փոխարեն:

2018 թվականին 6.6 մլրդ դրամ տրամադրվել է *նախաքննության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 97.8%-ը: Հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 5.7 մլրդ դրամը (նախատեսվածի 98.7%-ը) տրամադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պահպանմանը: Կատարողականի ցուցանիշը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործող օրենսդրության համաձայն քննիչների դասային աստիճանի և ստաժի համար տրվող հավելավճարների ամենամյա աճով, ինչպես նաև կոմիտեի պետական ծառայողների աշխատավարձերի ամենամյա վերահաշվարկով:

ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 94.4 մլն դրամ:

Նախաքննության դասում նախատեսված՝ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են 186.4 մլն դրամ, կամ նախատեսվածի 71.4%-ը: Հատկացված միջոցներով հիմնանորոգվել են ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների 4 վարչական շենքեր: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ կապալառու կազմակերպություններից մեկը թերացել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման մեջ, և շինարարական աշխատանքներն ամբողջ ծավալով չի իրականացրել:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 633.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայողների խրախուսման ծախսերի աճով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կարողությունների զարգացմանը տրամադրվել է 772.5 հազար դրամ կամ նախատեսվածի 99%-ը:

Ծառայության պահուստային ֆոնդի միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 12.7 մլն դրամ:

ՀՀ քննչական կոմիտեի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 41.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Միջոցներն ուղղվել են վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Տնտեսական հարաբերություններ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի 7.8%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով 112.2 մլրդ դրամ և 82.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի, ոռոգման, վառելիքի այլ տեսակների, գյուղատնտեսության և էլեկտրաէներգիայի բնագավառներում նախատեսված՝ արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է տրանսպորտի (52.7%), գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (23.6%) և վառելիքի ու էներգետիկայի (14.8%) բնագավառների ծրագրերի իրականացմանը: 2017 թվականի համեմատ տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը նվազել են 13.4%-ով (17.3 մլրդ դրամով), ինչը հիմնականում ձևավորվել է ճանապարհային տրանսպորտի ու ոռոգման բնագավառների ծախսերի նվազման և էլեկտրաէներգիայի բնագավառի ծախսերի աճի արդյունքում:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են շուրջ 4.2 մլրդ դրամ՝ 92.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին նախարարության պահպանման, ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը պետական աջակցության և «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերի համապատասխանաբար 63.2%, 87% և 93.3% կատարողականով:

Նախորդ տարվա համեմատ ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասի ծախսերն աճել են 7.5%-ով կամ 290.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ ոլորտի գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերի համապատասխանաբար 22.3% (228.9 մլն դրամով) և 45.6% (159 մլն դրամով) աճով:

Դասում ընդգրկված են 17 ծրագրեր, որոնցից հետևյալ չորսի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հաշվետու տարում ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ազգային ստանդարտների մշակման, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և ստանդարտների ազգային ֆոնդի վարման ու տեղեկատվական սպասարկման աշխատանքներ: Ազգային ստանդարտների մշակման աշխատանքների շրջանակում 2018 թվականին մշակվել են թվով 30 ազգային ստանդարտների նախագծեր, որոնք ընդունվել և հաստատվել են տեխնիկական հանձնաժողովների ու աշխատանքային խմբերի կողմից և գործողության մեջ են դրվել ՀՀ ստանդարտացման ազգային մարմնի հրամաններով: Մշակված ևս 8 ստանդարտներ գտնվում են տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի հետ համաձայնեցման փուլում: Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման շրջանակներում իրականացվել են միջազգային (ԻՍՕ) թվով 171 հատ և միջպետական (ԳՕՍՏ) թվով 258 հատ ստանդարտների նախագծերի փորձաքննություն, միջազգային (411 հատ) և միջպետական (704 հատ) ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն, ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) հետ աշխատանքների կազմակերպում: Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների շրջանակներում իրականացվել են. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում (թվով 1693 հատ), ընդունված ազգային ստանդարտների գրանցում (թվով 458 հատ), Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում, ստանդարտացման բնագավառում թվով 201 ՀՀ կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում, «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման ավտոմատացված համակարգի համալրում և վարում (թվով 458 ստանդարտների տվյալների մուտքագրում էլեկտրոնային բազա), ՀՀ-ում ընդունված և գործողության մեջ դրված թվով 458 ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային բազայի) ստեղծում, հաշվառում և պահում, ինչպես նաև ազգային ստանդարտների կատալոգի, թվով 4 եռամսյակային տեղեկատուի և 12 տեղեկատվական թերթիկների նախապատրաստում և հրատարակում:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ, որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 7.8%-ով կամ 90.6 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և հավատարմագրման ազգային մարմնի կայացում» ծրագրին պետական աջակցության ծախսերը կազմել են 13.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում կատարվել են Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառման ծրագրի ծախսերը կազմել են 10.8 մլն դրամ: Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից, այն մեկանգամյա ծրագիր է: Ծրագրի իրականացման ընթացքում կատարվել են համապատասխան աշխատանքներ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հաշվարկվող օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանը ներառելու համար: 2019 թվականի ընթացքում կամփոփվեն կատարված աշխատանքները. մինչև 2019 թվականի ավարտը նախատեսված է ապահովել Հայաստանի ներառումը ՏՀԶԿ ՕՈՒՆ կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում:

99.9% կատարողական են ապահովել ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարությանը պետական աջակցության ծախսերը՝ կազմելով 24.1 մլն դրամ, որն ուղղվել է տեսչական բարեփոխումների քարտուղարության աշխատակիցների վարձատրությանը: Ծրագրի նպատակն է՝ նախանշել Հայաստանում տեսչական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում հիմնական աշխատանքներն իրականացվել են տեսչական համակարգի օպտիմալացման, նոր տեսչական մարմինների ստեղծման, տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործման ուղղություններով: Տեսչական բարեփոխումների խմբի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում հստակեցվել են վերահսկողական վեց հիմնական ուղղություններ, որոնց հիման վրա 2018 թվականին ստեղծվել են վեց տեսչական մարմիններ: Կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ գործող տեսչությունների հետ՝ օպտիմալացմանը վերաբերող հարցերը քննարկելու և օպտիմալացման աշխատանքներն ավարտելու նպատակով: Վերանայվել կամ մշակվել են տեսչական մարմինների կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը: Տարվա ընթացում անցկացվել են տեսչական բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքներ ՀՀ բոլոր մարզերում, որի շրջանակներում գործարար համայնքի ներկայացուցիչներին ներկայացվել են տեսչական բարեփոխումների ընթացքը (ստուգումների պլանավորում, ստուգման տարեկան ծրագրեր, ստուգման նախնական ծանուցում, ստուգումներ՝

ստուգաթերթերի հիման վրա, բողոքարկման ընթացակարգեր և այլն), կատարված օրենսդրական փոփոխությունները, տնտեսավարողների իրավունքները, բողոքարկման նոր մեխանիզմները: Նշված ուղղություններով կատարվել են ոլորտային վերահսկողությունը կարգավորող թվով 4 օրենքների մշակման և ներկայացման, ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության մշակման ու ներկայացման և ոլորտային ստուգաթերթերի մշակման, վերանայման և ներկայացման հիմնական աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 60.7%-ով կամ 9.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է հաստիքների ավելացմամբ:

Հաշվետու տարում ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանն աջակցության ծախսերը կազմել են շուրջ 23.5 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի նպատակն է ծառայության արդյունքում բազմաշահառու խմբի գործունեության ապահովում, ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների նախագծերի հաստատման ենթակա փաստաթղթերի կազմում, հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքի համակարգում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության վերաբերյալ հանրային իրազեկման 4 միջոցառում,
- ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների թվով 3 նախագծերի կազմում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության տարեկան զեկույցի ներկայացում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության միջազգային քարտուղարությանը,
- իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում,
- իրավական 2 ակտերի նախագծերի մշակում,
- հաշվետվությունների առցանց համակարգի կիրառման թվով 2 ուսուցման կազմակերպում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի կազմում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության մեթոդական թվով 4 ուղեցույցների մշակում:

Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.1%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի, ՀՀ տնտեսական մրցակցության

պաշտպանության պետական հանձնաժողովի ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.3%-ով կամ 228.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի աշխատակազմի ծախսերը, որոնք 2017 թվականին արտացոլված էին պետական բյուջեի ծախսերի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնում, 2018 թվականին միավորվել են նախարարության աշխատակազմի ծախսերի հետ և արտացոլվել սույն դասում, ինչպես նաև Զբոսաշրջության պետական կոմիտեի պահպանման ծախսերը 2017 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ֆինանսավորելու հանգամանքով:

2018 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը տրամադրվել է 147.5 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 96.7%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հիմնադրամի կողմից չի իրականացվել «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրային կետով նախատեսված «Լավագույն կին գործարար» 2018 թվականի մրցանակաբաշխության միջոցառումը: Նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 3.3%-ով կամ 5.1 մլն դրամով նվազումը: Պետական բյուջեից հատկացված միջոցներն ուղղվել են ծրագիրն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրությանը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ: 2018 թվականին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել է 8979 աջակցություն շուրջ 4000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների, որոնց 3.9 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96.1 %-ը՝ ՀՀ մարզերում:

2017 թվականին շուրջ 147 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 85.2%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև), Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) և ՉԺՀ (նստավայրը՝ Պեկին) պահպանմանը: Համեմատաբար ցածր կատարողականը պայմանավորված է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում և Շվեյցարիայի Համադաշնությունում նշանակված առևտրային ներկայացուցիչների ծախսերի տնտեսմամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը նվազել են 2%-ով կամ 3 մլն դրամով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության

զբոսաշրջության պետական կոմիտեի կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 10.7 մլն դրամ՝ ապահովելով 83.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել նոր սերնդի համակարգիչներ: Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից:

Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի գծով ծախսերը կազմել են ավելի քան 12.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 83%-ը: Շեղումը պայմանավորված է փորձանմուշների ձեռքբերման և դրանց լաբորատոր փորձարկման արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8 անգամ կամ 10.3 մլն դրամով՝ պայմանավորված իրականացված փորձարկումների քանակի ավելացմամբ: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ապրանքների փորձանմուշների ձեռքբերման և այդ փորձանմուշների՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում փորձարկման աշխատանքներ:

2018 թվականին ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 459.4 մլն դրամ՝ ապահովելով 87% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վարկերի սուբսիդավորման համար տնտեսավարողների կողմից ներկայացվել են նախատեսվածից պակաս թվով հայտեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 3.8 մլն դրամով: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ծախսերը կազմել են 21.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 79%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի որոշ հաստիքների ժամանակավորապես թափուր լինելու հանգամանքով: Նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 21%-ով կամ 5.7 մլն դրամով նվազումը: Ծրագրի

շրջանակներում իրականացվել են տնտեսության տարբեր ոլորտներին և ճյուղերին առնչվող մակրո և միկրո մակարդակներում բազմապրոֆիլ տնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ հետազոտական և վերլուծական աշխատանքները՝

● Ապրանքային արտահանման մշտադիտարկման իրականացում, արտահանման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, արտահանման որակական տեղաշարժերի գնահատում, արտահանման միտումների գնահատում: Վերոգրյալ վերլուծական աշխատանքների իրականացման շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են զեկույցներ (թվով 12 զեկույց).

● Ապրանքային ներմուծման մշտադիտարկման իրականացում, ներմուծման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, ներմուծման միտումների գնահատում: Այս վերլուծական աշխատանքների իրականացման շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են զեկույցներ (թվով 12 զեկույց).

● ՀՀ-ում աշխատուժի արտադրողականության գնահատման հետազոտական աշխատանքի իրականացում: Այս հետազոտության շրջանակներում գնահատվել է ՀՀ-ում աշխատուժի արտադրողականության աստիճանն ըստ տնտեսության ոլորտների, իրականացվել է համեմատական վերլուծություն այլ երկրների, մասնավորապես՝ ԵԱՏՄ և ԵՄ երկրների համապատասխան ցուցանիշների նկատմամբ: Գնահատվել են նաև ՀՀ-ում արտադրողականության միտումները և դինամիկան.

● Արտահանման հարաբերական առավելության (RCA/RSCA) գնահատման իրականացում: Հետազոտության իրականացման նպատակն է բացահայտել ՀՀ-ից արտահանվող հարաբերական առավելություն ունեցող ապրանքները, ուսումնասիրել միտումները: Հետազոտական աշխատանքի շրջանակում մշակվել է վերլուծական զեկույց.

● Գնահատվել է արտահանվող ապրանքների բարդության ինդեքսը (product complexity index).

● Իրականացվել են կոմպլեմենտարության ինդեքսի գնահատմանն ուղղված վերլուծական աշխատանքներ: Վերլուծության նպատակն է գնահատել ՀՀ-ի և առևտրային գործընկեր երկրների միջև առևտրաշրջանառության համապատասխանության աստիճանը: Վերլուծության արդյունքում մշակվել է վերլուծական զեկույց.

● Գլոբալ մրցունակության ինդեքսի շրջանակներում սիմուլյացիոն գործիքի պատրաստում: R ծրագրային փաթեթի միջոցով մշակվել է սիմուլյացիոն գործիք, որը հնարավորություն է տալիս գնահատել Հայաստանի դիրքի փոփոխությունը՝ պայմանավորված ենթաինդեքսների արժեքների փոփոխությամբ.

● Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների ռիսկերի գնահատում՝ պայմանավորված ԱՄՆ կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ: Այս վերլուծության արդյունքում մշակվել է համառոտ վերլուծական աշխատանք.

● Իրականացվել են արժեշղթայի գնահատման (value chain estimation) աշխատանքներ առաջին սպառման ապրանքների, մասնավորապես՝ հացի համար:

● Գնահատվել է որոշ ներդրումային ծրագրերի իրատեսության աստիճանը:

● R ծրագրային փաթեթի միջոցով մշակվել է մակրոտնտեսական, մասնավորապես՝ առևտրաշրջանառության վիճակագրական տվյալների բազա:

2018 թվականին «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 507.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.3%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են Հայաստանի զարգացման հիմնադրամի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 45.6%-ով կամ 159 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնադրամի աշխատակիցների աշխատանքի վարձատրության ծախսերի և պահպանման ծախսերի ավելացմամբ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանման ծախսերը կազմել են 136.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.3%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով կամ 10.9 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների ավելացմամբ:

Հաշվետու տարում տեսչական մարմինների կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կազմել են 415 հազար դրամ՝ ապահովելով ծրագրի 26.2%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ գնումներ գործընթացով նախատեսված որոշ մրցույթներ չեն կայացել կամ մասնակիցներ չլինելու, կամ նախատեսված գներից բարձր գին ներկայացնելու պատճառով:

Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 320.5 մլն դրամ օգտագործվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 63.2%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված որոշ ծախսերի կատարման անհրաժեշտությունը վերացել է, բացի այդ՝ գնումների գործընթացով նախատեսված որոշ մրցույթներ չեն կայացել կամ մասնակիցներ չլինելու, կամ նախատեսված գներից բարձր գին ներկայացնելու պատճառով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.9%-ով կամ 51.8 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2018 թվականին որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը վերացել է:

2018 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 26.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 74.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման և գյուղատնտեսության բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով:

2018 թվականին շուրջ 9.6 մլրդ դրամ է տրամադրվել *գյուղատնտեսության* դասին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 73.3%-ը, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերը նվազել են 8.9%-ով կամ 940.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրերի շրջանակներում օգտագործված միջոցների նվազմամբ:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 26 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 3 վարկային և 2 դրամաշնորհային ծրագրեր:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով 85.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է կապալառուների կողմից կատարողական ակտերը նախատեսված ժամկետից ուշ ներկայացնելու հանգամանքով, որի հետևանքով վճարումներն իրականացվել են 2019 թվականի հունվար ամսին: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ջրամատակարարման և ոռոգման համակարգերը հանրապետության 7 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի գյուղական համայնքներում՝առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Ջրամատակարարման և ոռոգման համակարգերն ընտրվում են մանրամասն տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների հիման վրա, հաստատվում են միայն ներդրումային այն առաջարկները, որոնք ունեն հստակ տնտեսական արդյունավետություն, իսկ ջրամատակարարման դեպքում՝ ուղղված են խոցելի համայնքներին, որոնց ջրամատակարարումը չի գերազանցում 6 ժամը: Ջրամատակարարման ծրագրերի ընտրության ժամանակ դիտարկվում են նաև անասնապահության զարգացման հնարավորությունները և տնամերձ հողատարածքների արտադրողականության բարձրացումը: Ոռոգման ծրագրերի ընտրության հիմքում ընկած են մանրամասն տեխնիկատնտեսական հիմնավորումները, որոնք դիտարկում են ենթակառուցվածքների զարգացման տեխնիկական լուծումները և առաջարկվող ներդրումների հետգնելիությունն ու տնտեսական արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին ավարտվել են շինարարական աշխատանքները 37 օբյեկտներում, այդ թվում՝ ջրամատակարարման

գծով՝ 29 օբյեկտներում և ոռոգման ցանցերի վերակառուցման գծով՝ 8 օբյեկտներում: Ծրագրի իրականացման արդյունքում կօգտվեն շուրջ 75141 գյուղաբնակներ: 2018 թվականին նախատեսված էր իրականացնել շինարարական աշխատանքներ թվով 4 համայնքներում, աշխատանքների իրականացումը կավարտվի 2019 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի միջոցների 68.4%-ը: Վարկային համաձայնագիրը (23 մլն ԱՄՆ դոլար) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին և ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 23-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 31.05.2020թ.:

Ծրագրի նպատակներն են արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության ու կենսունակության բարելավումը թիրախային համայնքներում, ինչպես նաև ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ,
- Արժեշղթայի զարգացում,
- Պետական հատվածի կառույցների ուժեղացում,
- Ծրագրի կառավարում և համակարգում:

Ծրագրված ցուցանիշի նկատմամբ ծախսերի շեղումը պայմանավորված է նրանով, որ առաջին բաղադրիչի շրջանակում կոոպերատիվներին գյուղտեխնիկայի մատակարարման և համայնքային շինարարական աշխատանքների կատարման մրցույթները չեն կայացել, իսկ որոշ շինարարական աշխատանքների իրականացման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերը կասեցվել են անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: Ծրագրի երկրորդ բաղադրիչի շրջանակում ծրագրով նախատեսված դրամաշնորհների 4-րդ փուլը չի հայտարարվել՝ պայմանավորված հիմնադրամի կառավարման խորհրդի բացակայության և սննդամթերքի անվտանգության համակարգի վերաբերյալ ՀԲ-ի հետ հստակեցման անհրաժեշտության հանգամանքով: Բացի այդ, ծրագրով նախատեսված Հրազդանի անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար ապրանքների մատակարարման 2 պայմանագիր կնքվել են նախատեսված ժամկետից ուշ՝ 2018 թվականի վերջում, մատակարարումը տեղափոխվել է 2019 թվական:

Ծրագրի առաջին բաղադրիչի շրջանակներում ՀՀ 8՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի 22 արոտօգտագործողների

միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են 67 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 19 միավոր տրակտոր, ՀՀ 6՝ Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերի 26 համայնքների արոտավայրերում իրականացվել են ջրարբիացման համակարգերի կառուցման համար նախագծանախահաշվային աշխատանքներ և փորձաքննության անցկացում:

«Արժեշղթայի զարգացում» բաղադրիչի նպատակն է՝ ընտրված սննդամթերքի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար: Նշված բաղադրիչի շրջանակներում 2018 թվականին համաձայնագրեր են կնքվել 26 ենթածրագրերի շահառուների հետ, որոնք ունեն մրգի և բանջարեղենի, կաթի, մսի և բարձրարժեք հատապտուղների արժեշղթաների ուղղվածություն: Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի 20 վերապատրաստված անասնաբույժների համար ձեռք են բերվել և տրամադրվել են անասնաբուժական և արհեստական սերմնավորման գործիքներ, ավարտվել են ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնների համար հողատարածքի նկատմամբ սեփականության փոխանցման և կենտրոնի նախագծման աշխատանքները: Ընթացքում է շինարարական աշխատանքների գնման գործընթացը: Վայոց Ձորի 10 վերապատրաստված անասնաբույժների համար ձեռք են բերվել անասնաբուժական և արհեստական սերմնավորման գործիքներ: Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար գնվել է անվտանգության համակարգ: ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար վերանորոգվել է 635 մ^2 ընդհանուր մակերեսով 3 թաղանթապատ ջերմատուն, ձեռք են բերվել ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի համար լաբորատոր սարքավորումներ, կահույք, SS և սառնարանային սարքավորումներ, ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի պատվաստումների ծրագրերի համար ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 55.8%-ով՝ կազմելով շուրջ 96.1 մլն դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական վիճակը ծրագրի իրականացման տարածքում՝ ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրման վրա: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ֆերմերներին տրամադրել ուսուցում գործարար և ֆինանսական պլանավորման,

գյուղատնտեսական առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Նախատեսված է նաև ԳՖԿ-ի (Գյուղական ֆինանսավորման կառույց) միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին տրամադրել ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով կուղղվեն փոքր տնտեսություն վարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով: Ծրագրի շրջանակներում Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով ներդրումների և փոխառությունների, ինչպես նաև տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տեսքով աջակցություն կտրամադրվի աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող, գյուղատնտեսական արժեշղթայի շրջանակներում գործող փոքր և միջին մասնավոր ընկերություններին:

Ծրագրային ցուցանիշի նկատմամբ փաստացի ծախսերի շեղումը մեծ մասամբ պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով, մասամբ էլ այն հանգամանքով, որ մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունները չեն հանդիսացել ԱԱՀ վճարող: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել են ֆինանսական փաթեթներ (հետագայում դրանք սահմանվել են որպես Համակցված Ֆինանսական Պրոդուկտներ (ՀՖՊ))՝ ըստ ներուժային շահառուների թիրախային խմբերի սոցիալ-տնտեսական նկարագրերի և առաջնային կարիքների: ՀՖՊ-ներն էականորեն տարբերվում են ֆինանսական կառույցների կողմից առաջարկվող պրոդուկտներից, քանի որ դրանց շրջանակներում նախատեսվում է շահառուների ընթացիկ գործունեության զարգացմանը միտված ծրագրերի ֆինանսավորում ոչ միայն վարկային ռեսուրսներով, այլ նաև համատեղ հատկացվող դրամաշնորհային միջոցներով.
- ՀՖՊ-ների մշակման նպատակով իրականացվել է նաև ֆինանսավորման ընտրված բնագավառների ներուժի համառոտ նկարագրություն, Հայաստանի ֆինանսական շուկայի համառոտ ուսումնասիրություն, ֆինանսավորման տնտեսական մոդելների մշակում, շահառուների և նրանց ընտրության չափանիշների սահմանում.
- Մշակված ՀՖՊ-ների վերաբերյալ թիրախային խմբերի՝ պոտենցիալ շահառուների շրջանում անցկացվել է իրազեկման արշավ.
- Կատարվել է շահառուների ընտրության չափանիշների ներկայացում և պոտենցիալ շահառուների ընտրություն.
- Մշակված ՀՖՊ-ների պոտենցիալ շահառուների համար իրականացվել է ֆինանսավորման ենթակա գյուղատնտեսության բնագավառների վերաբերյալ մասնագիտական և ֆինանսական թեմատիկ ուսուցում, որից օգտվել են 313 ֆերմեր:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՀՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 18.7 մլն դրամ՝ 32.5%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում նախատեսված է մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր՝ վերականգնված ոռոգման ենթակառուցվածքներից օգտվող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հողատեսքերի հողօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կայուն գյուղատնտեսական համակարգերի ներդրման միջոցով: Պիլոտային ծրագրերը կազմվելու են մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում՝ հիմք ընդունելով տվյալ ծրագրային տարածքի կարիքները և զարգացման հնարավորությունները: Ծրագրի շրջանակներում իրականացվել է շահառու համայնքների ընտրություն, որի արդյունքում հաստատվել են Շիրակի մարզի Հոռոմ և Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքներում սառնարանների կառուցումը, իրականացվել է նախագծանախահաշվային կազմակերպության ընտրության մրցույթ, հաղթող կազմակերպության կողմից մշակվել և ներկայացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերը: Սառնարանների շինարարական աշխատանքներն իրականացվելու են 2019 թվականին:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 745.9 մլն դրամի դիմաց օգտագործվել է 22.5 մլն դրամ կամ 3%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կատարվել է ծրագրի բաղադրիչներից մեկի փոփոխություն, այնուհետև նշված ծրագրային փոփոխությունները սեղմ ժամկետներում հնարավոր չի եղել իրականացնել, ներկայացվել է բաղադրիչի իրականացման նոր մոդել, որի իրականացումը նախատեսվել է 2019 թվականին: Ծրագրի շրջանակներում հողերի կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում կվերականգնվեն համայնքային սեփականության ներքո գտնվող դեգրադացված հողերը՝ կներդրվի հողերի կայուն կառավարման և արդյունավետ շահագործման համակարգ: Ծրագիրը նաև ուղղված է ոռոգման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և լրացնում է ծրագրի շրջանակում իրականացվող ոռոգման երրորդային բաշխիչ համակարգերի կառուցման կամ վերականգնման աշխատանքները՝ ջրամատակարարումը բարելավելու, փոքր հողատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը բարձրացնելու և ոռոգելի տարածքներն ընդլայնելու միջոցով: Կայուն գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումները, որոնք համահունչ են ՀՀ կառավարության առաջնահերթություններին՝ կապված հողերի դեգրադացման կասեցման և գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող կլիմայական ռիսկերի ազդեցության մեղմման հետ, կնպաստեն ոռոգման տարածքներում դեգրադացված հողերի վերականգմանը և դրամաշնորհների տրամադրմամբ տեղանքին բնորոշ գյուղատնտեսական

արժեշղթաների զարգացմանը: Իսկ համայնքային հողերի էրոզիայի կանխարգելումը՝ բնապահպանական վերականգնողական միջոցառումների միջոցով, շահառուներին հնարավորություն կտա անմիջապես կիրառել թիրախային տարածքներում էկոհամակարգերի բարելավմանը և հողի դեգրադացման նվազեցմանը նպատակաուղղված մոտեցումներ՝ վերականգնելով էկոլոգիական ամբողջությունը, դեգրադացված անտառների և արոտավայրերի ռեսուրսները՝ ապահովելով թիրախային ագրոլանդշաֆտներում գյուղատնտեսական արտադրությանն աջակցող էկոհամակարգերի ծառայությունների զարգացումը, ինչպես նաև դիվերսիֆիկացված եկամուտների ստեղծման հնարավորությունները՝ ֆերմերների խմբերին և միավորումներին տրամադրվող դրամաշնորհների և վերականգնողական միջոցառումների շնորհիվ բարելավված հավելյալ արտադրանքի հաշվին: Ծրագրի այս բաղադրիչը կզարգացնի անհատ ֆերմերների, ֆերմերային ասոցիացիաների, կոոպերատիվների, ջրօգտագործողների ընկերությունների և մյուս տեղական շահառուների՝ կայուն գյուղատնտեսական համակարգերի և տեխնոլոգիաների որդեգրման, էկոլոգիական վերականգնողական պլանների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կայուն արժեշղթաների զարգացման կարողությունները՝ հաշվի առնելով հողի և ջրի պահպանության, կլիմայական ռիսկերի նվազեցման հիմնահարցերը: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներն ուղղվել են խորհրդատուների վարձատրմանը, իրականացվել են տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ ընտրված հողատարածքներում, ներկայացվել են հողերի սխեմաները, աշխատանքների բնույթն ու ծավալները և ճանապարհային քարտեզը:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 574.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ դրամաշնորհային ծրագրի համաձայնագրում 2018 թվականի հունիս ամսին կատարվել են փոփոխություններ, և ՀԲ-ի հետ համաձայնեցվել են տեխնիկական առաջադրանքները: Ծրագրի համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2017 թվականի մարտի 23-ին: Ծրագրի ավարտման ժամկետն է 2020 թվականի մայիսի 30-ը: Ծրագրի ընդհանուր արժեքն է 450 հազար ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է՝ ամրապնդել ստացողի մոնիթորինգի և գնահատման կարողություններն ու համակարգերը, որոնք հնարավորություն կտան ինքնուրույն իրականացնել գյուղատնտեսության քաղաքականության վերլուծությունն ու ձևակերպումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Ապացույցների վրա հիմնված կարողությունների քաղաքականության ձևավորում վերլուծության և ձևակերպման համար,

● Ծրագրի կառավարում և ղեկավարում, մոնիթորինգ և գնահատում, գիտելիքների տարածում:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 6 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է շուրջ 47.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացման և դաշտային փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 12520 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Ընդունվել և հետազոտվել են շուրջ 473 նմուշներ, սպասարկվել են 215 տնտեսավարող սուբյեկտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 66.1 մլն դրամ: Նշված միջոցառումների նպատակն է բարձրացնել հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող՝ սննդատարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում) պարունակությունը, որն էական փոփոխություն է կրում 5 տարվա ժամանակահատվածում: Վերջինս կախված է մշակաբույսերի բերքի հետ դուրս եկող սննդանյութերի քանակից և պարարտացման մակարդակից: Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող 850 համայնք: Հաշվի առնելով 5 տարվա ընթացքում հողի վերարտադրության ցուցանիշների փոփոխությունը՝ յուրաքանչյուր տարի ագրոքիմիական հետազոտության են ենթարկվում 170 համայնքի (850:5) վարելահողերն ու բազմամյա տնկարկները, և 5 տարվա պարբերականությամբ հանրապետության բոլոր համայնքներին տրվում են հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ ու մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 170 համայնքներում, հետազոտված 105008 հեկտար տարածքից վերցված 35003 հողանմուշներում կատարվել են 88558 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի

պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 170 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով կամ 1.9 մլն դրամով՝ պայմանավորված իրականացվող աշխատանքների ծավալի աճով:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով կատարվել են շուրջ 410.5 մլն դրամ ծախսեր: Ծրագրի շրջանակներում ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 335 ծրագրային խորհրդատվություն, որոնց մասնակցել է 8539 ֆիզիկական և իրավաբանական անձ, իրականացվել է 170 խմբային դասընթաց (2147 մասնակից) անասնաբուծություն, պտղաբուծություն, այգեգործություն, դաշտավարություն, գյուղատնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաներ թեմաներով, նկարահանվել է խորհրդատվական բնույթի 12 տեսանյութ ոչ միայն ՀՀ-ի համար հանդիսացող նորարարական տեխնոլոգիաների՝ կաթիլային, ինտենսիվ, կարկտապաշտպան թեմաների շուրջ, այլ նաև նեղ ուղղություններով թեմաների շուրջ: Իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի թվով 90 մոնիթորինգ: Ծրագրային դասընթացների շրջանակներում իրականացվել են վարկ ստացած գյուղացիական տնտեսություն վարողների վարկերի նպատակային ծախսման 600 մոնիթորինգ: «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում իրականացվել է թվով 1105 մոնիթորինգ: Կազմվել են խորհրդատվական բնույթի 3 ուղեցույցներ՝ ջերմատնային տնտեսությունների առանձնահատկությունները և տնտեսական արդյունավետությունը, սառնարանային տնտեսությունների առանձնահատկությունները և տնտեսական արդյունավետությունը, գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորումն ու դրա նշանակությունը հոտի վերարտադրության կազմակերպման գործում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11%-ով կամ 50.9 մլն դրամով, որը պայմանավորված է իրականացված աշխատանքների ծավալով:

Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են շուրջ 152.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ապահովվում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտությունների, բույսերի պաշտպանության, ինչպես նաև պատվաստված անասնագլխաքանակի կայուն ֆոնի և

գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Աշխատանքներ են տարվել մկնանման կրծողների, մորեխների, ինչպես նաև բազմամյա տնկարկների և մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալների և վնասակարության շեմերի ճշտման, պայքարի ճիշտ ժամկետների մասին ահազանգման, տարածման կանխարգելման ուղղությամբ: 2018 թվականին թվով 25 գյուղատնտեսների միջոցով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում իրականացվել է բուսասանիտարական մոնիտորինգ 251.7 հազար հեկտար տարածքների վրա: Մոնիթորինգի արդյունքում հանրապետության մարզերին բաշխվել են մկնասպան թունանյութ, բույսերի պաշտպանության միջոցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.8%-ով կամ 23.1 մլն դրամով՝ պայմանավորված իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար 2018 թվականին ծախսվել է 272.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանությունը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 19.6%-ով կամ 44.7 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների, ինչպես նաև կատարվող լաբորատոր փորձաքննությունների քանակների ու արժեքների ավելացմամբ:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը 2018 թվականին կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ՀՀ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Սյունիքի մարզերի տնտեսություններին բանկերի միջոցով տրամադրվել է 315.5 մլն դրամ ընդհանուր գումարով վարկ 146 հա ընդհանուր տարածքով հողամասերում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելու համար: Ծրագրի դանդաղ ընթացքի պատճառների վերլուծության արդյունքում այն լրամշակվել է, տնտեսավարողների ավելի լայն շրջանակի ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Լրացվել են անձրևացման համակարգերի վերաբերյալ դրույթներ, նախատեսվել են համաֆինանսավորման նոր տարբերակներ, ինչպես նաև հանվել է համակարգերի ներդրման աշխատանքները կապալառուների միջոցով իրականացնելու պարտադիր դրույթը: Ծրագրի դանդաղ ընթացքի պատճառներ են հանդիսացել ծրագրի մեկնարկով պայմանավորված՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ԳՖԿ-ի, ֆինանսական կառույցների և կապալառուների միջև իրավահարաբերությունները

կարգավորող փաստաթղթերի՝ հուշագրերի, պայմանագրերի մշակման ու կնքման ժամանակատար գործընթացները, շահառուների իրազեկվածության դեռևս ցածր մակարդակը, շահառուների վարկունակության հիմնախնդիրը, փոքր հողատարածքների համար համակարգերի ներդրման բավական մեծ ծախսատարությունը և կապալառուների ներգրավվածությունը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 14.8%-ով կամ 158.4 մլն դրամով, որը պայմանավորված է վարկավորման համար դիմած շահառուների թվի աճով:

99.9% կատարողական են ապահովել Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծախսերը՝ կազմելով շուրջ 20 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի գարնանը ՌԴ-ից ձեռք է բերվել 5-ական տոննա հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի էլիտային վերարտադրության սերմացու, որոնք պայմանագրային հիմունքներով հատկացվել են 14 սերմարտադրողի՝ բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ (սերմացուի կամ գումարի տեսքով) հետ վերադարձնելու պայմանով: Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.1%-ով կամ 161.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է հաստիքների ավելացմամբ:

2018 թվականին բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ծախսերը կազմել են ավելի քան 39.7 մլն դրամ՝ ապահովելով 46.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքների ծավալներով՝ ելնելով անհրաժեշտությունից: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: 162.5 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 13 տոննա մկնասպան միջոց: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 3927.7 կգ մկնասպան միջոց՝ 49096 հազար հեկտար մկնանման կրծողներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության վարելահողերում և բազմամյա տնկարկներում նրանց դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու համար: Համայնքներին բաշխելու նպատակով միջատասպան թունանյութի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում անհատույց հատկացվել է 81 լիտր միջատասպան միջոց,

որով համայնքների միջոցով պայքար է իրականացվել մորեխներով վարակված 540 հեկտար վարելահողերի վրա: Անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել հանրապետության 4760 հա անտառային տարածքներում: Ծրագրի շրջանակներում պայքար իրականացված տարածքներում միջոցառումների արդյունավետությունը 80-85% է: Նախորդ տարվա համեմատ բույսերի պաշտպանության միջոցառումների ծախսերը նվազել են 62.7%-ով կամ 66.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2018 թվականի բուսասանիտարական վիճակով, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված և պահեստավորված նյութերն օգտագործելու հանգամանքով:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը 2018 թվականին կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 89.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, ինչը կապված է անասնահակահամաճարակային միջոցառումների և նախորդ տարիներին արդեն ձեռքբերված և պահեստավորված պատվաստանյութերի քանակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 6’487’528.6 հատ անասնահակահամաճարակային միջոցառում: Հանրապետությունում անասնագլխաքանակի նվազման պատճառով անհնար է դարձել 883’922.6 հատ միջոցառումների իրականացումը: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների և համաճարակաբանների կողմից 915 բնակավայրերում, փաստացի իրականացվել են 5’603’606 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն աճել են 20.7%-ով կամ 200.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված անասնահակահամաճարակային միջոցառումների և ձեռք բերված պատվաստանյութերի քանակով:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության համար նախատեսված 4.3 մլն դրամի ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված 2018 թվականին երկրում առկա քաղաքական իրավիճակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրում, ինչպես նաև բուսասանիտարիայի տեսուչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են 9.2 մլն դրամ՝ ապահովելով 92.2% կատարողական, ինչը պայմանավորված է նրանով, որ փաստացի կատարված լաբորատոր հետազոտություններն իրականացվել են նախատեսվածից պակաս ծավալներով: Ծրագրով նախատեսվում է սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան հնարավորություն ունենալ իրականացնելու լաբորատոր փորձաքննություններ, բնակչությանն անասնաբուժասանիտարական, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջների տեսակետից անվտանգ ու բարձրորակ սննդամթերքով և հումքով ապահովում, սննդի շղթայի փուլերում վտանգավոր սննդամթերքի հայտնաբերում, դրա հետագա իրացման կանխում և սահմանված կարգով օգտահանում կամ ոչնչացում: Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 113.4 մլն դրամ՝ ապահովելով 45.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, որն առաջացել է մրցույթի արդյունքում պարարտանյութերի ձևավորված նվազագույն շահավետ գնով և ձեռքբերված պարարտանյութերի քանակով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հողօգտագործողներին ծրագրով նախատեսված 1500 տոննա ֆոսֆորական և 1500 տոննա կալիումական պարարտանյութերից փաստացի վճարունակ պահանջարկի հիման վրա բաշխվել են 614.8 տոննա ֆոսֆորական և 522.3 տոննա կալիումական պարարտանյութեր, որոնց համար տրամադրվել է 110.3 մլն դրամ սուբսիդիա և 3.1 մլն դրամ դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 82.8%-ով կամ 544.6 մլն դրամով, որը պայմանավորված է պարարտանյութերի նկատմամբ պահանջարկով:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի ծախսերը կազմել են 67.7 մլն դրամ՝ 84.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է գյուղատնտեսությունում տնտեսավարողների ցածր վճարունակությամբ: Ծրագրով նախատեսվել էր իրականացնել տարեկան շուրջ 2.8 մլրդ արժեքով 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի սուբսիդավորում, սակայն, ծրագիրն ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին իրականացվել է նախատեսված ցուցանիշների շուրջ 40%-ի չափով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին հանրապետության բոլոր մարզերում երեք ֆինանսական կառույցի կողմից 133 լիզինգառուի տրամադրվել է 220 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Լիզինգի գումարը կազմել է 881.6 մլն դրամ: Նշենք, որ 2018 թվականին ծրագիրը ֆինանսավորվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Հաշվետու տարում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 5.9 մլն դրամ՝ 30.8%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շահառուների համար առաջարկվել են դժվարամատչելի պայմաններ, օրինակ՝ պայմանագրի կետերը, փաստաթղթերի հավաքագրման երկար ընթացքը և այլ սահմանափակումներ: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում վարկ է տրամադրվել թվով 8 շահառուների՝ ՀՀ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Սյունիքի մարզերում, 315.5 մլն դրամ ընդհանուր գումարով 146 հա ընդհանուր տարածքով հողամասերում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելու համար, նախատեսվել են համաֆինանսավորման նոր տարբերակներ, ինչպես նաև հանվել է համակարգերի ներդրման աշխատանքները կապալառուների միջոցով իրականացնելու պարտադիր դրույթը: Ծրագիրը լրամշակվել է և գտնվում է շրջանառության փուլում: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 162.2 մլն դրամ՝ ապահովելով 46.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է վարկավորման համար դիմող շահառուների՝ նախատեսվածից պակաս քանակով, որը պայմանավորված է առևտրային բանկերի ներքին ընթացակարգերով (վարկերը հաստատվում են դրանց տրամադրման ակնկալվող ժամկետներից մինչև մեկ ամիս առաջ), այդ պատճառով վարկերի տրամադրման դիմում-հայտերի հաստատումը ձգձգվում է մինչև մթերումները սկսվելը: Բացի այդ, ծրագրից օգտվող շահառուների սակավությունը պայմանավորված է նաև ծրագրի շրջանակներում հատկացվող վարկերի ժամկետով և առավելագույն սահմանաչափով: Բացի այդ, ծրագրից օգտվող շահառուների քանակը պայմանավորված է նաև ծրագրի շրջանակներում հատկացվող վարկերի ժամկետով և առավելագույն սահմանաչափով: 2018 թվականին ծրագրից օգտվել են 31 ընկերություն, տրամադրված վարկային պորտֆելը կազմել է շուրջ 6 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 7553 հատ բերքի գնման պայմանագրեր: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.5 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 3%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսավարողների՝ վարկերից օգտվելու ցանկություն չունենալու հանգամանքով՝ կապված իրազեկվածության ցածր մակարդակի, վարկունակության հիմնախնդրի, փաստաթղթավորման ոչ դյուրին ընթացակարգերի հետ: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին:

Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են 212 մլն դրամ՝ ապահովելով 70.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է տարբեր միջազգային կառույցների կողմից միջոցառումների համաֆինանսավորման արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրով նախատեսված միջոցառումները՝ աշխարհագրական նշումով գինիների համակարգի ներդնում, կոլեկցիոն այգու և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների մայրուտի մշակում և պահպանում, կոլեկցիոն այգու լրացում նոր սորտերով, խաղողի և գինու որակի բարձրացման խթանում, միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին և մրցույթներին հայկական ընկերությունների մասնակցություն, աջակցություն ագրոպարենային ոլորտի մասնագիտական կարողությունների զարգացմանը, խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպությանը (OIV) Հայաստանի անդամակցությունից բխող գործառույթների իրականացում, ամբողջությամբ իրականացվել են Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից՝ միջազգային մի շարք կառույցների ներգրավմամբ: 2017 թվականին նշված ծրագրին միջոցները՝ 196.8 մլն դրամի չափով, հատկացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են 2.3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 4.9%-ը: Շեղումը պայմանավորված է վարկավորման համար դիմող շահառուների քանակով՝ կապված առևտրային բանկերի ներքին ընթացակարգերի հետ: Բացի այդ, ծրագրից օգտվող շահառուների սակավությունը պայմանավորված է նաև ծրագրի շրջանակներում հատկացվող վարկերի ժամկետով և առավելագույն սահմանաչափով: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին:

Բուսական ծագման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մնացորդների մոնիթորինգի համար նախատեսված 45.8 մլն դրամի ծախսերը չեն կատարվել: Ծրագրով նախատեսված միջոցները հատկացվում են սահմանված կարգով պետական գնումների մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններին, որոնց կողմից մոնիթորինգի են ենթարկվում ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող բուսական ծագման մթերքում պեստիցիդների, նիտրատների և ծանր մետաղների մնացորդային քանակները:

Հայաստանի Հանրապետությունում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության ծրագրի իրականացման համար նախատեսված 15 մլն դրամի ծախսերը չեն կատարվել: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական

հետազոտությունների վրա հիմնված՝ հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում:

Չեն կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության շճահետազոտության ծրագրի իրականացման համար նախատեսված շուրջ 9.2 մլն դրամի ծախսերը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր դաբաղ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում:

Վերջին երեք ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ ծրագրով սահմանված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված դրամաշնորհների հատկացման մրցույթների արդյունքում պայմանագրեր են կնքվել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» (ՀԱԲԼԾԿ) ՊՈԱԿ-ի հետ, որը բողոքարկվել է այլ կազմակերպության կողմից, ինչի արդյունքում հայտարարված դրամաշնորհների հատկացման մրցույթները համարվել են չկայացած: Այնուհետև ծրագրերի իրականացման համար հիմնավորումներ ունենալուց հետո ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ին առաջարկվել է շարունակել պայմանագրերով իրականացվող գործողությունները, սակայն ծրագրի սեզոնայնությամբ պայմանավորված՝ հնարավոր չի եղել դրանք իրականացնել:

Հաշվետու տարում կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգի ծախսերը կազմել են 30 մլն դրամ՝ ապահովելով 25.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է 2018 թվականին երկրում առկա քաղաքական իրավիճակով: Ծրագրի նպատակն է տեղական արտադրության մեղրի և ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության իրականացումը, ինչը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող սննդամթերքները չեն պարունակում արգելված նյութեր, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված մնացորդային քանակները: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

«Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարներ» ծրագրի ծախսերը, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են շուրջ 87.7 մլն դրամ՝ ապահովելով 65.3% կատարողական: «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն փորձաքննություն կատարելու համար սննդամթերք ներմուծող տնտեսավարող սուբյեկտից գանձվում է փորձաքննության վճար, որը փոխանցվում է լիազոր մարմնի հատուկ

հաշվին և հետագայում փոխանցվում փորձաքննություն կատարած կազմակերպություններին՝ յուրաքանչյուր փորձաքննության համար գնացուցակով սահմանված չափով: Շեղումը պայմանավորված է ներմուծվող սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 35.3%-ով կամ 47.7 մլն դրամով, որը պայմանավորված է լաբորատոր փորձաքննության պատվերների քանակի նվազմամբ, ինչի արդյունքում պակասել են եկամուտները, հետևաբար՝ նաև ծախսերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 243.8 մլն դրամ՝ ապահովելով 86.7% կատարողական, որը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ֆոնդում գոյացած միջոցների 50%-ն օգտագործվում է ծառայության աշխատակիցների նյութական խրախուսման, իսկ 50%-ը՝ ծառայության համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով կամ 14.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է պարգևատրման, արտասահմանյան գործուղումների, տրանսպորտային նյութերի, ավտոմեքենաների վերանորոգման և գրասենյակային նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում շուրջ 528.9 մլն դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 57.4%-ով կամ 713.3 մլն դրամով՝ պայմանավորված անտառապահպանական ծառայությունների ծախսերի նվազմամբ: 2018 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել էր շուրջ 475.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության աշխատանքների դիմաց վճարման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 60%-ով կամ 713.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է իրականացված աշխատանքների ծավալով:

Անտառային պետական մոնիտորինգի իրականացման համար նախատեսված 53.3 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված գումարների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության ենթակա բնության հատուկ պահպանվող երեք տարածքների անտառներում իրականացվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ՝ անտառների պահպանության, անտառային հողերի վրա մարդածին և բնածին ազդեցությունների,

անտառպաշտպանության, հատատեղերի, հակահրդեհային միջոցառումների, անտառվերականգնման ուղղություններով: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները: Իրականացվել է անտառների և անտառային հողերի վիճակի և դրանց վրա բացասական ներգործության ու հետևանքների մոնիթորինգ, ինչպես նաև ապօրինի հատումների կանխարգելման նպատակով դիտարկումներ, գնահատումներ, կանխատեսումներ և ուսումնասիրություններ, որոնք ընդգրկել են անտառտնտեսության և բնության հատուկ պահպանող տարածքների շուրջ 80 տոկոսը: Անտառներում և անտառային հողերում կատարվել են 45 մասնակի ուսումնասիրություն և դիտարկում: Հավաքագրվել և վերլուծվել են պետական մարմիններից, կազմակերպություններից և այլ աղբյուրներից անտառօգտագործման, անտառավերականգնման, անտառների պահպանության, բնափայտի մթերման և իրացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք դասակարգվել են և մուտքագրվել տվյալների շտեմարան: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2018 թվականին շուրջ 16.4 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ ապահովելով 74.8% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման, Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման վարկային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 11 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են 4 վարկային և 1 դրամաշնորհային ծրագրեր:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 6 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 74.3%-ը: Շեղումը պայմանավորված է տեխնիկական փորձաքննության պահանջով պատվարի մարմնի հատակի սալի կառուցման անհրաժեշտությամբ, ինչպես նաև «Նախագիծ և կառուցում» շինարարական պայմանագրերի նախագծերի փոփոխությունների և հաստատումների ուշացմամբ, որի արդյունքում վճարումներ չեն իրականացվել: Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Զարգացման Ֆրանսիական Գործակալության միջև 75 մլն եվրո արժողությամբ վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 12-ին: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին ավարտվել են 2 ջրառ հանգույցների, մնացորդային 1 կմ ջրի փոխադրող համակարգի և 10.1 կմ ոռոգման ցանցի կառուցման շինարարական աշխատանքները: Ավարտվել են հիմնական պատվարի հիմքի փորման աշխատանքները և սկսվել են հիմքի բետոնային աշխատանքներն ու

ցեմենտացումը՝ պատվարի մարմնի կառուցման նպատակով: Փոքր պատվարի հիմքի փորման աշխատանքներն ավարտվել են, և սկսվել են նախապատրաստական աշխատանքներ՝ պատվարի մարմնի կառուցման համար: Ավարտվել են շուրջ 4000 հա ոռոգելի հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցման մանրամասն նախագծի աշխատանքները: Ծրագրի շրջանակներում մատուցվել են նաև խորհրդատվական ծառայություններ՝ մանրամասն նախագծում, հեղինակային վերահսկողություն, տեխնիկական հսկողություն և աուդիտ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2 մլրդ դրամ կամ ծագրված միջոցների 76.8%-ը: Ծրագրի նպատակներն են՝ կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասերից.

● Ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի Մեղրիում, Գեղարդալճում, Բաղրամյան-Նորակերտում և Քաղցրաշենում չորս ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով: Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող, հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում 13 ընտրված պոմպակայանների հեռացնող ջրանցքների մոտ՝ 58 կմ վերականգնման միջոցով.

● Կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում ոռոգման կազմակերպությունների շահագործման, պահպանման ու կապիտալ նորոգման կարիքները վերլուծելու և «Ջրառ» կազմակերպությունների ու ՋՕԸ-ների տեխնիկական աուդիտի իրականացման նպատակով, կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում շուրջ 70 դիտակետում՝ մայր ջրանցքների և ջրառների ընտրված կետերի վրա.

● Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն՝ աջակցության տրամադրում ԾԻԳ-ին ծրագրի կառավարման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և գործառնական ծախսերի ապահովման միջոցով: Աջակցության տրամադրում ՋՕԸ-ների ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին՝ ուղղված նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների ու աշխատանքի բարելավմանը՝ խորհրդատվական ծառայությունների և ուսուցման միջոցով:

Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում 2018 թվականին ավարտվել են Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի կառուցման

աշխատանքները, Բաղրամյան-Նորակերտ ներտնտեսային ոռոգման համակարգի կառուցման պայմանագրի շրջանակներում կառուցվել է 29 կմ ոռոգման ցանց: Ծրագրի 76.8% կատարողականը հիմնականում պայմանավորված է կնքված պայմանագրերի հիման վրա կատարված շինարարական աշխատանքների և խորհրդատվական պայմանագրերի շրջանակներում ներկայացված փաստացի կատարողականների հիման վրա կատարված վճարումներով (Գեղարդա լճի ինքնահոս համակարգի շինարարության առկա խնդիրների հետ կապված՝ կատարողականները ներկայացվել են նախատեսվածից քիչ):

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 677.8 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 33.3%-ը: Կատարողականը պայմանավորված է նրանով, որ Եվրասիական զարգացման բանկի կողմից գնումների պլանը հաստատվել է նախատեսված ժամկետից ուշ, որի հետևանքով աշխատանքները կատարվել են նախատեսվածից պակաս ծավալներով: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի հունիսի 10-ին: Ծրագրի ընդհանուր արժեքն է 50 մլն ԱՄՆ դոլար, որից 40 մլն ԱՄՆ դոլարը վարկային միջոցներն են: Ծրագրի նպատակն է մեխանիկական ոռոգումը փոխարինել ինքնահոսով, վերականգնել մայր և երկրորդ կարգի ջրանցքների, ներտնտեսային ցանցի առավել քայքայված և վթարային հատվածները: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին ամբողջությամբ վերականգնվել են Գառնի և Հացավան համայնքների ոռոգման համակարգերը՝ 6.8 կմ երկարությամբ, վերականգնվել է Գառնիի մայր ջրանցքը՝ 6.6 կմ երկարությամբ, իսկ մնացած 0.6 կմ ջրանցքը կվերականգնվի 2019 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Մաստարայի ջրամբարի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 216.3 մլն դրամ՝ 96.5%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև ծրագրի ավարտով: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը և Միջազգային զարգացման ընկերակցությունը («Համաշխարհային բանկ»), հանդես գալով որպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կարողությունների զարգացման բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամի դրամաշնորհային միջոցների կառավարիչ, տրամադրում են 670 հազար ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող դրամաշնորհ՝ Մաստարայի ջրամբարի ծրագրի նախապատրաստմանն աջակցելու համար, որը նախատեսվում է ֆինանսավորել Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) կողմից կառավարվող հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Մաստարայի ջրամբարի ծրագրի պատրաստվածության աստիճանը՝ համապատասխան ծրագրի նախապատրաստման ուսումնասիրությունների իրականացմանն օժանդակելու միջոցով, և ընդլայնել

Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի՝ ծրագրերի նախապատրաստման և իրականացման կարողությունները: 2018 թվականի ընթացքում ավարտվել են Մաստարայի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծի աշխատանքները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման ծառայությունները, և ներկայացվել են համապատասխան հաշվետվությունները: Ծրագիրն ավարտվել է 2018 թվականի հոկտեմբերի 12-ին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 6.6%-ը՝ 86.9 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է նախատեսված ժամկետից ուշ, որի հետևանքով նախագծման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են, վճարումները տեղափոխվել են 2019 թվական: Ծրագրի առաջին փուլում որոշվել է իրականացնել Կապսի ջրամբարի հիմնանորոգումը՝ 25 մլն մ^3 ընդհանուր ծավալով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի փետրվար ամսին ներկայացվել են գեոտեխնիկական աշխատանքների ամփոփ ցուցանիշներ, որոնք քննարկվել են միջազգային փորձագետների հանձնաժողովի, KFW-ի խորհրդատուների և Ջրային կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ: «Շրջակա միջավայրի վրա սոցիալական ազդեցությունը գնահատող» (ՇՄՍԱԳ) խորհրդատուների ընտրության նպատակով անցկացվել է նոր մրցութային գործընթաց, իրականացվել են պայմանագրային բանակցություններ, կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի մեկնարկը տրվել է 2018 թվականի սեպտեմբեր ամսին: Նախագծային խորհրդատուների կողմից մշակվել և ներկայացվել են հաշվետվություններ, որոնք քննարկվել են դեկտեմբեր ամսին կայացած աշխատաժողովի ընթացքում KFW-ի, միջազգային փորձագետների, խորհրդատուների, Ջրային կոմիտեի և շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հաշվետու տարում ոռոգման դասում ընդգրկված հետևյալ 3 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

2018 թվականին ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրվել է շուրջ 4.8 մլրդ դրամ աջակցություն: 2018 թվականին ծառայություններ են մատուցվել 15 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների, կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է հատկացվում պետական օժանդակությանը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր

հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաճախսաճծկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 9.4%-ով կամ 491.3 մլն դրամով նվազումը պայմանավորված է ջրօգտագործողների ընկերությունների համար ըստ տարիների նախատեսված սուբսիդիայի կրճատման սցենարով:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 336.5 մլն դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը՝ մաքրվում և վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: Նշված արդյունքներին հասնելու համար իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, դրանց մաքրում և նորոգում, մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են շուրջ 191.1 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով կամ 16 մլն դրամով, ինչը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին 2018 թվականին տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ ֆինանսական աջակցություն: Աջակցության հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում նրանց տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին իրականացնել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.1%-ով կամ 46.3 մլն դրամով, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի ծախսերի աճով:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են 15.7 մլն դրամ կամ ծրագրի 98%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և

նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսումներով: Հատկացված գումարն ուղղվել է հիդրոտեխնիկական կառուցվածքների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով որպես մշտապես գործող մարմին ստեղծված՝ Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 61.7%-ով կամ շուրջ 6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հանձնաժողովի աշխատակիցների աշխատավարձի ծախսերի աճով, ինչպես նաև 2018 թվականին վարչական սարքավորումների ձեռքբերմամբ:

Ոռոգման համակարգի առողջացման ծրագրին աջակցության ծախսերը կազմել 750 մլն դրամ՝ 94.3%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի նպատակն է ոռոգման ծառայությունների արդյունավետության բարձրացումը, ծառայությունների մատուցման շարունակականության ապահովումն ու մատչելիության պահպանումը, ոռոգման ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության և կայունության բարելավումը, ոռոգման համակարգերի և ենթակառուցվածքների պահպանումն ու արդիականացումը, ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության ներդրման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացումը: Ծախսերի շեղումը ծրագրված ցուցանիշից պայմանավորված է նրանով, որ ջրաչափական սարքավորումների տեղադրման նպատակով հիդրոտեխնիկական կառույցների կառուցման համար նախատեսված աշխատանքները չեն կատարվել: Ջրաչափական սարքավորումների տեղադրման հիդրոտեխնիկական կառույցների կառուցման որոշումը հաստատվել է տարեվերջին, իսկ աշխատանքների նախապատրաստական փուլը երկարատև է (գնումների անվանացանկի փոփոխություն, մրցույթի հայտարարում, պայմանագրի ստորագրում և այլն), ուստի աշխատանքները հնարավոր չի եղել իրականացնել, և դրանք տեղափոխվել են 2019 թվական: 2018 թվականին աջակցությունը հատկացվել է էլեկտրաէներգիայի ծախսի գծով առավել մեծ չափերի կուտակված պարտքեր ունեցող 6 ընկերությունների: Ծրագիրը սկսել է գործել 2018 թվականից:

Հաշվետու տարում ոռոգման համակարգերի հիմնանորոգման ծախսերը կազմել են 311.1 մլն դրամ՝ 61.6%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում 12 հիմնանորոգման աշխատանքների համար կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, թվով 12 ՋՕԸ-երի և «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են 71 համայնքների ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքներ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ Արմավիրի մարզի 7

խորքային հորերի շինարարական աշխատանքները չեն իրականացվել՝ կապված տարեվերջի ժամկետների սղության և հորատման համար անհրաժեշտ եղանակային պայմանների հետ: Ազատի ջրամբարի հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների նախագծանախահաշվային փաթեթը ձեռք է բերվել, սակայն հիմնական աշխատանքների կատարման մրցույթը չի կայացել, քանի որ նախագծային որոշակի ճշգրտումների արդյունքում նախագիծը փոփոխվել է, որի հետևանքով Ազատի ջրամբարների հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների համար նախատեսված 75.1 մլն դրամի դիմաց կատարվել են 5.7 մլն դրամի ծախսեր: Ջրօգտագործողների ընկերությունների ոռոգման համակարգերի հիմնանորոգման ծրագրի մի մասը կատարված աշխատանքներից առաջացած տնտեսում է, իսկ մյուս մասը սեզոնային բնույթ է կրում (օրինակ՝ ՀՀ Արարատի մարզի Նորաբաց համայնքի միակ ջրի աղբյուր հանդիսացող 7 խորքային հորերի հիմնանորոգման աշխատանքները չեն իրականացվել, քանի որ հնարավոր չէր դադարեցնել ջրամատակարարումը ոռոգման շրջանի ընթացքում, իսկ ոռոգման շրջանի ավարտից հետո սեղմ ժամկետներում հնարավոր չէր իրականացնել հիմնանորոգման աշխատանքները): Նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերումը տեղափոխվել է 2019 թվական:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2018 թվականին կազմել են ավելի քան 16.6 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 69.8%-ը: Վերջինս հիմնականում պայմանավորված է վառելիքի այլ տեսակների և էլեկտրաէներգիայի բնագավառների ծրագրերի կատարողականով:

2018 թվականին *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են 274.9 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 98.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով կամ 3.1 մլն դրամով:

2018 թվականին *վառելիքի այլ տեսակների* դասի ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ ծրագրվածի 40.9%-ը, որը հիմնականում պայմանավորված է ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երեք դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 39.4%-ը՝ 2.7 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում սարքերի ու սարքավորումների ձեռքբերումների մասով սարքավորումների պատրաստման ցիկլի երկարաձգման հանգամանքով, ինչն իր հերթին պայմանավորված է էլեկտրա-էներգիայի գեներացման համակարգերի արդիականացմանն ուղղված մոնտաժման և շահա-

գործման հանձնելու ժամանակացույցերի փոփոխմամբ, ինչպես նաև ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարումների ժամանակացույցերի փոփոխմամբ: Աշխատանքների և սարքավորումների մատակարարումների մի մասը տեղափոխվել է 2019 թվական: Դրանով պայմանավորված՝ նախատեսվում է ծրագրի վարկային բաղադրիչի օգտագործման ժամկետը երկարաձգել մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը: Ներկայումս իրականացվում է համաձայնագրի ժամկետի երկարացման և համապատասխանաբար վարկի մարման սկզբնաժամկետի երկարացման գործընթաց, նախատեսվում է նաև կնքել ընդհանրացնող պայմանագիր (շրջանակային Լրացուցիչ համաձայնագիր) ամբողջ մնացորդային գումարի չափով և կնքված համաձայնագրի համաձայն իրականացնել վճարումներ՝ պայմանագրային արժեքի 10%-ի չափով, սակայն համաձայնագրի կնքման գործընթացը երկարաձգվում է: Ծրագրի նպատակն է՝ երկարաձգել Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետը: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է իրականացնել էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր ուսումնասիրություն և շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի մշակում, երկրորդ փուլում՝ նախապատրաստման ծրագրի իրականացում, ներառյալ՝ հետազոտական, հաշվարկային, վերլուծական, նախագծային, կոնստրուկտորական, մոնտաժային և գործակարգաբերման աշխատանքները, և անհրաժեշտ սարքավորումների մատակարարումներ: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ծրագրի իրականացման նպատակով գլխավոր կապալառուի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի կանխավճարների և նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 204.3 մլն դրամ՝ 84.3%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է գործարքի հարցերով խորհրդատու ԱՎԱԳ Սոլյուշնս ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի փոփոխության արդյունքում նախատեսված աշխատանքների մի մասը (ծրագրի ամփոփման ավարտական հաշվետվությունը և գործարքն ամփոփող ուսումնասիրության ավարտական տարբերակի պատրաստումը) 2019 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում: Ծրագրի շրջանակներում միջոցներն ուղղվել են գործարքային խորհրդատվության, գործառնությունների խորհրդատվության փորձագետի, սոցիալական պաշտպանության իրավական փորձաքննության աշխատանքների, ինչպես նաև ծրագրի կառավարման համար վճարմանը:

2018 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 19.7 մլն դրամ՝ ապահովելով 34% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված էլեկտրակայանի տեխնիկատնտեսական իրագործելիության հիմնավորման աշխատանքները չեն իրականացվել, քանի որ հետաքրքրություն հայտնած ոչ մի ներդրող կազմակերպություն դեռևս էլեկտրակայան կառուցելու վերջնական առաջարկ չի ներկայացրել: Ծրագրի նպատակն է Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, հետախուզական հորատման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումն ու երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում մասնավոր հատվածի ներգրավումը: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել աուդիտորական ընկերությանը և գնումների գործընթացն իրականացնող մասնագետին:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են շուրջ 13.5 մլրդ դրամ՝ ապահովելով 81.7% կատարողական: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 6 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են 4 վարկային ծրագրեր, որոնց կատարողականով է պայմանավորված դասի ծախսերի ընդհանուր կատարողականը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 72.8%-ը, որը պայմանավորված է նրանով, որ հաշվի առնելով աշխատանքների իրականացման դանդաղ տեմպերը՝ ծրագրի խորհրդատուն մատուցել է նախատեսվածից պակաս ծավալով խորհրդատվական ծառայություններ: Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը լրացել է 2018 թվականի հոկտեմբերի 26-ին, պայմանագրի գործողության հետագա ընթացքը դեռևս գտնվում է քննարկման փուլում: «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայաններում շինմոնտաժային աշխատանքներն ընթանում են դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում առաջացել են շեղումներ ծրագրի իրականացման ժամանակացույցում: Ներկայումս քննարկվում է աշխատանքների կատարման նոր ժամանակացույց: Գլխավոր կապալառուն իրականացրել է նախատեսված սարքերի և սարքավորումների մի մասի մատակարարումը, մնացած մասի մատակարարումը տեղափոխվել է 2019 թվական: Ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ ծրագրի իրականացման վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, վարկային միջոցներից օգտագործված գումարների նկատմամբ հաշվեգրված տոկոսավճարների, շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման, ինչպես նաև հարկերի և տուրքերի վճարման ուղղություններով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 220 կՎ

լարման «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանները: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 95.1%-ով՝ կազմելով 2 մլրդ դրամ: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել կարգավարական կառավարման ավտոմատացված համակարգը (SCADA) և կառուցել Պահուստային կարգավարական կառավարման կենտրոն: 2018 թվականին կատարվել են վճարումներ աշխատանքների վերահսկողության և կառավարման խորհրդատվական ծառայությունների, վարկային միջոցներից օգտագործված գումարների նկատմամբ հաշվեգրված տոկոսավճարների, շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների մասնակի ներկրման, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի գծով: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ փաստացի ծախսերի շեղումը մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդատուի կողմից ներկայացված հաշիվ ապրանքագիրը գերազանցել էր բյուջեով նախատեսված ցուցանիշը, որը հնարավոր չէր մաս-մաս վճարել, ուստի վճարումը հետաձգվել է 2019 թվական: Շինարարական աշխատանքների թերակատարումը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմաններով, որի հետևանքով շինարարության և շինմոնտաժային աշխատանքների տեմպերը դանդաղել են: Ծրագրով նախատեսված աշխատանքները նախատեսվում է ավարտել 2019 թվականին: Բացի այդ, ծրագրի իրականացման կապալառուն հաշիվ-ապրանքագրերը ներկայացրել է 2018 թվականի տարեվերջին, սակայն Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվելիք վճարումների ժամկետի սահմանափակմամբ պայմանավորված (մինչև 2018թ. դեկտեմբերի 7-ը)՝ համապատասխան վճարումներ չեն իրականացվել: Սարքերի և սարքավորումների մնացած մասի ձեռքբերումն ու մատակարարումները տեղափոխվել են 2019 թվական:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 73.3%-ը, Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը: 2018 թվականին ծրագրի շրջանակներում վճարումներն իրականացվել են ծրագրի իրականացման վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, կապալառուի իրականացրած շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման, ինչպես նաև

սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց: Ծրագրի կատարողականը պայմանավորված է «Աշնակ» ենթակայանի վերակառուցման շրջանակներում աշխատանքների կատարման ծավալային փոփոխություններով, որի համաձայն փոփոխություն է նախատեսվում իրականացնել նաև խորհրդատուի հետ կնքված պայմանագրում: «Աշնակ» ենթակայանի վերակառուցման շրջանակներում աշխատանքների կատարման, ինչպես նաև սարքերի ու սարքավորումների մատակարարման ծավալային փոփոխություններով պայմանավորված՝ ծրագրի իրականացման ժամանակացույցում առաջացել են շեղումներ: 2018 թվականի նախատեսված որոշ սարքերի և սարքավորումների մատակարարումը տեղափոխվել է 2019 թվական: Աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվել 2019 թվականի մարտի 31-ը՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի փոխարեն:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 6.6 մլրդ դրամ՝ 89.5%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Երևանի ՋԷԿ-ի 220 կվ ենթակայանը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է շահագործման ընդունման ակտերի ստորագրման գործընթացով: Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի կառուցման աշխատանքներն ավարտվել են, ենթակայանը դրվել է լարման տակ, իրականացվում է թերությունների վերացման և ենթակայանի շահագործման ընդունման գործընթացը: Նշված աշխատանքների ավարտից հետո կիրականացվի վերջնավճար: Հաշվետու տարվա ընթացքում կատարվել են վճարումներ աշխատանքների հսկողության և կառավարման, ծրագրի իրականացմանն աջակցող խմբի՝ անհատ խորհրդատուների կողմից իրականացված խորհրդատվական ծառայությունների, իրականացված շինարարական աշխատանքների, նախագծման, ներկրված սարքերի ու սարքավորումների, ինչպես նաև նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրին պետական աջակցության նպատակով նախատեսված 600 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ չեն հաստատվել մրցութային փաթեթները: Հաշվի առնելով, որ մրցութային փաթեթները հաստատվում են որոշ ուսումնասիրությունների հիման վրա, մասնավորապես՝ սեյսմիկ աուդիտ, էներգախնայողության աուդիտ, ինչպես նաև նախագծային աշխատանքների հիման վրա, որոնք իրականացվում են դրամաշնորհային միջոցների հաշվին, ապա մրցութային փաթեթների հաստատումը հնարավոր կլինի վերը նշված բոլոր աշխատանքները կատարելուց հետո: Նշենք, որ Երևանի էներգաարդյունավետության ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կազմում է 15 մլն եվրո, որից

7 մլն եվրոն կազմում են Եվրոպական ներդրումային Բանկի վարկային միջոցները, 5 մլն եվրոն՝ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի (E5P) դրամաշնորհային միջոցները, 1 մլն եվրոն՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի դրամաշնորհային միջոցները, 2 մլն եվրոն՝ Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորման միջոցները: Վերոնշյալ վարկային և դրամաշնորհային համաձայնագրերը ստորագրվել են դոնոր կազմակերպությունների և Երևանի քաղաքապետարանի միջև, որի հետևանքով նշված ծախսերը ներառվել են 2018 թվականի համայնքային բյուջեում: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվում են հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2018 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են 659.7 մլն դրամ կամ ծրագրվածի 99.1%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.8%-ով կամ 12.2 մլն դրամով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերը կազմել են շուրջ 4.3 մլն դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական՝ պայմանավորված տնտեսումներով, որն առաջացել է մրցույթի արդյունքում նախատեսվածից ցածր գնով սարքավորումների ձեռքբերմամբ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, որը նպաստում է աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը:

Հաշվետու տարում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* բնագավառի ծախսերը կազմել են 36.9 մլն դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 79.4%-ով կամ 16.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2018 թվականին նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակմանը հատկացված միջոցների դասակարգման փոփոխությամբ՝ դրանք «Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբի «Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» դասից տեղափոխելով «Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն» խմբի «Շինարարություն» դաս:

Հաշվետու տարում *հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի դասում* նախատեսված 16.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են սպառողներին ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.7%-ով կամ 3.6 մլն դրամով, որը պայմանավորված է

նրանով, որ աշխատավարձի վճարումների մի մասը կատարվել է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից:

Հաշվետու տարում *շինարարության* դասում ընդգրկված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման ծախսերը կազմել են շուրջ 20 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում նախագծող կազմակերպությունների կողմից մշակվել են «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ», «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուները, իսկ «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերը գտնվում են մշակման փուլում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2018 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 59.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 76.6%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտի բնագավառի ծախսերն արձանագրել են 17.6% անկում՝ հիմնականում պայմանավորված ճանապարհային տրանսպորտի ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 54.1 մլրդ դրամ ուղղվել է *ճանապարհային տրանսպորտի* դասի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 78.4%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 22 ծրագրեր, որոնցից տասնմեկը՝ վարկային և երեքը դրամաշնորհային ծրագրեր են:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է շուրջ 9.2 մլրդ դրամ՝ 84.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կառուցվող ճանապարհի Ագարակ-Կոշ տեղամասում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում բացահայտվել են բացառիկ հնագիտական հուշարձաններ, և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ճանապարհի 8 կմ երկարությամբ հատվածի փոփոխություն: Բացի այդ, երկարաձգվել է շինարարական հրապարակի մուտքի տրամադրման և առկա հաղորդակցուղիների (ոռոգման և խմելու ջրի, էլեկտրասնուցման և կապի մալուխների համակարգեր) տեղափոխման աշխատանքները: Նախատեսված ծախսերից չեն իրականացվել նաև ծրագրի կառավարման խորհրդատու/ինժեների կողմից իրականացված միանվագ աշխատանքների դիմաց համապատասխան վճարումները և որոշ այլ վճարումներ, քանի որ դրանք խորհրդատուների կողմից ներկայացվել են նախատեսված ժամկետից ուշ և 2018 թվականի դեկտեմբեր ամսին դեռևս գտնվում էին ստուգման, վերանայման և հաստատման փուլում: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վճարումներ են իրականացվել որոշ խորհրդատվական

ծառայությունների դիմաց: Կապալառուի կողմից կատարվել են հողային, արհեստական կառուցվածքների շինարարության և պատվածքի բետոնապատման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է շուրջ 4 մլրդ դրամ՝ 79.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Չնայած ծրագրի շրջանակներում իրականացվել են նախատեսվածից ավել ծավալով շինարարական աշխատանքներ՝ կապալառուի կողմից ուղեկցող փաստաթղթերի ոչ բավարար ներկայացման պատճառով նախատեսված վճարումներն ամբողջությամբ չեն իրականացվել: Ծրագրի շրջանակներում Թալին-Լանջիկ ա/ճ նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացված աշխատանքների կատարողականը գտնվում է ինժեների կողմից ընդունման գործընթացում: Թալին-Գյումրի ա/ճ 6-րդ ենթահատվածի նախագծային փոփոխությունների և հողերի օտարման հետ կապված խնդիրների առկայությունը հնարավորություն չի տվել կապալառուի կողմից իրականացնել հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքները ողջ ծավալով: Տրանշ 4-ի 60կմ Սիսիան-Քաջարան հատվածի մանրամասն նախագիծը գտնվել է հատուկ համալիր փորձաքննության ընթացքում, որով պայմանավորված՝ խորհրդատուի կողմից ներկայացված նախագծի դիմաց վճարումներ չեն կատարվել: Խորհրդատուի կողմից ներկայացված Տրանշ 4-ի Արտաշատ-Սիսիան հատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի և սոցիալական ազդեցության նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարվել են դիտողություններ, որոնց հիման վրա խորհրդատուն իրականացրել է փաստաթղթերի լրամշակում, և վճարումները տեղափոխվել են 2019 թվական: Ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում իրականացվել են Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի շինարարական, հողային և արհեստական կառուցվածքների շինարարության աշխատանքներ, մատուցվել են տեխնիկական հսկողության ծառայություններ, իրականացվել են Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքներ, դրանց տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ, Թալին-Գյումրի ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում ամբողջությամբ ավարտվել է ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի (կմ71+500-կմ90+200) ՀՕՏԾ իրականացումը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև մրցութային գործընթաց ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար լաբորատոր սարքավորումների մատակարարման և տեղադրման նպատակով: Մրցույթի արդյունքում կնքվել է պայմանագիր մատակարար կազմակերպության հետ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 71.7% կատարողական: Չնայած ծրագրի

շրջանակներում իրականացվել են նախատեսվածից ավել ծավալով շինարարական աշխատանքներ՝ կապալառուի կողմից ուղեկցող փաստաթղթերի ոչ բավարար ներկայացման պատճառով նախատեսված վճարումներն ամբողջությամբ չեն իրականացվել: Լանջիկ-Գյումրի ա/ճ հոկտեմբեր-դեկտեմբերի ժամանակահատվածի իրականացված աշխատանքների կատարողականը ներկայացվել է ինժեներին և գտնվում է ընդունման գործընթացում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի շինարարական, հողային և արհեստական կառուցվածքների շինարարության աշխատանքներ:

Նշված վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 41.5%-ով՝ կազմելով 1.1 մլրդ դրամ: Չնայած ծրագրի շրջանակներում իրականացվել են նախատեսվածից ավել ծավալով շինարարական աշխատանքներ՝ կապալառուի կողմից ուղեկցող փաստաթղթերի ոչ բավարար ներկայացման պատճառով նախատեսված վճարումներն ամբողջությամբ չեն իրականացվել: 2018 թվականի մայիս-հոկտեմբեր ժամանակահատվածում մատուցված ծառայությունները գտնվում են ԵՆԲ-ի կողմից ընդունման գործընթացում: Լանջիկ-Գյումրի ա/ճ հոկտեմբեր-դեկտեմբերի ժամանակահատվածի իրականացված աշխատանքների կատարողականը ներկայացվել է ինժեներին և գտնվում է ընդունման գործընթացում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի հողային աշխատանքներ, մատուցվել են նշված ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 737.6 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ նախագծային աշխատանքների իրականացման մրցույթը նախատեսված ժամկետից ուշ է սկսվել: Մրցույթի վերաբերյալ հաշվետվությունն ուղարկվել է նոյեմբերին, որը բանկի կողմից հաստատվել է 2019 թվականի հունվարին: 2018 թվականին ծրագրի շրջանակներում կազմակերպվել է Ագարակ-Քաջարան շուրջ 45 կմ հատվածի վերակառուցման աշխատանքների նախագծող և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության ընտրության միջազգային մրցույթ: Համապատասխան պայմանագրի ստորագրումը տեղափոխվել է 2019 թվական, որից հետո անմիջապես կսկսվեն հետազոտման և նախագծման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 97.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 30 հատ ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչներ, ինչպես նաև ֆինանսական աուդիտի և սոցիալական մոնիտորինգի ծառայություններ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 5.9 մլրդ դրամ՝ ապահովելով 86.8% կատարողական: Վերջինս պայմանավորված է նրանով, որ տեխնիկական հսկողության աշխատանքների կատարման դիմաց վճարման փաստաթղթերը և հաշվետվությունները չեն ներկայացվել սահմանված կարգին համապատասխան, որոնք կապալառուի կողմից մինչև տարեվերջ չի շտկվել, արդյունքում վճարումները չեն իրականացվել: Ծրագրով հաշվետու տարում նախատեսված աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2019 թվական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին մատուցվել են տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություններ, իրականացվել են հողային, գաբիոնների, հենապատերի, ջրահեռացման համակարգի վերականգնման, մայթերի, 12 հատ կամուրջների նորոգման, 57 կմ ասֆալտապատման աշխատանքներ: Իրականացվել են նաև 10 ճանապարհահատվածի (որոնցից 3-ը դեռևս ընթացքում) հիմնանորոգման աշխատանքներ, նախագծահետազոտական և տեխնիկական աուդիտի աշխատանքներ, ձեռք են բերվել ճանապարհային պատվածքի անհարթությունը չափող 2 սարքավորումներ՝ պրոֆայլերներ և դրանք ամրացնելու համար 2 ավտոմեքենաներ, համակարգչային տեխնիկա և ծրագրային ապահովում: Ձեռք են բերվել նաև 3850 հատ ճանապարհային նշաններ, որոնք տեղադրվում են շուրջ 380 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներում: Հաշվետու տարում արդեն տեղադրվել է 1150 հատ նշան: Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի (ԿՆՃԲԾ) լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է մրցութային գործընթաց: Հաշվետու տարում կազմակերպվել է նաև Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի (ԿՆՃԲԾ) լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի 3-րդ տարվա ճանապարհների վերականգնման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթաց: Ավարտվել են 2019 թվականին վերականգնման ենթակա ճանապարհների նախագծային աշխատանքները:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում օգտագործվել է 301.4 մլն դրամ՝ 60.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ խորհրդատուների կողմից կատարվել են շինարարական աշխատանքների հետ կապված տեխնիկական վերահսկողություն, տարբեր ուսումնասիրություններ բնապահպանական, աղմուկի և թրթռումների վերաբերյալ՝ ըստ նախատեսված ժամանակացույցի, համաձայն որի իրականացվել և ընդունվել են շինարարական աշխատանքները, սակայն խորհրդատուների կողմից

վճարահաշվարկային փաստաթղթերն ամբողջությամբ չեն ներկայացվել: Փաստաթղթերի կազմման, ներկայացման, հաստատման և վճարման գործընթացը տեղափոխվել է 2019 թվական:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում օգտագործվել է 4.7 մլրդ դրամ՝ 54.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների մասնակի կատարմամբ: Շինարարական աշխատանքների մասնակի կատարումը պայմանավորված է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի 2018 թվականին հայտարարված մրցույթի չկայացման փաստով, ինչպես նաև Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի ավարտից հետո աշխատանքների ավարտական ակտերի կազմման գործընթացը 2019 թվականի հունվարին ավարտելու հանգամանքով: Խորհրդատվական ծառայությունների մասնակի կատարումը պայմանավորված է Տրանշ 3-ի և Երևան քաղաքի տրանսպորտային մոդելի պատրաստման գործընթացը հետաձգելու հանգամանքով: Տրանշ 3-ի նախապատրաստման հետաձգումը պայմանավորված է ՀՀ կառավարության՝ նոր վարկ չվերցնելու որոշմամբ: Երևանի տրանսպորտային մոդելի մշակման համար Երևանի քաղաքապետարանը դիմել է Ասիական զարգացման բանկին՝ առաջարկելով դիտարկել այս մոդելի մշակումը դրամաշնորհային միջոցներով իրականացնելու հնարավորությունը, ինչը թույլ կտա նշված ուղղությամբ ծախսերը չկատարել վարկային միջոցներից: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածների շինարարության աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 452.7 մլն դրամ կամ բյուջեով հատկացված գումարի 91.7%-ը: Հայաստանի Հանրապետության հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանի «Սադախլո-Բագրատաշեն» անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (Բանկ) միջև 2012 թվականի նոյեմբերի 23-ին ստորագրվել է վարկային համաձայնագիր, որը մեկ անգամ երկարաձգվել էր մինչև 2018 թվականի նոյեմբերի 23-ը, և առաջացել է վարկային համաձայնագրի ևս մեկ երկարաձգման անհրաժեշտություն, որով պայմանավորված է ծրագրի կատարողականը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վճարվել է կանխավճար նախագծման և շինարարության աշխատանքների համար: 2018 թվականի նոյեմբերի 30-ին մեկնարկել են կամրջի նախագծման աշխատանքները:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 5 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 95.5%-ը: Ծրագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություններ: Շինարարական աշխատանքներն ավարտվել են, և 38.45 կմ երկարությամբ ճանապարհահատվածն ընդունվել է շահագործման:

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային ծրագրի իրականացմանն Ասիական զարգացման բանկի աջակցության շրջանակներում օգտագործվել է 1.5 մլրդ դրամ՝ 84.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել ճանապարհի՝ Թումանյան կայարան-Բագրատաշենի սահմանային անցակետ 51.74 կմ երկարությամբ հատվածը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականի մայիսի 29-ին, ավարտը նախատեսվել է 2020 թվականի նոյեմբերին: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ճանապարհով անընդհատ երթևեկությունը խոչընդոտել է աշխատանքների նախատեսված տեմպով իրականացմանը, կատարված աշխատանքների հիմնական մասը չի ընդունվել՝ չափելի և կապալառուի կողմից փաստաթղթերով հիմնավորված չլինելու պատճառով, գոյություն են ունեցել հողերի օտարման հետ կապված խնդիրներ: Հաշվետու տարվա ընթացքում կատարվել են 49.65 հազար մ^3 հողային աշխատանքներ և գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի 11.5 կմ ֆրեզավորման աշխատանքներ: Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում ԱՋԲ և ԵՆԲ հատվածներում ամբողջությամբ ավարտվել են Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրականացման աշխատանքները: 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցութային գործընթաց, որի արդյունքների ամփոփումը տեղափոխվել է 2019 թվական, որից հետո նախատեսվում է ստորագրել համապատասխան պայմանագիր:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի շրջանակներում օգտագործվել է ծրագրված միջոցների 23.8%-ը՝ 530.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության, Գյումրու քաղաքապետարանի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին կնքված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի համաձայնագրի համաձայն:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է հիմնանորոգել և ճանապարհային երթևեկության համար անհրաժեշտ գույքով կահավորել Գյումրի քաղաքի թվով 12 փողոց և 2 հրապարակ՝ իրենց հարակից մայթերով ու փողոցային լուսավորության համակարգով: Ծրագրից շեղումը պայմանավորված է նրանով, որ համայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ խնդիրներ՝ կապված ստորգետնյա կոմունիկացիաների տեղադիրքի և բարձրանիշերի հետ, աշխատանքների ժամանակին չկատարման համար խոչընդոտ են հանդիսացել նաև եղանակային պայմանները: ՀՀ կառավարության կողմից նախատեսված համաֆինանսավորման միջոցներից ծախսեր չեն կատարվել, քանի որ կապալառուների կողմից աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվությունները թերի են ներկայացվել: Ծրագրի շրջանակներում կապալառուներին վճարվել են կանխավճարներ, ինչը հանդիսանում է պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների սկսման նախապայման:

Վերոհիշյալ պատճառներով ամբողջությամբ չեն օգտագործվել նաև վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի (Տրանշ Ա) շրջանակներում նախատեսված միջոցները, որոնք կազմել են 288.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 18.1%-ը: Դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում օգտագործված միջոցները նույնպես ուղղվել են կապալառուներին կանխավճարների տրամադրմանը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների տեխնիկական համագործակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 316.4 մլն դրամ՝ 57.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի միջոցների հաշվին նախատեսված է մանրամասն նախագծման, շինարարության տեխնիկական հսկողության, ծրագրի համար ապրանքների աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի կազմման, սպասարկման պայմանագրերի պատրաստման և ավտոկայանատեղերի ռազմավարական ու գործողությունների ծրագրի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցում: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ընտրված խորհրդատվական կազմակերպությունների կողմից նախատեսված աշխատանքները մասնակիորեն են կատարվել, մասնավորապես՝ իրականացվել են ծրագրի շրջանակներում նախատեսված մրցութային փաթեթների և գնման պայմանագրերի պատրաստման, մանրամասն նախագծման աշխատանքները: Խորհրդատուի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար հաշվետվությունները չեն ընդունվել, և գտնվում են ուսումնասիրման փուլում: Մշակված ավտոկայանատեղերի ռազմավարական ծրագիրը դրվել է հանրային քննարկման, որի արդյունքներով այն ուղարկվել է լրամշակման:

Հաշվետու տարվա պետական բյուջեից շուրջ 5.8 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 94.8%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ մրցույթների արդյունքում պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր արժեքներով, ինչպես նաև պայմանագրերի գործողության ընթացքում կատարվել են փոփոխություններ (պայմանագրերի արժեքների նվազեցում), որի արդյունքում առաջացել է տնտեսում: Բացի այդ, պայմանագրային ժամկետների երկարացման արդյունքում չեն վճարվել նաև որոշ օբյեկտների հեղինակային և տեխնիկական հսկողության համար նախատեսված գումարները: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 62.1 կմ երկարությամբ 32 ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ, Մ4-Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման հատվածում տեղադրվել են 15.2 կմ ընդհանուր երկարությամբ մետաղական արգելափակոցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 42.6%-ով կամ 1.7 մլրդ դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների ծավալների աճով:

2018 թվականին միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծախսերը կազմել են 8.5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.2%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 3477.1 կմ ճանապարհների՝ ընթացիկ ձմեռային, 2925.0 կմ ճանապարհների՝ ընթացիկ ամառային և դրանց վրա գտնվող ու առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող հարմարանքների (683’100 գծ.մ) պահպանման աշխատանքներ, նշագծվել է 1848.9 կմ ավտոճանապարհ: Ծրագրով իրականացվել են նաև 5 ճանապարհահատվածների 20.3 կմ ընդհանուր երկարությամբ միջին նորոգման աշխատանքներ: Բացի այդ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված 1.7 մլրդ դրամի հաշվին կնքվել են ՀՀ միջպետական նշանակության ավտոճանապարհների ևս 5 ճանապարհահատվածների 23.7 կմ ընդհանուր երկարությամբ միջին նորոգման պայմանագրեր: Աշխատանքների մի մասն իրականացվել է, իսկ մյուս մասը տեղափոխվել է 2019 թվական: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 17%-ով կամ 1.2 մլրդ դրամով՝ պայմանավորված միջին նորոգումների ծավալի աճով:

Հաշվետու տարում 321 մլն դրամ է տրամադրվել տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգմանը, որը կազմել է ծրագրված միջոցների 91.5%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև նրանով, որ չեն վճարվել թվով 3 օբյեկտների երաշխիքային գումարները՝ կապված օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի բացակայության հետ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 11 տրանսպորտային օբյեկտների նորոգման աշխատանքներ: Բացի այդ, իրականացվել են նաև նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա

համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերն աճել են 16.4%-ով կամ 45.3 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգված օբյեկտների քանակի աճով:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 96.5%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.8%-ով կամ 117.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների աճով:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի պահպանման և սպասարկման ծախսերը կազմել են շուրջ 15.5 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում շարունակվել է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրի պահանջներին համապատասխան ՀՀ-ում ներդրված հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) համակարգի էլեկտրոնային կառավարումը: 2018 թվականի ընթացքում միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին և վարորդներին տրամադրվել է 189 թվային տախոգրաֆի քարտ՝ նախորդ տարվա 106-ի դիմաց: Նշենք, որ այս նպատակով հաշվետու տարում ևս 1.3 մլն դրամի միջոցներ են հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ ներկայացված 30.0 հազար եվրո կատարողականի դիմաց վճարն ամբողջությամբ կատարելու նպատակով: Նշվածը հաշվի առած՝ 2018 թվականին նախորդ տարվա ցուցանիշի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տատանումներով:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են 218.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ավտոճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում (շուրջ 1600 կմ), երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն, ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում, ավտոճանապարհների և դրանց ինժեներական կառույցների (կամուրջներ, թունելներ, մետաղական արգելափակոցներ) վիճակի պարբերական ուսումնասիրությունների իրականացում, տեխնիկապես հիմնավորված վերականգնողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, կապալառու կազմակերպությունների աշխատանքի դիտարկում և գնահատում, լաբորատոր փորձարկումների իրականացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են

4.7%-ով կամ 9.8 մլն դրամով, որը պայմանավորված է 2018 թվականին ճանապարհների քարտեզագրման և թվայնացման գործառույթի իրականացմամբ:

Հաշվետու տարում Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացմանը պետական աջակցության համար տրամադրվել է 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով կամ 71.4 մլն դրամով, որը պայմանավորված է իրականացված աշխատանքների ծավալի կրճատմամբ:

Հաշվետու տարում ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորման ծախսերը կազմել են 176.7 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հատկացված միջոցներն ամբողջությամբ նվիրաբերության պայմանագրով տրամադրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին, որն ուղղվելու է «Կեչուտ թաղամասում ներթաղամասային ճանապարհների և մայթերի բարեկարգում» միջոցառման իրականացմանը: Ծրագիրը նախատեսված է եղել իրականացնել 2018 թվականին, սակայն հաշվի առնելով եղանակային անբարենպաստ պայմանները՝ ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների մեկնարկը տեղափոխվել է 2019 թվական՝ բյուջեում կատարելով համապատասխան վերաբաշխում:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 357.1 մլն դրամ և ապահովել 98.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 11.9%-ով կամ 37.9 մլն դրամով, որը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին տրամադրված սուբսիդիայի աճով:

Հաշվետու տարում 10.1 մլն դրամ է տրամադրվել ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով 72.1% կատարողական, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների փաստացի ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 42.2%-ով կամ 7.4 մլն դրամով:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրվել է շուրջ 347 մլն դրամ սուբսիդիա՝ ապահովելով 100% կատարողական: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների տարեկան վնասը՝ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների

ներկայացման պարագայում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15%-ով կամ 45.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի եկամուտների համեմատաբար բարձր մակարդակով, քանի որ, պայմանագրի համաձայն, սուբսիդիայի գումարը չի կարող ավելի կամ հավասար լինել կոնցեսիոն վճարի գումարին, որը կազմում է եկամտի 2%-ը:

2018 թվականին *օդային տրանսպորտի* գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 79.4% կատարողական՝ կազմելով շուրջ 1.1 մլրդ դրամ: Շեղումն առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 27.4%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 696 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է նրանով, որ որոշ միջոցառումների և գնումների գծով աշխատանքներ չեն իրականացվել՝ պայմանավորված ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կազմակերպահիրավական և կառուցվածքային փոփոխությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 2.4 անգամ կամ 403.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ու պահպանման ծախսերի աճով: Միաժամանակ, նախորդ տարվա համեմատ տեխնիկական կարողությունների բացակայության հետևանքով նվազել են «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թռիչքների համար հատկացվող միջոցները (կրճատվել են թռիչքային ժամերը):

Շուրջ 241.1 մլն դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման ծախսերը՝ ապահովելով ծրագրի 97.7%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 99.3 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.6%-ով:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աէրոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 8.4 մլն դրամ՝ 83.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է օդանավերի մատուցած ծառայությունների փաստացի ծախսերով: Ծրագիրը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.5%-ով, որը պայմանավորված է կատարված 2 հատուկ չվերթների օդանավերի թռիչքների սպասարկման ծախսերի նվազմամբ:

ԱՊՀ տարածքում օդային տրանսպորտով ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց մատուցվող ծառայությունների դիմաց չստացված եկամուտների փոխհատուցման ծախսերը կազմել են 17.1 մլն դրամ՝ ապահովելով 77.9% կատարողական, ինչը պայմանավորված է նախատեսվածից քիչ մասնակիցների քանակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց զեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.1%-ով կամ 4.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է մատուցված ծառայությունների փաստացի ցուցանիշով:

2018 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.6 մլրդ դրամ կամ ծրագրի 56%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող մեկական վարկային և դրամաշնորհային ծրագրեր, իսկ մեկ վարկային ծրագրի գծով նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս գծով Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 144-ական մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 12.5% և 7.6% կատարողական: Ծրագրերի կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ դադարեցվել են դրենաժային թունելի խորշից վերև՝ մակերևույթում հորատանցման աշխատանքները՝ կապված պայթեցումներից առաջացած ցնցումների հետևանքով Ֆիրդուսի թաղամասի խարխուլ սեփական շենքերի բնակիչների բողոքների հետ: Բացի այդ, ծրագրերի կատարողականը պայմանավորված է նաև նրանով, որ աշխատանքները նախատեսվածից դանդաղ տեմպերով են ընթացել՝ կապված ծանր երկրաբանական պայմանների, ինչպես նաև սարքավորումների՝ հաճախակի շարքից դուրս գալու հետ: Ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի ջրահեռացման և մետրոյի թունելների երկարացման վերականգնողական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 73.9 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված Վերակառուցման և զարգացման

եվրոպական բանկի կողմից նշված միջոցների օգտագործման սահմանափակման նախապայմանով, համաձայն որի Եվրոպական ներդրումային բանկի վարկային և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի (ԵՄՀՆԳ) դրամաշնորհային միջոցները (որոնք այժմ ծախսվում են Երևանի մետրոյի դրենաժային թունելի երկարացման և մետրոյի թունելներում վերականգնողական աշխատանքների բաղադրիչի վրա) ծախսվելով պետք է հավասարվեն ՎԶԵԲ-ի վարկային միջոցների մնացորդի գումարին: Դրանից հետո ՎԶԵԲ-ի գումարը կարող է ծախսվել դրենաժային թունելի կամ այլ բաղադրիչի վրա:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում Երևան քաղաքին նախատեսված 602.2 մլն դրամ սուբվենցիան ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով կամ 8.7 մլն դրամով, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի նվազմամբ:

Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով տրամադրվել է 2.7 մլրդ դրամ սուբսիդիա՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 20.6 մլն դրամով:

2018 թվականին *կապի* ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 290.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության անցկացման, էլեկտրամագնիսական համատեղելիության, կոորդինացման համար նախատեսված, հեռարձակման գոտիների, խանգարումներից զերծ մնալու ծրագրային հաշվարկներ իրականացնելու, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման, բոլոր ծառայությունների հաճախականությունների և կապուղիների միջազգային կոորդինացման և գրանցման հաշվարկների, միջազգային շտեմարանում ներկայացնելու համար անհրաժեշտ նյութերի մշակման և պլանավորման, ինչպես նաև ՀՀ և միջազգային ստանդարտներին, ոլորտը կարգավորող իրավական և տեխնիկական նորմատիվ ակտերին համապատասխանության համար նախատեսված գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.3%-ով կամ ավելի քան 19.4 մլն դրամով՝ պայմանավորված օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

2018 թվականի ընթացքում *«Այլ բնագավառներ»* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 261.9 մլն դրամ՝ ապահովելով 96.3% կատարողական, որը պայմանավորված է զբոսաշրջության զարգացման ծրագրի կատարողականով: Հիմնականում նշված ծրագրի ծախսերի աճով է

պայմանավորված նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերի 3.1 անգամ կամ 177.5 մլն դրամով աճը: 2018 թվականին զբոսաշրջությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը, որոնք կազմել են 189.9 մլն դրամ՝ 95%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի նպատակն է նպաստել՝

- Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական դինամիկ աճին,
- Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը,
- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը,
- Հայաստանի՝ որպես աշխարհում գրավիչ զբոսաշրջային երկրի, նկարագրի ձևավորմանը:

Ծրագրի նպատակներին հասնելու համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները.

- ամրապնդել և շարունակաբար բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,
- դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,
- դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները,
- համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
- բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
- ամրապնդել և շարունակաբար բարձրացնել ծառայությունների որակը,
- զարգացնել մարդկային ռեսուրսները,
- աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,
- ամրապնդել և շարունակաբար ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը պետական աջակցության համար նախատեսված 72 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված գումարն ուղղվել է հիմնադրամի աշխատակիցների վարձատրությանը և պահպանման ծախսերին: Ծրագրի նպատակն է՝ ապահովել և աջակցել զբոսաշրջության զարգացման ոլորտի միջոցառումների իրականացմանը: Ծրագրի իրականացման

համար 2017 թվականին 29.9 մլն դրամի միջոցներ էին հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նշվածը հաշվի առած՝ 2018 թվականին նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են մոտ 2.4 անգամ կամ 42.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ հաշվետու տարում ծախսերը կատարվել են ամբողջ տարվա համար, մինչդեռ նախորդ տարի՝ միայն 5 ամիսների համար, քանի որ հիմնադրամը ստեղծվել է 2017 թվականի երկրորդ կիսամյակում:

2018 թվականին *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 38.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 50.2%-ով կամ 38.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ընդգրկված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման ծախսերը վերադասակարգվել են՝ ներառվելով լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության խմբի շինարարության դասում, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2017 թվականին միջոցներ էին հատկացվել շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների և տեխնիկական անձնագրավորման ծախսերի համար: 2018 թվականին հատկացված միջոցներն ուղղվել են տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2018 թվականին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* գծով փաստացի ցուցանիշը կազմել է 5.1 մլրդ դրամ՝ նախատեսված -5.9 մլրդ դրամի և 0.8%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 9 մլրդ դրամ ծախսեր՝ 93%-ով ապահովելով ծրագրի կատարումը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է շուրջ 3.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 24.8%-ը: Խմբի ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերն աճել են 47.9%-ով կամ ավելի քան 2.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման

դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներով: Բացի դրանից, համապատասխանաբար 21 անգամ (1 մլրդ դրամով) և 37.3 անգամ (936.1 մլն դրամով) աճել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ու Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրերի շրջանակներում օգտագործված միջոցները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 91.3%-ը: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի հունիսը: Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումն է: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների (դպրոցներ, մանկապարտեզներ, կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ և խաղահրապարակներ) կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և (կամ) ընդլայնում,
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում, հիմնանորոգում,
- ոռոգման ցանցերի վերանորոգման և գյուղերում էլեկտրաֆիկացման աշխատանքների իրականացում:

Նախատեսված է նաև դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին ապահովել կահույքով: Բացի այդ, ֆինանսավորվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) գրասենյակի գործառնական ծախսերը:

Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների՝ գրաֆիկից հետ ընկնելու հանգամանքով, որի հետևանքով կապալառուները ենթարկվել են պայմանագրով սահմանված տուգանքների: Շեղումը պայմանավորված է նաև ծրագրի երկրորդ բաղադրիչի (դպրոցական գույքի գնում)՝ նախատեսված ժամկետից ուշ մեկնարկով: Բացի այդ, ծրագրի 2-րդ բաղադրիչի ուշացած մեկնարկի հետ կապված շեղում է արձանագրվել ապրանքների ձեռքբերման և խորհրդատվական ծառայությունների մատուցման ծախսերում:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- նախատեսված ամբողջ ծավալով սկսվել են շինարարական աշխատանքները ՀՀ 7 մարզերի 9 ծրագրերում,
- ավարտվել են շինարարական աշխատանքները ՀՀ 8 մարզերի 39 ծրագրերում,
- ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում գնվել է կահույք ՀՀ մարզերի 1 երաժշտական դպրոցի, 17 մանկապարտեզների և 1 մշակույթի տան համար,

● ծրագրի 2-րդ բաղադրիչի շրջանակներում գնվել է 2 աղբատար մեքենա և 2 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր ՀՀ տարբեր մարզերի համայնքների համար,

● ծրագրի 3-րդ բաղադրիչի շրջանակներում ավարտվել է համակարգչային սարքավորումների գնումը ՀՏԶՀ գրասենյակի համար,

● մշակվել է 9 նոր նախագիծ:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ 42.7%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականը ծրագրի ավարտման տարին էր, ուստի, ելնելով անհրաժեշտությունից՝ դրամաշնորհային միջոցներն ամբողջությամբ ծախսվել են, աշխատանքները կատարվել են նախատեսվածից ավել, բացի այդ կատարվել են նաև նախորդ տարվա չկատարված աշխատանքները: Ծրագիրը սկսել է գործել 2017 թվականից և շարունակվել է մինչև 2018 թվականի ավարտը: Ծրագրի նպատակն է՝ զարգացնել հարավային Հայաստանի համայնքապետարանների կարողությունները՝ վերջիններիս բնակիչներին կայուն ենթակառուցվածքների և ծառայությունների մատուցման ուղղությամբ: Այն նպատակաուղղված է լրացնելու Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի երկրորդ բաղադրիչը: Բացի դրանից, մասնակի ֆինանսավորվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործառնական ծախսերը: Ծրագրի շրջանակներում ավարտվել է շինարարական աշխատանքները 3 ծրագրերում Սյունիքի մարզում, գնվել են տրակտորներ, բազմաֆունկցիոնալ էքսկավատորներ, միկրոավտոբուս, գյուղատնտեսական մեքենաներ, կահույք և համակարգչային տեխնիկա և այլն:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով 73% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ընտրված կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները գտնվում են ուսումնասիրման փուլում և դեռևս չեն ընդունվել Եվրոպական Միության կողմից: Ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը ավելի համաչափ սոցիալական և տնտեսական զարգացում ապահովելու ՀՀ մարզերում՝ նոր աշխատատեղերի ստեղծման և տնտեսական մրցունակության բարձրացման շնորհիվ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության կողմից ընտրված կազմակերպությունների միջոցով: Տարածքային զարգացման կառավարման գործընթացում ազգային և մարզային շահագրգիռ հիմնական մարմինների լիազորությունների և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցով 2018 թվականին ծրագրի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 180 նոր աշխատատեղեր և բարձրացվել է ավելի քան 160 ձեռնարկությունների մրցունակությունը (վերապատրաստվել են,

իրականացվել են սկսնակ գործարարների խթանման արշավներ, հիմնվել են գործառնական տարածքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքեր և սարքավորումներ):

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 754.9 մլն դրամ՝ 31.4%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ կատարվել են նաև նախորդ տարվա չկատարված աշխատանքները, ինչպես նաև գնվել է նախատեսվածից ավել գյուղատնտեսական և շինարարական տեխնիկա: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի օգոստոսը: Ծրագրի նպատակը Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների միջոցով ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը հասնելուն օժանդակելն է: Ծրագիրը նախատեսում է 14 խոշորացված համայնքային փնջերում, ըստ գերակայության սկզբունքի, ներդրումների կատարում համայնքային զարգացման համար, այդ թվում՝

- սոցիալական ենթակառուցվածքներում՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում,
- տնտեսական ենթակառուցվածքներում՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում,
- սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականին ավարտվել են շինարարական աշխատանքները ՀՀ 2 մարզերի 3 ծրագրերում, ՀՀ տարբեր մարզերի համայնքների համար գնվել են տրակտորներ, բազմաֆունկցիոնալ էքսկավատորներ, միկրոավտոբուս, գյուղատնտեսական մեքենաներ, կահույք և այլն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 961.9 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 87.2% կատարողական: Ծրագիրը սկսվել է 2016 թվականի վերջին և շարունակվելու է մինչև 2021 թվականի ապրիլը: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ենթակառուցվածքի ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները Հայաստանի ընտրված տարածաշրջաններում՝ տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող արդյունքի ավելացման համար: Ծրագրի գործունեության արդյունքում ակնկալվում է, որ կշահեն Հայաստանի հինգ մարզերի (Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք և Լոռի) տեղաբնակները, զբոսաշրջիկները և տնտեսավարողները: Սպասվում է, որ վերանորոգված մշակութային

ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միկրո ձեռնարկությունների քանակը, ՀՀ կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների գոհունակության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալություններում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և ակտիվների շահագործման ու պահպանման համար կարողությունների զարգացման առումով:

Ծրագիրն իրականացվում է երեք բաղադրիչներով.

- ժառանգության կենտրոնների վերածնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում, որը բաղկացած է չորս ենթաբաղադրիչներից՝ ժառանգության կենտրոնների վերածնում, զբոսաշրջության երթուղիների զարգացում, հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով, նախագծում և շինարարության վերահսկողություն:
- ինստիտուցիոնալ զարգացում,
- արձագանք չնախատեսված արտակարգ իրավիճակներին:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ կատարվել են նախատեսվածից պակաս աշխատանքներ՝ կապված կառավարման խորհրդի և աշխատանքային խմբի վերակազմավորման գործընթացի հետ, ինչի հետևանքով 4 ծրագրերը նախատեսված ժամկետից ուշ են հաստատվել: Արդյունքում ուշացել է ծրագրի մեկնարկը: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները ՀՀ 4 մարզերի 5 ծրագրերում, մշակվել է 1 նախագիծ:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 257.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.4%-ով կամ 23.6 մլն դրամով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են ավելի քան 11.5 մլն դրամ կամ նախատեսվածի 44.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 49.3%-ով կամ 11.2 մլն դրամով:

Շուրջ 605.1 մլն դրամ են կազմել տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ 97.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով կամ 36.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի և պարգևատրման ֆոնդի ծախսերի աճով:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների գծով 2018 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված 1.3 մլն դրամի դիմաց ստացվել են շուրջ 1.4 մլն դրամ արտաբյուջետային միջոցներ, որոնցից նախատեսված 32.7 մլն դրամի դիմաց օգտագործվել է 12.2 մլն դրամը:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են 178.3 մլն դրամի ծախսեր: Նշված գումարից շուրջ 168 մլն դրամը կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, ավելի քան 1 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը և 9.3 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա շահութահարկի կամ շրջանառության հարկի գծով պարտավորության կատարման գծով ծախսերը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2018 թվականին *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.7 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 53.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Սակայն, դրա հետ մեկտեղ, նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ծախսերն աճել են 5.3%-ով կամ 284.2 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *աղբահանման* բնագավառի ծախսերը կազմել են 235.6 մլն դրամ կամ նախատեսվածի 5.6%-ը: Այս ցուցանիշը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման խորհրդատվության համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 114.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 35.9%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել աղբավայրի նախագծման, վերաբեռնման կայանների նախագծման, սարքավորումների և տեխնիկայի տեխնիկական բնութագրերի կազմման աշխատանքներ, դրանց մրցութային գործընթացներին աջակցություն, աղբահանության սխեմաների մշակում, ԿԿԹԿ (կոշտ կենցաղային թափոնների կառավարում) ընկերության ստեղծմանն ուղղված իրավական և ինստիտուցիոնալ աշխատանքներ, իրազեկման արշավներ, աղբահանության վարձավճարների քաղաքականության մշակում: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ընտրված խորհրդատվական կազմակերպությունների կողմից կատարվել են մասնակիորեն, մասնավորապես՝ իրականացվել են աղբավայրի նախագծման և ծրագրի շրջանակներում նախատեսված մրցութային գործընթացներին աջակցության աշխատանքներ: Չեն իրականացվել աղբահանության սխեմայի մշակման աշխատանքները: ՀՀ կառավարության կողմից որոշում է կայացվել բանակցել ՎԶԵԲ-ի և խորհրդատվական կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրերում փոփոխություններ կատարելու նպատակով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 85.9 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 33.6%-ը: 2018 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում պատրաստվել են հաշվետվություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության, կենսապահովման վերականգման պլանի վերաբերյալ, ինչպես նաև մեկնարկային հաշվետվություն աշխատանքների կազմակերպման նախնական խնդիրների հայտնաբերումների վերաբերյալ:

Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ մնացած հաշվետվությունների ներկայացումը և հաստատումը փոխկապակցված է նոր աղբավայրի կառուցման շինարարական աշխատանքների հետ, որոնք իրականացվելու էին Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» վարկային ծրագրի, Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Վերջիններիս չկատարման հետևանքով խորհրդատուների կողմից հաշվետվությունների ներկայացումը հնարավոր չի եղել:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսվել էր համապատասխանաբար 132.7 մլն դրամ և 1.7 մլրդ դրամ հատկացնել Հրազդան համայնքում ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր կառուցելու և աղբահանության արդյունավետ համակարգ ներդնելու նպատակով: Այդ նպատակով հայտարարվել է աղբավայրի կառուցման նախաորակավորման փուլ, և հայտ ներկայացրած 8 կազմակերպություններից գնահատման հանձնաժողովի կողմից քննարկման արդյունքներով կազմվել է նախաորակավորված հայտատուների վերջնական ցանկը (3 կազմակերպություններ), որը ներկայացվել է ՎԶԵԲ-ին: Սակայն վերջինս իր համաձայնությունը չի ներկայացրել, քանի որ չի ստացել ծրագրում ընդգրկված միջազգային խորհրդատուների կարծիքը:

Եվրոպական ներդրումային բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» վարկային ծրագրերի, Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսված համապատասխանաբար 306.4 մլն դրամ, 265.2 մլն դրամ, 683 մլն դրամ և 452.4 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել, քանի որ մրցույթը հայտարարվել է ուշացումով, ինչը պայմանավորված է եղել մրցութային փաթեթների ամփոփման ձգձգմամբ: Մասնավորապես՝ մրցութային փաթեթների ամփոփումը սկսվել է 2017 թվականից, երկար քննարկվել է ՎԶԵԲ-ի և Կառավարության կողմից և հաստատվել է 2018 թվականի հոկտեմբերի 29-ին: Մրցույթը հայտարարվել է 2018 թվականի վերջին:

Խմբում ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների համար նախատեսված 34.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մնացել է անփոփոխ: Ծրագրի շրջանակներում «Ռադիոակտիվ թափոնների

վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը, ինչպես նաև իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է 2.7 մլրդ դրամ՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 4.4% նվազում՝ հիմնականում պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայությունների և Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում ծախսերի նվազմամբ:

2018 թվականին Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 800 հազար դրամ՝ 100%-ով կատարելով ճշտված ծրագիրը և 99.1%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: 2018 թվականին պետական բյուջեի միջոցներով մաքրման աշխատանքներ չեն իրականացվել: ՀՀ բնապահպանության նախարարության սկզբունքների ու մոտեցումների և ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությունների վերանայմամբ, ինչպես նաև այդ նպատակով կնքված պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի՝ նախկինում մաքրված տարածքների հետ ավելի քան 20 տոկոսով համընկնումներով պայմանավորված՝ ՀՀ բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև 2018 թվականի համար կնքված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման պայմանագիրը լուծվել է, իսկ հատկացված գումարը վճարվել է գույքագրման ծառայությունների մատուցման նպատակով:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններին ուղղվել է 7.6 մլն դրամ՝ 99.6%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարները 2018 թվականին կազմել են 2312 տոննա, սիգինը՝ 737 տոննա, արծաթափայլ լճածածանինը՝ 30-35 տոննա և իշխանինը՝ 1-1.5 տոննա: Ծրագրի շրջանակներում կատարվել են Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների համար ձվադրավայր հանդիսացող 7 գետերի մանրակրկիտ հիդրոէկոլոգիական հետազոտություններ, ուսումնասիրվել դրանց էկոլոգիական վիճակը, բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

2018 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 252.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Սևան»

ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցով պարկի տարածքում իրականացվել են 15.5 հա անտառավերականգնման աշխատանքներ: Պարկի 390 հողօգտագործողների տարածքից կանոնավոր իրականացվել են աղբահեռացման աշխատանքներ: Նշված 390 հողօգտագործողների աղբահեռացման պայմանագրերից 300-ը կնքվել է 2017 թվականին, իսկ 90-ը՝ 2018 թվականին: Տարածքներում տեղադրվել են աղբակողովներ: Աշխատանքներ են տարվում նաև չշահագործվող տարածքներում տնտեսավարող սուբյեկտների միջոցներով աղբի հավաքման և տարածքից հեռացման ուղղությամբ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2018 թվականի ընթացքում ազգային պարկի տարածքում տեղադրված մաքրման կայանների թիվը կազմում է 14: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից 2018 թվականի ընթացքում կազմվել են 84 իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, որից 53-ն ապօրինի ձկնորսության և խեցգետնի որսի վերաբերյալ: Ստուգայցերի ընթացքում առգրավվել են 275 հատ ձկնորսական ցանց, 102 հատ խեցգետնաորսիչ, 1173 հատ սիգ տեսակի ձուկ, 254 հատ կարաս տեսակի ձուկ և 753 (20.2 կգ) հատ խեցգետին: Ձկները հանձնվել են բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժին, իսկ խեցգետինները կենդանի վիճակում բաց են թողնվել լիճ:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 136.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Ազգային պարկում իրականացվել են տարեկան հերթական ստուգումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են 66 անտառախախտման արձանագրություններ՝ 515 ապօրինի հատված ծառերի համար: 2018 թվականին «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի 5 տեղամասերի մասնաճյուղերում կատարվել են պրոֆիլակտիկ հակահրդեհային նշանակության վերանորոգման աշխատանքներ: «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի թիվ 1 պահաբաժնում կատարվել է 1 հա ծառատունկ՝ տնկվել է 2500 ծառ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.1%-ով՝ պայմանավորված «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ռիսկային երեք տեղամասերի պահպանությունը մասնավոր պահնորդական ծառայության միջոցով իրականացնելու հանգամանքով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 140.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2018 թվականին «Արգելոցապարկային համալիր»

ՊՈԱԿ-ի ենթակայության Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկերում, «Ջրվեժ» անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում և «Որդան կարմիր» արգելավայրում իրականացվել են պահպանության, պաշտպանության և գիտական ուսումնասիրության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.3%-ով՝ պայմանավորված ՊՈԱԿ-ի աշխատողների վարձատրության ծախսերի աճով:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 127.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել պետական արգելոցի տնօրինման տակ գտնվող արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանության աշխատանքներին: 2018 թվականին արգելոցային ռեժիմի խախտման դեպքեր չեն հայտնաբերվել և չեն արձանագրվել: «Խոսրով» (6887հա), «Խաչաձոր» (7236 հա), «Գառնի» 4253 հա «Կաքավաբերդ» (4745 հա) տեղամասերի և «Խոր Վիրապ» (50.28 հա) և «Գոռավանի ավազուտներ» (95.99 հա) պետական արգելավայրերի պահպանության աշխատանքներն իրականացվում են 50 պահպանության աշխատակիցների՝ արագ արձագանքման խմբի, տեղամասային ուղեփակոցների հսկիչների և պահպանության տեսուչների միջոցով: Իրականացվել են հակահրդեհային նշանակության բազմաբնույթ աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով՝ պայմանավորված ՊՈԱԿ-ի աշխատողների վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից շուրջ 45.3 մլն դրամ է հատկացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ներկայացվել նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման թվով 238 հայտեր: Հաշվետու տարվա ընթացքում սահմանված կարգով տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 84 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Փորձաքննության գործընթացում են գտնվել 66 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Փորձաքննական եզրակացություններ են տրամադրվել թվով 110 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ: 3 նախատեսվող գործունեության վերաբերյալ տրվել է փորձաքննական բացասական եզրակացություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է 44.7 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ: «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում պարբերաբար իրականացվել են հերթական և վերստուգիչ ստուգումներ, որոնց արդյունքում էական ապօրինի գործողություններ ազգային պարկի տարածքում չեն արձանագրվել: 2018 թվականին ազգային պարկի «Ախուրյանի կիրճ» տեղամասում տնկվել է 0.8 հա անտառ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.5%-ով, ինչը պայմանավորված է ՊՈԱԿ-ի աշխատողների աշխատավարձերի աճով:

2018 թվականին «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.6 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2018 թվականին իրականացվել են «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքներ, պետական արգելավայրի ընդհանուր մակերեսով 150 հա տարածքներում պահպանության ընդհանուր միջոցառումներ: Արգելավայրի առավել հրդեհավտանգ տարածքներում իրականացվել է հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի հեռացում): Իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվել է տարածքի հրդեհաանվտանգությունը: Հաշվետու շրջանում հրդեհի դեպքեր չեն արձանագրվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

Կովկասյան տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 7.0 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված միջոցների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են 1%-ով:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված շուրջ 141.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տարածքներում ուսումնասիրվել են ողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ, եվրոպական այծյամ, փորսուղ, եվրոպական նապաստակ, գայլ, անտառային կատու և այլն) ինչպես

ձմեռային կենսակերպը, այնպես էլ սեզոնային փոփոխությունների հետ կապված միգրացիան, տարիքային և քանակային կազմը: Իրականացվել են պահպանության աշխատանքներ ավելի քան 79 հազար հա բնության հատուկ պահպանվող տարածքներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով՝ պայմանավորված ՊՈԱԿ-ի աշխատողների վարձատրության ծախսերի աճով:

2018 թվականին Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություններին հատկացվել է 205.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել թունելի անխափան աշխատանքն ապահովմանն ու հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ՝ պայմանագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում 2018 թվականին կատարված ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Արփա-Սևան ջրատարը բաղկացած է երկու թունելներից: Նախատեսված էր թունելով տարեկան տեղափոխել 450 մլն/խմ ջուր, սակայն թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված՝ ներկայումս Սևանա լիճ է տեղափոխվում 110-130 մլն/խմ ջուր: Ծրագիրը եռամյա է, այն նախատեսվում է իրականացնել 2017-2019թթ.: 2018 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են Արփա-Սևան N2 թունելի 259 գծմ երեսակների վերականգնման և 187 գծմ հատակների վերականգնման աշխատանքներ:

2018 թվականին *այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության* դասի ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 71.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ներառված՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է տվյալ դասի ծախսերի 29.7% աճ՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով, ինչպես նաև նախկինում «Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար» խմբում ներառված «Թափոնների ուսումնասիրության ծառայություններ», «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայություններ», «Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայություն» և «Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի ծառայություններ» ծրագրերը 2018 թվականին «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայություններ» ծրագրում միավորելու հանգամանքով, ինչպես նաև տվյալ ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 834.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 40.4%-ով կամ 564.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2018 թվականի մարտի 23-ի «Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, համաձայն որի ՀՀ բնապահպանության նախարարության համակարգից «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին»-ը տեղափոխվել է ՀՀ կառավարության ենթակայությանը: ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պահպանմանը տրամադրվել է 637.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.8%-ը:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար հաշվետու տարում ՀՀ համայնքներին տրամադրվել են 200.2 մլն դրամ սուբվենցիաներ՝ կազմելով ծրագրվածի 93.8%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 6 համայնքների: Հատկացումները 2017 թվականի համեմատ աճել են 48.6%-ով կամ 65.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից վճարված բնապահպանական վճարների և ազդակիր համայնքների կողմից ներկայացված ծրագրերի թվի ավելացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 12.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 84.6%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք:

Հաշվետու տարում 75.6 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որն օգտագործվել է 94.4%-ով և կազմել 71.4 մլն դրամ՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.6%-ով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 42.1%-ը՝ 716.8 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 2 շենքային համալիրների (ք. Ագարակում և ք. Երևանի մերձակայքում գտնվող

Ջրվեժ անտառպարկում) նախագծային աշխատանքները չեն մեկնարկել, քանի որ ծրագրի իրականացման գործադիր մարմնի և դոնորի հետ «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագրի 2018 թվականի հաշվետվության և նրա մաս կազմող գործողությունների պլանով նախատեսված միջոցառումների քննարկման և համաձայնեցման գործընթացը եղել է ժամանակատար: Կապան քաղաքում բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող 3 կառույցների կարիքների համար ՊՏԱԾ-Հ ծրագրով ձեռք է բերվել և «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անունով պետական կադաստրային գրանցում ստացել 1 վարչական շենք, որում, համաձայն ՊՏԱԾ-Հ 2018 թվականի գործողությունների ծրագրի, պետք է իրականացվեին կապիտալ վերակառուցման աշխատանքներ: Այդ աշխատանքների ծավալների և շենքի ֆունկցիոնալ ձևափոխությունների վերաբերյալ Ծրագրի գործադիր մարմնի վերջնական դիրքորոշումը դեռևս ձևավորված չէ, ուստի 2018 թվականին վերակառուցման նախագիծ և շինարարություն չի իրականացվել: Բացի այդ, համայնքների խոշորացման հետևանքով ՊՏԱԾ-Հ ծրագրի թիրախային համայնքները ներառվել են խոշորացված համայնքներում, որով պայմանավորված անհրաժեշտ է եղել իրականացնել համայնքային ծրագրերի և համապատասխան նվիրաբերության պայմանագրերի փոփոխություններ և լրացումներ, որոնք եղել են ժամանակատար: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- էներգախնայողության ապահովման նպատակով իրականացվել է ծրագրի ԱԾԱ բաղադրիչը: 247 տնային տնտեսություններից յուրաքանչյուրում տեղադրվել է 9մ2 եվրոպատուհան,
- Շիկահող, Սրաշեն, Ծավ և Ներքին հանդ գյուղերի 247 տնային տնտեսություններին մինչև 2300 մ^3 անվճար վառելափայտի թափուկի տրամադրում,
- թիրախային 32 համայնքներից 30-ում մինչև 5000 Եվրո դրամաշնորհի տրամադրում՝ համայնքային առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով,
- 32 համայնքներից 12-ում մրցութային կարգով լավագույն գաղափարների, գյուղատնտեսական ցուցադրությունների խրախուսում և փոքրածավալ բիզնես ծրագրերի ֆինանսավորում,
- «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի համար վարչական շենքի ձեռքբերում և տեխնիկական կարողությունների հզորացում, էկոտուրիստական կարողությունների հզորացում,
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսություն մասնաճյուղի տեխնիկական կարողությունների հզորացում,
- «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի սահմանագծման աշխատանքներ,
- աջակցություն Սյունիքի մարզային հասարակական կազմակերպություններին:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայությունների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 226.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 17 դիտակետից ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգ, 11 քաղաքներում ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ, 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ հորատանցքերում և բնաղբյուրներում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ, ուսումնասիրվել և վերլուծվել են 2017 թվականին ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալները, հավաքվել և մշակվել է տեղեկատվություն՝ թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի մասին, իրականացվել է շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) մնացորդային քանակների որոշում՝ 300 հետազոտություն:

Բնապահպանական ոլորտի տեսչական մարմինների կարողությունների զարգացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 8.4 մլն դրամ՝ ապահովելով 97.4% կատարողական: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք:

2018 թվականին «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 22.8 մլն դրամ կամ նախատեսվածի 84.1%-ը, ինչը տնտեսման արդյունք է: Ծրագրի շրջանակներում միջոցները հիմնականում ուղղվել են համակարգչային տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռքբերմանը, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցների պարգևատրմանը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2018 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 11.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 46.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման և փողոցների լուսավորման ոլորտներում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև բնակարանաշինության խմբի ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 7.1%-ով կամ 901.5 դրամով նվազել են նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում պայմանավորված ջրամատակարարման ոլորտի արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Բնակարանային շինարարությանը 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 4.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 56%-ը և 16.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման» երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերը չկատարելու հանգամանքով:

«Բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակներում հաշվետու տարում նախատեսված 99.4 մլն դրամը չի օգտագործվել: Միջոցները նախատեսվել էր ուղղել Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի շինարարական աշխատանքներին և դրանց որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում նոր շենքի կառուցման համար հայտարարված մրցույթի արդյունքում 2018 թվականի հունիսի 25-ին «Ագարակ» ԲԲԸ-ի հետ կնքվել է կապալի պայմանագիր, և սկսվել են կիսակառույց օբյեկտի ընդունման-հանձնման աշխատանքները: Սակայն, հաշվի առնելով կատարվող աշխատանքների դանդաղ տեմպերը և Ապարանի եղանակային պայմանները, որի հետևանքով պայմանագրային պարտավորությունների կատարումը կձախողվեր, նշված աշխատանքների իրականացման համար մնացորդային արժեքով նոր մրցույթի անցկացման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից լուծվել է կապալի պայմանագիրը, որի արդյունքում լուծվել են նաև տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերը:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանը 2018 թվականի ընթացքում տրամադրվել է 458.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Ծրագրի շրջանակներում գումարը տրամադրվել է Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների համար կառուցապատողի կողմից 44 կիսակառույց բնակելի տների շինարարության ավարտման համար: Գումարը փոխանցվել է այդ նպատակով

գանձապետարանում բացված դեպոզիտային հաշվին, որը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը փոխանցվելու է նշված աշխատանքները կատարող «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ օգտագործվել է շուրջ 4.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 54.2%-ը: Ծրագրի շրջանակներում պետական ծառայող հանդիսացող շահառուներին տրամադրվում են բնակարաններ բազմաբնակարան շենքային համալիրում՝ շուկայականից ցածր գներով և հիփոթեքային վարկերի արտոնյալ պայմաններով: Միջոցները, որոնք գոյանում են ծրագրի շահառուների կողմից կատարվող կանխավճարներից և կառուցապատողին տրամադրվող կանխավճարի դիմաց ստացվող տոկոսներից, ուղղվում են կառուցապատողին՝ որպես կանխավճարներ, ինչպես նաև ծրագրի շահառուների կատարած կանխավճարի գծով օգնության գումարների վճարմանը: Մասնավորապես՝ ք.Երևան, Ադոնցի N6/1 և N6/2 հասցեներում կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրների գծով օգտագործվել է 1.1 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 79.5%-ը՝ պայմանավորված Ադոնցի N6/1 հասցեում թվով 6 շահառուի հետ ավտոկայանատեղի և բնակարանի վերանորոգման հետ կապված խնդիրների հետ, որոնց մասով դեռևս հիմնական պայմանագրեր չեն կնքվել, իսկ Ադոնցի N6/2 հասցեի գծով 4-րդ փուլի վճարման մեկնարկը համընկել է տարեվերջի հետ: Ադոնցի N6 հասցեում կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրի բնակարանների բաշխման և վաճառքի ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.3 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 98.1%-ը: Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրի գծով նախատեսված միջոցները, 3.4 մլրդ դրամի չափով, չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ Ծրագիրը գտնվել է նախնական վճարման փուլում, և տարեվերջին նախնական պայմանագիր կնքվել է թվով 2 շահառուի հետ:

Համայնքային զարգացմանը 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացված 292.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են քաղաքաշինության ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի նախագծերի մշակմանը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին նախագծող կազմակերպությունների կողմից կատարվել են ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի բոլոր համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառի ծախսերի 29.4%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են 3.4 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 32.1%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է

արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 34.8%-ով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում 298.2 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը, որը հատկացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Նշված ծախսերը կատարվել են 99.2%-ով, ինչը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 2.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի բնական աճով: Եվս 2.9 մլն դրամ ուղղվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կարողությունների զարգացմանը, մասնավորապես՝ սարքավորումների, գրասենյակային գույքի, օդորակիչների, կահույքի և նոր համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը՝ ապահովելով 96.5% կատարողական:

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թվականին օգտագործվել է 414.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 11.9%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, 30 մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ: 2018 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է 36610.0 մ բաշխիչ ցանց, 28648.5 մ տնային մուտքագիծ և տեղադրվել 4279.0 հատ ջրաչափ: Մասնավորապես՝ Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 144.7 մլն դրամ կամ ծրագրվածի 9%-ը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 90.1 մլն դրամ կամ նախատեսվածի 77%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են նախորդ տարի փոխանցված միջոցների մնացորդի հաշվին, դոնորների հետ ընթացող բանակցությունների պատճառով խորհրդատուի վճարման ենթակա գումարների վճարման հետաձգմամբ, ինչպես նաև՝ անհատական տների մուտքագծերի երկարությունների և հողային աշխատանքների պայմանագրերի վերանայման արդյունքում առաջացած տնտեսումներից: Կատարողականը պայմանավորված է նաև «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի որոշ պահպանման

ծախսերի մասով տնտեսված գումարով: Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 150.2 մլն դրամ կամ նախատեսվածի 8.9%-ը: Տվյալ ծրագրի ցածր կատարողականը նույնպես պայմանավորված է նախորդ տարի փոխանցված միջոցների օգտագործմամբ, ինչպես նաև դոնորների հետ ընթացող բանակցությունների պատճառով խորհրդատուին վճարման ենթակա գումարների վճարման հետաձգմամբ: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 29.2 մլն դրամ կամ նախատեսվածի 33.7%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ, որոնց գծով խորհրդատուի վճարումը հիմնականում տեղափոխվել է 2019 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 55.6%-ը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական ներդրումային բանկի հետ համատեղ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարելավել Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի ընդհանուր թվով 11 քաղաքների և 47 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը՝ 555 կմ նոր ջրագծերի և 36.5 կմ կոյուղագծերի կառուցմամբ, 27400 հատ անհատական տների ջրաչափական հորերի տեղադրմամբ: Նախատեսվում է նաև կոյուղու մաքրման կայանների կառուցում Արմավիր, Մեծամոր և Սևան քաղաքներում: 2018 թվականին շարունակվել են խորհրդատվական կազմակերպությունների կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքների համար հայտարարված մրցութային գործընթացի նախաորակավորման փուլում մրցութային փաթեթների հաստատումը KfW բանկի կողմից ձգձգվելու հանգամանքով, որի պատճառով շինարարական աշխատանքների պայմանագրերով նախատեսված կանխավճարների փոխանցումը հետաձգվել է:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված 458.7 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված ծրագրի վարկային համաձայնագրի փոփոխությունների ստորագրման փուլում գտնվելու հանգամանքով և վարկային միջոցների անհասանելիությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր վերակառուցել Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի՝ ընդհանուր թվով 11 քաղաքների և 41 գյուղերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը: Նախատեսվել էր նաև կոյուղու մաքրման կայանների կառուցում Արմավիր, Մեծամոր և Սևան քաղաքներում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված 2.8 մլրդ դրամի դիմաց օգտագործվել է 98 մլն դրամ, ինչը պայմանավորված է ծրագրի փոփոխության ուշ ստորագրմամբ և առաջին տրանշը 2018 թվականի դեկտեմբերին մասհանելու հանգամանքով, որից հետո միայն մեկնարկել են ծրագրով նախատեսված աշխատանքները: Այս ծրագրով նախատեսվել է ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքներից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում:

Հաշվետու ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորման նպատակով տրամադրվել է 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.9%-ը: 2018 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերի համաձայն բաժանորդներին մատակարարվել է 106.63 մլն մ^3 ջուր: Ծրագրի կատարողականը պայմանավորված է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2018 թվականի հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների ծավալով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ենթակառուցվածքների երկրորդ ծրագրի երրորդ փուլի դրամաշնորհային ծրագրի ուղեկցող միջոցառումների շրջանակներում օգտագործվել է ծրագրված միջոցների 86.1%-ը՝ 274.4 մլն դրամ: Կատարողականը պայմանավորված է ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարների հաշվին հաշվարկված և պետական բյուջե փոխանցված շահութահարկի ու ԱԱՀ-ի փաստացի վճարումներով: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել մատուցված խորհրդատվական ծառայությունների դիմաց:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրիի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ու Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի երկրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է ծրագրված միջոցների 98.3%-ը՝ համապատասխանաբար 45.7 մլն դրամ և 14.7 մլն դրամ: Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի 2-րդ փուլով նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, և առկա են տնտեսումներ: Չմասհանված գումարի օգտագործման համար KfW բանկի հետ ստորագրվել է առանձին համաձայնագիր, որը հնարավորություն է ընձեռում

ֆինանսական միջոցները հասանելի դարձնելու և օգտագործելու Համայնքային ենթակառուցվածքների 2-րդ ծրագրի 3-րդ փուլի հետ միասին:

2018 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 2.2 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի նվազմամբ:

2018 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի շրջանակներում նախատեսված 606.7 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ մրցութային փաթեթները երկար քննարկումներից հետո հաստատվել են 2018 թվականի դեկտեմբերի 4-ին, և հաղթող կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է 2019 թվականի հունվարի 11-ին: Կնքված պայմանագրի համաձայն 2019 թվականին կտրամադրվի կանխավճար և կմեկնարկեն աշխատանքները:

Նույն պատճառով չեն օգտագործվել Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 1.3 մլրդ դրամի միջոցները:

2018 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 56.4 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 14.7%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ խորհրդատվական կազմակերպության կողմից պատրաստվել են հաշվետվություններ 2015 և 2016 թվականների ֆինանսական աուդիտի, բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի, նոր կառավարման տեղեկատվական համակարգի ընդունման վճարի վերաբերյալ: Ցածր կատարողականը պայմանավորված է վարկային ծրագրի հետ փոխկապակցված լինելու հանգամանքով:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 834.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նշված գումարից 719.5 մլն դրամը տրամադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 12.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կոմիտեի վերակազմակերպման հետևանքով աշխատանքի վարձատրության հոդվածով նախատեսված

ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև քաղաքաշինության պետական տեսչությունը կոմիտեի կազմից դուրս գալու հետևանքով հիմնարկի պահպանման ծախսերի կրճատմամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորում ծրագրի շրջանակներում հատկացվել է շուրջ 115.1 մլն դրամ (100%), որն ամբողջությամբ նվիրաբերության պայմանագրով տրամադրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին, որն ուղղվելու է «Ձախափնյա և աջափնյա թաղամասերի թվով 55 բնակելի շենքերի շքամուտքերի նորոգում» միջոցառման իրականացմանը: Հաշվի առնելով եղանակային անբարենպաստ պայմանները՝ ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները տեղափոխվել են 2019 թվական:

Առողջապահություն

2018 թվականին *առողջապահության* ոլորտում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են 79.6 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 95.6%-ը:

Բաժնի ծախսերի 50.1%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 33.3%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 8.1%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 4.3%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 4.2%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2017 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերը նվազել են 4.4%-ով կամ 3.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի և հանրային առողջապահական ծառայությունների գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 3.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 88.8%-ը և 5.2%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված են ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերի նվազմամբ:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով օգտագործվել է ավելի քան 3.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 88.6%-ը և 6.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է դեղորայքը նախահաշվային գներից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 79.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Միջոցները գոյացել են ԳԱՎԻ (Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք) միջազգային կազմակերպության աջակցության շնորհիվ՝ իմունականխարգելման գործընթացի բարելավման և պատվաստումների ազգային օրացույցում պատվաստումների գործադրման նպատակով: Իմունականխարգելման ազգային ծրագրի միջոցները նախատեսվել են

իմունականխարգելման ծառայությունների գործառնական ծախսերն իրականացնելու, պատվաստումների ազգային օրացույցում նոր պատվաստանյութերի ներդրման համար՝ հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցման, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխման և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովման նպատակով: 2018 թվականին Հանրապետությունում պատվաստումային ծառայությունների որակը և անվտանգությունը բարելավելու, հանրապետության բուժաշխատողների շրջանում իմունականխարգելման վերաբերյալ անհրաժեշտ նվազագույն գիտելիքներն ամրապնդելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է իմունականխարգելման գործընթացի աջակցողական մշտադիտարկում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում: Մարդու պապիլոմավիրուսային վարակի (ՄՊՎ) դեմ պատվաստումների գործընթացի բարելավման նպատակով հաստատվել է «Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների գործընթացի բարելավման միջոցառումների իրականացման մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանը, որի նպատակն է ակտիվացնել բժշկական կազմակերպություններում մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների ենթակա աղջիկների և նրանց ծնողների հետ անհատական աշխատանքը: ՄՊՎ-ի դեմ պատվաստումների ենթակա աղջիկների և նրանց ծնողների հետ անհատական աշխատանքի իրականացման գործընթացի կազմակերպման վերաբերյալ կազմակերպվել է քննարկում մարզերի պատասխանատու բուժաշխատողների հետ: Իրականացվել է շարունակական մշտադիտարկում և հսկողություն ՄՊՎ-ի դեմ պատվաստումների ենթակա աղջիկների և նրանց ծնողների հետ անհատական աշխատանքի գործընթացի նկատմամբ:

Բժշկական սարքերի և սարքավորումների դասի ծախսերը կազմել են 8.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 72.3% կատարողական: Միջոցներն ուղղվել են հոսպիտալների և բուժկետերի՝ բժշկական սարքավորումներով համալրմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 16.6%-ով:

2018 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է 26.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.2%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 73.2%-ը կամ 19.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 13.5%-ը կամ 3.6 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 1.2%-ը կամ 328.2 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 12%-ը կամ 3.2 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը: 2017 թվականի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերը նվազել են 0.5%-ով:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են 98.7%-ով և կազմել 19.4 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական բնակավայրերից նեղ մասնագիտացված խորհրդատվության և լաբորատոր-գործիքային հետազոտությունների ուղեգրման ծախսերի ցածր կատարողականով, որն արդյունք է մարզերի առանձին կազմակերպություններում որոշ մասնագետների բացակայության և սարքերով հագեցվածության ցածր մակարդակի պայմաններում նվազ դիմելիության, ինչպես նաև բնակչության սոցիալական հատուկ խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի ծախսի տնտեսումներով՝ մինչև 7 տարեկան երեխաների համար տրամադրվող դեղերի ցածր պահանջարկով: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի, հղիների, նախածննդյան և հետծննդյան հսկողություն իրականացնող մանկաբարձ-գինեկոլոգների, դիսպանսերային և նեղ մասնագետների կողմից բժշկական օգնություն և սպասարկում է (ներառյալ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ) իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով նաև տրամադրվել է դեղորայք: Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների մասով ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված 352 բժիշկ-փորձագետների և 44 բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: Ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների դասի ծախսերը 83.7%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է նախկինում մասնագիտացված բժշկական ծառայությունների դասում ընդգրկված՝ «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» և «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ», պարաբժշկական ծառայությունների դասում ընդգրկված՝ «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» և «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրերը «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում միավորելու հանգամանքով:

Շուրջ 3.6 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 98.2%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 57.9%-ով կամ 4.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում

պայմանավորված է «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի ընդգրկմամբ «Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ» դասի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների ծրագրում:

Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 273.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մատուցվել է բժշկական օգնության և սպասարկման 69780 ծառայություն՝ նախորդ տարվա 74579-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1.6%-ով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների քանակի նվազմամբ, ինչպես նաև ավելի թանկարժեք ծառայությունների մատուցմամբ:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2018 թվականին կազմել են 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.5% կատարողական: Հատկացված միջոցներով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին իրականացվել է 126.5 հազար սեանս՝ 2017 թվականի 123.2 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 2.7% կամ 60.5 մլն դրամ, որը պայմանավորված է հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի կարիք ունեցող հիվանդների թվի աճով:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների համար տրամադրվել է 111.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.9% կատարողական, որը պայմանավորված է նախատեսվածից քիչ քանակությամբ դեղորայքային միջոցների ձեռքբերմամբ: Միջոցները տրամադրվել են «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 5.9%-ով կամ 6.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է ձեռք բերված դեղորայքային միջոցների քանակի նվազմամբ, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման համար հատկացված գումարների նվազմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունից միջազգային մրցաշարերին մասնակցող բոլոր մարզիկների խորացված բժշկական հետազոտում: Նախապատրաստական ողջ ժամանակահատվածում բոլոր ուսումնամարզական հավաքների ընթացքում արտագնա բժշկական մասնագիտական խմբերի միջոցով վերահսկվել է մոտ 1163 մարզիկների առողջական վիճակը: Տարեկան բժշկական հետազոտման են ենթարկվել 4666-ից ավելի մարզիկներ 17 մարզաձևերից, որից 531-ն անցել են խորացված բժշկական հետազոտություն, 632-ը հաճախել են ամբուլատոր սպասարկման:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 262.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն իրականացվում է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2018 թվականին ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության, համաճարակաբանական հետազոտության և ՄԻԱՎ 1/2 հակամարմինների հայտնաբերման ուղղությամբ կատարվել են ավելի քան 35.7 հազար հետազոտություններ, 2017 թվականի 28.0 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է 148.7 մլն դրամ՝ ապահովելով 88.5% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող առանձին կազմակերպությունների կողմից մատուցված բժշկական օգնության ծառայությունների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցանկի 7102 դեպքի դիմաց 2018 թվականին իրականացվել է 7952 դեպքի բժշկական օգնություն՝ 2017 թվականի 7500 փաստացի դեպքի դիմաց: Փաստացի դեպքերի թվի աճը պայմանավորված է ծառայության փաստացի գնի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով կամ 3.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկի կրճատմամբ, ինչպես նաև ավելի էժան ծառայությունների մատուցմամբ:

Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկենտոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի անցկացման նպատակով տրամադրվել է 289.5 մլն դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական, որը պայմանավորված է ծնունդների քանակի նվազմամբ: Նորածնային սկրինինգներն ուղղված են բնածին, ժառանգական հիվանդությունների հնարավորինս վաղ ախտորոշմանը, ինչի շնորհիվ հնարավոր է հասնել հիվանդության բուժման կամ ախտաբանական վիճակի շտկման: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին իրականացվել է 127.2 հազար սկրինինգային հետազոտություններ՝ 2018 թվականին նախատեսված 133.4 հազարի դիմաց: Նշյալ ծրագրում ներառված հետազոտությունները 2017 թվականին իրականացվել են «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում:

«Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 99.2%-ը՝ 207.1 մլն դրամ: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին իրականացվել է 92.4 հազար հետազոտություն՝ նախատեսված 141.8 հազարի

դիմաց, որը պայմանավորված է ավելի թանկարժեք հետազոտությունների իրականացմամբ: Ծրագրում ներառված հետազոտությունները 2017 թվականին իրականացվել են «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 328.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 71.8%-ը և 48.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ ծրագրերի շահառուների շրջանակի փոփոխությամբ և ծրագրերի ուշ մեկնարկով: Մասնավորապես՝ 305.9 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 75.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 52%-ով: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը 2018 թվականին կազմել է 64 հազար՝ բյուջեով նախատեսված՝ 141 հազարի և նախորդ տարվա 238.2 հազարի փոխարեն:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են 22.3 մլն դրամ՝ ապահովելով 44.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են 19.5 հազար երեխաներ՝ բյուջեով նախատեսված՝ 41.7 հազարի փոխարեն: 2017 թվականին այս ծրագրի գծով միջոցներ չէին հատկացվել:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում 2018 թվականին օգտագործվել է 3.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը և 54%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» և «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրերի միջոցները այլ դասերի ծրագրերում վերաբաշխելու հանգամանքով:

Շուրջ 3.2 մլրդ դրամ է տրամադրվել «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին՝ ապահովելով 99% կատարողական: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին սպասարկվել է 441.0 հազար կանչ՝ բյուջեով նախատեսված 408.8 հազարի և 2017 թվականի 435.5 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի համեմատ աճը փոխհատուցվել է բուժօգնության միջին գնի նվազման, ինչպես նաև գերակատարված կանչերի մասնակի հատուցման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով: Կանչերի աճը փոխհատուցվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին, մասնավորապես՝ տարբեր տարածաշրջաններում մատուցվող ծառայությունների գները տարբերվում են:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 39.9 մլրդ դրամ՝ 98.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 47.6%-ը կամ 19.0 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 37.7%-ը կամ 15.1 մլրդ դրամը՝ մոր և մանկան բժշկական ծառայությունների, 14.7%-ը կամ 5.9 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ծախսերը: 2017 թվականին նախատեսված «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրից միջոցները վերաբաշխվել են «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ», «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ», «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում: 2017 թվականի համեմատ հիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերն աճել են 0.2%-ով:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են 3.2 մլրդ դրամ՝ 97.7%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է դեպքերի քանակով: 2018 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհետաձգելի բուժօգնություն է ստացել 23.5 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 19.4 հազարի և 2017 թվականի 25.3 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 57.1%-ով՝ հիմնականում պայմանավորված «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրից միջոցների տեղափոխմամբ սույն ծրագիր, ինչպես նաև սրտի անհետաձգելի վիրահատությունների գների աճով (ծրագրի շրջանակներում ոչ դեղապատ ստենտը, որն արժեր 700.0 հազար դրամ, փոխարինվել է դեղապատ ստենտով, որն արժե 750.0 հազար դրամ): Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի (ծրագրի շրջանակներում գործում է համավճարի սկզբունքով փոխհատուցման մեխանիզմը):

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 9.1 մլրդ դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 97.3% կատարողական: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2018 թվականին բուժօգնություն է ստացել 163.0 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 155.0 հազարի

և 2017 թվականի 64.5 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին (դեղապատ սենտի արժեքը 1080,0 հազար դրամից դարձել է 750.0 հազար դրամ): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 44.5%-ով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին միավորվել են 2017 թվականին նախատեսված «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» և «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն» ծրագրերը, ինչպես նաև շահառուներին մատուցվող սրտի վիրահատությունների ծառայությունները:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 16.6 հազար հիվանդի՝ բյուջեով նախատեսված 16 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերը, ինչպես նաև ծախսերի՝ ծրագրից շեղումը պայմանավորված են բուժօգնության միջին գնի նվազմամբ (դեղապատ սենտի արժեքը 1,080.0 հազար դրամից դարձել է 750.0 հազար դրամ): 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 34.2%-ով կամ 759.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրից միջոցների տեղափոխմամբ այս ծրագիր:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 3.7 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին բուժօգնություն է մատուցվել 20.2 հազար հիվանդի՝ 2017 թվականի 12.1 հազարի դիմաց: Միաժամանակ իրականացվել են սոցիալական փաթեթի 82.7 հազար շահառուների կանխարգելիչ քննություններ՝ 2017 թվականի 95.6 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում ներառվել են սրտի վիրահատական միջամտությունների ծախսերը, և ծրագրի իրականացման գործառույթը փոխանցվել է ապահովագրական ընկերություններին: Նշված միջոցների շրջանակներում ներառված է նաև ապահովագրական ընկերությունների շահույթը:

Հաշվետու տարում շուրջ 5.9 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 99.4%-ը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 49.1%-ով կամ 5.6 մլրդ դրամով, որը պայմանավորված է «Սրտի վիրահատության ծառայություններ», «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» և «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն» ծրագրերի միջոցների տեղափոխմամբ այլ ծրագրեր:

2018 թվականին տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 932.7 մլն դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն ստացած հիվանդների թիվը 2018 թվականին կազմել է 2.3 հազար՝ բյուջեով կանխատեսված 3.7 հազարի և 2017 թվականի 3.5 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 29.9%-ով՝ պայմանավորված առողջարանային բուժման ծառայությունների կրճատմամբ և հիվանդների թվի նվազմամբ:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2018 թվականին պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող առանձին կազմակերպությունների կողմից մատուցված բժշկական օգնության ծառայությունների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին բուժօգնություն է ստացել 15 հազար հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 11.8 հազարի և 2017 թվականի 13.1 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.1%-ով՝ պայմանավորված հիվանդների քանակի աճով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.417 հազար հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 6.391 հազարի և 2017 թվականի 6.286 հազարի դիմաց: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 13.5%-ով՝ պայմանավորված բուժօգնության

ծառայությունը մատուցող կազմակերպությունների օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 99.5%-ով՝ կազմելով ավելի քան 1.3 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնար պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում: Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 9.2 հազար և բյուջեով կանխատեսված 10.3 հազար հիվանդի դիմաց 2018 թվականին բուժօգնություն է ստացել 11.3 հազար հիվանդ: Բյուջեով կանխատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: 2017 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 15.5%-ով՝ պայմանավորված հիվանդների քանակի աճով:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերն ընդհանուր առմամբ կատարվել են 98.4%-ով՝ կազմելով շուրջ 15.1 մլրդ դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով կամ 168.2 մլն դրամով: Շեղումը և նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով:

Հաշվետու տարում ավելի քան 6.2 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագիրն ընդգրկել է ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների դեպքում բուժօգնությունը: Այս ծրագրի գծով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին արձանագրվել է 52.4 հազար դեպք՝ բյուջեով կանխատեսված 47.4 հազարի և 2017 թվականի 54.5 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.7%-ով կամ 173.8 մլն դրամով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի քանակի նվազմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է ավելի քան 334.5 մլն դրամ կամ նախատեսվածի 96.4%-ը: Շեղումը պայմանավորված է բուժօգնության դեպքերի փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին բուժօգնություն է տրամադրվել 4.9 հազար հիվանդի՝ բյուջեով կանխատեսված 4.6

հազարի և 2017 թվականի 4.5 հազարի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.8%-ով կամ 2.7 մլն դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանն ուղղվել է ավելի քան 8.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Շեղումը պայմանավորված է բուժօգնության դեպքերի փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում մինչև 7 տարեկան երեխաներին տրամադրվել է հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև հիվանդանոցային բուժօգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում բուժօգնություն մինչև 18 տարեկան երեխաներին: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2018 թվականին բուժօգնություն է ստացել 70.5 հազար հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 54.3 հազարի և 2017 թվականի 67.1 հազարի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով կամ 360.1 մլն դրամով՝ պայմանավորված «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրից միջոցների տեղափոխմամբ այս ծրագիր:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից 3.4 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 29.6%-ով՝ հիմնականում պայմանավորված բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ծառայությունների և իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ: Տվյալ խմբի շրջանակներում ֆինանսավորվել են 4 ծրագրեր:

Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների ձեռքբերման համար 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 40.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 88.9%-ը: Միջոցներն օգտագործվել են հանրապետության զինված ուժերում հիգիենիկ, հակահամաճարակային ու կանխարգելիչ ծառայությունների կազմակերպման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1 մլն դրամով կամ 21.2%-ով:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 253 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի մարզերում: Կենտրոնի առաջնային խնդիրներից են՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող՝ արյան

չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենով ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել պատվաստումների ազգային օրացույցով նախատեսվող հնգավալենտ, ռոտավիրուսային և պնևմակոկային ԱԿԴՓ և ԱԴՓ-Մ (դիֆթերիա, հեպատիտ Բ, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, ռոտավիրուսային վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ) պատվաստանյութեր՝ կառավարելի վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելման և կայուն հակահամաճարակային իրավիճակ ապահովելու համար: 2018 թվականից իրականացվել է պոլիոմիելիտի կենդանի պատվաստանյութի կիրառման աստիճանաբար դադարեցումը և վերջինիս փոխարինումը պոլիոմիելիտի ինակտիվացված պատվաստանյութով, նաև հնգավալենտ պատվաստանյութն աստիճանաբար փոխարինվել է հեքսավալենտ պատվաստանյութով, որի բաղադրության մեջ մտնում է նաև ինակտիվացված պոլիոմիելիտի պատվաստանյութը: Այդ պատվաստանյութն ունի մի շարք առավելություններ (երեխային ներարկվող պատվաստումների թվի նվազում, հետպատվաստումային ռեակցիաների թվի կրճատում, սառցային շղթայի բեռնվածության կրճատում և պատվաստանյութերի անվտանգության ապահովում և այլն): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 27.1%-ով կամ 460.5 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ պատվաստումների ազգային օրացույցի համաձայն մինչև 2018 թվականը պատվաստումների կատարումն իրականացվում էր նախազորակոչային տարիքի և զորակոչվող անձանց շրջանում, իսկ 2018 թվականին իրականացվել է միայն նախազորակոչային տարիքի անձանց շրջանում:

2018 թվականին պետական բյուջեից 1.9 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացվել են հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ծառայությունների մատուցում, այդ թվում՝ մշտադիտարկում, առողջ ապրելակերպի քարոզչություն, մանրէաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական, վիրուսաբանական, քիմիական, ճառագայթաբանական հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ և օջախների, շրջակա միջավայրի հետազոտություններ, ինչպես նաև իրավիճակային վերլուծություններ և կանխատեսումներ, պատվաստանյութերի արդյունավետ կառավարման և վարակիչ օջախների ախտահանման ծառայություններ, երեխաների ամբողջական ընդգրկում բոլոր պատվաստումներում:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 544.2 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2017 թվականի 964.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 33.3%-ով կամ 935.7 մլն դրամով՝ պայմանավորված «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի օպտիմալացմամբ՝ մարզային կենտրոնների փակմամբ:

Այլ դասերին չպատկանող առողջապահության ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է 6.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 76.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» և «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային ծրագրի կատարողականով: Տվյալ խմբում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ընդհանուր առմամբ օգտագործվել է 4.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 72.3%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 23.4%-ով՝ հիմնականում պայմանավորված հաշվետու տարում առողջապահական օբյեկտների շինարարության նպատակով միջոցներ չնախատեսելու, «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի միջոցները «Հիվանդանոցային ծառայություններ» խմբի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր տեղափոխելու, ինչպես նաև արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 364.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 1.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի նվազումը պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում մարդկային և նյութական ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը և օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով, որի արդյունքում հնարավոր է դարձել միևնույն ծավալի աշխատանքներն իրականացնել ավելի քիչ ռեսուրսներով: Ծրագիրը կապված է ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և դատարանների որոշումներին համապատասխան, հատուկ և վտանգավոր պայմաններում աշխատանքի (դիահերձում, արտաշիրմում և այլ հետազոտական աշխատանքներ) հետ:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 53 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով: 2018 թվականին կատարվել է ավելի քան 6.8 հազար հետազոտություն:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 33 մլն դրամ կամ նախատեսվածի 64.5%-ը: Ծրագրի կատարումը պայմանավորված է գնումների ընթացակարգի փոփոխությամբ՝ մեկ անձից ձեռքերումը փոխարինվել է մրցութային ընթացակարգով: Մրցույթի կազմակերպմամբ պայմանավորված՝ ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ուշ: Ծրագրի հատկացումներն ուղղվել են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին պատրաստվել է 735 օրթեզ և 62 կորսետ՝ 2017 թվականի համապատասխանաբար 1406-ի և 95-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 35%-ով՝ պայմանավորված հատկացված օրթեզների և կորսետների քանակի և գնի նվազմամբ: Մեկ օրթեզի գինը 2018 թվականին կազմել է 27.7 հազար դրամ՝ 2017 թվականի 47.9 հազար դրամի փոխարեն:

Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 19.3 մլն դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական և 25.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականին առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության և լուսաբանման աշխատանքները հիմնականում կազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության սեփական ռեսուրսներով՝ ներգրավելով ոլորտի երիտասարդ մասնագետներին և մասնագիտական ասոցիացիաներին:

Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է 220.3 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Միջոցներն ուղղվել են 2018 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2018 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2018 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.6%-ով՝ պայմանավորված մշակված նորմատիվ մասնագիտական փաստաթղթերի քանակի աճով:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններին տրամադրվել է 58.8 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով՝ պայմանավորված ստացված բեռների չափաքանակների ավելացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել են համապատասխանաբար 2.2 մլրդ դրամ և 178 մլն դրամ միջոցներ՝ ապահովելով 79.3% և 109.5% կատարողական: Վարկային ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ՀՀ Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում նոր մոդուլային տիպի բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնների կառուցման համար պայմանագրերի կնքման ուշացումով, որի պատճառ է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից լիցենզիաների ստացման կարգի փոփոխությունը և կենտրոնների կառուցման համար անհրաժեշտ հողերի ուշ հատկացումը, ինչպես նաև այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերով մատակարարված համակարգչային սարքավորումների համար նախատեսված միջոցները տեխնիկական պայմաններին անհամապատասխանության պատճառով չեն վճարվել:

2018 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Սքրինինգային հետազոտություններ: 2018 թվականին իրականացվել է շուրջ 446 հազար սքրինինգային հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է 50000 ՊԱՊ թեստ (արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտություն), շուրջ 133 հազար քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն, շուրջ 226 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 17 հազար մեզի և արյան երրորդ հետազոտություն.

● Մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացում: 2018 թվականին ավարտվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր մասնաշենքի շինարարական և ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: Ավարտվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն», ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» և ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ները բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով հագեցման աշխատանքները.

● Համաշխարհային բանկի հետ նախապես համաձայնեցվել են «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային համաձայնագրում փոփոխության կատարումը և ծախսային հոդվածների վերաբաշխումը: Վերաբաշխման արդյունքում որոշվել է ֆինանսական միջոցներն ուղղել ՀՀ Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի հիվանդանոցային համակարգերի

հետագա արդիականացմանը՝ Եղեգնաձոր և Մարտունի քաղաքներում կառուցելով նոր մոդուլային տիպի բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոններ: 2018 թվականին վերոնշյալ երկու նոր բժշկական հաստատությունների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և հեղինակային հսկողության իրականացման նպատակով հայտարարվել է մրցույթ:

Հաշվետու տարում արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 18.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 1.3 մլն դրամով կամ 6.6%-ով՝ հիմնականում պայմանավորված ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից 3.2 մլն դրամ է տրամադրվել հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման և շահագործման ծրագրին, որի գծով ծախսերը կազմել են նախատեսվածի 8.5%-ը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է հատուկ բժշկական սարքերի, սարքավորումների սպասարկման և ընթացիկ վերանորոգման ծառայությունների ձեռք բերման համար պայմանագրեր չկնքելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 92%-ով:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 66.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կարիքների վերագնահատման արդյունքում առաջացած տնտեսումներով, Գլոբալ հիմնադրամի կողմից առողջապահական և լաբորատոր նյութերի փաստացի առաքումը 2019 թվական տեղափոխելու հանգամանքով՝ ուղղակի գնումների մատակարարի հետ բանակցային գործընթացը շարունակելու պատճառով, ինչպես նաև այլ մեքենաների և սարքավորումների ձեռք բերման մրցույթների չկայացմամբ՝ հայտերի թերի լինելու պատճառով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրականացվել են վարակի վերահսկման ուժեղացման միջոցառումներ,
- տուբերկուլյոզով հիվանդներին բուժման խրախուսման նպատակով տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ դրամային փոխանցումների տեսքով,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում, դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով, հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,
- իրականացվել են պերիֆերիկ լաբորատորիաներից խորխի տեղափոխման, տուբերկուլոզային ծառայությունների մոնիտորինգի և գնահատման, հաշվետվական էլեկտրոնային համակարգի կիրարկման միջոցառումներ,

● ժամանակի կամ բժշկական (տեղաշարժման) հակացուցումներ ունեցող հիվանդների համար կազմակերպվել է տնային բուժում,

● Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի վարչական տարածքի վերանորոգման և ծախսարդյունավետ արևային կայանի կառուցման աշխատանքների իրականացում,

● աջակցություն Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ խոցելի խմբերի շրջանում տուբերկուլոզի ակտիվ հայտնաբերման աշխատանքների իրականացման նպատակով,

● տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով առաջին և երկրորդ շարքի հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ, գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 524.7 մլն դրամ՝ ապահովելով 56.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կարիքների վերագնահատման արդյունքում առաջացած տնտեսումներով, գնումների մի մասը հաջորդ տարի տեղափոխելու հանգամանքով, քանի որ գնումները կատարվվում են արտասահմանից: Ծրագրի նպատակն է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

2018 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

● ՄԻԱՎ վարակի հայտնաբերման և ախտորոշման համար նախատեսված թեստ-հավաքածուների ձեռքբերում.

● ՄԻԱՎ վարակի հակառետրովիրուսային բուժման համար նախատեսված դեղամիջոցների ձեռքբերում.

● ՄԻԱՎ վարակի ընթացքում առաջացած օպորտունիստական վարակների բուժման համար նախատեսված դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում.

● ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում.

● ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում.

● ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Սյունիքի մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 9 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում.

● ՀՀ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում 1871 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 501 թմրամիջոց գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում: Իրականացվել է 2500 դատապարտյալների և կալանավորների, 47537 հղիների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Հայաստանի Հանրապետությունում կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 7.2 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2018 թվականի սեպտեմբերի 21-ին: 2018 թվականին ընթացքում վճարումներն ուղղվել են ծրագրի նախապատրաստական աշխատանքներին մասնակցած աշխատակիցների հավելավճարների և աշխատավարձերի վճարմանը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում 916.2 մլն դրամ է տրամադրվել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով 98.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կապի ծառայությունների ձեռքբերման՝ նոր սերնդի հեռախոսների և բազմաֆունկցիոնալ կապի ներդրումով, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 41.7%-ով, որը պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ծախսերն առանձին տողով արտացոլելու հանգամանքով:

ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի պահպանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 572.2 մլն դրամ՝ ապահովելով 62.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է տեսչական մարմնի տարածքային մարմինների օպտիմալացման հետևանքով աշխատավարձի ֆոնդի տնտեսմամբ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի

շրջանակներում օգտագործվել է 74.2 մլն դրամ՝ ապահովելով 71.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագիրն իրականացնող առանձին կազմակերպությունների կողմից մատուցված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքներ պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման հաստատված չափորոշիչների, ուղեցույցների և գործելակարգերի ուսումնասիրության և վերլուծության ուղղությամբ, մեկնարկել են հատկապես տուբերկուլյոզի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական ուղղությամբ ֆինանսավորման և բժշկատնտեսագիտական ստանդարտների հիման վրա գնագոյացման նոր մոդելների մշակման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև ՀՀ պետական պատվերի շրջանակներում ձեռք բերվող դեղորայքի և բժշկական պարագաների կենտրոնացված կերպով գնումների մեթոդաբանության մշակումը և ներդրումը:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2018 թվականին *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 25.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 97.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 2.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է թանգարանների և ցուցասրահների, արվեստի, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհմիությունների բնագավառի ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի ծառայություններին* տրամադրվել է 1.9 մլրդ դրամ՝ 98.1%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 7.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի աճով:

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Հատկացված միջոցները նպատակաուղղվել են մարզական միջոցառումների իրականացմանը, դրանց քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերի՝ երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը: Ծրագրում ընդգրկված 34 մարզական ազգային ֆեդերացիաները կազմակերպել են 126 ուսումնամարզական հավաք, Հայաստանի Հանրապետության 95 առաջնություններ, մասնակցել են 176 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերն աճել են 16.4%-ով՝ հիմնականում պայմանավորված մարզական ազգային ֆեդերացիաների քանակի աճով:

2018 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 121.2 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման ճանապարհով շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաներն անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային

մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար, լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը: Նախորդ տարվա համեմատ շախմատիստների պատրաստման ծախսերը նվազել են 5.2%-ով, որը պայմանավորված է կազմակերպված հավաքների քանակի նվազմամբ:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով հատկացվել է 5 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 90%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ միջոցները հատկացվում են տարվա ընթացքում ձեռքբերված մարզական արդյունքների հիման վրա: Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1282-Ն որոշման՝ 2018 թվականին տարեվերջյան պարգևատրման են ներկայացվել 105 մարզիկ, 105 անձնական մարզիչ, մեծահասակների Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 10 գլխավոր մարզիչ, 6 բժիշկ և 10 երկրորդ մարզիչ, երիտասարդների և պատանիների Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 16 ավագ մարզիչ, 16 երկրորդ մարզիչ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 85.8%-ը: Ռազմամարզական խաղերն անցկացվել են 4 փուլով՝ ներդպրոցական, ՀՀ տարածաշրջանային և Երևան քաղաքի վարչական շրջանների միջև, ՀՀ մարզերում և Երևան քաղաքում և եզրափակիչ փուլ՝ Իջևան քաղաքում: Խաղերին ընդհանուր առմամբ մասնակցել է 27237 աշակերտ: Ծախսերի՝ ծրագրից շեղումը և նախորդ տարվա համեմատ 13.3%-ով նվազումը պայմանավորված է ծրագրի իրականացման վայրի փոփոխության հետևանքով գիշերակացի գումարի տնտեսմամբ:

Ուսանողական մարզական միջոցառումներին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 4.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 82.2%-ով, որը պայմանավորված է 2017 թվականին անցկացված համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի մասնակցությամբ:

«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» ծրագրի ծախսերը կազմել են նախատեսվածի 99.7%-ը կամ 6.9 մլն դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Փառատոնն անցկացվել է ՀՀ 48 քաղաքներում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 16000 մարդ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով օգտագործվել է շուրջ 77 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.4%-ը: Ծրագիրն անցկացվել է 3 փուլով՝ Հայաստանի

Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում, Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում և 6 շրջաններում: 2018 թվականի մայիսի 25-ից մինչև հունիսի 13-ն անցկացվել է մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցել են 61 համայնքների 1062 ընտանիքներ՝ 3186 մարդ: 2-րդ փուլն անցկացվել է հունիսի 13-27-ը Հայաստանի Հանրապետության 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում: Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է հուլիսի 23-28-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի գլխավոր մարզահամալիրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 5.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 68.6%-ը, ինչը պայմանավորված է «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի և «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ի միջև առկա խնդիրների հետ կապված իրականացվող դատական գործընթացով: Սույն ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց՝ ինքնադրսևորվելու և լիարժեք ինտեգրվելու հասարակության մեջ: 2018 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է 5 միջոցառում, որոնց մասնակցել է հաշմանդամություն ունեցող 299 անձ՝ 2017 թվականի 8 միջոցառման և 443 մասնակցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը նվազել է 41.1%-ով՝ պայմանավորված միջոցառումների և մասնակիցների քանակի նվազմամբ:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է շուրջ 5.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և 2017 թվականի նկատմամբ նվազել է 5.8%-ով: Նավամոդելային սպորտի զարգացման գծով կազմակերպվել է թվով 1 միջոցառում, որին մասնակցել է 5 մարզիկ՝ շահելով 3 ոսկե, 1 արծաթե և 1 բրոնզե մեդալ, ինչպես նաև արժանանալով լավագույն արդյունքի համար անվանական գավաթի:

ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացման նպատակով տրամադրվել է 46.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3%-ով՝ պայմանավորված ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների և աշխարհի չեմպիոնների թվի աճով:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով 2018 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 4 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 4.4 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով նախատեսված 157 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2018 թվականին ՀՀ Նախագահի անվանական թոշակ է հատկացվել 72 մարզիկի և 112 մարզչի՝ 2017 թվականի 87 մարզիկի և 119 մարզիչի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է բարձր ցուցանիշներ արձանագրած անվանական թոշակ ստացողների թվի աճով:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 81.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.8%-ով, որը պայմանավորված է մարզահագուստի պահանջարկի և գների աճով:

2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով հատկացվել է 24.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

2018 թվականի Բուենոս Այրեսում կայացած 3-րդ ամառային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 40.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 74.1%-ը՝ պայմանավորված օլիմպիական խաղերին նախատեսվածից պակաս թվով մարզիկների մասնակցությամբ:

2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով հատկացված 6.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 16.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրին մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր

սահմանափակումներ ունեցող 192 անձինք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով:

«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 19.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագիրն անցկացվել է 4 փուլով՝ առաջինը հաստատություններում, հետո՝ համայնքային, մարզային, և եզրափակիչ, որոնց մասնակցել են ՀՀ մարզերի և Արցախի Ստեփանակերտ քաղաքի 432 նախադպրոցական հաստատությունների 13992 մասնակիցներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 4.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Մարզական միջոցառումն իրականացվել է 2 փուլով: Մրցույթին մասնակցել են 12 հաստատությունների 300 մասնակիցներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 10.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 55.6%-ը: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 13.4% նվազումը պայմանավորված են ուսանողների՝ նախատեսվածից քիչ մասնակցությամբ և գիշերակացի գումարի նվազմամբ: Մարզական խաղերն անցկացվել են հետևյալ մարզաձևերից՝ բասկետբոլ, վոլեյբոլ, մինի ֆուտբոլ, սեղանի թենիս, ուժային եռամարտ, հրաձգություն, հնգամարտ: Խաղերն անցկացվել են 2 փուլով: Խաղերին ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 3000 ուսանողներ:

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 27.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 90%-ը, ինչը պայմանավորված է աշակերտների՝ նախատեսվածից քիչ մասնակցությամբ և գիշերակացի գումարի նվազմամբ: ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադան անցկացվել է 4 փուլով: Սպարտակիադային ընդհանուր առմամբ մասնակցել է 29750 աշակերտ՝ 2017 թվականի 29510-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 35.8%-ով, որը պայմանավորված է ձեռք բերված մարզահագուստի գների աճով:

ՀՀ մարզերի, Երևանի քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման համար տրամադրվել է 27.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Սպորտլանդիան անցկացվել է 4 փուլով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.3%-ով, որը պայմանավորված է ձեռք բերված մարզահագուստի և մարզագույքի գների նվազմամբ:

ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 5.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Գյուղական մարզական խաղերն անցկացվել են 3 փուլով: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 5000 մարդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.4%-ով, որը պայմանավորված է նրանով, որ 2018 թվականին հատկացվել են նաև թիմային հաշվարկով պարգևավճարներ:

Տարեցների հանրապետական խաղերի անցկացման համար տրամադրվել է 8.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Խաղերն իրականացվել են 3 փուլով: Խաղերին ընդհանուր առմամբ մասնակցել է 1530 մարզիկ՝ 2017 թվականի 1450-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.5%-ով, որը պայմանավորված է մասնակիցների թվի աճով:

«Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացման համար տրամադրվել է 693.6 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Մրցույթին մասնակցել են 34 պետական մարմինների 227 աշխատակիցներ՝ նախորդ տարվա 200-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3%-ով, որը պայմանավորված է մասնակիցների թվի աճով:

Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանն աջակցության ծախսերը 2018 թվականին կազմել են 13 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության 2018 թվականի մարզական միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված միջոցառումները, մարզիչների և մրցավարների համար կազմակերպվել են մրցավարական սեմինարներ: 2018 թվականին հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևն ուսուցանվել է Երևանի և Արցախի մարզադպրոցների սամբոյի, ձյուդոյի, հունա-հռոմեական ըմբշամարտի և ազատ ոճի ըմբշամարտի խմբերում, օլիմպիական հերթափոխի Գյումրու և Երևանի պետական մարզական քոլեջներում: «Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ում 2018 թվականի օգոստոսի 2-ին և 9-ին «Արի տուն» ծրագրի մասնակից սփյուռքահայերի համար կազմակերպվել են հայկական ազգային կոխ ըմբշամարտի ցուցադրական ելույթներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորում» ծրագրի շրջանակներում 2018 թվականին նախատեսված 13.2 մլն դրամն ամբողջությամբ նվիրաբերության պայմանագրով տրամադրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին, որն ուղղվելու է «Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպում» միջոցառման իրականացմանը: Ծրագիրը նախատեսված է եղել իրականացնել 2018 թվականին, սակայն հաշվի առնելով եղանակային անբարենպաստ պայմանները՝ ՀՀ 2018

թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված միջոցները կրճատվել են, և ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները տեղափոխվել են 2019 թվական:

2018 թվականին Երևանում կայացած սուսերամարտի Եվրոպայի մինչև 23-րդ տարեկանների առաջնության անցկացման նպատակով նախատեսված 27.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից շուրջ 13 մլրդ դրամ է տրամադրվել *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 97.3%-ը: 2017 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 6.3%-ով՝ հիմնականում պայմանավորված թանգարանների և ցուցասրահների ու արվեստի դասերի ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում ավելի քան 1.5 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.7%-ով: 2018 թվականին 15 գրադարանների կողմից իրականացվել են գրադարանային ծառայություններ: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթի պետական պաշարների համալրման, օգտվողներին մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը:

Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Կոտայքի և Լոռու մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: Հայաստանյան գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակում 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Ազգային գրադարանի միջոցով իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության հավատարմագրման վկայական ստացած 4 համայնքային գրադարանների վերազինումը: ՀՀ տասը մարզերից վերապատրաստվել են 70 համայնքային գրադարանավարներ: Նախորդ տարվա համեմատ գրադարանային ծառայությունների ծախսերը նվազել են 6.3%-ով՝ հիմնականում պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

2018 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 2.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 16.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների շինարարության ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծախսերի նվազմամբ:

Թանգարանների և ցուցասրահների դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով 2018 թվականին հատկացված 94.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի հատկացումների հաշվին շարունակվել են ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքները:

Շուրջ 1.9 մլրդ դրամ է տրամադրվել թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրի 99%-ը: Հատկացումների հաշվին ապահովվել է 32 թանգարանների գործունեությունը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումն ու վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով՝ հիմնականում պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին հատկացվել են 243.3 մլն դրամ սուբվենցիաներ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի 4 թանգարանների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից 370.7 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրված միջոցների 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի աճով:

Տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 218.4 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Շենիկ համայնքի, Սևան քաղաքի, Բամբակաշատ համայնքի մշակույթի տների հիմնանորոգման, Շենիկի և Սևանի մշակույթի տների որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները: Բամբակաշատ և Շենիկ համայնքների հիմնանորոգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 44.8%-ով:

Հաշվետու տարում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը հատկացված 44.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված գումարից շուրջ 37 մլն դրամը

հատկացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնին՝ վերջինիս գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Միջոցներ են տրամադրվել նաև Սյունիքի և Կոտայքի մշակույթի կենտրոնների, Եղեգնաձորի մշակույթի տան ստեղծագործական գործունեության աջակցմանն ու խթանմանը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Մշակութային օբյեկտների շինարարությանը 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 107.8 մլն դրամ, որն իրականացվել է 99.3%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի մշակույթի տան շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 808 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 4.4%-ով՝ հիմնականում պայմանավորված արխիվային ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

493 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված աշխատողների թվի և շարունակական ծախսերի կրճատմամբ:

Մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններին 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 27.8 մլն դրամ: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

2018 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 252 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման և տարածման, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի,

հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծման աշխատանքներ:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.2 մլրդ դրամ, որն իրականացվել է 97.2%-ով և 2.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը 2018 թվականին տրամադրվել է 1.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Դիլիջանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տան Բեթհովենյան դահլիճի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքները:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ: Ծրագիրն իրականացվել է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով շուրջ 292.1 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով, պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 88.7%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ սփյուռքի նախարարության կողմից նախատեսված որոշ ծրագրեր չիրականացնելու հանգամանքով: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2018 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցությունը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից

մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ մշակութային միջոցառումների իրականացման ծախսերը նվազել են 22.8%-ով՝ հիմնականում պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի կրճատմամբ:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում հատկացվել է 14 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Վրաստանում հայալեզու թատերական ներկայացումների բեմադրմանը, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում հյուրախաղերի կազմակերպմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 35.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 93.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.6%-ով: Փաստացի ծախսերի՝ ծրագրի նկատմամբ շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված են պատվովճար ստացողների փաստացի քանակով:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 363.3 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են 99.9%-ով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Հատկացումներն ուղղվել են 16 թատրոնների գործունեության ապահովմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.4%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

2018 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 1.5 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Միջոցներն ուղղվել են 14 համերգային կազմակերպությունների գործունեության ապահովմանը: Նախորդ տարվա համեմատ

տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին աջակցության ծրագրի շրջանակներում 6.1 մլն դրամ է հատկացվել Վենետիկում հայ-համաեվրոպական երկխոսության միջազգային կենտրոնի պահպանման համար, որն օգտագործվել է 25%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 76.6%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2018 թվականի հուլիսից դադարեցվել է «Աջակցություն հայ մշակույթի միջազգային կենտրոններին» ծրագրի իրականացումը:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 170 հազար դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 88.5%-ը և 8.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված բանկերի միջոցով իրականացվող վճարումների տեսակարար կշռի աճով:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը հաշվետու տարում նախատեսվել էր տրամադրել 18.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ, մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ: Ծրագիրը չի իրականացվել:

Ազգային ակադեմիական խմբերգային համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը: Նշված ծախսերը կազմել են 248.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 49.4%-ով, որն ուղղվել է աշխատողների լրավճարի հատկացմանը: Միջոցներն ուղղվել են խմբերգային արվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երգչախմբային արվեստին հաղորդակցմանը, խմբերգային արվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը:

Համերգների, փառատոների և այլ միջոցառումների իրականացման նպատակով «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 152.3 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման նպատակով օգտագործվել է 606.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված միջոցների 98.8%-ը: Հատկացումների հաշվին անցկացվել են Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված տոնական միջոցառումներ, համերգներ, Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպվել է «Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ 100 տարվա հետահայաց» խորագրով ցուցահանդես:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 604.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.5%-ով՝ հիմնականում պայմանավորված կինոնկարների արտադրության և ազգային կինոծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցների կրճատմամբ:

Հաշվետու տարում կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 419.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 98.8%-ը: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոներին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7.6%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ: 2018 թվականին նկարահանվել են 20 խաղարկային, 10 վավերագրական ֆիլմեր և 5 մուլտֆիլմեր:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2018 թվականին այդ ուղղությամբ նախատեսված միջոցներն օգտագործվել են 99%-ով՝ կազմելով 138 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 11.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հաշվետու տարում 6.8 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 6 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Փաստավավերագրական կինոծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 40.5 մլն դրամ: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 271.7 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 68.7%-ը: Շեղումը պայմանավորված է հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման ծախսերի

կատարողականով: Վերջիններս նվազել են նաև նախորդ տարվա համեմատ, որով հիմնականում պայմանավորված է տվյալ դասի ծախսերի 24.4%-ով նվազումը:

Հաշվետու տարում 3.7 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.6%-ով, որը պայմանավորված է նախատեսված գործառույթների նվազմամբ:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար 2018 թվականին տրամադրվել է 91.2 մլն դրամ, որն իրականացվել է 98.6%-ով: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի (հուշարձանների պետական ցուցակներ, վկայագրեր, պահպանական գոտիների նախագծեր, գիտատեղեկատու շտեմարան, հուշարձանների կադաստր) ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 200 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 70 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 120 հուշարձանների հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմման և թվայնացման աշխատանքներ: Կատարվել են նաև վտանգված և վերականգնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների 3 պեղումներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի «ԺԴ» հատորը, իսկ հուշարձանների կադաստրի աշխատանքները չեն իրականացվել: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7.8%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 49.6 մլն դրամ աջակցություն, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.5%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 370 պատմամշակութային հուշարձանի վավերագրում՝ նախորդ տարվա 400-ի փոխարեն:

2018 թվականին հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 127.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 50.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացի, նախագծանախահաշվային փաստաթղթերի չմշակման և չթարմացման, պայմանագրով նախատեսված աշխատանքները չկատարելու հետ, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.4%-ով: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների

հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 12 հուշարձանի վերականգնման աշխատանքներ՝ կանխատեսված 10-ի դիմաց, 2 գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքներ՝ կանխատեսված 5-ի փոխարեն, 15 հրատապ ուսումնասիրման, ամրակայման և վերականգնման աշխատանքները չեն կատարվել, 2 պատմամշակութային անշարժ հուշարձանի պեղման աշխատանքներ՝ նախատեսված 3-ի դիմաց:

2018 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրապարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են շուրջ 8.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 0.6%-ով:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 6.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.5%-ով:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 376.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 96.1%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.7%-ով:

2018 թվականին հեռուստառադիոհաղորդումների դասի ներքոհիշյալ 8 ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով:

Հեռուստառադիոհաղորդումների դասի հատկացումների գերակշիռ մասը՝ 5.1 մլրդ դրամ, տրամադրվել է հեռուստատեսային ծառայություններին, որից շուրջ 5 մլրդ դրամը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: 99.2 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին՝ արբանյակային ունակության վարձակալության նպատակով: Նախորդ տարվա համեմատ հեռուստատեսային ծառայությունների ծախսերն աճել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված սպորտային իրադարձությունների հեռարձակման իրավունքների և հեռարձակման նոր ծառայությունների ձեռքբերմամբ (2018 թվականի Ֆուտբոլի Աշխարհի առաջնություն, Ձմեռային Օլիմպիական խաղեր և այլն):

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 785.3 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ռադիո և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 94.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը նույնպես նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծախսերը կազմել են 175.5 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այն հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 10%-ով: Ավելացումները կատարվել են համաձայն ՀՀ Նախագահի 03.07.07թ. N Ղ-1212 հանձնարարականի (յուրաքանչյուր տարի մասնաբաժնի չափի ավելացում 10%-ով):

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 44.3 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը կազմել են 150.2 մլն դրամ, որոնք նույնպես 2017 թվականի համեմատ փոփոխություն չեն կրել: Միջոցները տրամադրվել են «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 47.1 մլն դրամ, իսկ տեխնիկական վերազինմանը՝ 95.8 մլն դրամ կապիտալ դրամաշնորհ:

Գնումների գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2018 թվականին տրամադրվել է 20.7 մլն դրամ կամ նախատեսվածի 66.9%-ը: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ, մասնավորապես՝ չեն օգտագործվել տեղեկատվական բնույթի տեսահոլովակների հեռարձակման ծառայությունների համար նախատեսված միջոցները, քանի որ տեսահոլովակների հեռարձակման նյութերը տեղադրվել են www.procurement.am կայքում: Ծրագիրը նախատեսված է պետական գնումների կատարման համար անհրաժեշտ մրցույթների կազմակերպման, պետության կողմից կատարվող գնումների վերաբերյալ հանրությանը հրապարակային տեղեկատվության տրամադրման, մասնագետների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին տրամադրվել է 3.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 58%-ը: Շեղումը պայմանավորված է հայտարարված մրցույթների արդյունքում ապրանքների ավելի ցածր գնով ձեռքբերմամբ:

Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է 36.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 70.1%-ը և նախորդ տարվա համեմատ նվազել է 29.8%-ով՝ պայմանավորված ծրագրի բովանդակային և քանակական ցուցանիշների փոփոխմամբ: Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք կապերը և սփյուռքում ավելի հասանելի դարձնել ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

2018 թվականին 953.4 մլն դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը նվազել են 6.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գրականության հրատարակման և հրատարակչական, տեղեկատվական ու տպագրական ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև գրական ժառանգության պահպանման և տարածման ծախսերի կրճատմամբ:

Պետական մամուլի հրատարակմանը հաշվետու տարում տրամադրվել է 69.3 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Արմենպրես» պետական լրատվական գործակալություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակման համար: Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել «Հայաստանի Հանրապետություն» թերթի 235 և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի՝ 85 համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 51.9 մլն դրամ, որն օգտագործվել է 93.5%-ով՝ պայմանավորված որոշ գրքերի հրատարակումը չիրականացնելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին հրատարակվել է 31 անուն գիրք՝ նախորդ տարվա 39-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 28.1%-ով:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 74.3 մլն դրամ: Ֆինանսավորումը հատկացվում է գիտական հրատարակումների մակարդակի բարձրացման, գրախոսվող ամսագրերի՝ միջազգային ստանդարտներին մոտեցման, գիտական արդյունքների վերլուծության, միջազգային տեղեկատվական բազաներում գրանցվելու և հանրապետությունում հրատարակվող գիտական ամսագրերի, հրատարակումների միջազգային ճանաչման խնդրի լուծման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 44.7 մլն դրամ կամ նախատեսվածի 97.3%-ը, որը պայմանավորված է «Ոգու կանչ» թերթի հրատարակումը չիրականացնելու և «Գարուն» ամսագրի որոշ համարներ չտպագրելու հանգամանքով: 2018 թվականին ծրագրի շրջանակներում հրատարակվել է 50 անուն պարբերական՝ նախորդ տարվա 63-ի դիմաց, որի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.5%-ով: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 44.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով՝ պայմանավորված «Աղբյուր», «Ծիծեռնակ», և «Կանչ» մանկական թերթերի և ամսագրերի հաստիքների կրճատմամբ:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 354.9 մլն դրամ կամ ծրագրվածի 100%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում և ՀՀ արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.4%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ մուտքի արտոնագրերի, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրությունն իրականացվում է երկու տարին մեկ անգամ, և 2018 թվականին տպագրություն չի իրականացվել:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է՝ կազմելով 217.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: 2018 թվականին թարգմանվել է 25582 էջ՝ նախատեսված 25577 էջի և 2017 թվականի 25581 էջի դիմաց: Թարգմանված էջերի 31 տոկոսը կազմել են հայերենից ռուսերեն

թարգմանությունները, 25 տոկոսը՝ հայերենից անգլերեն, 7 տոկոսը՝ ռուսերենից հայերեն, իսկ 34 տոկոսը՝ անգլերենից հայերեն թարգմանությունները: Մնացած 3 տոկոսը կազմում են ֆրանսերենից հայերեն և ռուսերեն, իտալերենից հայերեն, ինչպես նաև ռուսերեն-անգլերեն լեզվազույգով թարգմանությունները:

2018 թվականին գրականության հրատարակմանը տրամադրվել է 34.7 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Հատկացումների հաշվին հրատարակվել է 27 անուն գիրք և 1 թարգմանական ծրագիր՝ նախորդ տարվա 15 գրքի և 1 թարգմանական ծրագրի համեմատ: Արդյունքում 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 31.7%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 28.1 մլն դրամ կամ նախատեսվածի 96.3%-ը: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի համալրման ու «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրման ու սպասարկման աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով, որը մասամբ պայմանավորված է թափուր հաստիքներով:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 9 մլն դրամ, որն օգտագործվել է 100%-ով: 2018 թվականին ծրագրի շրջանակներում 18152 կտոր գրականություն է առաքվել հայ գաղթօջախների ուսումնական հաստատություններին և կազմակերպություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով, որը պայմանավորված է ստացված հայտերի քանակով:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 14.7 մլն դրամ միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 44.3%-ով՝ հիմնականում պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 622.1 մլն դրամ՝ 93.9%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 46.8%-ով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի աճով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել է 80.7 մլն դրամ՝ «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Նախորդ տարվա համեմատ նշված

ծախսերը նվազել են 5.7%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 541.4 մլն դրամ, որն օգտագործվել է 93.1%-ով՝ պայմանավորված տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

● Հայկական տպագիր, էլեկտրոնային, հեռարձակվող մամուլի, Ադրբեջանի առցանց (ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն) մամուլի, տարածաշրջանի երկրների առցանց (վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, արաբերեն) մամուլի, Ռուսաստանի և արտերկրի ռուսերեն մամուլի, արևմտյան երկրների առցանց (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, իտալերեն) մամուլի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով,

● Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և պարբերական ռեժիմով ամփոփիչ տեղեկանքների պատրաստում,

● Ղարաբաղյան հիմնախնդրի, Հայոց ցեղասպանության հիմնախնդրի, հայ-թուրքական հարաբերությունների հետազոտում, Ադրբեջանի հիմնախնդիրների կարգավորման գործընթացի ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում,

● Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ,

● ՀՀ Նախագահի, վարչապետի գործունեության տեղեկատվական սպասարկում,

● Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, քաղաքական և ընտրական գործընթացների ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում,

● Սփյուռքի կառույցների և սփյուռքի մամուլի գործունեության ուսումնասիրություն ու տեղեկատվական սպասարկում և փորձագիտական եզրակացությունների, վերլուծական տեղեկանքների, քաղաքական ամփոփագրերի պատրաստում,

● Կառավարության առաջնահերթ ոլորտներում հիմնախնդիրների և դրանց վերաբերյալ տեղեկատվական հոսքերի ուսումնասիրություն և տեղեկատվական սպասարկում,

● Սոցիալական ցանցերի ուսումնասիրություն և փորձագիտական եզրակացությունների, վերլուծական տեղեկանքների, քաղաքական ամփոփագրերի պատրաստում,

● Արտաքին հարթակներում խնդրահարույց հարցերի շուրջ հայկական տեսակետի առաջմղում,

● ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մոնիթորինգ և վերլուծական նյութերի պատրաստում,

- Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և կառույցների գործունեության հետազոտություն, խորհրդատվության ապահովում,
- ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների տեղեկատվական սպասարկում (ասուլիսներ),
- Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում,
- Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում,
- Տեղեկատվական-թեմատիկ գրքերի, բրոշյուրների թողարկում, թարգմանություն,
- Հայաստանի ԲՈՒՀ-երում Կենտրոնի փորձագետների ներգրավում ուսումնական պրոցեսում,
- ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում, ամփոփագրերի պատրաստում,
- Քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսուցողական նյութերի պատրաստում և ուսումնական ծրագրերի իրականացում,
- Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները լուսաբանող հաղորդումների պատրաստում,
- Փաստագրական վավերագրական ֆիլմի արտադրություն,
- Օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչների համար Հայաստան մեդիա տուրերի կազմակերպում:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 60.2%-ով՝ պայմանավորված տեղեկատվական տվյալների մշակման աշխատանքների ծավալի աճով:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից շուրջ 1.1 մլրդ դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 83.7%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 2.3%-ով:

Հաշվետու տարում 924.5 մլն դրամ է տրամադրվել երիտասարդական ծրագրերի դասին, որի ծախսերը կատարվել են 92.8%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 12.9%-ով:

Նշված գումարից 232.6 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 91.6% կատարողական, որը պայմանավորված է շուկայի ուսումնասիրության արդյունքում ձևավորված նախահաշվային արժեքների ճշգրտմամբ, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի խորհրդի կազմում տեղի ունեցած փոփոխություններով՝ կապված խորհրդի նիստի ուշ կայացման և ուսումնասիրությունն իրականացնելու համար ժամանակահատվածի սղության հետ,

ինչպես նաև Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի կողմից ներկայացված ծրագիրը չեղարկելու հանգամանքով: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 9.5%-ով:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նշված գումարից 2.2 մլն դրամը տրամադրվել է «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին, 2.3 մլն դրամը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին և 3.5 մլն դրամը՝ «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ին: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 12.1%-ով՝ պայմանավորված 2017 թվականին ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերի տնտեսմամբ:

2018 թվականին հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 61.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են 13-20 տարեկան հայազգի երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում, մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի, նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերի: Ծրագրի գլխավոր նպատակն է սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.8%-ով, ինչը պայմանավորված է ծրագրի բովանդակային և քանակական փոփոխությամբ, ինչպես նաև մրցույթում ներկայացված ցածր գնային առաջարկով:

2018 թվականին պետական բյուջեից Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է շուրջ 7.4 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 87.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 38.8%-ով: Ծրագրի շրջանակներում անցկացվել է թվով 8 միջոցառում, շահառուների թիվը կազմել է 617 մարդ՝ 2017 թվականին անցկացված 12 միջոցառման և 1167 շահառուի դիմաց: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է «Գիտակների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ու ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև կնքված պայմանագրի լուծմամբ:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 92.6%-ով՝ կազմելով 614.8 մլն դրամ և 36.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է շահառուների թվի աճով: Ծրագրի շրջանակներում սուբսիդավորումն իրականացվում է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ծրագրում նախատեսված 3830 շահառուի և նախորդ տարվա 2593 շահառուի դիմաց 2018 թվականին փաստացի ընդգրկվել է 3363 շահառու:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերը 2018 թվականին կազմել են 145.3 մլն դրամ՝ 51.4%-ով ապահովելով ծրագիրը և 47.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Օգտագործված գումարից 21.8 մլն դրամը՝ նախատեսվածի 98.9%-ը, տրամադրվել է ՀՀ երիտասարդական հիմնադրամին, որին վերապահված է եղել 2018 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների միջև դրամաշնորհային մրցույթների կազմակերպման իրավասությունը: 103.5 մլն դրամ է հատկացվել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ ԱԺ 2017 թվականի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած 5 կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվել են: 20 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության աշխատակազմին՝ կազմելով ծրագրի 12.8%-ը: Գումարը տրամադրվել է միայն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին, իսկ այլ քաղաքական կուսակցություններից և հասարակական կազմակերպություններից համապատասխան փաստաթղթեր չեն ներկայացվել ֆինանսավորման համար: Հիմնականում նշվածի արդյունքում տվյալ ծրագրի ծախսերի կատարողականը կազմել է 51.4%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի նվազումը պայմանավորված է ՀՀ երիտասարդական հիմնադրամին հատկացումների նվազմամբ:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ծախսվել է 857.4 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների պահպանմանը, որոնք կազմել են համապատասխանաբար 531.8 մլն դրամ և 325.6 մլն դրամ կամ ծրագրված միջոցների համապատասխանաբար 99.9%-ը և 97.4%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 14.1%-ով և 18.7%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախարարների աշխատակազմերի ծախսերը, որոնք 2017 թվականին արտացոլված էին պետական բյուջեի ծախսերի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնում, 2018 թվականին միավորվել են նախարարությունների աշխատակազմերի ծախսերի հետ և արտացոլվել սույն դասում:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 2.1 մլն դրամ է տրամադրվել ՀՀ մշակույթի նախարարությանը՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 97.9%-ը:

Կրթություն

2018 թվականին *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 121.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.6% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և բարձրագույն մասնագիտական կրթության դասերի ծախսերի կատարողականով: 2017 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերը նվազել են 2.2%-ով կամ ավելի քան 2.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է տարրական ընդհանուր կրթության, հիմնական ընդհանուր կրթության, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության և բարձրագույն մասնագիտական կրթության գծով ծախսերի նվազմամբ:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից կրթությանը հատկացված միջոցներից 778.8 մլն դրամն ուղղվել է *նախադպրոցական կրթությանը*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.9% կատարողական և 7.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների և նախադպրոցական կրթության հաստատությունների թվի աճով: Ծրագիրն ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 72.8 մլրդ դրամ, որից 25.7 մլրդ դրամը կազմել են տարրական, 34.6 մլրդ դրամը՝ հիմնական, 12.6 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2018 թվականին գործել է 1383 դպրոց՝ միջին հաշվով 384.9 հազար աշակերտով՝ 2017 թվականի 1379 դպրոցի և 349.9 հազար աշակերտի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերը նվազել են 2.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրակրթական դպրոցների ոչ ուսուցչական անձնակազմի թվի նվազմամբ:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 380.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2%-ով կամ 7.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

Շուրջ 7.9 մլն դրամ է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ մնացել անփոփոխ:

2018 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով ավելի քան

2.6 մլրդ դրամ, որից 861.3 մլն դրամն (100%) ուղղվել է տարրական, 1.2 մլրդ դրամը (99.8%)՝ հիմնական, 526 մլն դրամը (100%)՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառների հատուկ կրթական հաստատություններին: 2017 թվականի համեմատ հատուկ կրթության ծախսերը նվազել են 12.9%-ով կամ 390.4 մլն դրամով՝ պայմանավորված համընդհանուր ներառական կրթության անցման գործընթացի շրջանակներում երկու հատուկ դպրոցներ մանկավարժահոգեբանական գնահատման տարածքային կենտրոնների վերակազմակերպելու հանգամանքով, որը և հանգեցրել է հատուկ կրթական հաստատությունների աշակերտների թվի նվազման:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման նպատակով ծախսվել է ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.3%-ը: Մասնավորապես՝ 82.5 մլն դրամն (100%) ուղղվել է տարրական, 969 մլն դրամը (100%)՝ հիմնական, 1.3 մլրդ դրամը (90.1%)՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառների կրթական հաստատություններին: 2018 թվականին համակարգում գործել է 6 դպրոց, աշակերտների միջին տարեկան թիվը կազմել է 2885՝ 2017 թվականի 2433-ի դիմաց: 2017 թվականի համեմատ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 25.5%-ով կամ 474.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանին հատկացվող միջոցները պաշտպանության բնագավառից կրթության բնագավառ տեղափոխելու հանգամանքով:

2018 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.3%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ, որից ավելի քան 1.3 մլրդ դրամը՝ տարրական, 1.7 մլրդ դրամը՝ հիմնական և 139.7 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է սովորողների թվի կրճատմամբ՝ կապված համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացի հետ:

Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է ՀՀ Շիրակի մարզի երեկոյան դպրոցը, որին հատկացվել է 15.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.9%-ով՝ պայմանավորված տվյալ ծրագրի շրջանակներում ոչ ուսուցչական անձնակազմի դրույքների թվի ավելացմամբ:

2018 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* խմբի ծախսերը կազմել են 10 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

Միջին մասնագիտական կրթության ծախսերը կազմել են 7.4 մլրդ դրամ կամ ծրագրի 97.9%-ը և 3.4%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ կամ 98.8% և 3.4%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 2.2 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 98.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.1%-ով: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում կրթություն ստացող ծառայողների փաստացի թվաքանակով՝ թերի համալրվածությամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 361.0 մլն դրամ կրթաթոշակ, որը կազմել է նախատեսված հատկացումների 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.9%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի աճով: 2018 թվականին կրթաթոշակ ստացող սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 6553՝ 2017 թվականի 6336-ի դիմաց:

2018 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում ավելի քան 6.7 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 654.2 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 98%-ով և 97.6%-ով: Միջին մասնագիտական կրթության ոլորտում ուսանողական նպաստների և ուսանողների կրթաթոշակների ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 3.2%-ով և 4.8%-ով՝ պայմանավորված սովորողների թվի աճով:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից 11.6 մլրդ դրամ տրամադրվել է *բարձրագույն կրթության* բնագավառին, որից 10.8 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 825.5 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 96.5%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 3.2%-ով կամ 384.2 մլն դրամով: Նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում արձանագրվել է բարձրագույն մասնագիտական կրթության և բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծրագրերում:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր: Դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները, որոնք օգտագործվել են 98.7%-ով՝ կազմելով ավելի քան 8.1 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է ուսանողների՝ սահմանվածից պակաս թվով ընդունելությամբ: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերը նվազել են 1.3%-ով՝ պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ արտոնություններ ունեցող ուսանողների հարաբերակցության փոփոխությամբ, ինչպես նաև մեկ ուսանողի հաշվով 2017 թվականին բյուջեով նախատեսված 632.3 հազար դրամի փոխարեն 2018 թվականին 616.4 հազար դրամ փոխհատուցման գումար սահմանելու հանգամանքով:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 862.1 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.4%-ով՝ հիմնականում պայմանավորված փոխարժեքի փոփոխությամբ, քանի որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ուսանողները սովորում են ԱՊՀ տարածքի ռազմական բուհերում, ինչպես նաև կրթաթոշակ ստացող գերազանցիկ ուսանողների և այլ ուսանողների հարաբերակցության փոփոխությամբ:

Ավելի քան 1.8 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 89.9%-ով և 10.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված բարձրագույն կրթություն ստացող՝ ՀՀ ոստիկանության ծառայողների թվի նվազմամբ:

2018 թվականին *հետբուհական մասնագիտական կրթության* բնագավառի ծախսերը կատարվել են 89.6%-ով՝ կազմելով 825.5 մլն դրամ, ընդ որում բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.1%-ով:

Ավելի քան 35.9 մլն դրամ տրամադրվել է հետբուհական մասնագիտական կրթության գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը նախատեսված է եղել օտար լեզվի և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայից նախապատրաստական դասընթացներ և տարբերակված ստուգումներ անցկացնելու համար: Նշված ծախսերը կատարվել են 75.1%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 16.5%-ով:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների վճարման համար 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 25.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրված հատկացումների 73.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 26.1%-ով: Շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված են ասպիրանտների և դոկտորանտների թվով: Այն 2018 թվականին կազմել է 205՝ 2017 թվականի 258-ի դիմաց:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերը 2018 թվականին կազմել են 545.7 մլն դրամ կամ ծրագրի 88%-ը: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերի կատարողականը պայմանավորված է սահմանվածից պակաս թվով ընդունելությամբ և օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների

կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվել է 19 ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 790, օրդինատորներինը՝ 242, ինտերնատուրայում սովորողներինը՝ 18, դոկտորանտներինը՝ 15: Բացի այդ, վերապատրաստվել են թվով 993 բժիշկ և բուժքույր, պետական պատվերի շրջանակներում սովորել է 82 մագիստրոս: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերը նվազել են 1.1%-ով՝ պայմանավորված ստացիոնար սովորող ասպիրանտների միջին տարեկան թվի նվազմամբ, որը 2018 թվականին կազմել է 290՝ 2017 թվականի 313-ի դիմաց:

2018 թվականին հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է շուրջ 218 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2%-ով՝ պայմանավորված ըստ մասնագիտությունների կրթաթոշակ ստացողների հարաբերակցության փոփոխությամբ (հայագիտություն մասնագիտությամբ ասպիրանտների կրթաթոշակը կազմում է 30000 դրամ, այլ մասնագիտությունների գծով՝ 20000 կամ 25000 դրամ):

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 5.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.4%-ը, որից 4.3 մլրդ դրամը կազմել են արտադպրոցական դաստիարակության, 1 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.4%-ով և 89.6%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում», «ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր» և «Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրերի կատարողականով: 2017 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը նվազել են 5.5%-ով կամ 311 մլն դրամով: Ընդ որում՝ 4%-ով նվազել են արտադպրոցական դաստիարակության, 11.2%-ով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2018 թվականի պետական բյուջեից հատկացված 9.3 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ք. Գորիսում անցկացվել են ՀՀ դպրոցականների շախմատի 12-րդ օլիմպիադայի 2-4-րդ փուլերը: Բացի այդ, ՀՀ պատվիրակությունը մասնակցել է դպրոցականների ԱՊՀ երկրների 6-րդ միջազգային մարզական փառատոնին՝ 2 մարզաձևերի (սեղանի թենիսի և բասկետբոլի) մրցումներում: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 51.2%-ով՝ պայմանավորված իրականացված միջոցառումների ծավալի նվազմամբ:

Ավելի քան 2.8 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.9% կատարողական: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 16.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.4.%-ով՝ պայմանավորված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ծավալի նվազմամբ:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 626.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված միջոցների հաշվին 3 հասարակական կազմակերպությունների 22 մանկապատանեկան մարզադպրոցներում մարզվել են 4864 մարզիկներ՝ 2017 թվականի 4 կազմակերպության և 5180 մարզիկի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.3%-ով:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով ՀՀ մարզպետարաններին 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 408.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 12.3%-ով՝ հիմնականում պայմանավորված մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափի նվազեցմամբ: 2018 թվականին վարձավճարի փոխհատուցման չափը կազմել է 19448 դրամ՝ 2017 թվականի 22228 դրամի դիմաց:

Արտադպրոցական դաստիարակության գծով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում նախատեսված շուրջ 205 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքում գործող երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 6.7%-ով՝ պայմանավորված, ինչպես նշվել է, մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափի նվազեցմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է 72.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների 9295 մանկավարժների և սովորողների ցուցաբերել է մեթոդական օգնություն և դասալսում՝ նախատեսված 6580-ի և 2017 թվականի 8923-ի դիմաց: Նշված միջոցները նախորդ տարվա համեմատ նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

2018 թվականի պետական բյուջեով երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակման և հրատարակման համար նախատեսված 13 մլն

դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին տպագրվել են 15 անուն դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 20-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.3%-ով՝ պայմանավորված հրատարակված գրականության քանակով, ինչպես նաև օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է ավելի քան 35.8 մլն դրամ, որը ևս ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված իրականացված միջոցառումների քանակի նվազմամբ: Ծրագիրն իրականացվել է «Երևանի առագաստային ակումբ» հասարակական կազմակերպության կողմից:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման ծախսերը 2018 թվականին կազմել են ավելի քան 4.4 մլն դրամ կամ նախատեսվածի 61.3%-ը, որը պայմանավորված է վերապատրաստվող մարզիչներին վճարվող օրապահիկի և գիշերակացի ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.8%-ով՝ պայմանավորված մարզերից վերապատրաստվող մարզիչների թվի նվազմամբ: 2018 թվականին վերապատրաստվել են 173 մարզիչ-մանկավարժներ՝ 2017 թվականի 185-ի դիմաց:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 7.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված օպտիմալացման ուղղված աշխատանքներով:

Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրերի իրականացմանն աջակցության նպատակով 2018 թվականին տրամադրվել է 36.9 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 131.2%-ով՝ պայմանավորված իրավախախտում կատարած անձանց հատուկ ստեղծագործական կենտրոնում դասավանդվող մասնագիտական խմբերի քանակով. 2018 թվականին այն կազմել է 22՝ 2017 թվականի 9-ի դիմաց:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 9.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 62.8%-ը, որը պայմանավորված է հիմնականում գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև երաժշտական գործիքները չմատակարարելու պատճառով «ՄԱԴԵԼ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ պայմանագրի լուծմամբ: Ծրագրի շրջանակներում երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել 23 անուն 93 երաժշտական գործիք՝ նախատեսված 24 անուն 97 գործիքի և 2017 թվականի 13 անուն 98 գործիքի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.2%-ով, որը պայմանավորված է ձեռք բերված գործիքների տեսակով և քանակով:

2018 թվականին շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանն աջակցության նպատակով նախատեսված 14.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներ 2018 թվականին մասնակցել են 50 հանրապետական և միջազգային նախագծերի՝ մրցույթների, փառատոների, մենահամերգների, վարպետության դասերի և այլ նպատակային ծրագրերի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված օպտիմալացմանն ուղղված աշխատանքներով:

Ավելի քան 27.9 մլն դրամ են կազմել ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացման ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 71%-ով և 78.5%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ծրագրի դադարեցմամբ:

2018 թվականին պետական բյուջեից ավելի քան 1 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 89.6% կատարողական և 11.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, ընդ որում, գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ:

Շուրջ 4.8 մլն դրամ են կազմել ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի, որոնք կատարվել են 14.2%-ով և 79.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքով քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեության դադարեցմամբ, ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված հայտերի քանակով, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների տևողությամբ՝ 2018 թվականին նախատեսվել է 72 ժամի փոխարեն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով սահմանվել է 8-36 ժամ և փաստացի իրականացվել է 16 ժամ: 2018 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 1857 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 1779-ի դիմաց:

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է ավելի քան 11.1 մլն դրամ՝ ապահովելով 32.4% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է փաստացի վերապատրաստված գնումների համակարգողների և հանրային հատվածի ներքին աուդիտորների թվով, որը կազմել է

համապատասխանաբար 225 և 240՝ նախատեսված 883-ի և 300-ի դիմաց: Ծրագիրը գործում է 2018 թվականից:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է շուրջ 17.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցները հատկացվել են ՀՀ դատախազությանը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է փորձաքննությունների նշանակման մասնագիտական վերապատրաստման 27 դասընթաց, մասնակիցների քանակը կազմել է 360՝ նախորդ տարվա 26 դասընթացի և 362 մասնակցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով՝ հիմնականում պայմանավորված դասընթացներում ընդգրկված թեմաների քանակի նվազմամբ, որը 2018 թվականին կազմել է 77՝ 2017 թվականի 128-ի դիմաց:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 304.6 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: 2018 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների քանակը կազմել է 2453՝ 2017 թվականի 2525-ի դիմաց: 2018 թվականին մեկ դասընթացի տևողությունը կազմել է 72 ակադեմիական ժամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.4%-ով կամ 10.9 մլն դրամով: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է վերապատրաստման և հատուկ ուսուցման մեկ ակադեմիական ժամի համար սահմանված արժեքի նվազմամբ, ինչպես նաև վերապատրաստված և հատուկ ուսուցում ստացած ծառայողների թվի նվազմամբ: 2018 թվականին այն կազմել է 2453՝ 2017 թվականի 2525-ի դիմաց:

Շուրջ 48.3 մլն դրամ են կազմել ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը, որոնք կատարվել են 55.9%-ով և 18.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է մասնագիտական դասընթացների համար դիմած քաղաքացիների փաստացի թվով, ինչպես նաև այն հանգամանքով, որ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման համար կազմակերպվող դասընթացների ծախսերը մասնակիորեն փոխհատուցվել են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի կողմից:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 113.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով կամ 6.5 մլն դրամով՝ պայմանավորված ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերի նվազմամբ:

2018 թվականին օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են 9.8 մլն դրամ կամ նախատեսվածի 73.4%-ը: Ծրագրից շեղումը, պայմանավորված է չորս ունկնդրի կողմից ճանապարհածախսի

ֆինանսավորման համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերը չներկայացնելու հանգամանքով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.5%-ով: Միջոցներն ուղղվել են ՌԴ ԱԻՆ Քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված ունկնդիրների ճանապարհածախսի և կրթաթոշակի ծախսերի փոխհատուցմանը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով հաշվետու տարում տրամադրվել է 648 հազար դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2018 թվականին վերապատրաստվել է 62 պետական ծառայող՝ 2017 թվականի 30-ի դիմաց, որով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9 անգամ:

Ավելի քան 291.0 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին, որը կատարվել է 98.3%-ով և 5.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների և համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ծախսերով: Մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների վերապատրաստման ծախսերը կազմել են 14.7 մլն դրամ կամ նախատեսվածի 81.3%-ը՝ պայմանավորված ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով վերապատրաստման ժամերի կրճատմամբ: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ վերապատրաստման գծով ծառայությունների ծախսերը կազմել են 3.3 մլն դրամ կամ նախատեսվածի 68.2%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում վերապատրաստվել է 346 անձ, որից 148-ը՝ համայնքային ծառայողներ, 198-ը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝ 2017 թվականի 278 համայնքային ծառայողների դիմաց: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է համայնքների խոշորացման գործընթացով: Նախորդ տարվա համեմատ վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի նվազումը պայմանավորված է նաև գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև 2018 թվականին մի շարք գիտաժողովների, մասնագիտական գրականության ձեռքբերման նպատակով ծախսեր չնախատեսելու հանգամանքով:

Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրման նպատակով օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 75.7%-ը՝ 19.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին մասնագիտական վերապատրաստում է անցել դատավորի և

դատախազի թեկնածությունների ցուցակում ընդգրկված 22 անձ՝ նախատեսված և նախորդ տարվա 36-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 59.3%-ով: Ծախսերի նվազումը նաև պայմանավորված է ՀՀ «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ, որի համաձայն 2018 թվականին ունկնդիրները մասնագիտական պատրաստման ընթացքում ստանում են ընդհանուր իրավասության դատարանի նիստերի քարտուղարի վարձատրությանը համապատասխան կրթաթոշակ, այն դեպքում, երբ 2017 թվականին ստացել են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի վարձատրությանը համապատասխան կրթաթոշակ:

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է ավելի քան 217.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վերապատրաստում են անցել 2197 հարկային և մաքսային ծառայողներ՝ 2017 թվականի 2020-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 18.5%-ով կամ 49.4 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ «ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Միկա» մարզական համալիրը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը հանձնելու հանգամանքով, քանի որ ծրագրի շրջանակներում 2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում ֆինանսավորվել են նաև ուսումնական կենտրոնի մարզական համալիրի աշխատակիցների վարձատրության և համալիրի պահպանման ծախսերը:

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 3.3 մլն դրամ՝ ապահովելով 64% կատարողական: 2018 թվականին վերապատրաստվել է 32 անձ՝ նախատեսված 50-ի և նախորդ տարվա 37-ի դիմաց: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ 18.4%-ով նվազումը պայմանավորված է վերապատրաստման մեկ ակադեմիական ժամի համար սահմանված արժեքի, ինչպես նաև վերապատրաստվողների թվի նվազմամբ:

Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման ծրագրի շրջանակներում նախատեսված 5.1 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ նախատեսված աշխատանքների կատարման և գործառույթների իրականացման իրավասությունը վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որը 2018 թվականին չի ձևավորվել:

2018 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 9.4%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կատարվել են 85.4%-ով և կազմել 11.5 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման, Ասիական

զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության և մարզական օբյեկտների շինարարության ծրագրերի կատարողականով: 2017 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերն աճել են 2%-ով՝ հիմնականում պայմանավորված կրթական օբյեկտների հիմնանորոգման և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գծով ծախսերի աճով:

2018 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են 33.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վերապատրաստվել են 16 երկրի 57 ուսուցիչ՝ նախորդ տարվա 53 մասնակցի (47 ուսուցիչ և 6 օտարերկրացի ուսանող) դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7%-ով, որը հիմնականում պայմանավորված է կազմակերպչական ծախսերի կրճատմամբ, մասնավորապես՝ կրճատվել են էքսկուրսիաների թիվը և հեռավորությունը, ինչպես նաև կեցության տևողությունը:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 96.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալների ճշգրտմամբ, ինչպես նաև Երևանի թիվ 50 և թիվ 157 դպրոցների վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների պայմանագրերի միակողմանի լուծմամբ՝ ոչ պատշաճ կատարման հիմքով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել են 14 օբյեկտներ՝ 2017 թվականի 22-ի դիմաց: Ավարտվել են Երևանի հենաշարժային համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի, Երևանի թիվ 91 դպրոցի, ՀՀ Արագածոտնի մարզի գ. Արագածի թիվ 1 դպրոցի, ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 250 մլն դրամ՝ 86%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 22.11.2018թ. N 1340-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 13.12.2018թ.) ՀՀ Լոռու մարզի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի «Միջին մասնագիտական ծրագիր» քոլեջի և «Ստեփանավանի պրոֆ. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսվել էր հատկացնել 40.5 մլն դրամ, սակայն ժամկետների սղության պատճառով գնման պայմանագրեր չեն կնքվել: Ծրագրի շրջանակներում ամբողջությամբ կատարվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի և Գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքները:

Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կազմել են 26.9 մլն դրամ՝ 89.5%-ով ապահովելով ծրագիրը և 16.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի կատարողականը, ինչպես նաև ծախսերի նվազումը պայմանավորված են բնակիչների փաստացի թվով, որը կազմել է 170՝ նախատեսված և նախորդ տարվա 204-ի դիմաց:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 75.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 91.4%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզի ք. Դիլիջանի թիվ 5 դպրոցի մարզադահլիճի կառուցման նախագծահետազոտական աշխատանքները: Ծրագրից շեղումը պայմանավորված է ՀՀ Արարատի մարզի գ. Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների պայմանագրի միակողմանի լուծմամբ՝ ոչ պատշաճ կատարման հիմքով:

2018 թվականին 275.3 մլն դրամ է հատկացվել կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 63.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի, ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի պայմանագրի միակողմանի լուծմամբ, ինչպես նաև ծավալների ճշգրտման արդյունքում առաջացած տնտեսմամբ:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է ավելի քան 479.9 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: 2018 թվականին, ինչպես և նախորդ տարի, ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 4800 երեխայի ամառային հանգիստը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 175.3 մլն դրամ՝ 97%-ով ապահովելով ծրագիրը և 38.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է ձեռք բերված որոշ փաստաթղթերի և պարագաների քանակի ու գների տարբերությամբ, ինչպես նաև նրանով, որ 12 անվանում մանկավարժական պարբերականների մասով գնման գործընթացը չի կայացել մասնակիցների բացակայության պատճառով: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել 51631 հատ ավարտական

փաստաթղթեր, 23150 հատ դասամատյաններ, 207 հատ մեդալներ, 52900 հատ գովասանագրեր և 6 անուն ուսումնադիտողական պարագաներ:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ծրագրի շրջանակներում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից կատարվել են 807.3 մլն դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 3%-ով՝ պայմանավորված ձեռք բերվող դասագրքերի և ուսումնական գրականության քանակների ու գների տարբերությամբ:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով տրամադրվել է 42.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 96.9%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գումարը նախատեսվել է ուսուցիչների պլանային թվին համապատասխան ամբողջ տարվա համար, սակայն որոշ գործուղված մանկավարժներ որոշ ժամանակ աշխատելուց հետո ազատվել են աշխատանքից կամ գտնվել են երեխայի խնամքի արձակուրդում, հետևաբար գործուղման գումարը համապատասխան մարզպետարանի կողմից չի վճարվել: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը 2018 թվականին կազմել է 245՝ նախատեսված և նախորդ տարվա 237-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով կամ 1.9 մլն դրամով՝ պայմանավորված գործուղված մանկավարժների թվի աճով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 73.5 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության ութ մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.4%-ով:

Ռազմագիտության կաբինետներն ուսումնաօժանդակ նյութերով ապահովելու նպատակով նախատեսվել էր 14.2 մլն դրամ, որը չի օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ ապրանքատեսակների մասով գնման գործընթացը չի կայացել պահանջարկի և տեխնիկական բնութագրերի հստակեցման ձգձգվելու և, որպես հետևանք, գնման հայտերի ուշ կազմման պատճառով:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 32.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին անց են կացվել դպրոցականների հանրապետական խաղերը՝ 8 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով, որոնց մասնակցել է 2571 դպրոցական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7%-ով, որը պայմանավորված է միջոցառման ծավալների փոփոխությամբ:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 60.2 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2018 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել են 1600 աշակերտներ: Հանրապետական փուլերի հաղթող լավագույն դպրոցականները մասնակցել են 7 միջազգային օլիմպիադաների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 175.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.8%-ով, որը պայմանավորված է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործարկմամբ և սպասարկմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի՝ թվով 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող կրթական ցանցի ընթացիկ սպասարկումը և ամենօրյա հսկողությունը: Շահագործվել է շարժական ինտերնետային-համակարգչային կայանը՝ կազմակերպվել են դասընթացներ, շահագործվել և հարստացվել է www.armedu.am «Հայկական կրթական միջավայր» պորտալը և մի շարք այլ պորտալներ: «Պաշարների շտեմարան» կայքում տեղադրվել են ուսումնամեթոդական էլեկտրոնային նյութեր: «Հեռավար ուսուցում» համակարգում կազմակերպվել են դասընթացներ:

Հաշվետու տարվա ընթացքում 371.3 մլն դրամ հատկացվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 5.2%-ով՝ պայմանավորված հանրակրթական հաստատությունների շրջանավարտների թվի նվազմամբ: 2018 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպում, մրցույթի անցկացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում արտաքին ընթացիկ գնահատումների իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- սովորողների գիտելիքների ստուգման ազգային ստուգատեսի կազմակերպում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- էքստեռն քննությունների թեստերի մշակում ու տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը,
- միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնող շրջանավարտների քննական թեստերի մշակում ու տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

● «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակներում քննական թեստերի մշակում և քննությունների կազմակերպում,

● TIMSS միջազգային ստուգատեսի փորձնական փուլի անցկացում:

Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը հատկացված 117 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2018 թվականին կազմել է շուրջ 7 հազար՝ 2017 թվականի 10 հազարի դիմաց, որով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7%-ով: Ծրագրի շրջանակներում ընթացել են աշխատանքներ վեց հիմնական ուղղություններով՝

● հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման և տարածման բաց համակարգ. 1-3-րդ, 4-5-րդ, 6-9-րդ, 10-12-րդ դասարանների ուսումնական պլանների մշակում, 9-12-րդ դասարանցիների մասնագիտական կողմնորոշման բաց նախագծեր և այլն,

● աջակցություն մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման, հեղինակային կրթական ծրագրի տարածման բաց համակարգին. կազմակերպվել են մանկավարժական աշխատողների բաց դպրոցների գործունեություն, հեղինակային կրթական ծրագրերի տարածման տեսադասեր, ուսուցիչների և սովորողների կլոր սեղանների կազմակերպում. մանկավարժական փորձի փոխանցման, ստեղծագործական հավաքներ տարբեր կրթական հաստատություններում, մանկավարժական նորարարության ճամբարի գործունեություն և այլն,

● անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ. սովորողների նախասիրությունների զարգացման բաց ակումբների, ակումբային բլոգների աշխատանքներ, առարկայական ամենամսյա ֆլեշմոբեր, մասնակցություններ միջազգային ճամբարային նախագծերին, համերգների, ցուցադրությունների, պլեներների, մրցաշարերի, ստեղծագործական բաց հավաքների կազմակերպում,

● «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացում. երաժշտության, պարի, կերպարվեստի և տեխնոլոգիայի, օտար լեզուների, մարզական, շախմատի, ուսումնական ագարակ, մեդիագրադարան, լրացուցիչ կրթության ծրագրերի, սովորողների նախասիրությունների զարգացման ուսումնական բաց նախագծերի կազմակերպում, համերգների, մրցույթների կազմակերպում, սպորտային խմբակների գործունեություն և այլն,

● «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կրտսեր դպրոցների, քոլեջի կազմում գործող նախակրթարանների տարբեր տարիքային խմբերի երեխաների ուսուցման շաբաթական աշխատանքային նախագծեր.

● հեղինակային, կրթական ծրագրեր մշակող, իրականացնող և տարածող կրթահամալիրին աջակցություն. Մանկավարժության լաբորատորիայի, ուսումնական կենտրոնների, այդ թվում՝

գրադարանի գործունեություն, ձայնադարանի, ֆիլմադարանի գործունեություն, ռադիոհաղորդումներ, «Դպիր» ամսագրի հրատարակում:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման ու տրամադրման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 92.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի նպատակներն են՝ աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուծացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը, նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը: Ծրագրով բավարարվել են աշխարհի ավելի քան 40 երկրների 371 կրթօջախների հայտեր, տրամադրվել են 87500 կտոր ուսումնական գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.1%-ով՝ պայմանավորված էլեկտրոնային ուսուցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի նվազմամբ և մրցույթում ներկայացված գնային առաջարկով:

2018 թվականին ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից հատկացվել է 47.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1011, որից տրամադրվել է 794 գրավոր խորհրդատվություն (այդ թվում՝ տրամադրվել է 577 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին) և 217 խորհրդատվական տեղեկանք: Բացահայտվել է կրթական փաստաթղթերի կեղծման հինգ դեպք, որից երեքը՝ Հայաստանի Հանրապետությունում, մեկը՝ ՌԴ-ում, մեկը՝ Սիրիայում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5 մլն դրամով կամ 11.8%-ով՝ պայմանավորված Բոլոնիայի գործընթացի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով թվով երկու անձանց աշխատանքներում ներառելու հանգամանքով:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների նպատակով հաշվետու տարում ծախսվել է 27.9 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբում աշխատանքային և խորհրդատվական խմբերում ՀՀ մասնակցությունների թիվը կազմել է 13, Ֆրանսիայում Բոլոնիայի քարտուղարության միջազգային անձնակազմի Հայաստանի ներկայացուցիչ մասնագետ-փորձագետի մասնակցության թիվը՝ 5, իրականացվել են «Բարձրագույն կրթության մասին» («Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին») ՀՀ օրենքի նախագծի լրամշակման և/կամ փորձագիտական եզրակացության ներկայացնելու աշխատանքներ, ինչպես նաև տվյալների հավաքագրում, վերլուծում. Հետազոտությունների

իրականացում, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ազգային զեկույցի պատրաստում: Նախորդ տարվա համեմատ բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների գծով ծախսերն աճել են 21.3%-ով, ինչը պայմանավորված է նախատեսված միջոցառումների և գործուղումների քանակի աճով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 24.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքները:

Հաշվետու տարում պետական բյուջեից 443.3 մլն դրամ է հատկացվել կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը 2018 թվականին կազմել է 10530: Ծրագրի շրջանակներում նաև փորձաքննություն են անցել դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, ծրագրեր և այլ ուսումնական գրականություն՝ 118924 էջ ծավալով: Կազմակերպվել են սեմինարներ կրթական տարբեր թեմաների վերաբերյալ: Իրականացվել է խորհրդատվություն, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցներ, ընդհանուր առմամբ՝ 32 հատ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7%-ով՝ պայմանավորված փորձաքննություն անցած դասագրքերի, ձեռնարկների, ուսումնամեթոդական նյութերի, ծրագրերի և այլ ուսումնական գրականության թվի նվազմամբ:

2018 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների ուղղությամբ կատարվել են 154.7 մլն դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 7%-ով զիջելով 2017 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է 2018 թվականին նախատեսված աշխատանքների և դրանց ծավալների փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում մշակվել է պետական կրթական 24 չափորոշիչ, մշակված չափորոշիչների համապատասխան մշակվել է 24 ուսումնական և մոդուլային ուսումնական ծրագիր, կատարվել են այլ աշխատանքներ: նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունների վերապատրաստում անցած ղեկավարների, մանկավարժների, փորձագետների և աշխատողների թիվը կազմել է 465, վերապատրաստման դասընթացներին մասնակցած անձանցից հավաստագիր ստացած մանկավարժների և փորձագիտական դրական եզրակացություն ստացած կրթական պետական մասնագիտական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի տեսակարար կշիռը կազմել է 100%, մեկ մասնագետի վերապատրաստման ժամերի քանակը՝ 18:

2018 թվականին ավել քան 64.3 մլն դրամ է հատկացվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը կատարում է մասնագիտական կրթության ոլորտի ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մասնագիտական ուսումնական հաստատության և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման արդյունքների և դրանց հիման վրա մասնագիտական հաստատությունների վարկանիշային ցուցանիշների հրապարակման գծով ծախսերը 2018 թվականին չեն նախատեսվել:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման ծախսերը կազմել են 897.2 մլն դրամ՝ 87.7%-ով ապահովելով ծրագիրը և 39.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ մարզերում նշված նպատակով ծախսերը կատարվել են հանրակրթության ծրագրերում նախատեսված միջոցների հաշվին:

2018 թվականին Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացման ծախսերը կազմել են 11.4 մլն դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: Խորհրդաժողովի մասնակիցների թիվը կազմել է 120՝ նախատեսված 150-ի փոխարեն: Ծրագիրն անցկացվում է երկու տարին մեկ անգամ:

2018 թվականին ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են 3.2 մլն դրամ կամ ծրագրի 80.8%-ը, որը պայմանավորված է ուսուցիչների ատեստավորման նպատակով իրականացվող գործուղումների, ինչպես նաև ձեռք բերվող գրենական պիտույքների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: 2018 թվականին ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ, շնորհվել է 411 տարակարգ, որից առաջին աստիճան՝ 393 ուսուցչի, 2-րդ աստիճան՝ 18 ուսուցչի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ուսուցիչների ատեստավորման նպատակով իրականացվող գործուղումների քանակի նվազմամբ:

2018 թվականին «Հայրենյաց ասպետներ» հայրենասիրական կրթադաստիարակչական ծրագրին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 64.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների 1056 աշակերտներ, ինչպես և 2017 թվականին: Իրականացվել են ազգային տոների համատեղ անցկացման ծրագրեր, հեռուստամրցույթին մասնակցող թիմերի աշակերտների հետ կազմակերպվել են հավաքներ: Իրականացվել է բանակային «Հայ ասպետ» հեռուստանախագիծը, որին մասնակցել է 41 զորամասի 248 զինվոր՝ 2017 թվականի 44 զորամասի 220 զինվորի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 5.9%-ով՝ պայմանավորված զորամասեր այցելությունների հետ կապված գործուղումների ծախսերի նվազմամբ:

Շուրջ 47.3 մլն դրամ են կազմել արտասահմանում սովորող ուսանողներին աջակցության ծախսերը, որոնք կատարվել են 50%-ով և 52.7%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է վճարման համար պահանջ չներկայացնելու հանգամանքով, ինչը հանդիսանում է նաև քաղաքական որոշում: Ծրագիրն իրականացվել է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից: 2018 թվականին «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի խորհուրդը որոշում է կայացրել անցում կատարել գործելու և համաստեղծելու փուլին՝ Հիմնադրամի ներքո ստեղծելով հետազոտությունների կենտրոն, որի միջոցով կգնահատվեն «Լույսի» շահառուների գիտելիքները, հմտությունները, փորձառություններն ու կապերը, կիրականացվեն ծրագրեր:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է ավել քան 201.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս ատեստավորված ուսուցիչների թվով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 32.9%-ով, ինչը պայմանավորված է տարակարգ ստացած ուսուցիչների թվի աճով: 2018 թվականին տարակարգի համար հավելավճար է ստացել 697 ուսուցիչ՝ 2017 թվականի 583-ի դիմաց:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով նախատեսվել է 45.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.4 մլն դրամով կամ 7.0%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2018 թվականին «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում ֆինանսական միջոցներ են տրամադրվել նաև ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից՝ պարենամթերքի տրանսպորտային փոխադրումներն իրականացնելու նպատակով:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 1.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս անցկացրել է հայոց լեզվի դասընթաց Բուխարեստի համալսարանում, դասախոսի կողմից մշակվել է հայերենի դասագիրք ռումինախոսների համար: Հայերենի՝ իբրև օտար լեզվի տարածման նպատակով պատրաստվել է առցանց դասընթաց: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 50%-ով՝ պայմանավորված 2018 թվականի առաջին կիսամյակում Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի մասնագետի բացակայությամբ:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ, որնը ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում՝ Զալցբուրգի համալսարանում, Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժնում: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 75.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին մատուցվել են կրթաբուժական ծառայություններ թվով 68 երեխաների՝ բյուջեով նախատեսված և նախորդ տարվա 65-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատակիցների դրույքաչափերի նվազմամբ:

2018 թվականին «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով տրամադրվել է 58.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 96.9% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ սուբսիդավորումն իրականացվել է վարկավորում իրականացնող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.9%-ով՝ պայմանավորված շահառուների թվի աճով:

Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ծրագրի շրջանակներում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից կատարվել են 721.2 հազար դրամ ծախսեր՝ 99.9%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Անվճար դասագրքերը բաշխվել են Երևան քաղաքի դպրոցների 5-12-րդ դասարանների աշակերտներին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.7%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 67.3%-ը: Շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- 2018 թվականին ֆինանսավորման ենթակա միկրոծրագրերի թիվը կազմել է 21, սակայն պայմանագրեր ստորագրել են 17 հաստատություններ՝ հաստատությունների կողմից պարտադիր համաֆինանսավորման պահանջի կատարման անհնարինության պատճառով.
- Լրամշակված առարկայական չափորոշիչների և ծրագրերի նախնական տարբերակներով ուսումնական բնագավառների թիվը նախատեսվել է 9, սակայն նշված գործողությունը չի իրականացվել՝ պայմանավորված մրցութային փաթեթում ներառված առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման գործընթացի տեխնիկական առաջադրանքը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համաձայնեցնելու գործընթացով: Նշված գործողությունը տեղափոխվել է 2019 թվական.
- Ծրագրի երկրորդ փուլով նախատեսված յոթ ավագ դպրոցների հիմնանորոգման նպատակով մրցութային գործընթացը մեկնարկելուց առաջ անհրաժեշտ էր հիմնանորոգվող ավագ դպրոցների ցանկի համաձայնեցում ՀՀ ԿԳ նախարարության հետ: 2018 թվականի օգոստոսի 15-ին

ավագ դպրոցների ցանկը համաձայնեցվել է ՀՀ ԿԳ նախարարության հետ: Երկրորդ փուլով հիմնանորոգման ենթակա դպրոցներն են՝ Գյումրի քաղաքի ակադեմիական վարժարան, Երևանի ՀՊՄՀ հենակետային վարժարան, Արթիկի N3, Սևանի, Գորիսի N1, Երևանի N42 և N142 ավագ դպրոցները: Կազմվել կապալառու կազմակերպությունների ընտրության մրցութային փաթեթը: Մրցութային ամբողջական փաթեթը, ներառյալ խորհրդատուների կողմից մշակված բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները, ներկայացվել են Համաշխարհային բանկի հաստատմանը 2018 թվականի դեկտեմբերի 11-ին: Դպրոցների հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը նախատեսվել է 2019 թվականին:

2018 թվականին նշված վարկային ծրագրի շրջանակներում հիմնվել է 17 նախակրթարան՝ շուրջ 425 երեխայի ընդգրկմամբ, այդ թվում՝ ՀՀ Վայոց Ձորի մարզում՝ 3, ՀՀ Լոռու մարզում՝ 4, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 1, Երևանում՝ 9 նախակրթարան: Վարկային ծրագրի շրջանակներում ուսումնասիրված և ընտրված անհետաձգելի հիմնանորոգման կարիք ունեցող թվով 20 ավագ դպրոցներից 5-ում սկսվել և իրականացվել են հիմնանորոգման աշխատանքները, դպրոցները հանձնվել են շահագործման: 2018 թվականի ընթացքում ավարտվել են «Կրթության բարելավում» վարկային ծրագրի 2-րդ փուլով նախատեսված 12 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման աշխատանքները:

«Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միությանն աջակցության նպատակով օգտագործվել է 18.6 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: 2018 թվականի ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքներին մասնակցել են հանրակրթական դպրոցների տնօրեններն ու աշակերտները: Կազմակերպվել են տարբեր ցուցահանդեսներ, մրցույթներ, միջոցառումներ և այլն: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7%-ով՝ պայմանավորված իրականացված միջոցառումների քանակով: 2018 թվականին կազմակերպված միջոցառումների թիվը կազմել է 5՝ 2017 թվականի 6-ի դիմաց:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման գծով նախատեսված 7.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին վերապատրաստվել են դպրոցների 100 ուսուցիչներ՝ 2017 թվականի 175-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7%-ով՝ պայմանավորված վերապատրաստվող ուսուցիչների թվի նվազմամբ: Ընդ որում, հարկ է նշել, որ որոշ ծախսեր իրականացվել են «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի միջոցներով:

Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման գծով նախատեսված 126.9 մլն դրամը ևս ամբողջությամբ օգտագործվել է: 2018 թվականին դպրոցներում ռոբոտաշինության խմբակների

թիվը կազմել է 235՝ 2017 թվականի 220-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 5.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և պատմության դասավանդում Պրահայի Կարլովի համալսարանում: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 360.8 մլն դրամ՝ 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 45.9%-ով՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Այբ» կրթական հիմնադրամի միջև կնքված պայմանագրի լուծմամբ: Պայմանագրի լուծումը կապված է իրականացվող միջոցառումների նկատմամբ մոտեցումների հստակեցման (հնարավոր վերաիմաստավորման) անհրաժեշտությամբ, որի նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ համապատասխան փորձագետների ներգրավմամբ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.0 մլրդ դրամ կամ նախատեսվածի 73.2%-ը և 7.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը և նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի դպրոցի շինարարության ժամանակավորապես դադարեցմամբ՝ դպրոցի տարածքում հնագիտական գտածոների հայտնաբերման հետ կապված, ինչպես նաև սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի դպրոցների ցանկի ուշ հաստատման արդյունքում նախագծահետազոտական աշխատանքների հետաձգմամբ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից 2015 թվականից և շարունակվելու է մինչև 2024 թվականի ավարտը: Ծրագիրը կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, նվազեցնելով դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները տարերային աղետների ժամանակ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի (ՍԱԲԾ) շրջանակներում նախանշված առնվազն 47 դպրոցների շենքերի շինարարության, ամրացման և հիմնանորոգման աշխատանքներ: Կմշակվի արտակարգ իրավիճակներին արձագանքման գործողությունների ծրագիր ՍԱԲԾ շրջանակում ամրացված կամ հիմնանորոգված յուրաքանչյուր դպրոցի համար: Կտրամադրվեն սարքավորումներ սեյսմիկ մոնիտորինգի 15 համալիր դիտակետերն արդիականացնելու նպատակով: Բացի այդ, ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՀՏԶՀ գրասենյակի գործառնական ծախսերը: 2018 թվականին շարունակվել են շինարարական

աշխատանքները Հայաստանի Հանրապետության 6 դպրոցներում (2 դպրոց՝ Երևանում, 1-ական դպրոց՝ Արմավիրում, Գեղարքունիքում, Լոռիում և Սյունիքում):

Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 11.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և գրականության դասավանդում նշված համալսարանում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրման գծով պետության կողմից Երևան համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով տրամադրվել է 34.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 89% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ատեստավորված ուսուցիչների՝ նախատեսվածից պակաս թվով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 39.6%-ով՝ պայմանավորված տարակարգ ստացած ուսուցիչների թվի աճով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակման և ձեռքբերման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1 մլն դրամ կամ նախատեսվածի 6.7%-ը և 93.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակում ձեռք են բերվել միայն 2000 հատ բրայլյան տետրեր, իսկ ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկների, ինչպես նաև զարգացնող-ուսումնական նյութերի գնման գործընթացը չի կայացել՝ գնման գործընթացի մասնակիցների բացակայության պատճառով:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ծախսերը կազմել են 797.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 59.1%-ով՝ պայմանավորված նրանով, որ ծրագիրը ենթարկվել է բովանդակային և ծավալային փոփոխության համընդհանուր ներառական կրթության անցման հետևանքով: 2018 թվականին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կենտրոնների թիվը դարձել է 9՝ 2017 թվականի 8-ի փոխարեն: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաների թիվը կազմել է 3771: 2018 թվականին գնահատվել է 4847 երեխա՝ 2017 թվականի 3459 երեխայի դիմաց:

«Դասարան» ուսումնատեղեկատվական ծրագրի իրականացմանն աջակցության նպատակով նախատեսված 90 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակում ապահովվել են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների էլեկտրոնային մատյանի, էլեկտրոնային օրագրի, տնօրենների էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական բնականոն աշխատանքները, ստեղծվել է դպրոցներում թափուր հաստիքների հայտարարությունների

միասնական առցանց համակարգը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների 5-12-րդ դասարանների աշակերտների դասագրքերի գումարների փոխհատուցման ծախսերը կազմել են 28 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը: Ծրագրում ընդգրկված սահմանամերձ համայնքների թիվը կազմել է 46, իսկ այդ համայնքների 5-12 դասարանների սովորողների թիվը՝ 4879: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից:

«Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.6 մլն դրամ կամ նախատեսվածի 52.2%-ը: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում բոլորի համար, ներառական, համապատասխան և որակյալ կրթության ապահովմանը: Ակնկալվում է, որ տվյալ բարեփոխման արդյունքում կդադարեցվի երեխաների հոսքը խնամքի և հատուկ կրթական կենտրոնացված շուրջօրյա հաստատություններ, երեխաները կվերաինտեգրվեն ընտանեկան միջավայրում, և կձևավորվեն այլընտրանքային ընտանեկան և համայնքահեն սոցիալական ու կրթական ծառայություններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար: Ծրագրի իրականացման տարիներին նախատեսվում է առնվազն հինգ մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում: 2018 թվականին ծրագրի շրջանակներում մշակվել է ՀՀ Սյունիքի մարզում ծրագրի իրականացման ճանապարհային քարտեզը, աշխատանքներ են իրականացվել ՀՀ Սյունիքի մարզում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և 11 դպրոցների վերանորոգման նախագծանախահաշվային փաթեթների պատրաստման ուղղությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականից:

Այլ դասերին չպատկանող կրթության դասի շրջանակներում իրականացվել են 2 ծրագրեր, որոնց ծախսերն ընդհանուր առմամբ կատարվել են 98.4%-ով՝ կազմելով 1.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.9%-ով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրվել է ավելի քան 987.9 մլն դրամ կամ ծրագրի 98.4%-ը, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին՝ 158.5 մլն դրամ կամ ծրագրի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի աշխատակազմի ծախսերը, որոնք 2017 թվականին արտացոլված էին պետական բյուջեի ծախսերի՝

«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնում, 2018 թվականին միավորվել են նախարարության աշխատակազմի ծախսերի հետ և արտացոլվել սույն դասում:

Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրվել է 4.9 մլն դրամ կամ ծրագրի 98.3%-ը: Ծրագրի արդյունքում ձեռք է բերվել թվով 12 համակարգիչ և 12 տպիչ սարք:

Սոցիալական պաշտպանություն

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 28.8%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են շուրջ 416.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: 2017 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 1.9%-ով կամ 7.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 982 մլն դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 80.1% կատարողական: Նշված ծախսերը 2017 թվականի համեմատ նվազել են 16.4%-ով՝ հիմնականում պայմանավորված անաշխատունակության դասի ծախսերի նվազմամբ:

Վատառողջության դասին տրամադրվել է 138 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 29.3%-ով՝ հիմնականում պայմանավորված բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ: Հաշվետու տարում նշված ծրագրին տրամադրվել է 62.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 44.2%-ով: 2018 թվականին բժշկական օգնություն է տրամադրվել 3 հիվանդությունների գծով 286 հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց՝ նախորդ տարվա 496-ի դիմաց:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման նպատակով 2018 թվականին տրամադրվել է 75.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.2%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.5%-ով: Ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների թվի կրճատմամբ՝ նախատեսված 382 և նախորդ տարվա 420 անձի փոխարեն հաշվետու տարում փոխհատուցում են ստացել 378 անձ:

Հաշվետու տարում շուրջ 844 մլն դրամ տրամադրվել է *անաշխատունակության* դասին՝ ապահովելով 77.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը նվազել են 13.8%-ով կամ 135.6 մլն դրամով: Ծախսերի ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ անկումը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերով:

Տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 9.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2018

թվականին տպագրվել են 30000 թերթ բրայլյան գրքեր, 320 հատ բրայլյան տետրեր, 74400 թերթ «Բյուլետեն» ամսագիր, թողարկվել է 1600 ժամ «Խոսող գիրք»: 2017 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 6.8%-ով՝ պայմանավորված տպագրված բրայլյան գրքերի ծավալի նվազմամբ: Նշենք, որ 2017 թվականին տպագրվել էին 42327 թերթ բրայլյան գրքեր:

Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 609 մլն դրամ՝ ապահովելով 73.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշմանդամներին տրամադրել է 4015 պրոթեզաօրթոպեդիկ պարագա՝ նախատեսված 4378-ի և նախորդ տարվա 3810-ի դիմաց, 4788 վերականգնողական պարագա՝ նախատեսված 6540-ի և նախորդ տարվա 3232-ի դիմաց, 100 ձայնաստեղծ սարք՝ նախատեսված և նախորդ տարվա 100-ի դիմաց, 200 աչքի պրոթեզ՝ նախատեսված 200-ի և նախորդ տարվա 186-ի դիմաց: Ծախսերի շեղումը պայմանավորված է փաստացի դիմած հաշմանդամների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է տվյալ ծախսերի 18.6%-ով անկում՝ պայմանավորված ձեռք բերված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների գների նվազմամբ:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 58.6 մլն դրամ՝ ապահովելով 83.7% կատարողական և 16.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ անկումը հիմնականում պայմանավորված է աջակցություն ստացած հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց փաստացի թվաքանակի կրճատմամբ: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին 3 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 270 հիվանդի՝ նախատեսված և նախորդ տարվա 318-ի դիմաց:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար օգտագործվել է 27.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: Ծրագրի նպատակը մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների ու պատանիների սոցիալական վերականգնումն է ցերեկային կենտրոնում ծառայությունների մատուցման միջոցով: Ծրագիրն իրականացվում է ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, որտեղ սպասարկվում է 50 շահառու: Պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին 2018 թվականին իրականացվել է կենտրոնի 24 աշխատողի աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի, կապի և տրանսպորտային նյութերի ծախսերի դիմաց վճարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 100.7 մլն դրամ կամ նախատեսվածի 93.5%-ը: Տնտեսումը պայմանավորված է փաստացի դիմած հաշմանդամների՝ նախատեսվածից փոքր թվով, ինչպես նաև սայլակների և լսողական սարքերի՝ նախատեսվածից ցածր փաստացի գներով: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին սայլակ ձեռքբերելու համար հատկացվել է 513 հավաստագիր՝ նախատեսված 550-ի և նախորդ տարվա 366-ի դիմաց (միջին արժեքը կազմել է 93.8 հազար դրամ՝ նախատեսված 95 հազար դրամի փոխարեն), իսկ լսողական սարք ձեռքբերելու համար հատկացվել է 1460 հավաստագիր՝ նախատեսված 1515-ի և նախորդ տարվա 655-ի դիմաց (1280 լսողական սարքի միջին արժեքը կազմել է 30 հազար դրամ և 180 սարքի միջին արժեքը՝ 78.7 հազար դրամ, նախատեսված 80 հազար դրամի փոխարեն): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40%-ով կամ 28.8 մլն դրամով՝ պայմանավորված ձեռք բերված սայլակների և լսողական սարքերի քանակի աճով:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը ցերեկային կենտրոնում իրականացնելու նպատակով «Լիարժեք կյանք» ՀԿ-ին փոխհատուցվել են 13 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը, որոնք կազմել են 11.4 մլն դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը: Միջոցներն օգտագործվել են 60 հաշմանդամ դեռահասների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.9%-ով:

«Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-ռեաբիլիտացիոն ցերեկային կենտրոնում» ծրագրին տրամադրվել է 26.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Միջոցները տրամադրվել են «Աուտիզմ Ազգային Հիմնադրամ» ԲՀԿ-ին՝ 18 տարին լրացած աուտիզմ ունեցող 80 դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության ու սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով, փոխհատուցվել են 30 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ծերության դասի ծրագրերին 2018 թվականին տրամադրվել է 310.6 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 99.9%-ը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով՝ հիմնականում պայմանավորված «Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը հաշվետու տարում կազմել են 26.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով կամ 1.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է նոր նշանակումների թվի աճի և փաստացի չվճարված կենսաթոշակների վճարման հանգամանքով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 549.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 7.2%-ով կամ 42.7 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվի նվազմամբ:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող սոցիալական նպաստների գծով ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել 13.6 մլրդ դրամ: 2017 թվականի համեմատ դրանք նվազել են 2.1%-ով կամ 291.5 մլն դրամով, որը բացատրվում է սոցիալական նպաստառուների թվի նվազման հանգամանքով:

ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ, ապահովելով 98.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.8%-ով կամ 145.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով:

Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է ավելի քան 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 92.9% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է տարեցների շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնող 5 կազմակերպությունների կողմից նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվով տարեցների (նախատեսված 1210 շահառուի փոխարեն 1063 շահառուի) սպասարկելու, գնումների գծով մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսման և կոմունալ ծախսերի որոշակի հոդվածների տնտեսման հանգամանքներով: Ծրագրի նպատակն է՝ շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրել դրանց կարիքն ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց՝ նրանց համար ապահովելով արժանապատիվ կենսապայմաններ: Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները ներառում են կացարանի, կենսապահովման համար անհրաժեշտ պայմանների, սնունդով, հագուստով, կոշկեղենով, անկողնային պարագաներով ապահովումը, բժշկական օգնության ու սպասարկման, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրումը, մշակութային միջոցառումների կազմակերպումը և այլն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն օգտագործվել են 99.5%-ով՝ կազմելով 131 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվում է միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ տնային պայմաններում, գնահատված կարիքներին համարժեք խնամքի ծառայությունների տրամադրումը, նրանց կյանքի որակի բարելավումը: Միջոցառման շրջանակում «Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով

ծառայություններ են մատուցվում Երևան քաղաքում բնակվող միայնակ տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց: Ծրագրից շեղումը պայմանավորված է փաստացի սպասարկվող շահառուների՝ նախատեսվածից պակաս թվով (1450 շահառուների փոխարեն 1293 շահառու) և կոմունալ ծախսերի որոշ հոդվածների տնտեսմամբ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 6.8%-ով, որը մասամբ պայմանավորված է տնտեսումներով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2018 թվականին տրամադրվել է 6.4 մլն դրամ պետական աջակցություն, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 53%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում գործող ցերեկային կենտրոնի փաստացի սպասարկվող շահառուների՝ նախատեսվածից պակաս քանակով (20 շահառուների փոխարեն 16 շահառու) և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է տվյալ ծախսերի 3.8%-ով անկում: Ծրագրի նպատակն է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնումը և նրանց կյանքի որակի բարելավումը: Ցերեկային կենտրոնում սպասարկվում են ակտիվ բուժման կարիք չունեցող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, որոնց տրամադրվում են սոցիալ-հոգեբանական օգնության և հոգեկան առողջության վերականգնման տարբեր ծառայություններ՝ նաև աշխատանքային թերապիայի միջոցով նպաստելով նրանց սոցիալական ներառմանը հասարակություն:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում ու տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով տրամադրվել է 208.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսված միջոցների 98.2%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Առաքելություն» ՀԿ-ի միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և ցերեկային կենտրոնում սպասարկելու նպատակով փոխհատուցվում են 171 աշխատողների նվազագույն աշխատավարձերը, և 1692 տարեցներ ապահովվում են օրական մեկանգամյա սննդով: Տնտեսումը պայմանավորված է սննդամթերքից օգտվող շահառուների՝ նախատեսվածից պակաս թվով (1692 շահառուների փոխարեն 1586 շահառու, մեկ շահառուի մեկ օրվա սննդամթերքի արժեքը՝ 144 ՀՀ դրամ): Արդյունքում նշված ծախսերը 2017 թվականի նկատմամբ նվազել են 5.7%-ով:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 218.8 մլրդ դրամ և օգտագործվել են նախատեսված ծավալով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.9%-ով կամ շուրջ 2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի նվազման, ինչպես նաև «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի վարման արդյունքում վարչարարության ուժեղացման և վճարումների հասցեականության

ապահովման հանգամանքներով: 2018 թվականին աշխատանքային կենսաթոշակառուների թիվը կազմել է 454411՝ նախատեսված 454495-ի և նախորդ տարվա 456009-ի դիմաց:

Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները կազմել են 24 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Վանաձորի տարեցների տուն» ՀԿ-ին 55 տարեցների խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով վճարվել է 27 հաստիքային միավորների աշխատավարձը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում 2018 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 46.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 48.4%-ով կամ 15.1 մլրդ դրամով՝ պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցների թվի աճով: 2018 թվականին այն կազմել է 326727՝ 2017 թվականի 188316-ի դիմաց:

Մտավոր ու ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են 18.1 մլն դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների (14 շահառու) շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայություններ իրականացնելու նպատակով փոխհատուցվել են պահպանման ծախսերը: Տնտեսումը պայմանավորված է սննդամթերքից օգտվող շահառուների փաստացի թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով (15 շահառուների փոխարեն 14 շահառու, մեկ շահառուի մեկ օրվա սննդամթերքի արժեքը՝ 1100 ՀՀ դրամ): 2018 թվականին սույն ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են 12.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Խնամք» ՀԿ-ին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց (14 շահառու) շուրջօրյա խնամքի ծառայություններ իրականացնելու նպատակով փոխհատուցվել է պահպանման ծախսերը, 14 (նախատեսված 16) շահառուի շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով փոխհատուցվել է 14 հաստիքային միավորների աշխատավարձերը: 2018 թվականին սույն ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայությունների ծախսերը կազմել են 6.3 մլն դրամ կամ նախատեսվածի 94.6%-ը, որը պայմանավորված է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վետերան օթևանում նախատեսված 57 տարեցի

փոխարեն փաստացի 40 միայնակ տարեցի սպասարկելու հանգամանքով: 2018 թվականին սույն ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեից *«Հարազատին կորցրած անձինք»* դասի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 4.6 մլրդ դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական և նախորդ տարվա համեմատ նվազելով 9.4%-ով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ծախսերով:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի գծով ծախսերը կազմել են 159.7 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական և 0.6%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի պահանջի նվազման հանգամանքով:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ծախսերը կազմել են 4.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.7%-ը՝ 9.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է կենսաթոշակառուների ու նպաստառուների մահվան դեպքերի նվազման հանգամանքով:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 71.6%-ով՝ կազմելով 40.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.8%-ով:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 60.3 մլրդ դրամ՝ ապահովելով 93.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և մայրության նպաստների գծով նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով կամ 3.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերոհիշյալ երկու ծրագրերի գծով ծախսերի նվազմամբ:

Խմբի ծախսերի զգալի մասը՝ 34.5 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 92.7%-ը: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին փաստացի նպաստ են ստացել ամսական միջինը 95516 ընտանիք՝ նախատեսված 98758 ընտանիքի և նախորդ տարվա 101870 ընտանիքի փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 6%-ով:

ՀՀ պաշտպանության, փրկարարական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեում ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 100.8 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք ֆինանսավորվել են ներկայացված հայտերին համապատասխան՝ կազմելով ծրագրված միջոցների 24%-ը և 17.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

2018 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97%-ը: Սույն ծրագրով փաստացի երեխայի խնամքի նպաստ է ստացել ամսական միջին հաշվով 12733 երեխա՝ նախատեսված 13153-ի և նախորդ տարվա 13297-ի դիմաց: 2017 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 4%-ով, որը պայմանավորված է երեխաների թվի (ծնունդների) նվազման հանգամանքով:

Մայրության նպաստի գծով ծախսերը կազմել են 9.8 մլրդ դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական: 2017 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 6.2%-ով կամ 646.2 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017 թվականին եկամտային հարկի հաշվին ապահովադիրների մոտ տեղերում կատարված ծախսերի գծով վճարվել են 14 ամսվա գումարները (ներառված են 2016 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների գումարները), իսկ 2018 թվականին՝ 11 ամսվա (հունվար-նոյեմբեր ամիսների) գումարները:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 9.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: 2017 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված երեխաների ծնունդների թվի նվազմամբ, որը կազմել է 36502՝ նախորդ տարվա 40577-ի դիմաց:

2018 թվականին վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 84.9%-ով, որոնք կազմել են 314.3 մլն դրամ՝ 15.1%-ով զիջելով նաև նախորդ տարվա ցուցանիշը:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.6%-ը: Ծրագիրն իրականացվել է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունների կողմից, որոնցում 2018 թվականին խնամվել է միջինը 593 երեխա՝ նախատեսված 649-ի և նախորդ տարվա 617-ի դիմաց: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած

տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով՝ հիմնականում պայմանավորված խնամվող երեխաների թվի նվազմամբ:

Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 97.9%-ով՝ կազմելով 22.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում «Առավոտ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են 10 երեխաների՝ խնամքի հաստատություններից բեռնաթափման և 110 երեխաների՝ նշված հաստատություններ մուտքի կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսեր աճել են 2.2%-ով՝ պայմանավորված պահպանման ծախսերի աճով:

Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 215.1 մլն դրամ կամ նախատեսվածի 95%-ը: Ծրագրի շրջանակներում չորս ցերեկային կենտրոններում իրականացվել է միջին հաշով 270 երեխաների ցերեկային խնամք՝ նախատեսված 300-ի փոխարեն: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է մեկ երեխայի սննդի 1 օրվա գումարի ավելացման հանգամանքով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության կողմից ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններին տրամադրվել է 472.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 88.4%-ով կատարում: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին 5 գիշերօթիկ հաստատությունների կողմից իրականացվել են տարեկան միջինը 375 շահառուների խնամքի աշխատանքներ՝ նախատեսված 600-ի դիմաց: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է ինչպես երեխաների թվով, այնպես էլ գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով և կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.3%-ով՝ պայմանավորված 1 գիշերօթիկ հաստատության կրճատման հանգամանքով:

2018 թվականին երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 74.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և այն իրականացնող «Հույսի կամուրջ» ՀԿ-ին 4 ցերեկային կենտրոններում 250 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով

կատարվել են 84 հաստիքային միավորների աշխատավարձերի վճարումները: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրումը կազմել է 42.6 մլն դրամ կամ նախատեսվածի 82.4%-ը, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող երեխաների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նախատեսված 94 երեխայի և նախորդ տարվա 24 երեխայի փոխարեն խնամատար ընտանիքներում խնամվել է 39 երեխա, որոնց խնամքն իրականացվել է 29 ընտանիքներում: Նշված ծախսերը 2017 թվականի նկատմամբ աճել են 15.1%-ով՝ պայմանավորված երեխաների թվի աճով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է շուրջ 3.1 մլն դրամ կամ նախատեսվածի 79.5%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է դրամական աջակցություն ստացած երեխաների տարեկան միջին փաստացի թվով, որը նախատեսված 191-ի փոխարեն կազմել է 103: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.5%-ով՝ պայմանավորված երեխաների թվի նվազմամբ, որը նախորդ տարի կազմել էր 134:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 500 հազար դրամ կամ նախատեսվածի 90.9%-ը: Սույն ծրագրով նախարարության ենթակայության «Վանաձորի մանկատուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ներում փաստացի հաշվառված 18 տարին լրացած 10 շրջանավարտների տրամադրվել է դրամական օգնություն 50.0 հազար դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 23.1% անկումը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով. այն կազմել է 10՝ նախորդ տարվա 13-ի դիմաց:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 21.5 մլն դրամ, որն իրականացվել է 87.9%-ով՝ պայմանավորված գնումների գծով հայտարարված մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Սույն ծրագիրը հանդիսանում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրի բաղադրիչ մասը: Ծրագրի շրջանակներում օժանդակության փաթեթ է տրամադրվել 120 շահառուի կենսաբանական ընտանիքներին, մասնավորապես՝ երեխաների ընտանիքներին փոխհատուցվել է էլեկտրաէներգիայի ծախսը ամսական 3951 դրամի չափով,

տրամադրվել է սննդի զամբյուղ ամսական 9374 ՀՀ դրամի չափով, և տարեկան հատկացվել է 44000 դրամ՝ հագուստի, կոշիկի, դպրոցական պայուսակների, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռք բերման համար: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 6.6%-ով՝ պայմանավորված շահառուների թվի աճով, որը 2017 թվականին կազմել էր 100:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի՝ Հայաստանի Հանրապետության կողմից փոխհատուցումը կազմել է 3.2 մլն դրամ (100%): 2017 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը ևս ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 7.2 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ այս ծախսերը նույնպես չեն փոփոխվել:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 30.5 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 88.8%-ը: Ծրագրի շրջանակներում 3-18 տարեկան երեխաներին մինչև 6 ամիս ժամկետով տրամադրվում են շուրջօրյա խնամքի ծառայություններ: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսված 17 երեխայի փոխարեն 14 երեխա խնամելու հանգամանքով և գնումների գծով հայտարարված մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը Հայաստանի Հանրապետության կողմից կազմել է 369.4 հազար դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Տվյալ ծախսերը պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 և Ստեփանավան քաղաքի N 5 ներառական մանկապարտեզներում հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցմանը տրամադրվել է 26.4 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով փոխհատուցվում են Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզի 18 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը՝ 24 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու համար: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայությունները կազմել են 175.8 մլն դրամ կամ նախատեսվածի 79.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է ցերեկային կենտրոն

հաճախող 200 երեխայի փոխարեն 118 երեխա (2017թ.՝ 91 երեխա) սպասարկելու և արտակենտրոնում 100 երեխայի ծառայություններ մատուցելու փոխարեն 28 երեխաների սպասարկելու հանգամանքներով: Նշված ծախսերը 2017 թվականի նկատմամբ աճել են 146.1%-ով՝ պայմանավորված երեխաների թվի աճով:

2018 թվականին պետական բյուջեից 443.4 մլն դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 61.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման և գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրման և մասնագիտական ուսուցման կազմակերպման ծախսերի ցածր կատարողականով, ինչով էլ պայմանավորված՝ 2017 թվականի համեմատ գործազրկության բնագավառի ծախսերը նվազել են 11%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցությունը կազմել է շուրջ 27.6 մլն դրամ կամ ծրագրի 87.8%-ը և 157.7%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է 2017 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ ծրագրի կասեցմամբ: Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է: Ծրագրի շրջանակներում ուսուցում կազմակերպելու նպատակով սեպտեմբեր ամսին հայտարարվել է կազմակերպության ընտրության մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից կազմակերպված ուսուցման մեջ ընդգրկվել է 68 անձ, իսկ ուսուցման ավարտից հետո փաստացի ֆինանսավորվել է 57 ծրագիր: Ծախսերի կատարողականը պայմանավորված է ծրագիրը տարեվերջին սկսելու հանգամանքով, որը հնարավորություն է տվել ծրագրում ներառել նախատեսվածից ավել թվով շահառուներ: Իսկ պակաս վճարված գումարները կվճարվեն 2019 թվականին:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության ծախսերը կազմել են 5.3 մլն դրամ կամ նախատեսվածի 49.1%-ը և 74.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի իրականացման հիմնական բարդությունը կապված է այս ծրագրի շահառուների հետ, որոնք բացառապես հաշմանդամներ են, և այնքան էլ մոտիվացված չեն աշխատելու: Ծրագրում տարեսկզբից ընդգրկվել է 32 հաշմանդամություն ունեցող անձ՝ նախատեսված 52 հաշմանդամի և 3 ուղեկցող անձի փոխարեն:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 7.7 մլն դրամ կամ նախատեսվածի 13.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը նվազել են 83.8%-ով: Ծրագրում նախատեսվել էր ընդգրկել 209 գործազուրկի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող 21 գործազուրկի: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է ուսուցում իրականացնող կազմակերպություններից պահանջվող մոդուլային ծրագրով, որը պետք է համաձայնեցված լիներ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ: Բացի այդ, գնման ընթացակարգերի փոփոխությամբ պայմանավորված (գնանշման ընթացակարգը վերափոխվել է աճուրդով կազմակերպվող ընթացակարգով)՝ լրացուցիչ դժվարություններ են առաջացել ուսուցումն իրականացնող կազմակերպությունների համար:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 20.1 մլն դրամ՝ ապահովելով 95.3% կատարողական և 26.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է համալիր սոցիալական ծառայությունների և զբաղվածության տարածքային կենտրոնների 300 աշխատողների վերապատրաստում, 100 շահառուների հանրային իրազեկում և վերապատրաստված 200 մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվություն:

Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Ծրագրով տարեկան նախատեսվել էր այլ վայր գործուղել 4 գործազուրկի: Ծրագրի կատարողականը և նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի նվազումը 75.1%-ով պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականին ֆինանսավորվել են 2017 թվականին սկսված և հաշվետու տարվա ընթացքում շարունակվող ծրագրերը:

2018 թվականին աշխատանքի տոնավաճառի կազմակերպման համար նախատեսված 7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, իսկ նախորդ տարվա համեմատ՝ նվազել 16.6%-ով: Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով մի կողմից աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրման ապահովումը: 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է 10 տոնավաճառ՝ նախորդ տարվա 12-ի դիմաց:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին տրամադրվել է շուրջ 103.2 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 75.9%

կատարողական: Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Հաշվետու տարում ծրագրում ընդգրկվել է 429 գործազուրկ՝ նախատեսված 605-ի և նախորդ տարվա 511-ի փոխարեն: Ծրագրի ցածր կատարողականը բացատրվում է մարզերում աշխատատեղերի սահմանափակ թվաքանակով, որը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում տարբեր մասնագիտություններ ունեցող երիտասարդներին իրենց մասնագիտությամբ պրակտիկա անցնելու համար: Միաժամանակ, աշխատաշուկայի պահանջարկից ելնելով՝ ծրագրերի մեծ մասն իրականացվել է 4-րդ եռամսյակում, որի արդյունքում իրականացված ծրագրերի համար նախատեսված գումարների ֆինանսավորումը տեղափոխվել է 2019 թվական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.2%-ով՝ պայմանավորված ծրագրում ընդգրկված անձանց թվի նվազմամբ:

2018 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվել են 138.5 մլն դրամ միանվագ փոխհատուցումներ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 62%-ը: Հաշվետու տարում ծրագրում ընդգրկվել է 832 շահառու՝ նախատեսված 1180 շահառուի փոխարեն: Տնտեսումը մասամբ պայմանավորված է ծրագրի իրականացման ցածր արժեքով. 2018 թվականի համար մեկ ծրագրի միջին արժեքը կազմել է 129.7 հազար դրամ, այն դեպքում, երբ իրավական ակտով ծրագրի առավելագույն արժեքը սահմանված է 200.0 հազար դրամ, որի հետևանքով 1-ին կիսամյակում գործատուների հետ շատ պայմանավորվածություններ չեղարկվեցին: Մյուս կողմից, ծրագրի կատարողականը պայմանավորված է մարզերում սահմանափակ աշխատատեղերով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 22.2%-ով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության նպատակով տրամադրվել է 6.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 46%-ը: Ծրագրով տարեկան նախատեսվել է իրականացնել 988 անմրցունակ, այդ թվում՝ 159 հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում: Փաստացի ծրագրում ընդգրկվել է 635 շահառու: Նախորդ տարի այս ծրագրի շրջանակներում միջոցներ չէին օգտագործվել:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրման ծախսերը կազմել են 18.2 մլն դրամ կամ նախատեսվածի 25.8%-ը: Սույն ծրագրում նախատեսվել էր ընդգրկել 856 գործազուրկի: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականին ֆինանսավորվել են միայն 2017

թվականին սկսված և 2018 թվականին շարունակվող ծրագրերը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 22.9%-ով:

«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 3.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 85.5%-ը: Ծրագիրը հանդիսանում է «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի բաղկացուցիչ մասը: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը ցուցաբերում է ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակում և դրա իրականացման ուղեկցում: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 18.9%-ով՝ պայմանավորված նրանով, որ խորհրդատվական ծառայությունների մատուցման համար վճարումներն ըստ պայմանագրի նախատեսվել է իրականացնել 2019 թվականին:

Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 24.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 68.6%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր աջակցություն տրամադրել 43 անձի: Ծրագիրն իրականացվել է տարվա 2-րդ կիսամյակից, ուստի կրթաթոշակի հիմնական ֆինանսավորումը տեղափոխվել է 2019 թվական: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից:

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրումը կազմել է շուրջ 62 մլն դրամ կամ նախատեսվածի 71%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր ապահովել 144 անձի աջակցություն, սակայն ծրագրում ընդգրկվել է 175 անձ: Քանի որ իրավական ակտի բացակայության պատճառով ծրագրի իրականացումը մեկնարկել է օգոստոս ամսին, ուստի նախատեսված ֆինանսական միջոցներով ծրագրում հնարավոր է դարձել ընդգրկել նախատեսվածից ավել թվով շահառուներ, և նրանց ֆինանսավորումը շարունակվում է 2019 թվականին: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից:

Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցումը զբաղվածության աջակցման կենտրոնում կազմել է 9.8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով՝ «Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ-ի միջոցով, որին 60 հաշմանդամ շահառուի խնամք և սպասարկում

իրականացնելու նպատակով փոխհատուցվել են 11 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից:

Բնակարանային ապահովման խմբի ծրագրերին ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 500 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն ուղղվել են զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 12.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.1% կատարողական և 6.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման և Հայրենական Մեծ պատերազմի (ՀՄՊ) մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների գծով ծախսերի նվազմամբ:

2018 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին տրամադրվել է 260 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 25.3%-ով՝ պայմանավորված ՀՄ պատերազմի վետերանների թվի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է 31.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.3%-ով, որը պայմանավորված է փախստականների թվի նվազման հանգամանքով: 2018 թվականին ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած փախստականների թիվը կազմել է 610՝ 2017 թվականի 624-ի դիմաց:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2018 թվականին տրամադրվել է 28.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 15.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից հատկացված գումարը հաշվարկված է եղել տարեկան 40 ապաստան հայցողի համար՝ յուրաքանչյուրին 90 օր կեցության ապահովման հաշվարկով, սակայն 2018 թվականին հանրապետությունում ապաստան հայցողների մեծ մասի վերջնական հարցը լուծում է ստացել շուրջ 120 օրվա ընթացքում:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1

հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարները կազմել են 11.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՄՊ մասնակից վետերանների թվի նվազման (մահացություն) հանգամանքով:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 52.5 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որն իրականացրել է 100 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում: Ծախսերը կազմել են տարեկան ծրագրով նախատեսված գումարի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.5%-ով՝ պայմանավորված պահպանման ծախսերի տնտեսմամբ:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 30.6%-ով, որը պայմանավորված է պահանջի (վարչարարության արդյունքում) նվազման հանգամանքով:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 16.8 մլն դրամ՝ ապահովելով 97.9% կատարողական: 2017 թվականի համեմատ 60%-ով նվազումը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ «Հանգրվան» ՊՈԱԿ-ը «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին միացնելու հանգամանքով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2017 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 26.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցների ու պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ:

Հաշվետու տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը կազմել են 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով 96.9% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5%-ով:

Հաշվետու տարում 496 մլն դրամ է տրամադրվել սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.4%-ով:

Հատկացված միջոցներով պետության կողմից Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարներին լիազորությունների պատվիրակման միջոցով նշված համայնքների աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային բաժինների գործունեության կազմակերպման համար ֆինանսավորվում են 237 հաստիքային միավորների աշխատավարձերը և պահպանման ծախսերը: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 945 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 48.3%-ը:

Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- Աշխատանքի և զբաղվածության ռազմավարություն,
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- Սոցիալական աջակցության և մոնիտորինգի համակարգի բարելավում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2018 թվականին իրականացվել են թվով 5 Համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ), ինչպես նաև Զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ ԶՊԳ) և ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ ԲՍՓԳ) շինարարական աշխատանքները: ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության, սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ ՍԱՊԾ), ԶՊԳ-ի, ԲՍՓԳ-ի և ՀՍԾՏԿ-ների կարիքների համար ձեռք են բերվել մի շարք ապրանքներ՝ կահույք, օդորակիչներ, կենցաղային, համակարգչային տեխնիկա և այլ տեխնիկական միջոցներ: Մատուցվել են մի շարք խորհրդատվական ծառայություններ՝ ՀՍԾՏԿ-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման, շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության և տեխնիկական հսկողության իրականացման, ինտերիեր-դիզայներական նախագծերի, ապրանքների մասնագրերի և նախահաշիվների պատրաստման ու մատակարարումների նկատմամբ հսկողության իրականացման, ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման, ՍԱՊԾ վերլուծական կարողությունների հզորացման և ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի մոդելի մշակման և փորձարկման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի միջոցով բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների մշակման և ներդրման, սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող

փորձնական ընտրված ծրագրերի առաջնային շահառուների կարիքների և այդ ծրագրերի մասին նրանց կարծիքի ուսումնասիրության, մոնիթորինգի և գնահատման համակարգի համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքման, համակարգի ներդրմանն ուղղված առաջարկների մշակման և այլ ուղղություններով, ինչպես նաև ծրագրի շրջանակներում առաջիկայում ստեղծվելիք ՀՍԾՏԿ-ների տարածքներում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների ներկայացուցիչների համար կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացների հետ կապված խնդիրներն ու անելիքները» թեմայով:

Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է հետևյալով.

● մինչև 2018 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվեցին փոփոխություններ գործող և նոր ստեղծվող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾՏԿ) ստեղծման նպատակով հատկացված շենքային տարածքների համար արդեն մշակված և մշակվող նախագծանախահաշվային փաստաթղթերում՝ վերջիններիս ներկայացվող նոր պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով.

● 2018 թվականի տարեսկզբին դեռ առկա չէին թվով 23 ՀՍԾՏԿ-ների կազմակերպման համար անհրաժեշտ համապատասխան տարածքների հատկացման վերաբերյալ որոշումները կամ ավատված չէին տարածքների անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները.

● 2018 թվականի ընթացքում երկու անգամ անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ կատարելու Ծրագրի կառավարման խորհրդի կազմում՝ 2018 թվականի մայիսին ՀՀ նոր կառավարության ձևավորման և 2018 թվականի դեկտեմբեր ամսին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման հանգամանքներով պայմանավորված.

● Ծրագրի շրջանակներում նախապես պլանավորված բոլոր գործողություններն ավարտին հասցնելու նկատառումներով Համաշխարհային բանկի հետ 2017 թվականի աշնանից նախաձեռնվել էին ծրագրի գործողության ժամկետը երկարաձգելու ուղղությամբ բանակցություններ, որոնց արդյունքում 2018 թվականի մայիսին արդեն պատրաստ էր ծրագրի գործողության ժամկետը ևս երկու տարով երկարաձգելու մասին որոշումը, որը, սակայն, կասեցվեց՝ կապված ՀՀ կառավարության փոփոխության հետ: Ծրագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին որոշման (այն կայացվեց միայն սեպտեմբերին) ուշացման պատճառով ևս պլանավորված մի շարք աշխատանքներ չկատարվեցին, քանի որ այդ աշխատանքները չէին կարող ավարտվել մինչև ծրագրի ավարտը՝ 2018 թվականի դեկտեմբեր ամիսը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Նիդերլանդների անվտանգության ու արդարադատության նախարարության միջև կնքված՝

Նիդերլանդներից վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման օգնության շրջանակներում խորհրդատվության և ուղղորդման ծառայության մատուցման մասին դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում 2018 թվականին օգտագործվել է 8.8 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 95.3%-ը: Կատարողականը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով, որին համապատասխան հատկացվել է նաև դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորումը: Ծրագիրը նախատեսված է Նիդերլանդներից հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրման շրջանակներում փոքր բիզնես սկսելուն կամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցության, ուսումնական կամ մասնագիտական վերապատրաստման, սոցիալական, իրավական, բժշկական աջակցության, ժամանակավոր կացարանի տրամադրման, օդանավակայանում դիմավորման և անհատական այլ կարիքների համար: Ինչպես և նախատեսված էր, ծրագիրն ավարտվել է 2018 թվականի հուլիսի 1-ին:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են 20.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.8%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 0.6%-ով:

Հաշվետու տարում պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 9.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.2%-ը, որը պայմանավորված է շահառուների փաստացի թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 3.5 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են 82.2%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում ձևավորված գներով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով՝ պայմանավորված որոշ ձևաթղթերի միավորի գները նախատեսվածից բարձր լինելու հանգամանքով:

Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների գծով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.4 մլն դրամ՝ ապահովելով 80.7% կատարողական, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում ձևավորված գներով: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.3%-ով՝ պայմանավորված որոշ ձևաթղթերի քանակի կրճատման հանգամանքով:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական

բյուջեից տրամադրվել է 84.4 մլն դրամ՝ ապահովելով 93.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվել են 9 թեմատիկ աշխատանքներ, հետազոտություններ, մշակվել ձեռնարկներ և կազմակերպվել սոցիալական ոլորտի 700 աշխատողների մասնագիտական ուսուցում: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.8%-ով՝ պայմանավորված որոշ կոմունալ ծախսերի նվազմամբ:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 20.7 մլն դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում պատրաստվել ու հեռարձակվել է 25 հեռուստահաղորդում, տպագրվել են 500 հատ գրքույկ, 1000 հատ պաստառ, 1005 հատ բուկլետ, 500 հատ տեղեկագիր և մատուցվել են 1400 հատ լուսանկարչական ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 10.7%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին 13 ամսվա գումարների վճարման հանգամանքով:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերը կազմել են 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.9%-ով՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականին 14 ամսվա (2016 թվականի 2 ամսվա պարտավորությունները 2017 թվականին մարելու) գումարների վճարման հանգամանքով:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության համար նախատեսված 248.2 հազար դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված հաշվետու տարում անհրաժեշտ ժամանակավոր անաշխատունակության թերթիկների քանակի մնացորդի հանգամանքով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 388 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.1%-ով՝ պայմանավորված ձևաթղթերի անհրաժեշտ քանակով և գներով:

Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են և կազմել 19.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-հոգեբանական ծառայություններ են մատուցվել 8 շահառուի: Ծրագիրն իրականացվում է «Ամքոր»

ՀԿ-ի հետ համաֆինանսավորման սկզբունքով, փոխհատուցվում են աշխատողների աշխատավարձերը և տարածքի վարձակալության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում շուրջ 7 մլն դրամ է նախատեսվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որոնք չեն օգտագործվել՝ պայմանավորված կնքված պայմանագրի համաձայն պարտավորությունները մեկ տարի անվճար սպասարկելու հանգամանքով:

2018 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 314 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սոցիալական պաշտպանության ոլորտի 13 տեղեկատվական համակարգերի վարում, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող սոցիալական ապահովության պետական ծառայության և նրա տարածքային բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների շուրջ 6000 համակարգչային տեխնիկայի սպասարկում, վերանորոգման ծառայությունների մատուցում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող թվով 6 վեբկայքերի սպասարկում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 42 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 22 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.6%-ով՝ պայմանավորված Հայաստանի ազգային արխիվ ծրագրային գործիքի ներդրման հանգամանքով:

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայությունների համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 88.1%-ով կազմելով 11.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 36.5%-ով, որը պայմանավորված է

մատուցված ծառայությունների ձեռքբերման «Հայփոստ» ՓԲԸ հետ կնքած պայմանագրի 1.2% տոկոսադրույքը 2018 թվական հունիսի 1-ից 1% սահմանելու հանգամանքով:

646.5 հազար դրամ է տրամադրվել զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքների անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայություններին, որը կազմել է նախատեսված միջոցների 81.8%-ը և 16.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված վճարումների որոշակի մասը բանկային համակարգի միջոցով անվճար իրականացնելու հանգամանքով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 375.2 մլն դրամ՝ ապահովելով 95% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.1%-ով, որը պայմանավորված է «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքած մատուցված ծառայությունների ձեռքբերման պայմանագրի 1.2% տոկոսադրույքը 2018 թվականի հունիսի 1-ից 1% սահմանելու հանգամանքով:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով օգտագործվել է շուրջ 13.7 մլն դրամ՝ ապահովելով 68.6% կատարողական և 28.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված «Հայփոստ» ՓԲԸ կողմից մատուցված ծառայությունների գծով 2017 թվականին 13 ամսվա (2016թ. դեկտեմբեր և 2017թ. հունվար-դեկտեմբեր) գումարների ֆինանսավորման, ինչպես նաև ծառայությունների մատուցումն առավելապես բանկային համակարգով անվճար կատարելու հանգամանքով:

Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներին հաշվետու տարում տրամադրվել է 44.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության ենթակայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության տրամադրման համար հաշվետու տարում նախատեսված 1 մլն դրամն օգտագործվել է 63.2%-ով:Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 2018 թվականի հոկտեմբեր ամիսը կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները տեղավորվել են «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում, և ծրագրով նախատեսված 20 ապաստան հայցողի փոխարեն ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված միայն 14 ապաստան հայցողի է անհրաժեշտ եղել տրամադրել դրամական օգնություն: Ծրագիրը սկսել է իրականացվել 2018 թվականից:

Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրումը կազմել է 1.5 մլն դրամ կամ նախատեսվածի 85.7%-ը: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետ

կապված՝ 6 անձի կրած վնասների մասնակի դրամական փոխհատուցում՝ նախատեսված 7 անձի և նախորդ տարվա 4 անձի դիմաց: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 50%-ով՝ պայմանավորված փոխհատուցում ստացած անձանց թվի աճով:

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպման ծառայություններին տրամադրվել է 132 հազար դրամ կամ նախատեսվածի 5.9%-ը, որը պայմանավորված է շահառուների թվով: 2018 թվականին շահառուների թիվը նախատեսված 150-ի փոխարեն փաստացի կազմել է 36: Ծրագիրը սկսել է իրականացվել 2018 թվականից, և առաջին տարվա փորձը ցույց տվեց, որ ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանցից ոչ բոլորն են ցանկանում մասնակցել քաղաքացիական կողմնորոշման դասընթացներին:

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար վարձակալությամբ բնակարանների ձեռք բերման նպատակով փոխհատուցման ծախսերը կազմել են 8.6 մլն դրամ կամ նախատեսվածի 81.4%-ը, որը պայմանավորված է շահառուների թվով: 2018 թվականին բնակարաններ վարձակալելու նպատակով փոխհատուցում ստացած ընտանիքների թիվը նախատեսված 28-ի փոխարեն փաստացի կազմել է 25: Ծրագիրը սկսել է իրականացվել 2018 թվականից:

Ապաստան հայցողների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով թարգմանչական ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 1.5 մլն դրամ կամ նախատեսվածի 73.4%-ը՝ պայմանավորված գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: 2018 թվականին նախատեսված 30 ապաստան հայցողի փոխարեն փաստացի ծառայություն է մատուցվել 74 հոգու. քանի որ մրցույթի արդյունքում տվյալ ծառայությունը ձեռք է բերվել նախատեսվածից ցածր գնով, հնարավորություն է ստեղծվել թարգմանչական ծառայություններ մատուցել նախատեսվածից ավելի շատ ապաստան հայցողների:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին փոխանցումները կազմել են 7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի փոխհատուցման մասին» ՀՀ օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների հատուցումն է: 2017 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 18.7%-ով, որը պայմանավորված է գործատուների կողմից նախկինում ստվերում գտնվող աշխատողների գրանցմամբ:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 34.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.4%-ը: Տրամադրված միջոցներից 30.2 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 93.3%-ը, 4.1 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 86.7% կատարողական: 2017 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերն աճել են 49%-ով:

Հույժ գաղտնի

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեն կատարվել է 105.4 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի 65.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով, որի արդյունքում օգտագործվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված՝ բյուջեի ազատ միջոցների ընդամենը 65.6%-ը, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավվել է նախատեսված վարկային միջոցների 76.7%-ը: Նշենք, որ 2017 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 267 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2017 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 60.5%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային միջոցների և ռեզիդենտներին տրամադրված վարկերի վերադարձից ստացված մուտքերի նվազմամբ: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2018 թվականին կազմել է 1.8%՝ կանխատեսված 2.7%-ի և 2017 թվականի 4.8%-ի դիմաց: 2017 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 26.4 և 73.6 տոկոսը, ապա 2018 թվականին նշված ցուցանիշները կազմել են 65.8 և 34.2 տոկոս:

Պակասուրդի՝ նախորդ տարվա հետ համադրելի ցուցանիշը կազմել է 57.3 մլրդ դրամ՝ 78.5%-ով զիջելով 2017 թվականի ցուցանիշը և կազմելով ՀՆԱ-ի 1%-ը: Առանց 2017 թվականին «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի՝ պակասուրդի մեծությունը 2017 թվականին կազմել էր 180.5 մլրդ դրամ, իսկ պակասուրդ / ՀՆԱ ցուցանիշը՝ 3.2%, որոնց նկատմամբ 2018 թվականի համադրելի ցուցանիշը (ներառյալ՝ հարկերի միասնական հաշվի մնացորդը) նվազել է համապատասխանաբար 68.3%-ով և 2.2 տոկոսային կետով:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման *ներքին աղբյուրները* կազմել են 69.4 մլրդ դրամ կանխատեսված 80.4 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 70.6 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 46.9 մլրդ դրամ են կազմել *փոխառու զուտ միջոցները*՝ կանխատեսված 46 մլրդ դրամի դիմաց: 2018 թվականին ծրագրով նախատեսված էր պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորել 47 մլրդ դրամով: Այդ նպատակով նախատեսվում էր տեղաբաշխել 166.0 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր, որոնց մուտքը կկազմեր 163.5 մլրդ դրամ և մարել 116.5 մլրդ դրամի պարտատոմսեր, ինչպես նաև շարունակել ամենամսյա հետգնումների քաղաքականությունը: Հաշվետու տարվա ընթացքում

պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդը փաստացի ֆինանսավորվել է շուրջ 48 մլրդ դրամով՝ 2.1%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումների ծրագրի ճշգրտմամբ: 2018 թվականին ընդհանուր առմամբ տեղաբաշխվել են 158 մլրդ դրամի պարտատոմսեր, և տեղաբաշխումից ստացված մուտքը կազմել է 166.2 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի մարմանը և հետգնմանն ուղղվել է 118.2 մլրդ դրամ: 2018 թվականի ընթացքում շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումներն՝ ընդհանուր 8.2 մլրդ դրամ ծավալով: Տեղաբաշխվել են 4,074.2 մլն դրամի պարտատոմսեր, որից մուտքը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 4,084.4 մլն դրամ:

2018 թվականին պետական գանձապետական պարտատոմսերը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 12.28%՝ 2017 թվականի 13.09%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 3308 օր (2017թ.՝ 2787 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2047 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 588.1 մլրդ դրամ (2017թ.՝ 549.7 մլրդ դրամ): Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 29.1 մլրդ դրամ կամ 4.9% (2017թ.՝ 22.7 մլրդ դրամ կամ 4.1%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 230.1 մլրդ դրամ կամ 39.1% (2017թ՝ 241.4 մլրդ դրամ կամ 43.9%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 323.2 մլրդ դրամ կամ 54.9% (2017թ.՝ 282.5 մլրդ դրամ կամ 51.4%), խնայողական պարտատոմսերինը՝ 5.7 մլրդ դրամ կամ 1% (2017թ.՝ 3.2 մլրդ դրամ կամ 0.6%):

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի 99.4%-ը (585.5 մլրդ դրամ) ձեռք է բերվել ռեզիդենտների, 0.6%-ը (3.6 մլրդ դրամ)՝ ոչ ռեզիդենտների կողմից:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 672.4 մլրդ դրամ, այդ թվում՝

- ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 584.5 մլրդ դրամ.
- ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 83.6 մլրդ դրամ.
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է շուրջ 4.4 մլրդ դրամ:

Ներքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 8.5%-ով կամ 52.9 մլրդ դրամով:

Մուրհակների մարման նպատակով նախատեսված ավելի քան 1 մլրդ դրամ վճարումներն ամբողջությամբ կատարվել են:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում *ներքին ֆինանսական զուտ ակտիվները* կազմել են 22.4 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 34.4 մլրդ դրամի դիմաց:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով 2018 թվականին 292.5 մլն դրամ է հատկացվել բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի ավելացման համար, որի մասով փոխանցումները կատարվել են գործարքի կատարման օրվա դրությամբ առկա ճշգրտված պարտավորությունների չափով և կազմել 291.3 մլն դրամ: Մասնավորապես՝ «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին տրամադրվել է 70 մլն դրամ, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ 153.9 մլն դրամ, իսկ «Նոր Ակունք» ՓԲԸ-ին՝ 67.4 մլն դրամ:

2018 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 52.4 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսված ծավալի 72.7%-ը: Միջոցները տրամադրվել են արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվել են 41.8 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 81.8%-ը, ինչը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարումների ժամանակացույցերի փոփոխությամբ: Աշխատանքների և սարքավորումների մատակարարումների մի մասը 2018 թվականից տեղափոխվել է 2019 թվական: Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են էներգաբլոկի ուսումնասիրման խորհրդատվական ծառայությունների, կատարված շինարարական աշխատանքների, մատակարարված սարքավորումների և հարկերի ու տուրքերի դիմաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել է 399.6 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել էլեկտրաէներգիայի համարժեք և հուսալի մատակարարման պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու համար: Միջոցները տրամադրվել են «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների առևտրային վարկերի մարմանը, ինչպես նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանդեպ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի՝ բնական գազի գծով պարտքի մասնակի մարմանը:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում 2.2 մլրդ դրամ ենթավարկ է տրամադրվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 53.6%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ օդային գծերի վերակառուցման ծրագրի խորհրդատու ընկերության հետ կնքված պայմանագրի ժամկետը լրացել է 2018 թվականի հունվարի 22-ին, որի պատճառով հաշիվ-ապրանքագրեր չեն ընդունվել, և վճարումներ չեն կատարվել: Խորհրդատուի հետ պայմանագրի գործողության հետագա ընթացքը դեռևս գտնվում է քննարկման փուլում: «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ օդային գծերի վերակառուցման ծրագրի ժամանակացույցում կատարվել են փոփոխություններ, որի արդյունքում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվել է 2019 թվականի հոկտեմբերի 22-ը՝ 2018 թվականի մայիսի 22-ի փոխարեն: Ծրագրի նպատակն է՝ բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը, թողունակությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Այն կարևոր նշանակություն ունի հանրապետությունում հուսալի էլեկտրամատակարարում ապահովելու գործում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 1950-ական թվականներին կառուցված, ֆիզիկապես և բարոյապես մաշված Հրազդան ՋԷԿ-ից մինչ Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծերը, որոնք միացնում են էներգահամակարգի երկու հիմնական էլեկտրաէներգիա արտադրող կայանները (Հրազդան ՋԷԿ, Որոտան կասկադ), ինչպես նաև վերակառուցել շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերը: Ծրագրի շրջանակներում ավարտվել են ՀՀ էներգահամակարգի հուսալիության բարձրացման նպատակով կառուցվող շուրջ 230 կմ երկարությամբ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման աշխատանքները: 2018 թվականի ընթացքում նշված վարկային միջոցների հաշվին իրականացվել են ծրագրի իրականացման վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, կապալառուների՝ իրականացրած շինարարական աշխատանքների, նախագծման, սարքեր սարքավորումների ներկրման, անհրաժեշտ հողերի ձեռք բերման, ինչպես նաև հարկերի և տուրքերի դիմաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել են 3.1 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 37.3%-ը: Շեղումը պայմանավորված է ենթակայանների վերակառուցման աշխատանքների ծավալների և ժամկետների փոփոխությամբ, ինչպես նաև նրանով, որ ՀՀ էներգահամակարգի պահանջների փոփոխությունների ուսումնասիրությամբ պայմանավորված՝ «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման ծրագիրը ներկայումս գտնվում է հնարավոր փոփոխությունների նախագծի

մշակման փուլում, և շինմոնտաժային աշխատանքները կասեցված են: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել «Հաղթանակ» 220 կՎ, «Զարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանները: Ծրագրի նպատակն է՝ բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցներն ուղղվել են ենթակայանների վերակառուցման աշխատանքների վերահսկողության խորհրդատվական ծառայությունների, կապալառուների իրականացրած շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման դիմաց վճարումների իրականացմանը, ինչպես նաև հարկերի և տուրքերի վճարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրի շրջանակներում «Բարձրավորլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 433 մլն դրամ կամ նախատեսվածի 89.3%-ը, ինչը պայմանավորված է դրամ/եվրո փոխարժեքների տատանմամբ և մատակարարված բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցների ներմուծման գծով ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցմամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիությունը, ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը: Ծրագիրն ավարտվել է: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն ուղղվել են մեքենամեխանիզմների և պահեստամասերի ձեռքբերման նպատակով տեխնիկական մասնագրերի և մրցութային փաստաթղթերի պատրաստմանը, մրցութային գործընթացի և հայտերի գնահատման խորհրդատվական ծառայություններին, ինչպես նաև մրցույթի արդյունքում ընտրված մատակարար կազմակերպությանը տրամադրվող կանխավճարի և հարկերի ու տուրքերի վճարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 3.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 55.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ հաշվետու ժամանակահատվածում սարքերի, սարքավորումների և շինմոնտաժային աշխատանքների համար վճարումներն իրականացվել են Voith և Efacec ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ նախատեսված գումարների 50%-ի չափով, ինչպես նաև սարքերի և սարքավորումների մի մասի մատակարարումները 2019 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն նախատեսում է Որոտան համալիրի (Տաթև ՀԷԿ, Շամբ ՀԷԿ, Սպանդարյան ՀԷԿ) էլեկտրական և մեխանիկական համակարգերի հինգ (բացառությամբ Սպանդարյան ՀԷԿ-ի) էներգաբլոկների ամբողջական վերականգնում: Արդյունքում կբարելավվի հիդրոէլեկտրակայանների, դրանց բլոկների և հարակից սարքավորումների աշխատանքը, հուսալիությունը և հասանելիությունը՝

վերականգնելով այս կարևոր էներգաբլոկների ամբողջական ֆունկցիոնալությունը: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում միջոցները հատկացվել են իրականացրած շինարարական աշխատանքների և սարքերի ու սարքավորումների ներկրման դիմաց, ինչպես նաև վերահսկողության խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարման նպատակով:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակներում տրամադրվել է 800 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 83.6%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ԳՖԿ-ի միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին տրամադրել ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով կուղղվեն փոքր տնտեսություն վարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով: Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել են ֆինանսական փաթեթներ (հետագայում դրանք սահմանվել են որպես Համակցված Ֆինանսական Պրոդուկտներ (ՀՖՊ))՝ ըստ ներուժային շահառուների թիրախային խմբերի սոցիալ-տնտեսական նկարագրերի և առաջնային կարիքների: ՀՖՊ-ները էականորեն տարբերվում են ֆինանսական կառույցների կողմից առաջարկվող պրոդուկտներից, քանի որ դրանց շրջանակներում նախատեսվում է շահառուների ընթացիկ գործունեության զարգացմանը միտված ծրագրերի ֆինանսավորում ոչ միայն վարկային ռեսուրսներով, այլ նաև համատեղ հատկացվող դրամաշնորհային միջոցներով:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից 2018 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 25.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 82%-ը, որը հիմնականում պայմանավորված է այլ վարկերի գծով թերի վճարումներով: Հաշվետու տարվա ընթացքում վերադարձված վարկերի գումարից 5.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ կենտրոնական բանկից՝ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կարգավորման գրասենյակի կողմից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում, 3.6 մլրդ դրամը՝ «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամից, 3.8 մլրդ դրամը՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից, շուրջ 1.3 մլրդ դրամը՝ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 49.7 մլրդ դրամ՝ նախատեսված 75.7 մլրդ դրամի դիմաց, որից կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից նախատեսված 39.9 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է 31.8 մլրդ դրամ:

2018 թվականին պետական բյուջեի պակասուրդն *արտաքին աղբյուրներից* ֆինանսավորվել է 36 մլրդ դրամով՝ 66.4%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Մասնավորապես՝ արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 85.3 մլրդ դրամ և 64.6%-ով ապահովել ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 154.5 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ 76.7%-ով կատարելով ծրագիրը: Դա հիմնականում պայմանավորված է նպատակային վարկային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում ստացվել է շուրջ 106.9 մլրդ դրամ՝ նախատեսված 153.9 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 55.6 մլրդ դրամ ստացվել է միջազգային կազմակերպություններից՝ նախատեսված 85.6 մլրդ դրամի դիմաց, և 51.3 մլրդ դրամ՝ օտարերկրյա կազմակերպություններից՝ նախատեսված 68.4 մլրդ դրամի դիմաց: Եվս 47.6 մլրդ դրամ՝ նախատեսված չափով, վարկային միջոցներ են ստացվել բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես՝ 22.5 մլրդ դրամ է տրամադրվել Գերմանիայի կառավարության Քաղաքականության վրա հիմնված բազմաոլորտային վարկի շրջանակներում, շուրջ 24.2 մլրդ դրամ՝ ԱԶԲ Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագրի շրջանակներում և 966.1 մլն դրամ՝ ՀԲ Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 69.2 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 99.5%-ը: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է արտաքին վարկերի գծով ստացումների պլանի թերակատարմամբ:

Մայր գումարի մարումների կառուցվածքում միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինը կազմել է 71%, օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինը՝ 28.5%, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինը՝ 0.5%: Կատարված մարումների 78.6%-ը բաժին է ընկնում թվով 4 վարկատուների՝ Զարգացման Միջազգային Ընկերակցություն (32.9%), Արժույթի Միջազգային Հիմնադրամ (20.0%), Ռուսաստանի Դաշնություն (15.0%), Ասիական Զարգացման Բանկ (10.8%): Կատարված մարումների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը կազմել է 7%, ֆիքսված տոկոսադրույքով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը՝ 93%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ստացված արտաքին վարկերի և փոխատվությունների մարմանն ուղղված փաստացի վճարումներն աճել են 21.3 մլրդ դրամով կամ 44.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է մի շարք վարկերի գծով արտոնյալ ժամկետների ավարտով և հերթական մարման ենթակա գումարի (մասնաբաժնի) ավելացմամբ, ինչպես նաև արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ (մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 475.36-ից աճել է մինչև 483.06):

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 97.8%-ով՝ կազմելով -49.3 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդից 2.3 մլրդ դրամ օգտագործմամբ՝ նախատեսված 1.2 մլրդ դրամի փոխարեն:

2018 թվականին ամբողջությամբ տրամադրվել է 51.4 մլրդ դրամի չափով նախատեսված միջպետական վարկը Արցախի Հանրապետությանը: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 668.6 մլն դրամ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 844.1 մլն դրամն՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրված ցուցանիշը:

Հաշվետու տարում 2.3 մլրդ դրամ օգտագործվել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի հաշվին:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,676.5 մլրդ դրամ (5,532.9 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 44.6%-ը՝ 2017 թվականի 2,660.1 մլրդ դրամի (5,494.9 մլն ԱՄՆ դոլարի) և 47.8%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,410.4 մլրդ դրամը (4,982.8 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 266.1 մլրդ դրամը (550 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքը բացարձակ արտահայտությամբ աճել է 38 մլն ԱՄՆ դոլարով (16.4 մլրդ դրամով)՝ 0.7%-ով, և դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում գրեթե մնացել է անփոփոխ՝ նվազելով 1.2 տոկոսային կետով և կազմելով 79.9%: Ընդ որում, հիշյալ աճը մեծամասամբ արձանագրվել է ի հաշիվ ՀՀ կառավարության արտաքին պարտքի, որն աճել է 89.5 մլն ԱՄՆ դոլարով:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է ավելի քան 370.9 մլն ԱՄՆ դոլար, որից շուրջ 296.7 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և շուրջ 74.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Ապրանքների և ծառայությունների արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 7.9%՝ նախորդ տարվա 6.7%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների (2017 և 2018թթ. պետական բյուջեի եկամուտների համադրելի ցուցանիշների) նկատմամբ՝ 12.9%՝ նախորդ տարվա 11.4%-ի դիմաց:

2018 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշը (ԶՆԱ) աճել է՝ 2017 թվականի 4722.2 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 4915.2 մլն ԱՄՆ դոլար: Սակայն նվազել է ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2017 թվականի 40.9%-ի դիմաց կազմելով 39.5%, ինչպես նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2017 թվականի 109.6%-ից հասնելով 105.3%-ի:

Ամփոփելով ՀՀ պետական պարտքի ցուցանիշները՝ նշենք, որ 2018 թվականի վերջի դրությամբ այն կազմել է 3,349.0 մլրդ դրամ (6,922.9 մլն ԱՄՆ դոլար)) կամ ՀՆԱ-ի 55.8%-ը, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 3,082.9 մլրդ դրամ (6,372.9 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 51.4%-ը, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը՝ 266.1 մլրդ դրամ (550.0 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 4.4%-ը: 2018 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անվանական արտահայտությամբ աճել է 69.4 մլրդ դրամով կամ 2.1%-ով (148.3 մլն ԱՄՆ դոլարով): Ընդ որում, դա տեղի է ունեցել ՀՀ կառավարության պարտքի աճի հաշվին, որը կազմել է 94.5 մլրդ դրամ կամ 3.2%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը նվազել է 25.1 մլրդ դրամով կամ 8.6%-ով: